



Գ.Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ.  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ  
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ**

ԵՐԵՎԱՆ - 2005

Г.Г. АРУТЮНЯН

**КОНСТИТУЦИОННАЯ КУЛЬТУРА:  
УРОКИ ИСТОРИИ И ВЫЗОВЫ  
ВРЕМЕНИ**

ЕРЕВАН - 2005

G.G. HARUTYUNYAN

**CONSTITUTIONAL CULTURE: THE  
LESSONS OF THE HISTORY AND THE  
CHALLENGES OF THE TIME**

YEREVAN - 2005

ՆՏԴ- 342.5(479.25)  
ԳՄԴ- 67.99 (2Ն) 01  
Հ 422

*Երաշխավորվել է տպագրության ՀՀ  
կառավարման ակադեմիայի գիտական  
խորհրդի որոշմամբ*

Խմբագիրներ՝ **Ռ. Ավագյան**  
- իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
**Վ. Միրումյան**  
- փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ.Գ.** - իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
**Հ 422** ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ  
ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ:/Գագիկ Հարությունյան. -  
Եր.: Նժար, 2005, 404 էջ:

Ուսումնասիրության առարկան «սահմանադրական մշակույթ» երեւոյթն է՝ տեսափիլիսոփայական, պատմատրամադրական, համակարգային-ձանաչողական, համեմատական-սահմանադրական, իրավակիրառական դրսեւորումների տեսանկյունից: Առաջին անգամ փորձ է արվում ամփոփ ներկայացնել սահմանադրական մշակույթի ձեւավորման ու դրսեւորման ընդունու առանձնահատկությունները՝ հայ իրականության մեջ՝ սկսած վաղ քրիստոնեական շրջանից: Անդրադարձ է արվում սահմանադրական զարգացումների արդի հիմնահարցերին ու մարտահրավերներին: Բացահայտվում են եվրոպական սահմանադրական մշակույթի համակարգային զարգացման միտումները: Առաջադրվում են հայեցակարգային մոտեցումներ՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական մշակույթի արժեհամակարգային ամփոփողականությունն ընկալելու, պատմության դասերը խորությամբ հաշվի առնելու, ժամանակի մարտահրավերները ճիշտ գնահատելու, սահմանադրական զարգացումների անհրաժեշտ քաղաքականություն մշակելու եւ իրականացնելու, երկրում սահմանադրականություն հաստատելու համար:

Հ 1203020100 2005  
0066 (01)-2005

ԳՄԴ 67. 99 (2Ն) 01

ISBN 99930-66-38-9

© Գ.Նարությունյան, 2005 թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ .....	7
<b>1. «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ .....</b>	11
1.1. «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՓԻԼԻՍՈՓՈՅԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ.....	11
1.2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	29
<b>2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ .....</b>	39
2.1. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ ՀՈՉԱԿԵԼՈՒ ԻՐԱԿԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....	39
2.2. ԱՅԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....	50
2.3. ԿԱՆՈՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ.....	65
2.4. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԷԶԵՐՈՒՄ.....	74
<b>3. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԻՐԱԿԱԿԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԽՈՐԱՊԱՏԿԵՐՈՒՄ.....</b>	107
3.1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐԴԻ ԻՐԱԿԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....	107
3.2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ.....	117
3.3. ԻՐԱԿԱԿԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՄԵՐՕՐՅԱ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ.....	145

3.4. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻՆ ՆԵՏՎԱԾ ՄԱՐՏԱԳՐԱՎԵՐՆԵՐԸ.....	170
3.5. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆԸ.....	224
4. ՀԱՎԵԼՎԱԾ -1 .....	267
5. ՀԱՎԵԼՎԱԾ -2 .....	309
6. ՈՌԻՍԵՐԵՆ ԱՍՓՈՓՈՒՄ.....	329
7. ԱՆԳԼԵՐԵՆ ԱՍՓՈՓՈՒՄ.....	367

## ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Միջազգային պրակտիկայում վերջին տարիներին հաճախ է անդրադարձ կատարվում սահմանադրական զարգացումների փորձին ու սահմանադրական մշակույթի ձեւավորման ընդհանուր գծերին ու առանձնահատկություններին: Մասնավորապես, այդ հարցերը համակողմանի քննարկման առարկա դարձան 1999թ.<sup>1</sup> Ռոտերդամում եւ 2004թ. Սանտյագոյում հրավիրված՝ Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության զագաթնաժողովներում: 1999թ. սահմանադրական մշակույթի հիմնահարցերին նվիրված հատուկ միջազգային խորհրդաժողով հրավիրվեց Լեհաստանում:<sup>1</sup> 2004թ. Վարշավայում հրավիրվեց նոր խորհրդաժողով՝ քննության առնելու սահմանադրականության եւ սահմանադրական զարգացումների փորձն Արեւելյան Եվրոպայի երկրներում վերջին 15 տարիներին: Մասնակցելով այդ գիտաժողովներին, մոտիկից զգալով քննարկումների մթնոլորտը, հարցերի առաջադրման ու վերլուծության ընդհանուր տրամաձանություները, ինչպես նաեւ հաշվի առնելով քննարկման առարկա հիմնախնդիրների այժմեականությունը հայ իրականության համար, նպատակահարմար համարեցինք համակողմանի անդրադառնալ սահմանադրական մշակույթի հիմնահարցին, որի մասնագիտական լուրջ քննարկման անհրաժեշտությունը մեզանում չափազանց մեծ է:

Վերոնշյալ վերջին գիտաժողովում մեր զեկույցը նվիրված էր ոչ միայն եվրոպական երկրներում սահմանադրականության զարգացման հիմնական միտումների լացահայտմանը, մեզանում դրանց դրսևորման առանձնահատկություններին, այլև հետխորհրդային տարածքի երկրներում սահմանադրականության ձեւախեղումներին ու դրանց պատճառներին: Ներկաների համար առանձնակի հետաքրքրություն առաջացրեց հայ իրականության մեջ սահմանադրական մշակույթի ձեւավորման պատմատրամադանական համեմատությունների ու դրսևորման մի շարք առանձնահատկությունների վերլուծությունը: Նկատի ունենալով, որ այս թե-

<sup>1</sup> St u Constitutional Cultures. Ed. by M. Myrzykowski. Warsaw, ISP, 2000.

ման քիչ է ուսումնասիրված եւ ժամանակակից իրավամտածողության տեսանկյունից վերլուծության, իմաստավորման ու վերաժեվորման, ինչպես նաեւ պատշաճորեն օտարներին ներկայացնելու անհրաժեշտություն ունի, մեծապես կարելու է ենթ հայ իրականության մեջ սահմանադրական մշակույթի ձեւավորմանը պատմական ընդհանուր անդրադարձը, որը նաեւ ուսանելի դասեր է Ռովանդակում ներկա զարգացումների տեսանկյունից:

Մենք չենք ցանկանում նաեւ տուրք տալ ծայրահեղ մոտեցումների եւ համոզված ենք, որ սահմանադրական մշակույթը համակարգային ամփոփականություն է ստանում քաղաքակրթության զարգացման որոշակի աստիճանում՝ երկրում սահմանադրականության հաստատման եւ Սահմանադրության գերակայության երաշխավորման պայմաններում: Այսուհանդերձ, որպես Սահմանադրություն իմաստավորված արժեքային ամփոփականություն այն պատմական խոր արմատներ ունի եւ որոշակիորեն դրսևորվում է «չգրված սահմանադրությունների», սովորույթների, ավանդույթների, հոգեւոր արժեքների, կանոնների, օրենքների, սահմանադիր ընդունված ունեցող նորմերի միջոցով: Սահմանադրությունը եւ սահմանադրականությունը չեն կարող դիտարկվել լոկ նեղ իրավական տրամաբանության շրջանակներում: Սահմանադրական մշակույթը սոցիալական հանրության մտավոր ու մշակութային ողջ ժառանգության, ու նաեւ ժողովրդի պատմական հիշողության կարելու Սահմանադրատարերից է, եւ դրա ճանաչողությունն ու իմաստավորումը յուրաքանչյուր ազգի ու ժողովրդի համար ինքնաձանաչման մեծ խորհուրդ ունի:<sup>2</sup>

Միջազգային պրակտիկան վկայում է, որ սահմանադրական մշակույթին նվիրված հատուկ ուսումնասիրությունները Սահմանա-

նին սահմանափակ են: Այսուհանդերձ, դրանցից կարելի է առանձնացնել, օրինակ, 2001 թ. ԱՄՆ-ում հրատարակված «Constitutional Culture and Democratic Rule» ժողովածուն (Stanford University, California), որում քննարկման առարկա են դարձել մեկ տասնյակից ավելի հիմնահարցեր: Դրանց թվում հատկապես ուշադրության են արժանի այնպիսի հարցադրումներ, ինչպիսիք են. «Սահմանադրական ժողովրդավարություն. ակունքներն ու ավանդույթները», «Սահմանադրական ավանդույթների ձեւավորումը», «ժողովրդավարական Սահմանադրության լինելության տրամաբանությունը», «Սահմանադրության կառուցվածքն ու Ռովանդակությունը. համեմատական վերլուծություն», «Իրավասությունների տարանջատումը եւ դատական իշխանության անկախությունը», «Սահմանադրական փոփոխությունները եւ Սահմանադրության կայունությունը», «Սահմանադրական մեկնաբանությունների կառուցակարգումը» եւ այլն:

Միջազգային խորհրդածողվումներում հատուկ քննարկումների առարկա են դարձել հիմնահարցին վերաբերող այնպիսի կոնկրետ թեմաներ, ինչպիսիք են՝ «Եվրոպական սահմանադրական մշակույթի հիմնահարցերը», «Սահմանադրական մշակույթը եւ ավանդույթները», «Սահմանադրական մշակույթը տարբեր մայրցամաքներում», «ժողովրդավարությունը եւ սահմանադրական մշակույթը», «Սահմանադրական մշակույթը եւ մարդու իրավունքները», «Կրոնը եւ սահմանադրական մշակույթը», «Սահմանադրական դատարանի դերը սահմանադրական մշակույթի ձեւավորման գործում» եւ այլն:<sup>3</sup>

Նշված ու համանման այլ քննարկումների ժամանակ եւ ուսումնասիրություններում մեծ ուշադրություն է դարձվում սահմանադրական մշակույթի արմատներին, դրսևորման առանձնահատկություններին, սահմանադրական ավանդույթների ձեւավորմանը, գործող Սահմանադրության ու երկրում սահմանադրականության որակների համեմատական վերլուծությանը: Մենք նույնպես պահպանելով այդ ընդհանուր սկզբունքը, Սահմանադրությանը «սահմանադրական մշակույթ» հասկացության իմացաբանական ընդունումն ու Ռովանդակությունը, փորձել ենք համակարգային վերլուծության առարկա դարձնել սահմանադրական մշակույթի ու սահմանադրա-

2 Հավանաբար նաեւ դա նկատի ունենալով է, որ Շահամիրյանը դեռեւս XVIII դարում «Որոգայթ փառացի» ներածության մեջ գրում է. «Սրա ընթերցողից իմ խնդրանքը միմիայն այն է, որ այս գիրքը ձեռք ընկնելով՝ նախ թող երեք անգամ ընթերցի սկզբից մինչեւ վերջ, երկրորդ՝ եթե պատահի այնպես, որ ընթերցողը ծնված եւ սնված լինի աշխարհի այն կողմում, որը Սարմարոս ցեղերի հսկողության տակ լինի, աղաչում եմ նրան, որ փնտրի ու գտնի ազատ քրիստոնյաների կառավարության ներքո Սահմանադրող, աշխարհ տեսած որեւէ մեկին, իր ընդհանուր հարցուփորձ անի այստեղ հանդիպող ամեն մի տարակուսելի կետի շուրջ ու նրա օժանդակությամբ գտնի Սահմանադրությունը եւ օգտակար իմաստն իմ գրած յուրաքանչյուր հոդվածի» (Որոգայթ փառաց, Երեւան, 2002, էջ 16):

3 տե՛ս, օրինակ, Constitutional Cultures. Ed. by M. Myrzykowski. Warsaw, ISP, 2000, էջեր 4-5:

կան ավանդույթների ձեւավորման պատմական ընթացքը հայ իրականության մեջ, ընդհանրացնել ու արժեւորել դրա դասերը՝ ներկա ժամանակներում սոցիալական հանրությանը նետված եւ Հայաստանի նորանկախ Հանրապետության առջեւ ծառայած մարտահրավերներից ու սահմանադրական մտքի միջազգային զարգացման միտումներից ելնելով:

Ինչպես ժամանակին իմաստնաւոր նշել է Վազգեն Առաջին Վեհափառ Հայրապետը «Մեր ապագան» հոդվածում՝ «...ապագան գծելու համար առաջին եւ հիմնական պայմանն է մեկնակետ ունենալ ներկան. անցյալը կրնա մեր ուժերուն չափը միայն ցուցանել»:<sup>4</sup> Ուստի, մենագրության մեջ առանձնահատուկ կարեւորություն է տրվում սահմանադրական մշակույթի ներկա դրսեւորումների, սահմանադրական զարգացումների արդի հիմնախնդիրների համակողմանի վերլուծությանը, մեր երկրում իրավական, ժողովրդավարական պետության կայացման հրամայականներին:

## **1. «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԻՄԱՅԱՔԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

### **1.1. «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ**

«Սահմանադրական մշակույթ» հասկացությունն իրավական արդի զարգացումների հոլովություն վերարժեւորման ու գիտական լուրջ վերլուծության անհրաժեշտություն ունի: Առավել քան երբեւէ հրատապ է դառնում հասարակական համաձայնության հենքի վրա սոցիալական հանրության իմաստավորված գոյի շարունակականության երաշխավորումը, քաղաքակրթության ձեռքբերումները հանուն մարդու, այլ ոչ թե ընդդեմ նրա ծառայեցնելու հրամայականը: Նոր հազարամյակում մարդկային հանրությանը նետված մարտահրավերների շարքում առանձնապես կարեւորվում են համակարգային կայունության երաշխավորումը եւ սոցիալական կատակլիզմների բացառումը, որոնք կարող են աննախադեպ կործանարար հետեւանքներ ունենալ: Վերջին հարյուրամյակների ընթացքում համակարգային կայունության երաշխավորի դերը գերազանցապես վերապահվեց պետության Հիմնական օրենքին՝ «գրված» Սահմանադրությանը, որն ամրագրելով կոնկրետ հասարակության քաղաքակրթական արժեքների ամբողջականությունից բխող նպատակներն ու հասարակական կեցության հիմնարար սկզբունքները, սահմանում է հասարակական վարքագծի հիմնական կանոնները, անհատի ու պետության փոխհարաբերությունների բնույթը, իշխանության իրականացման կարգն ու սահմանները՝ հասարակական համա-

<sup>4</sup> Ոգեղեն կյանք, Ս. Էջմիածին, 1998, էջ 68:

ձայնությամբ անհրաժեշտ միջավայր ստեղծելով մարդու ստեղծարար էության լիարժեք դրսևորման ու առաջընթացի համար: Դա հնարավոր է դառնում քաղաքակրթության եւ հասարակական գիտակցության որոշակի մակարդակում: Մարդկային հանրությունը, որպես սոցիալական արժեվորում ունեցող համակարգ, գոյություն ունի շուրջ 10 հազար տարի, իսկ ժամանակակից հասկացությամբ սահմանադրորեն կանոնակարգված նրա պետական գոյը գրեթե երկու հարյուր տարվա պատմություն ունի: Այսուհանդերձ, «սահմանադրություն» երեւոյթը պատմական խոր արմատներ ունի, եւ դրա ի հայտ գալով պայմանավորված՝ ձեւավորվում է նաեւ սահմանադրական որոշակի մշակույթ՝ կրելով ժամանակաշրջանի արժեքային կողմնորոշիչների ու իրավամտաձողության կնիքը:

«Սահմանադրություն» հասկացությունը լատիներենում (constitutio) նշանակում է հիմնել, սահմանել: Սակայն ամեն մի «հիմնում» կամ «սահմանում» «սահմանադրում» կամ «սահմանադրություն» չէ: Վերջինս հիմնականում բնորոշվում է որպես պետության Հիմնական օրենք (օրենքների ամբողջություն), որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Տվյալ օրենքի հիմնական բնութագրիչները պայմանավորված են այն հանգամանքով, որ դրանով սահմանվում են.

- պետական կարգի հիմունքները,
- մարդու եւ քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների ապահովման ու պաշտպանության երաշխիքները,
- պետական իշխանության համակարգը, դրա գործառույթները, կազմակերպման սկզբունքներն ու կարգը,
- քաղաքական իշխանության իրականացման եւ անհատի քաղաքական, տնտեսական, սոցիալական ազատությունների դրսևորման իրավական սահմանները:

«Սահմանադրություն» հասկացությունը հայերենում նույնպես առաջին հերթին ենթադրում է սահմանել: Ինչպես նշում է պրոֆ. Խ. Սամուելյանը՝ միջնադարում հայ ազգային եկեղեցական ժողովներն իրենց վերապահելով «օրենսդիր գործոնի նշա-

նակություն», օգտագործել են «սահմանք» տերմինը, որը «...հաճախ կրում է «կանոնի», «օրենքի» հոմանիշ իմաստ. այստեղից էլ կանոնական որոշումներում հաճախ են պատահում **սահմանել, սահմանադրել** բայերը՝ օրինադրել, կանոնադրել առումով»:<sup>5</sup> Միաժամանակ, «սահմանադրություն» հասկացությունն ստուգաբանվել է նաեւ «սահման դնելու» առումով, իշխանության սահմանները հստակեցնելու եւ «...անճողոպրելի որոգայթ» ստեղծելու բոլոր նրանց համար, ովքեր կփորձեն դուրս գալ օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակներից:<sup>6</sup>

Նոր Հայկազյան բառարանը «սահմանադրություն» հասկացության չափազանց ուշագրավ մեկնաբանություն է ներկայացնում:<sup>7</sup> Նախ բերվում են տարալեզու հոմանիշներ, ինչպես, օրինակ՝ Determinatio, constitutio, statutum, dispositio. Այնուհետեւ տրվում է բացառիկ հետաքրքիր ու արժեքավոր մի բնորոշում. «**որոշումն սահմանաց եւ Տեսչութիւն վերին**»: Բերվում են առանձին օրինակներ «սահմանադրություն» հասկացության պատմական վկայություններից: Մասնավորապես, հիշատակվում է Մովսես Խորենացու արտահայտությունն Աշտիշատի ժողովի առնչությամբ՝ «կանոնական սահմանադրությամբ հաստատեց գողորմածութիւն», կամ Արիստակես Լաստիվերտցու արտահայտությունը՝ «Քաղկեդոնական սահմանադրութիւն»: Այնհայտ է, որ այս բառարանում «սահմանադրություն» հասկացությունը լուրջ բովանդակային ընդգրկում ունի, որի հիմքում ընկած են մի շարք կարեւոր բնութագրիչներ.

1. դա որոշում է, վճիռ է, «օրինադրութիւն» է,
2. այն ունի սահմանային նշանակություն, իրենից այն կողմ, իրենից վեր կամ գերակա «որոշում» լինել չի կարող,
3. «**Տեսչութիւն վերին**» արտահայտությունը փոխընդանուր մասն «որոշման» սահմանային ու գերակա բնույթը, հատուկ ընդգծում է դրա հիմքում ընկած անփոփոխելի «ի վերուստ տրված» արժեքների առկայությունը:

5 Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երեւան, 1939, էջ 46:  
6 Որոգայթ փառաց (Հակոբ էւ Շահամիր Շահամիրյաններ), Երեւան, 2002, էջ 15:

Մեր պատմական մատենագրությունն իր գրաբարյան տարբերակներում հետետողական է եղել «սահմանադրություն» հասկացության իմաստավորման հարցում, ինչը չի պահպանվել աշխարհաբար թարգմանություններում: Տիպական օրինակ է, որին հետագայում դարձյալ կանդրադառնանք, Խորենացու «Հայոց պատմությունից» բերված միտքը, որում անառարկելիորեն խոսվում է սահմանադրություն երեւոյթի մասին: Հետագա թարգմանություններում «սահմանադրությամբ»-ը դարձել է «սահմաններով»՝ ամբողջությամբ իմաստագրկելով հասկացությունը:<sup>8</sup>

Նոր Հայկազյան բառարանը «սահմանադրություն» հասկացության հիմքում դնում է «սահմանադրել» հասկացությունը, որը մեկնաբանվում է որպես սահման դնել, որոշել, կարգավորել, կարգել, օրինադրել, սահմանել: Այս բոլորն ակնհայտորեն իրենց հիմքում կանոնակարգման, իրավակարգավորման իմաստ են պարունակում: Հետեւաբար, «սահմանադրություն» հասկացության թվարկված բնութագրիչներին, ըստ հիշյալ բառարանի, պետք է ավելացնել նաեւ, ներկայիս բնորոշմամբ, նորմատիվ բնույթը:

Ըստ Հր. Աճառյանի՝ «սահմանադրություն» հասկացությունը կազմված է «սահման» (որոշեալ չափ, ծայր, վերջ, կանոն, օրենք)<sup>9</sup> եւ «դիր»<sup>10</sup> հասկացություններից: Էդ. Աղայանը տալիս է սահմանադրության հետեւյալ բնորոշումը «1. Պետության հիմնական օրենք, որ սահմանում է նրա հասարակական ու պետական կառուցվածքը, ընտրական սիստեմը, պետական մարմինների կազմակերպման ու գործունեության սկզբունքները, քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները: 2. Սահմանված կարգ: 3. Սահմաններ դնելը՝ որոշելը»:<sup>11</sup>

Հայ մատենագրության մեջ եւ լեզվահամեմատական վերլուծություններում «սահմանադրություն» հասկացությունը հստակ բնութագրում է իրերի ու երեւոյթների որոշակի կարգ, կանոն, օ-

րինաչափություն սահմանելու, ընդունելու հանգամանքը՝ ընդգծելով վերջինիս որոշակի, առանձնահատուկ բնույթը:

Այս վերլուծությունից հետեւում է, որ **սահմանադրական մշակույթի առկայությունն առնվազն պայմանավորված է «սահմանային», «եզրագծային», «գերակա» որոշում կայացնելու հասարակական կարողունակությամբ ու նման որոշումը կյանքի կոչելու նախադրյալների առկայությամբ:**

Հայ իրականության մեջ «սահմանադրություն» հասկացությունը վերագրվել է նաեւ առանձին պայմանագրերի կամ տարաբնույթ կազմակերպությունների կանոնագրերի:<sup>12</sup>

«Սահմանադրություն» հասկացությունն ստացել է նաեւ տարաբնույթ հանրագիտարանային մեկնաբանություններ: Փիլիսոփայության դոկտոր Մ. Ֆիլիպովի խմբագրությամբ 1902 թ. հրատարակված հանրագիտարանային բառարանում մասնավորապես նշվում է, որ քիմիայում սահմանադրություն ասելով՝ հասկացվում է «մասնիկների, ատոմների խմբավորում», ֆիզիոլոգիայում եւ բժշկագիտության մեջ՝ «մարմնակազմություն», «վնասակար ազդեցությունների հանդեպ օրգանիզմի դիմադրելու կարողություն» (ուշագրավ ձեւակերպում է եւ կարելի է զուգահեռներ անցկացնել հասարակական օրգանիզմի հետ), պետական իրավունքում՝ «պետական կազմավորում՝ հիմնված կամ սովորական իրավունքի ու մի շարք ակտերի, կամ՝ որոշակի խարտիայի վրա»:<sup>13</sup>

Պրոֆ. Վ. Մակլակովի խմբագրությամբ հրատարակված՝ սահմանադրական իրավունքի հանրագիտարանային բառարանում<sup>14</sup> նախ՝ տրվում են լատինական constitution հասկացության

12 Ст'у Егизаров С. А. Исследования по истории учреждений в Закавказье. Ч. II. Казань, 1891, էջ 361:

13 Энциклопедический словарь (составлен под ред. М.М. Филиппова), т. III, приложение к журн. "Природа и люди" за 1902, էջ 1741: Այս ասպեկտներին անդրադարձ կա նաեւ մեկ այլ հանրագիտարանային լառարանում՝ Փ. Брокгауз, И.А. Ефрон: "Энциклопедический словарь". М., изд. "Русское слово", 1996 г.

14 Конституционное право: Словарь /Отв. ред. В.В. Маклаков. М., 2001, էջ 230-231:

8 Ст'у Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե դար, Երեւան, 1997, էջ 225:

9 Աճառյան Հր., Հայերեն արմատական լառարան, հ. IV, Երեւան, 1979, էջ 162:

10 Նույն տեղում, հ. I, էջ 676:

11 Աղայան Էդ., Արդի հայերենի լացատրական լառարան, Դ-Ֆ, Երեւան, 1976, էջ 1271:

ռուսերեն հոմանիշները՝ ցրՑՈվՏՉսպվՌ-պ, ցփՐպՁՊպվՌ-պ, ՏՐՀՈվՌ-ՁՈՓՌ՝. Այնուհետև բերվում են այդ հասկացության երկու խումբ պարզաբանումներ:

**Առաջին.** այն դիտվում է որպես բարձրագույն իրավաբանական ուժով օժտված, մարդու իրավունքներին ու ազատություններին, պետության հիմքերին, կառավարման ձեռնարկն ու տարածքային կազմակերպմանը, իշխանության մարմինների ձեռավորմանն առնչվող կարեւորագույն հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերի համակարգ: Ի դեպ, այն կարող է հանդես գալ մեկ միասնական կամ մի քանի իրավական ակտերի տեսքով: Սահմանադրությունը գտնվում է իրավական ակտերի հիերարխիայի գագաթին, եւ մնացած բոլոր ակտերը պետք է համապատասխանեն դրան:

**Երկրորդ.** Ֆրանսիայի օրինակով ցույց է տրվում, որ սահմանադրություն են անվանվում նաեւ այլ բնույթի իրավական ակտեր, ինչպես, օրինակ՝ պառլամենտի կողմից ընդունված առանձնահատուկ բնույթ ունեցող հայտարարությունը կամ որոշումը, որը չփոփոխելով գործող Սահմանադրությունը, միաժամանակ կարեւոր խնդիր է լուծում: Օրինակ է բերվում, մասնավորապես, «Բրոզիի սահմանադրությունը», որը պատգամավոր հերցոգ Ա. դե Բրոզիի՝ 1873թ. մարտի 13-ի նախաձեռնության արդյունքում ընդունված օրենքն էր՝ Խորհրդի եւ Նախագահի միջեւ հարաբերությունների առնչությամբ:

Պրոֆ. Ս. Ավագյանի խմբագրությամբ հրատարակված՝ սահմանադրական իրավունքի հանրագիտարանային բառարանում շեշտը դրվում է այն հանգամանքի վրա, որ Սահմանադրությունը ներկայացվում է որպես **պետության** հիմնական օրենք (ընդգծմամբ մերն է - Գ.Հ.), որն արտահայտում է ժողովրդի կամքն ու շահերը, ունի համապարտադիր բարձրագույն իրավաբանական ուժ, ընդունվում է պառլամենտի, հատուկ սահմանադիր ասամբլեայի կամ անմիջականորեն ժողովրդի կողմից: Շեշտվում է նաեւ, որ Սահմանադրությունը **թե՛ պետության եւ թե՛ հասարա-**

**կության** փաստաթուղթն է, որի հիման վրա հետեւություն է արվում, որ Սահմանադրությունը «քաղաքական փաստաթուղթ է»: Սահմանադրության հիմնական բնութագրիչների մեջ առանձնացվում են չորս կարեւոր որակներ, համաձայն որոնց Սահմանադրությունը.

1. իրավական ակտ է,
2. ունի գերակա բնույթ, բարձրագույն իրավաբանական ուժ,
3. հիմք է հանդիսանում ընթացիկ օրենսդրության համար, պայմանավորում դրա բնույթը,
4. ունի ընդունման ու փոփոխման հատուկ կարգ:<sup>15</sup>

Բերված հիմնական բնութագրիչներն **անհրաժեշտ ու բավարար են** սահմանադրական իրողությունը հաստատելու, այս կամ այն իրավական ակտը սահմանադրական կարգին դասելու կամ չդասելու համար: Այս չափանիշները կարող են օգտակար լինել նաեւ պատմական իրողություններին անդրադառնալիս եւ սահմանադրական ավանդույթների ձեռավորման գոյաբանական առանձնահատկություններն ուսումնասիրելիս: Բովանդակային առումով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ տարբեր հեղինակներ «սահմանադրություն» հասկացությունը մեկնաբանելիս հատկապես կարեւորում են, որ այն բնորոշում է տվյալ երկրի պետական ու հասարակական կարգը, ընտրական համակարգը, իշխանության մարմինների կազմավորման ու գործունեության սկզբունքները, մարդկանց իրավունքներն ու ազատությունները:

Ուշադրության է արժանի նաեւ այն հանգամանքը, որ «սահմանադրություն» հասկացության հանրագիտարանային բնորոշումներում հանդիպում ենք այնպիսի ձեռակերպումների, համաձայն որոնց այն նաեւ ներկայացվում է **որպես սահմանադրական սովորույթների ամբողջություն:**<sup>16</sup> Այս իրողությունը միջազգային

<sup>15</sup> Конституционное право. Энциклопедический словарь /Отв. ред. д.ю.н., проф. С.А. Авакьян. М., 2000, էջեր 313-315:

<sup>16</sup> Տե՛ս Պողոսյան Վ.Վ., Սահմանադրական հասկացությունների համառոտ լառարան / խմբ. Գ. Հարությունյան, Երեւան, 2001, էջ 208-209:



պրակտիկայում ընդունված է կոչել նաեւ **չգրված Սահմանադրություն**: Տվյալ պարագայում շեշտը դրվում է այն հանգամանքի վրա, որ սոցիալական հանրությունը կարողացել է իր գոյի որոշ հիմնական կանոնների շուրջ գալ ընդհանուր համաձայնության, եւ այդ կանոնները հարգվում, պաշտպանվում են, էական դերակատարություն ունեն տվյալ հասարակության բնականոն կյանքն ու զարգացումը երաշխավորելու գործում: Օրինակ, դեռեւս XVII դարից սկսած անգլիական քաղաքական միտքը «սահմանադրություն» հասկացությունը գերազանցապես ներկայացնում էր ոչ որպէս հասարակության, պետության ու անհատի կենսագոյի հիմքը կազմող իրավաքաղաքական միասնական ակտ, այլ որպէս պետության ու հասարակության հիմնային հարաբերությունների սկզբունքների ու մոտեցումների մի ամբողջություն, **որոնք ապահովում են մարդկանց ազատությունը, իրավունքի գերակայությունը, իշխանության սահմանափակումը**:<sup>17</sup>

Ամերիկյան հանրագիտարանային բառարաններում Սահմանադրությունը ներկայացվում է որպէս պետական համակարգում ստեղծված օրգանական օրենք՝ իրավունքի հիմնարար եւ առանձնահատուկ սկզբունքների ամբողջություն, որի միջոցով եւ որի հիման վրա կերտվում է պետական իշխանությունը: Այն ներկայացնում է պետական իշխանության տարբեր ճյուղերը, ժողովրդի սուվերեն իշխանությունը: Ամերիկյան իրավունքում «սահմանադրություն» հասկացությունը նշանակում է գրավոր փաստաթուղթ, որը հիմնական աղբյուր է պետական իշխանության իրականացման համար:<sup>18</sup>

Մեկ այլ բառարանում Սահմանադրությունը դիտվում է որպէս ազգի կամ պետության հիմնական օրենք՝ **գրված կամ չգրված**, որով սահմանվում են պետության կառավարման բնույթն ու հայեցակարգը, եւ որը հիմնված է բազային այնպիսի սկզբունքների վրա, որոնց միջոցով կառուցվում է տվյալ ազգի կամ պետության

ներքին կյանքը, իրականացվում է պետության սուվերեն իշխանությունը, սահմանափակվում է իշխանությունների գործունեությունը:<sup>19</sup>

Բերված օրինակները վկայում են, որ տվյալ պարագաներում հիմնական շեշտը դրվում է պետական իշխանության սահմանադրորեն կազմակերպման հիմունքների վրա:

Եթե անդրադարձ կատարենք Սահմանադրության իրավաքաղաքական բնույթին, ապա այն, **որպէս կենսագոյի հիմնական կանոնների շուրջ հասարակական համաձայնություն**, առաջին հերթին իրականացնում է **հիմնադիր գործառույթ**: Դրա ընդունումը ենթադրում է հասարակության իրավաքաղաքական նոր կարգավիճակ՝ ելնելով որոշակի քաղաքակրթական արժեքներից, նպատակներից ու սկզբունքներից: Սահմանադրությունը հասարակական համաձայնությամբ ամրագրում է սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին բնորոշ համատեղ գոյի արդյունքները, առաջընթացի նպատակներն ու ուղղությունները, երաշխավորում է համակարգի կայունությունն ու դինամիկ զարգացումը: «Հիմնադիր» իրավական փաստաթղթեր ընդունվել են դեռեւս Հին Հռոմում, որոնք դիտվել են որպէս փոխհամաձայնություն միապետական իշխանության եւ հողատերերի ու առանձին քաղաքների միջեւ:

Սահմանադրությունը կոչված է նաեւ իրականացնելու լուրջ **կազմակերպական գործառույթ**, համաձայն որի ոչ միայն ամբողջականացվում է ձեռք բերածը, այլեւ հասարակության առջեւ նոր խնդիրներ է դրվում՝ վերակազմակերպելու հանրային կյանքը սահմանադրական նորմերին ու սկզբունքներին համապատասխան, գտնելու դրան համապատասխան կառուցակարգային լուծումներ, ձեւավորելու սահմանադրականության երաշխավորման իրավաքաղաքական նախադրյալներ:

Սահմանադրությունը, բովանդակելով աշխարհայացքային հստակ կողմնորոշիչներ, այնպիսի նորմ-նպատակներ ու նորմ-

17 Այդ մասին տես նաեւ՝ Невинский В.В. Конституция Российской Федерации: испытание мировым опытом // Журнал российского права, 2003, N 11, էջ 65:

18 Steven H. Gifis. Law Dictionary. New York, 1984, էջ 92:

19 Henry Campbell Black, Black's Law Dictionary, WESY Publishing CO. 1968, էջ 384:

սկզբունքներ, որոնք ամրագրում են հասարակական որոշակի արժեքների համակարգ ու դրանց ձգտելու միջոցներն ու մոտեցումները, հստակեցնում է նաեւ համակարգի **գաղափարախոսական ուղղվածությունը**:

Սահմանադրությունն ունի որոշակի **արտաքին քաղաքական ուղղվածություն**՝ ոչ միայն հաշվի առնելով միջազգային սահմանադրաիրավական զարգացումների միտումները, այլեւ սահմանելով պետության արտաքին քաղաքականության իրականացման իրավական սկզբունքներն ու կարգը:

Պատմականորեն մշտապես կարելու է եւ ներկայումս առանձնահատուկ դեր ունի Սահմանադրության **իրավական գործառույթը**, համաձայն որի Սահմանադրությունը ոչ միայն իրավական համակարգի ձեւավորման հիմքն է կամ դրա նորմերը գործում են անմիջականորեն, այլեւ պայմանավորում է օրենսդրության զարգացման ուղղվածությունն ու բնույթը:

Հասարակական հարաբերությունների «սահմանադրումը», **ընդհանուր համաձայնությամբ համապարտադիր վարքագծի կանոնների սահմանումը**՝ ելնելով դրա բնույթից, ձեւից, ընդգրկման շրջանակներից, կիրառման վիճակից, արժեհամակարգային կողմնորոշիչներից, ձեւավորում է համապատասխան ու համարժեք սահմանադրական մշակույթ: **Սահմանադրական մշակույթը սահմանադիր նորմերով ու սկզբունքներով, փոխհամաձայնությամբ ձեռք բերած հասարակական գոյի ընդհանուր կանոններով ստեղծագործաբար ապրելու մարդկային հանրության արժեքային որոշակի համակարգ է:**

Սահմանադրական մշակույթը ոչ միայն ենթադրում է հասարակական համաձայնության ու մարդու սոցիալական արժեքորման որոշակի մակարդակ, բանականորեն իմաստավորված արժեքների ու սկզբունքների հիման վրա հասարակական գոյի կանոնակարգված զարգացումը երաշխավորելու հնարավորություն, այլեւ այդ հնարավորությունն իրականություն դարձնելու կարողունակություն:

**Սահմանադրական մշակույթի հիմնական տարրերն են հասարակական համակեցության բանական իմաստավորումը, կենսա-**

**գոյի հիմնարար արժեքների առկայությունը, դրանց շուրջ հասարակական համաձայնությունը, վերջինիս վերարտադրումն ապրելակերպի ու գործելակերպի կանոնների ու համապարտադիր վարքագծի նորմերի միջոցով, դրանց որոշակի համակարգված իրավական բնույթ հաղորդելն ու դրանց նկատմամբ հասարակական որոշակի վերաբերմունքը:** Այդ տարրերը հասարակական պրակտիկայում պատմականորեն դրսևորվում են թե՛ համակարգային ամբողջականությամբ եւ թե՛ մասնակիորեն:

Գրականության մեջ սահմանադրական մշակույթը դիտարկվում է որպես իրավական մշակույթի մասնավոր վիճակ եւ բնութագրվում որպես օրենքի, իրավունքի, իշխանության, պետության եւ ընդհանրապես իրավական արժեքների, իրավանորմերի ու սահմանադրական սկզբունքների հանդեպ հասարակության անդամների վերաբերմունքի դրսևորում:<sup>20</sup> Պրոֆեսոր Ֆ. Սնայդերը նույնպես գտնում է, որ սահմանադրական մշակույթն ընդհանուր իրավական մշակույթի մաս է: Միաժամանակ, նրա կարծիքով՝ իրավական մշակույթի լավագույն ձեւակերպումը տրվել է Ֆրիդմանի կողմից 1969 թվականին:<sup>21</sup> Համաձայն այդ ձեւակերպման՝ **իրավական մշակույթը վերաբերում է արժեքների ու հարաբերությունների որոշակի համակարգի, որոնք միավորում են մարդկանց եւ որոշում իրավական համակարգի տեղը հասարակության ընդհանուր մշակույթի մեջ:**

Սահմանադրական մշակույթը, իր հերթին, բնութագրում է իրավունքի (մասնավորապես, սահմանադրական իրավունքի) տեղը հասարակության ինքնաճանաչման, նրա մշակութային համակարգում:

Գրականության մեջ իրավացիորեն շեշտվում է, որ Սահմանադրության գոյության փաստը դեռեւս բավարար չէ սահմանադրական մշակույթի մասին խոսելու համար: Անհրաժեշտ է սահմանադրական մշակույթի գոյության փաստը գնահատել Սահ-

<sup>20</sup> Մասնավորապես տե՛ս <http://www.eurozine.com/article/2004-02-19-snyder-en.html>.

<sup>21</sup> <http://www.eurozine.com/article/2004-02-19-snyder-en.html>.

մանադրության, դրա նորմերի ու սկզբունքների հանդեպ հասարակության անդամների ունեցած վերաբերմունքից, դրանցով ապրելու նրանց պատրաստակամությունից ու իրական հնարավորությունից ելնելով<sup>22</sup>: ԱՄՆ Սահմանադրության 200-ամյակի կապակցությամբ հրատարակած իր ուսումնասիրության մեջ Գ. Լեյնն առանձնապես կարեւորում է այն հանգամանքը, որ Սահմանադրությունը՝ դա տեքստ չէ, այն արժեքային համակարգ է, արժեքներ, որոնք ապրում են, վերարտադրվում, ուղղորդում հասարակական կյանքը:<sup>23</sup> Իսկ Ռոջեր Գոլդմանը գտնում է, որ ամերիկյան սահմանադրական մշակույթն ունի երեք հիմնական առանձնահատկություն.

- իրավունքների շեշտադրումը՝ ի հաշիվ պարտականությունների,
- դատական իշխանության կենտրոնական դերը մարդու իրավունքների պաշտպանության հարցում,
- ամերիկյան Սահմանադրության ընկալումը որպես «կենդանի փաստաթղթի», զարգացող իրողության:<sup>24</sup>

Իր հերթին, պրոֆեսոր Չ. Սանդերսը համադրելով բրիտանական եւ ամերիկյան սահմանադրական մշակույթի առանձնահատուկ գծերը շեշտում է, որ բրիտանական սահմանադրական ավանդույթը էվոլյուցիոն ավանդույթ է, այլ ոչ թե հեղափոխական, **խարսխված է աստիճանական, պատմականորեն ձևավորված սահմանադրական արժեքային համակարգի վրա:**<sup>25</sup>

Մարդկային հասարակության արշալույսին սոցիալական հանրության կենսագոյի հիմքն էին կազմում սովորույթային ու

բարոյական նորմերը, հոգեւոր արժեքներն ու կանոնները, որոնք հասարակական համակեցության մեջ գործադրվում եւ պահպանվում էին որպես վարքագծի պարտադիր պայմաններ: Այնքանով, որքանով դրանք վերաբերում էին ողջ հանրությանը եւ համակարգային կանոնակարգող նշանակություն ունեին, դրանց նկատմամբ հասարակական վերաբերմունքի առումով իրենց մեջ ակնհայտ սահմանադրական մշակույթի դրսեւորման տարրեր էին պարունակում: Իրավական արժեքանության (աբսոլյուտիստի) տեսանկյունից<sup>26</sup> սահմանադրական մշակույթի ի հայտ գալը պայմանավորված է նրանով, **թե որքանով են «սահմանադիր» հարաբերություններն իրավականորեն արժեվորվում, դառնում վարքագծի համընդունելի կանոն**, անկախ նրանից՝ սովորույթային դրսեւորում ունեն, թե՛ հանդես են գալիս որպես համապարտադիր վարքագծի սահմանված կանոն: Գրականության մեջ հաճախ բուն սահմանադրությունը մշակութային երեւույթ է համարվում միայն այն դեպքում, երբ այն կյանքի է կոչվում, գործող, ապրող իրողություն է, ընկալված է ու ճանաչված, այլ ոչ թե հաճելի ձեւակերպումների ու խելոք մտքերի ժողովածու է:<sup>27</sup>

Սահմանադրական մշակույթը, այդուհանդերձ, առավել ամբողջական դրսեւորվում է քաղաքակրթության որոշակի աստիճանում, երբ գիտակցված պահանջ է առաջանում հասարակական համաձայնությամբ սահմանել վարքագծի հիմնական սկզբունքներ ու կանոններ՝ որպես համապարտադիր իրավական նորմեր, ու հետեւել դրանց: Իրավական առումով այդ պահանջը հանգեցրեց սահմանադրությունների ի հայտ գալուն ու հանրային կյանքը սահմանադրորեն կանոնակարգելուն: Սակայն Սահմանադրության լոկ գոյությունը, ինչպես նշեցինք, բավարար չէ երկիրը կամ պետությունը սահմանադրական համարելու համար: **Անհրաժեշտ է նաեւ, որպեսզի սահմանադրական նորմերը կյանքի կոչվեն, դրանց նկատմամբ դրսեւորվի հասարակական կա-**

22 <http://www.claremont.org/writings/000901west.html>.

23 REPRESENTING POPULAR SOVEREIGNTY: THE CONSTITUTION IN AMERICAN POLITICAL CULTURE by Daniel Lessard Levin. Albany: State University of New York Press, 1999. <http://www.bsos.umd.edu/gvpt/lpbr/subpages/reviews/levin99.html>.

24 Roger Goldman - The Protection of Individual Rights as the Fundamental Element of the United States Constitutional Culture // Constitutional Cultures. Ed. by M. Myrzykowski. Warsaw, ISP, 2000, էջ 25:

25 Saunders Ch. A. Constitutional Culture in Tradition // Constitutional Cultures. Ed. by M. Wyrzykowski. Warsaw, ISP, 2000. P. 41:

26 St'u Политико-правовые ценности: история и современность /Под. ред. В.С. Нерсисянца. М., 2000, էջեր 5-30:

27 St'u Book Review – H'aberle and the World of the Constitutional State, <http://www.germanlawjournal.com/print.php?id=227>.

**յուն վերաբերմունք՝ ձեւավորելով հասարակության սահմանադրական մշակույթի իրական որակներ, այն դարձնելով ազգային մշակույթի օրգանական բաղադրատարրը:**

Այս փուլում արդեն սահմանադրական մշակույթը նոր որակ է ստանում հասարակական-պետական այն համակարգերում, **ուր Սահմանադրության հետ մեկտեղ առկա է սահմանադրականությունը**, որտեղ սահմանադրական նորմերն ու սկզբունքներն ապրող իրողություն են, ձեւավորվել է սահմանադրական ժողովրդավարության անհրաժեշտ ու բավարար միջավայր, որտեղ սահմանադրական նորմերը գործում են անմիջականորեն եւ կա սահմանադրական վերահսկողության արդյունավետ համակարգ, որտեղ Սահմանադրությունը ոչ թե գործիք է պետական իշխանության ձեռքին, այլ **քաղաքացիական հասարակության հիմնական օրենք է**, միջոց է այդ հասարակության ներդաշնակ ու կայուն զարգացումը երաշխավորելու համար՝ ոչ միայն սահմանելով վարքագծի հիմնական կանոնները, այլեւ սահման դնելով իշխանությանը, այն սահմանափակելով իրավունքով: Նման պարագայում խոսքը «**ժողովրդավարական սահմանադրական մշակույթ**» հասկացության մասին է, որը բնորոշ է ժողովրդավարական հասարակական համակարգերին, ուր ներդաշնակված են նաեւ ազգային ու համամարդկային մշակույթի որակները: Ընդ որում, Սահմանադրությունը եւ սահմանադրականությունը չեն կարող դիտարկվել միայն նեղ իրավական առումով, պրագմատիկ իրավահարաբերությունների կամ վերացական հասկացությունների համատեքստում: Թե՛ մեկը եւ թե՛ մյուսը խոր մշակութային երեւոյթներ են, ունեն արժեհամակարգային փոխալայմանավորված ամուր արմատներ, դրանց իմաստավորման, ընկալման ու ճանաչողության քաղաքակրթական հստակ կողմնորոշիչներ ու մակարդակ: Այդ փոխլրացման շրջանակներում է, որ սահմանադրական մշակույթն իր հերթին պայմանավորում է սահմանադրական ժողովրդավարության մոդելի, դրա ռազմավարության ընտրությունը:

Սահմանադրական մշակույթի մակարդակը պայմանավորված է նաեւ սահմանադրական լուծումների մակարդակով, սահ-

մանադրական սկզբունքների հստակությամբ ու առաջադիմական բնույթով, դրանց իրացման ներսահմանադրական լուծումներով, այսպես կոչված, սահմանադրական «հասունությամբ» ու «ճաշակով»:

Վերջին հարյուրամյակների ընթացքում շատ է խոսվել իրավական, ժողովրդավարական պետության «կատարյալ» սահմանադրության մոդելի մասին: Դեռեւս 1928թ. հրատարակված «Գիտնականները սահմանադրության մասին» մենագրության մեջ Կ. Շմիդտը խոսում էր «քաղաքացիական իրավական պետության սահմանադրության իդեալական հայեցակարգի» մասին: Իսկ ահա 2004թ. Սանտյագոյում հրավիրված Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության զագաթնաժողովում քննարկումների առանցքն էր դարձել «Սահմանադրականություն՝ նոր աշխարհ, հին դոկտրինաներ» թեման: Արված կարեւոր հետետեւություններից մեկն այն էր, որ չի կարող համապարփակ ու իդեալական Սահմանադրություն լինել: Այն յուրաքանչյուր հասարակության արժեհամակարգային ընդհանրացումն է, որի հիմքում անհրաժեշտաբար պետք է դրվեն նաեւ միջազգային սահմանադրագիտության կողմից ճանաչման արժանացած որոշակի ընդհանուր սկզբունքներ ու մոտեցումներ: Այն համակարգերում, որտեղ սահմանադրական ժողովրդավարությունը դեռեւս գտնվում է սաղմնային վիճակում, սահմանադրական զարգացումների գլխավոր խնդիրը հիմնական սկզբունքների ու արժեքների ձեւախեղումներից խուսափելն է, այն բանի զիտակցումը, որ **սահմանադրական պետությունը ձեւավորվում է հասարակության համարժեք սահմանադրական մշակույթով**: Էական է եւ այն, որ սահմանադրական մշակույթն ավելի կայուն է, քան սահմանադրական համակարգերը, սակայն **դրանց գոյաբանական ներքին կապն անխզելի է**:

Քաղաքակրթության ներկա ձեռքբերումների հողվություն սահմանադրական մշակույթի հիմնական բնութագրիչն այն է, որ **երկրի Հիմնական օրենքը պետք է ներառի քաղաքացիական հասարակության խորքային, մնայուն արժեքների ողջ համակարգը եւ երաշխավորի դրանց կայուն ու հուսալի պաշտպանությունն ու վե-**

**րարտադրումը:** Այդ արժեքները, իրենց հերթին, ձեռավորվում են դարերի ընթացքում. յուրաքանչյուր սերունդ վերահիմաստավորում է դրանք ու իր հավելումով երաշխավորում զարգացման շարունակականությունը: Հաջողությունն ուղեկցում է այն ազգերին ու ժողովուրդներին, որոնց մոտ այս շրթան չի ընդհատվում կամ լրջորեն խտտորվում: Հետեւաբար, «սահմանադրական մշակույթ» հասկացությունը կարող է բնորոշվել որպես հասարակական համաձայնությամբ վարքագծի հիմնարար կանոնների սահմանման ու դրանց երաշխավորման առնչությամբ պատմականորեն ձեռավորված, կայուն, սերունդների ու ողջ մարդկության փորձառությամբ հարստացած հանգումներների, պատկերացումների, իրավընկալման, իրավագիտակցության, սոցիալական հանրության հիմքերը կազմող արժեքային որոշակի համակարգի ամբողջականություն: Սահմանադրական մշակույթը բնութագրում է նաեւ սահմանադրական սուբյեկտների ու ինստիտուտների փոխհարաբերությունների որակն ու մակարդակը, միմյանց նկատմամբ իրավական վերաբերմունքի «հասունության» աստիճանը:

Սահմանադրագետների կողմից «սահմանադրական մշակույթ» հասկացությունը հաճախ օգտագործվում է հոգնակի թվով:<sup>28</sup> Սահմանադրական մշակույթների մասին խոսելիս շեշտը դրվում է դրանց ձեռավորման համակարգային առանձնահատկությունների վրա: Օրինակ, «Հիմնական օրենք» հասկացությունը Գերմանիայում տարածում ստացավ XVII-XIX դարերում, եւ այդպես էին անվանվում հիմնարար նշանակություն ունեցող, կայուն եւ մեծ հեռանկարին միտված նորմեր պարունակող օրենքները: Այդպես էին կոչվում 1638թ. ընտրություններում Ֆերդինանդ III թագավորի «Կապիտուլյացիայի ակտը», 1648թ. Վեստֆալյան խաղաղությունը, 1803թ. Գլխավոր թագավորական մշտական հանձնաժողովի եզրափակիչ ակտը եւ այլն:<sup>29</sup>

28 Մասնավորապես, այս եզրակացությանը հանգեցին 1999թ. Վարշավայում հրավիրված միջազգային խորհրդաժողովի շատ մասնակիցներ // Constitutional Cultures. Ed. by M. Myrzykowski. Warsaw, ISP, 2000:

29 Տե՛ս <http://university.tversu.ru/misc/pravo/pravo.html>.

Իր հերթին, պրոֆ. Սանդերսն առանձնացնում է սահմանադրական այնպիսի համակարգեր, ինչպիսիք են Միացյալ Թագավորության, ԱՄՆ-ի եւ ֆրանսիական համակարգերը:<sup>30</sup> Ռոբերտ Գուդինը շեշտադրում է տարբեր երկրների սահմանադրությունների միջեւ եղած ընդհանրությունների հանգամանքը:<sup>31</sup> Ընդհանրապես, սահմանադրական մշակույթը համեմատական սահմանադրագիտության համար բացառիկ կարեւոր նշանակություն ունի: «COMPARATIVE CONSTITUTIONAL TRADITIONS» աշխատության հեղինակը, շեշտելով, որ սահմանադրությունը քաղաքական, փիլիսոփայական, սոցիոլոգիական, տնտեսական եւ այլ գաղափարների էքստրապոլյացիա է՝ առավել բարձր կարգի նպատակների ու սկզբունքների մեջ, համեմատական սահմանադրական վերլուծության առարկա է դարձնում սահմանադրական 11 համակարգեր:<sup>32</sup> Դրանց թվին են դասվում ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Չինաստանի, Կանադայի, Հնդկաստանի, Ճապոնիայի, Նիգերիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեքսիկայի եւ Սաուդյան Արաբիայի սահմանադրական համակարգերը: Նման դասակարգումը, անշուշտ, խիստ պայմանական է ու նաեւ վիճարկելի: Այդ համակարգերի շարքը կարելի է էապես ընդլայնել: Սակայն այս պարագայում կարեւորն այն հանգամանքի ընդգծումն է, որ սահմանադրական ավանդույթներն ու սահմանադրական մշակույթը պատմական զարգացման իրենց ճանապարհն անցել են քաղաքակրթական արժեքների որոշակի համակարգում:

Անկախ վերոնշյալ շեշտադրումներից, պատմական իրողությունն այն է, որ յուրաքանչյուր երկիր ու ժողովուրդ սահմանադր

30 Saunders Ch. A. Constitutional Culture in Tradition // Constitutional Cultures. Ed. by M. Wyrzykowski. Warsaw, ISP, 2000. P. 37-54.

31 Goodin R.E. Designing Constitutions: the Political Constitution of a Mixed Commonwealth // Constitutionalism and Transformation: European and Theoretical Perspectives / Ed. by R. Bellamy, D. Castiglione. Blackwell, 1996.

32 COMPARATIVE CONSTITUTIONAL TRADITIONS, by James T. McHugh. New York: Peter Lang Publishing, 2002.

<http://www.bsos.umd.edu/gvpt/lpbr/subpages/reviews/McHugh504.htm>.

րական մշակույթի ձեւավորման ու սահմանադրական իրողության հաստատման իր ինքնուրույն ճանապարհն է անցել՝ առավել կամ պակաս փոխառելով այլոց փորձը, կատարելով իր արժեքային համակարգից բխող հավելումներն ու ամբողջականացումը: Հիմնականը, էականն այն է, որ **սահմանադրական մշակույթը եւ բուն Սահմանադրությունը չեն կարող դառնալ ներմուծվող կամ արտահանվող ապրանք**: Դրանք տվյալ հասարակության, սոցիալական կոնկրետ հանրության արժեքային համակարգի վրա ձեւավորված իրողություններ են: Հակառակ պարագայում, որքան էլ փորձառու պատվաստ կատարվի, դրանք չեն կարող կենսունակություն ձեռք բերել ու դառնալ ապրող իրողություն: Այս հարցին մենք դեռեւս կանդիդատանք: Այստեղ, սակայն, ցանկանում ենք առանձնահատուկ շեշտել, որ հատկապես ազգային-պետական կազմավորումներում արժեքային այդ համակարգերը ձեւավորվում են դարերի ընթացքում, եւ դրանք են ընկած ինքնության որակների ու տեսակի պահպանման հիմքում: Ուստի **սահմանադրական մշակույթը չի կարող ապագային լինել**: Առաջին հերթին Սահմանադրությունն է՝ կոչված ապահովելու վերագայինի ու ազգայինի ներդաշնակությունը, համամարդկային արժեքների ու ազգային առանձնահատկությունների խելամիտ համատեղումը՝ նպատակ ունենալով ապահովել տեսակի պահպանման ու բարելավված որակներով վերարտադրման անհրաժեշտ միջավայր, մարդու ստեղծարար նախասկզբի իմաստավորման ու երաշխավորված իրացման անհրաժեշտ ու բավարար նախադրյալներ:

## 1.2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր իրավական համակարգում սահմանադրական մշակույթն ամենից առաջ ամբողջականանում ու դրսևորվում է տվյալ համակարգին բնորոշ սահմանադրական դոկտրինայի միջոցով: Վերջինս իր հերթին ներառում է համակարգված գիտելիքների, սկզբունքների ու մոտեցումների ամբողջականություն՝ կենսագոյի հիմնարար հարաբերությունների, դրանց «ձեւականացումը» հանդիսացող Հիմնական օրենքի բովանդակության, իրավական բնույթի, սոցիալական դերի, քաղաքական նշանակության վերաբերյալ: Սահմանադրական դոկտրինայի անքակտելի բաղադրատարր է նաեւ սոցիալական հանրության արժեհամակարգային կողմնորոշիչների հստակեցումը, պետության ու քաղաքացիական հասարակության հիմնարար արժեքներից ելնելով անհատի վարքագծի կանոնների ու իշխանության սահմանների որոշակիացումը: Սահմանադրական դոկտրինան ներառում է Սահմանադրության տեսամթերոգաբանական հիմունքները, հասարակական պրակտիկայում դրանց իրացման, սահմանադրականության հաստատման չափանիշները, սահմանադրագիտության ու սահմանադրական մշակույթի զարգացման միտումները, հասարակական հարաբերությունների սահմանադրականացման բնույթն ու կոնկրետ առանձնահատկությունները: Սահմանադրական մշակույթը բովանդակություն է ստանում միայն այն դեպքում ու այնքանով, երբ ու որչափով Սահմանադրությունը կամ սահմանադիր նորմերը դառնում են ապրող իրողություն: Տեղին է հիշել Հեգելի դատողություններն իրավունքի բովանդակության առնչությամբ, երբ շեշտում էր, որ հասկացությունը եւ իրական հարաբերություններում դրա գոյությունը երկու տարբեր բաներ են՝ ինչպես հոգին եւ մարմինը, որոնք միմյանցից բաժան լինել չեն կարող.<sup>33</sup> Ավելին՝ սահմանադրական ընկա-

33 Гегель Г. Философия права: Пер. с нем., М., 1990, էջ 59:

լումների ու հասարակական իրողությունների միջև որոշակի ներդաշնակություն պետք է լինի: Այլ կերպ՝ սահմանադրական մշակույթը հասարակական իրական հարաբերությունների բնութագրիչն է:

Սահմանադրական մշակույթը, լինելով սոցիալական հանրության արժեհամակարգային ճանաչողության որոշակի քաղաքակրթական մակարդակի արտահայտություն, պայմանավորված է մի շարք գործոններով.

1. հասարակության զարգացման միտումներով եւ մարդու սոցիալական արժեվորման աստիճանով,
2. մարդ-հասարակություն փոխհարաբերությունների բնույթով,
3. սոցիալական հանրության արժեհամակարգային առաջնահերթություններով,
4. արտադրական հարաբերությունների զարգացման մակարդակով,
5. մարդու սոցիալական պաշտպանվածության աստիճանով,
6. հասարակական երեւոյթների ու օրենքների իրավափիլիսոփայական ճանաչողության ու ընկալման մակարդակով,
7. հասարակության քաղաքական մշակույթի ու իրավագիտակցության աստիճանով,
8. հասարակական համաձայնության կայացման սոցիալ-քաղաքական նախադրյալների առկայությամբ,
9. պետական իշխանության գաղափարաբանական կողմնորոշումով եւ հասարակության ճակատագրի համար պատասխանատվության գիտակցման աստիճանով,
10. համընդհանուր արժեքների ներագդեցության բնույթով եւ ազգային ինքնության որակների հետ դրանց ներդաշնակման աստիճանով ու հնարավորությամբ,
11. համակարգային կայունության էկզոգեն (արտաժին) եւ էնդոգեն (ներժին) գործոնների ազդեցության բնույթով եւ այլն:

Սահմանադրական ճարտարապետության կարեւորագույն խնդիրն այն է, որ սահմանադրական կոնկրետ լուծումները լինեն այնպիսին, որպեսզի սահմանադրական մշակույթի անհրաժեշտ ու բավարար մակարդակի առկայության պայմաններում սահմանադրական նորմերը գործեն ինքնաբերաբար, առանց «ձեռքով կառավարման», միանա, այսպես կոչված, ինքնակառավարիչը (ավտոպիլոտը): Նման մշակույթի բացակայությունը Սահմանադրությունը վեր է ածում կամ գեղեցիկ ձեւակերպումների ու բարի ցանկությունների ժողովածուի, կամ գործիքի, կառավարման լծակի, որը գործադրվում է իշխանության ցանկությամբ ու իրեն անհրաժեշտ խնդիրների լուծման շրջանակներում: Տվյալ պարագայում աղճատվում է Սահմանադրություն երեւոյթի էությունը, այն չի կարող ընկալվել որպես «որոշումն սահմանաց եւ Տեսչութիւն վերին»: Տեղի է ունենում երեւոյթի ու դրա դրսեւորման, «մարմնի ու հոգու» միասնականության ձեւախեղում, որը համակարգի համար անխուսափելի կործանարար հետեւանքներ կարող է ունենալ:

Սահմանադրական մշակույթի դրսեւորման կարեւոր բնութագրիչներից է **սահմանադրական իրավագիտակցությունը**: Վերջինս ամենաընդհանուր գծերով ենթադրում է հասարակական հարաբերություններում սահմանադիր նորմերի անհրաժեշտության գիտակցում, դրանց սահմանում, այդ նորմերով ապրելու ու գործելու, դրանք հարգելու ու պաշտպանելու պատրաստակամություն: Սահմանադրական իրավագիտակցության սուբյեկտ են հասարակության բոլոր անդամները, նրանց տարաբնույթ կազմավորումներն ու ինստիտուտները, այդ թվում պետությունը՝ ի դեմս պետական իշխանության ինստիտուտների: Հասարակության անդամների ու պետական ինստիտուտների սահմանադրական իրավագիտակցության միջև եղած աններդաշնակությունը սոցիալական անհամաձայնությունների ու կատակլիզմների պատճառ կարող է հանդիսանալ: Քաղաքացիական հասարակության հիմնական բնութագրիչներից մեկն էլ այն է, որ պետությունն առաջնորդվում է հասարակության սահմանադրական իրավագիտակցությամբ, որի հիմքն իրավունքի գերակայության ե-

րաշխավորումն է եւ իրավունքով իշխանության սահմանափակումը: Պետական իշխանության կարեւորագույն առաքելություններից է սահմանադրաիրավական հարաբերությունների յուրաքանչյուր սուբյեկտի մոտ սահմանադրական այնպիսի իրավագիտակցության ձեւավորումը, որի հիմքում պետք է ընկած լինեն սահմանադրական հիմնարար արժեքների ու սկզբունքների խոր, իմաստավորված ու միասնական ընկալումը, դրանց հետեւողական իրացումը:

Բնականաբար, քաղաքացին, պետական իշխանության տարբեր մարմինները, սահմանադրաիրավական հարաբերությունների տարբեր սուբյեկտներն օժտված են **սահմանադրական տարբեր իրավունակությամբ**: Վերջինս պայմանավորված է նրանց սահմանադրական գործառույթի բնույթով, իրավասությունների ծավալով, իրավունքներով ու պարտականություններով: Սահմանադրական մշակույթի կարեւոր բնութագրիչներից է, թե սահմանադրական իրավահարաբերությունների տարբեր սուբյեկտների գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները որքանով են ներդաշնակված ու հակակշռված, որչափով է երաշխավորված այդ հավասարակշռության պահպանումը դինամիկայում:

Հայ իրականության մեջ սահմանադրական մշակույթի ձեւավորման պատմական փորձը վկայում է, որ այն կառուցվածքային ձեւավորման ու համակարգային դրսեւորման լուրջ էվոլյուցիա է ապրել: Առաջին քայլերը պայմանավորված էին սովորութային հիմնարար նորմերին իրավական բնույթ հաղորդումով եւ հասարակության արժեհամակարգային կողմնորոշիչների հստակեցման անհրաժեշտությամբ: Պատահական չէ, որ Գրիգոր Լուսավորչին վերագրվող 30 կանոններից (301-325թթ.) 7-ը վերաբերում են ամուսնաընտանեկան հարաբերություններին: Սահմանվում են կանոններ «երկրորդ կնոջը թողնող եւ առաջինի մոտ դարձողի մասին», «կույսի եւ կրկնամուսնացողի մասին», «առեւանգված աղջիկների մասին», «իզագաժների (արվամուլների) մասին», «լաց ու շիվան անողների մասին», «մահացածների կտակը աղավաղողների մասին» եւ այլն: Բոլոր կանոնները հայ հասարա-

կության արժեհամակարգային մոտեցումների հստակեցում ու խտացում են բովանդակում, վարքագծի այնպիսի կանոններ են, որոնք բնորոշում են անձի, ընտանիքի ու հասարակության բարոյական կերպարը:

Տիպական է, որ հետագա դարերի ընթացքում նույնպես հայ իրականության մեջ ազգային-եկեղեցական ժողովների ընդունած սահմանադիր կանոնների մեջ մեծ տեղ է հատկացվել ամուսնաընտանեկան հարաբերություններին, բարոյական վարքագծի նորմերին: IV-VIII դարերի ընթացքում ընդունված կանոնների վերլուծությունից հետեւում է, որ դրանք առաջին հերթին ուղղված են եղել աստվածային պատվիրանները կյանքի կոչելուն, մարդկանց ու հասարակության վարքագծի արժեքային համակարգի հիմքերի ամրապնդմանը: Այս խնդիրն ավելի է կարեւորվել, քան երկրի կառավարման ձեւին ու բնույթին առնչվող խնդիրները:

Կարեւոր առանձնահատկություն է նաեւ այն, որ պետականության կորստի շարունակական վտանգը, արտաքին ճնշումները, ինքնության որակների պահպանման հրամայականը եւ մի շարք այլ գործոններ մշտապես առաջին պլան են մղել ընտանիքի ամրապնդման, ավանդույթների պահպանման, առողջ հասարակական միջավայրի ձեւավորման, արժեհամակարգային հստակ կողմնորոշման անհրաժեշտությունը: Այս փուլում դեռեւս սաղմնային ձեւով սահմանադրական մշակույթի հիմնական դրսեւորումներն առնչվում են հասարակական այդ առաջնահերթությունների իրականացմանը: Առավել կարեւոր են դառնում հասարակության ու անհատի բարոյական վարքագծի խնդիրները, քան պետական մեքենային առնչվող հիմնահարցերը: Կանոնական սահմանադրությունների առանցքային խնդիրն են դառնում մարդու աստվածակերպության երաշխավորումը, նրա ստեղծարար էության անաղարտ որակների ապահովումը:

301թ. սկսած՝ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելով, երկրում աշխարհիկ ու հոգեւոր իշխանության գործակցության որակապես նոր իրողություն հաստատվեց, որը դարերի ընթացքում իր վճռական դերն ունեցավ հայ իրավական ու սահմանադ-



րական մշակույթի ձեւավորման ու զարգացման գործում:<sup>34</sup>

Պետականության առկայության պայմաններում սահմանադրական մշակույթի հիմնական դրսեւորումներից են դառնում պետության սահմանադրական կարգի հիմունքների հստակեցումը, պետական իշխանության համակարգի ձեւավորումը, պետություն-քաղաքացի հարաբերությունների հիմնական սկզբունքների հաստատումը, պետության ներքին ու արտաքին գործառնությունների կանոնակարգումը:

Պատմության դասերը վկայում են, որ սահմանադրությունների ծնունդը հաճախ թելադրված է հասարակության առջեւ ծառայած բարդագույն խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Իրականում 1787թ. ԱՄՆ Սահմանադրության ընդունումն ազդարարեց աշխարհում նոր տիպի պետության ստեղծման մասին: 1774թ. սեպտեմբերին անգլիական գաղութները Ֆիլադելֆիայում հրավիրեցին առաջին մայրցամաքային կոնգրեսը, որը բողոքի ձայն բարձրացրեց գաղութների իրավունքների ոտնահարման վերաբերյալ: Արդեն 1775թ. սկսում է անկախության համար ուղղակի պայքարը: 1776թ. հունիսին հրավիրված երկրորդ մայրցամաքային կոնգրեսն առաջ է քաշում անկախության հռչակագրի ընդունման անհրաժեշտության հարցը: Այն ընդունվում է 1776թ. հունիսի 4-ին: Ամերիկյան նահանգների հետագա սերտ գործակցության եւ միասնական պետականության հաստատման ու ամրապնդման համար առանցքային նշանակություն ունեցավ 1787թ. Սահմանադիր ժողովի կողմից Սահմանադրության մշակումը եւ ընդունումը, որը հետագայում վավերացվեց նահանգների կողմից: Սահմանադրության ընդունման ու վավերացման, «ֆեդերալիստների» ու «հակաֆեդերալիստների» բուռն պայքար-

34 Բնականաժողովը, տարբեր երկրներում նախկինում եւ ներկայումս լուրջ առանձնահատկություններ են արձանագրվել կրոնի ու սահմանադրական մշակույթի փոխառնչություններում: Այդ մասին, մասնավորապես, տե՛ս Penelope Foundethakis (Panteion University, Athens) - Religion and Constitutional Culture in Europe // Constitutional Cultures. Ed. by M. Myrzykowski. Warsaw, ISP, 2000, էջեր 169-191:

րի ողջ պատմության ուսումնասիրությունը վկայում է,<sup>35</sup> որ ամերիկյան սահմանադրական մշակույթի ձեւավորման համար ելակետային նշանակություն է ունեցել դաշնային տիպի պետականության կայացումը, որին բնորոշ են իշխանությունների տարանջատումն ու զսպումների եւ հակակշիռների օգնությամբ հավասարակշռումը, անկախ դատական համակարգի առկայությունը եւ դատական սահմանադրական վերահսկողությունը: Այս հիմքի վրա աշխարհում առաջին անգամ ձեւավորվեց նախագահական հանրապետություն: Ամերիկյան սահմանադրական մշակույթի հետագա զարգացման առաջին դրսեւորումները վերաբերում են 1791թ. ուժի մեջ մտած սահմանադրական փոփոխություններին, որոնց հիման վրա ամրագրվեցին մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները եւ դրանց ապահովման երաշխիքները (իրավունքների մասին Բիլլը): Փաստորեն **ամերիկյան փորձն սկիզբ դրեց սահմանադրական մշակույթի նոր որակի դրսեւորմանը:** Վերջինիս բնորոշ է այնպիսի սահմանադրական համակարգի ձեւավորումը, որը ներառում է պետության սահմանադրական կարգի հիմունքներն ու պետական իշխանության կազմավորման կարգը, ինչպես նաեւ անհատ-հասարակություն հարաբերությունների ողջ շրջանակը:

Ինչպես նշել ենք, սահմանադրական մշակույթը շարունակական զարգացող երեւոյթ է եւ իրավական, ժողովրդավարական պետության ու քաղաքացիական հասարակության պայմաններում ձեռք է բերում որակապես նոր բնույթ ու բովանդակություն: Վերջինս պայմանավորված է այդ հասարակության մեջ Սահմանադրության ունեցած դերով ու նշանակությամբ: **Հասարակական հարաբերությունների սահմանադրականացումը ժողովրդավարական քաղաքակրթության կարեւոր ձեռքբերումներից է** այն առումով, որ նման հասարակությանը բնորոշ են անխտրականությունը, բազմակարծությունը, հանդուրժողականությունը, համերաշխությունը, հարգվում ու երաշխավորվում են մարդու ի-

35 Մասնավորապես տե՛ս Christopher Collier and James Linkoln Collier, Decision in Philadelphia: The Constitutional Convention of 1787, New York, 1987.

րավունքներն ու ազատությունները, հստակեցվում ու հուսալի պաշտպանվում են իշխանության սահմանները, տիրապետող է դառնում արդարադատությունը:

Նման հասարակության մեջ սահմանադրական մշակույթի հիմնական բնութագրիչներն են դառնում.

1. մարդու տեղն ու դերը հասարակական հարաբերություններում, նրա արժանապատվության ճանաչումն ու հարգումը, իրավունքների եւ ազատությունների երաշխավորումը՝ որպես բարձրագույն արժեք, որպես անմիջական գործող իրավունք,
2. իրավունքով իշխանության սահմանափակումը,
3. իշխանությունների տարանջատումն ու հավասարակշռումը,
4. ժողովրդաիշխանության հաստատումը, իշխանությունների ընտրովիությունն ու վերահսկելիությունը,
5. քաղաքական, տնտեսական ու վարչական ուժի օպտիմալ ապակենտրոնացումը, ազատ տնտեսական մրցակցության երաշխավորումը,
6. գործառնական, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախությամբ օժտված դատական համակարգի առկայությունը,
7. ազգային իրավական համակարգի ներդաշնակությունը միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին,
8. պետական իշխանության սահմանադրական համակարգում գործառույթ-ինստիտուտ-իրավասություն շղթայի դինամիկ ներդաշնակության երաշխավորումը,
9. Սահմանադրության գերակայության ու կայունության պահովման աստիճանը:

Այս հիմնական բնութագրիչները սահմանադրական տարբեր համակարգերում կարող են տարբեր կերպ դրսևորվել: Ինչպես նշվեց, միանշանակ է, որ **Սահմանադրությունը ներմուծվող կամ արտահանվող «ապրանք» լինել չի կարող**: Այն ամեն մի կոնկ-

րետ երկրի արժեքային համակարգի դինամիկ ընդհանրական մոդելն է՝ կոչված երաշխավորելու այդ համակարգի առաջընթացը, ներդաշնակ ու կայուն զարգացումը՝ հաշվի առնելով այս ոլորտում առաջադիմական մտքի ձեռքբերումները:<sup>36</sup> Ուստի սահմանադրական լուծումների հիմքում դրվում են նաև ընդհանուր բնույթի հիմնարար սկզբունքներ, որոնցից շեղումը սահմանադրական համակարգին այլ որակ կհաղորդի: Օրինակ, իրավունքով իշխանության սահմանափակման բացառումը միարժեքորեն վկայում է, որ գործ ունենք ոչ իրավական պետության հետ, իսկ առանց իշխանությունների հստակ տարանջատման անհնարին է սահմանադրական ժողովրդավարության հաստատումը: Իր հերթին, ժողովրդավարական իշխանության ձեւավորումն անհնարին է առանց պատշաճ սահմանադրական մշակույթի: Պատահական չէ, որ գրականության մեջ հանդիպում են նաև այնպիսի ձեւակերպումներ, ինչպիսիք են «հակասահմանադրական մշակույթ» կամ «սահմանադրական հակամշակույթ»:<sup>37</sup> Դա վկայում է սահմանադրական արժեքների ու սկզբունքների ձեւախեղման ու նման վիճակով դրանք պետական իշխանության ձեռքին գործիք դարձնելու իրողությունների մասին:

Հաշվի առնելով սահմանադրական մշակույթի հիմնական բնութագրիչները, սահմանադրական ճարտարապետության համար ելակետային է այն, որ նախ պետք է հստակեցվեն հասարակության սահմանադրական նպատակները: Այնուհետև որոշակիացվում են այն սկզբունքները, որոնք բխում են տվյալ սոցիալական հանրության արժեհամակարգային կողմնորոշումներից եւ դրվում երկրի սահմանադրական կարգի ձեւավորման հիմքում: Դրանց իրականացման աստիճանով են որոշվում երկրում սահ-

36 Տեղին է հիշել 2004 թ. հունվարի 12-14-ը Սանտյագոյի (Չիլի) միջազգային վեհաժողովում («Սահմանադրականություն, հին դոկտրինաներ, նոր աշխարհ») Սենեգալի ներկայացուցչի արտահայտությունն այն մասին, որ աֆրիկյան Ուոլոր երկրներն ունեն սահմանադրություններ, սակայն սահմանադրականություն գոյություն չունի, քանի որ այդ սահմանադրություններն առավելապես կառուցված են ներմուծված արժեքների ու սկզբունքների վրա եւ հիմնականում կարգախոսային ընդունված են կրում:

37 Տե՛ս <http://university.tversu.ru/misc/pravo/pravo.html>.

մանադրական մշակույթի իրական դրսևորման բնույթն ու առանձնահատկությունները: Իր հերթին սահմանադրական մշակույթի մակարդակով է պայմանավորված երկրում սահմանադրական ժողովրդավարության հաստատման հաջողությունը, որը մեր ժամանակներում երկրի ազգային անվտանգության ռազմավարության կարևոր բաղադրիչներից է: Մխիթար Գոշի Դատաստանագրքի առիթով ավելի քան մեկ դար առաջ Վ. Բաստամյանցը գրում է, որ երբ բարձր է ազգի «իրավական կուլտուրան», այդ ազգը կարող է «խելացի կերպով եւ մեծ օգուտով վայելել ազատամիտ օրէնքներ, աւելի ընդարձակ ինքնավարութիւն, եւ իւր կեանքի նոր երեւոյթների հետ միասին նա պահանջում է նոր օրէնքներ»:<sup>38</sup>

Սահմանադրական մշակույթը վերացական հասկացություն չէ, այն դրսևորվում է սոցիալական հանրության կենսակերպի բոլոր ոլորտներում: Դա առաջին հերթին բացահայտում է, թե ինչ արժեքային համակարգ է ընկած հասարակական հարաբերությունների եւ պետական իշխանության գործունեության հիմքում: Սահմանադրական մշակույթի մակարդակով են պայմանավորված բուն սահմանադրական լուծումները, որպես երկրի Հիմնական օրենք՝ դրա առաջադիմական բնույթը: Սահմանադրական մշակույթն իր առարկայական դրսևորումներն է գտնում ընդունված օրենքների ու այլ իրավական ակտերի, պետության քաղաքական համակարգի, քաղաքական ինստիտուտների ու իշխանության մարմինների գործունեության, դրանց փոխհարաբերությունների, անձի հասարակական կենսադիրքի, նրա իրավունակության մեջ: Պատմության դասերն անառարկելիորեն վկայում են, որ, այսուհանդերձ, սահմանադրական մշակույթի մակարդակի գնահատման գլխավոր չափանիշը երկրում սահմանադրական ժողովրդավարության աստիճանն է, իսկ դրա բարձրացումը՝ սահմանադրական մշակույթի գլխավոր պահանջը:

38 Բաստամյանց Վ., Դատաստանագիրք Մխիթար Գոշի. Իրավամանական հետազոտություն // «Փորձ», 1879, N6, էջ 66:

## **2. ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԻՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՉ**

### **2.1. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ ՀՌՉԱԿԵԼՈՒ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ընդունելու հանգամանքը բազմաթիվ հեղինակների կողմից գիտական լուրջ վերլուծության առարկա է դարձել, եւ ստեղծվել են պատմագիտական ստվարածավալ աշխատություններ: Մենք նպատակ չունենք դրանց հանգամանորեն անդրադարձ կատարել՝ հատկապես պատմական իրողությունների վրա հղումներ անելու համար: Քննարկվող թեմայի շրջանակներում առավել կարևոր ենք համարում գտնել հետևյալ հարցերի պատասխանները.

1. Ինչու՞մն է կայանում Հայաստանում 301թ. քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու քաղաքական նշանակությունը,
2. իրավամտաժողովության համակարգային ի՞նչ մոտեցումներ առաջադրվեցին եւ պետաիրավական զարգացումների ի՞նչ նոր նախադրյալներ ստեղծվեցին:

Առաջին հարցադրումը նույնպես գրականության մեջ անդրադարձեր ունեցել է:<sup>39</sup> Հետետությունները հիմնականում վերաբերում են.

39 Մասնավորապես տե՛ս Միրումյան Կ., Հայ քաղաքական մտքի պատմությունից, Երևան, 2002, էջեր 37-46:

- երկրի շուրջ ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակին (Հայաստանի հայտնվելը «մուրճի» ու «զնդանի» արանքում՝ Հռոմի եւ Պարսկաստանի մեծապետական շահերի խաչմերուկում),
- Պարսկաստանում զրադաշտականության հզորացման եւ այն պետական կրոն հռչակելու հետեւանքով առաջացող տագնապներին,
- Հայաստանում երկրի ներքին ամբողջականության պահպանման հրամայականներին ու կենտրոնացված թագավորական իշխանության ամրապնդման հիմնախնդիրներին,
- պետական միասնական, համակարգված գաղափարախոսության անհրաժեշտությանը՝ որպես ազգային ընդհանուր խնդիրների ու շահերի շուրջ բոլոր խավերի համախմբման եւ միասնության ամրապնդման երաշխիք:

Անկախ տարաբնույթ մեկնաբանություններից ու կարծիքներից, որոնց անդրադարձն այլ ուսումնասիրության նյութ է, ժամանակաշրջանի քաղաքագիտական իրական բնութագիրն այն էր, որ «**Հայաստանում զրադաշտականության բռնի ներմուծման քաղաքականությունը եւ Հայաստանի դիմակայությունը փաստորեն ոչ միայն կրոնական գաղափարախոսության տարբեր ձեւերի, այլեւ աշխարհայացքի, մշակութային արժեհամակարգի եւ հոգեմտավոր կողմնորոշման երկու ձեւերի բախման բնույթ ստացավ: Այս պայքարում Հայաստանը հանդես էր գալիս իբրեւ հելլենիստական ավանդույթների կրող ու պաշտպան, որպես հելլենիստական մշակութային աշխարհի ներկայացուցիչ: Ավելին, Սասանյան Պարսկաստանի նվաճողական քաղաքականության հետեւանքով III դարի երկրորդ կեսին Հայաստանի մեծ մասը գտնվում էր օտարների հսկողության տակ: Հայկական պետականությունը կրկին հայտնվել էր կործանման եզրին, ինչն առաջադրեց պետական ինքնիշխանության եւ ազգային ինքնության պահպանման պատմական խնդիրը»:<sup>40</sup> Պատմական իրողու-**

թյունն այն է, որ այդ խնդրի լուծման գործում բացառիկ դեր վերապահվեց 301թ. քրիստոնեությունն իբրեւ պետական կրոն հռչակելուն՝ որպես համախմբող, պետականությունը պահպանող ու ամրապնդող առաջադիմական կրոնագաղափարական գործոնի: Նոր արժեհամակարգային կողմնորոշումը գաղափարախոսական անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեց ազգային-պետական միասնական քաղաքականություն մշակելու եւ իրականացնելու, հոգեւոր-գաղափարական գործոնը սոցիալական տարբեր խավերի համախմբման գորեղ միջոց դարձնելու, երկրի ինքնիշխանությունն ամրապնդելու, «Հայաստան աշխարհիս փրկության դարձը» երաշխավորելու համար: Անտարակույս է, որ Տրդատ թագավորը ոչ միայն քրիստոնեությունը պետական կրոն հռչակելով, այլեւ մեծ ջանքեր գործադրելով դրա տարածման ու արմատավորման համար, առաջին հերթին հետապնդում էր ազգային պետականության ամրապնդման նպատակ: Ինչպես նշում է Նիկողայոս Ադոնցը՝ «Հայաստանը երեսը դարձրեց դեպի արեւմուտք այն օրից, երբ քրիստոնեացավ...: Չուլման եւ կորստյան վտանգը կախված էր Հայաստանի վրա: Ուրիշ հնար չկար փրկության, քան ապավինել քրիստոնեության»:<sup>41</sup> Ուշադրության է արժանի նաեւ օտար հեղինակներից պրոֆ. Կոհլերի ընդհանրացումը. «Ահա մեր առջեւն ազգ մը՝ որ կալկասեան անկախութենէ քաղաքակրթեալ իրաւանց վիճակի անցավ, երբ վերջին աստիճանի զարգացեալ կրօն մ' ընդունեցաւ հանդերձ իրաւամբբ՝ որ անոր մեջ կային: Չափազանց չենք խօսիր, եթէ ըսենք, թէ միայն այս իրաւանց մոտ գտնելովն Հայը կրցաւ՝ օտար աշխարհի մեջ՝ իբր սեպհական քաղաքակրթութիւն ունեցող՝ աշխարհի դեր կատարել»:<sup>42</sup> Իր ուսումնասիրությունների արդյունքում պրոֆեսոր Հ. Հովսեփյանը նույնպես եզրահանգում է, որ «Հայկական իրավաքաղաքական մտքի զարգացման համար մեծ նշանակու-

41 Նիկողայոս Ադոնց., Հայկական հարց, Երեւան, 1996, էջ 148 (Հարկ է նշել, որ արեւմուտքը քրիստոնեացավ ըստ էության ավելի ուշ):

42 Գոլեր [Կոհլեր], Իրաւունք Հայոց, Վիեննա, 1890, էջ 14 (Անագրով 1888 թ. համեմատական իրավաւնական իմաստով տպագրված նյութը վերնագրվել է՝ Dr. I. Kohler. Das Recht der Armenier):

40 Նույն տեղում, էջ 38:

թյուն է ունեցել քրիստոնեության տարածումը եւ IV դարի սկզբում նրա՝ որպես պետական կրոն ընդունումը»:<sup>43</sup>

Ողջ Հայաստանի համար ծանր ու դժվարագույն խնդիր էր հին մտայնության հաղթահարումը եւ նոր արժեքային կողմնորոշիչներին անցումը: Փավստոս Բուզանդը նկարագրելով IV դարի առաջին կեսին վերափոխվող, քրիստոնեական արժեքներն արմատավորող, անցումային շրջանում գտնվող հայ իրականության ցավոտ կողմերը, վկայում է. «Ատելություն ու նախանձ իրար դեմ, չարականություն, թշնամություն, ոխակալություն, իրար խածատել, ընկերին եւ եղբորը նենգել, սիրելիները սիրելիներին, մերձավորները մերձավորներին, ընտանիքներն ընտանիքներին, ազգականներն ազգականներին, խնամիները խնամիներին դավեր էին սարքում: Այնտեղ մարդիկ ծարավ էին մեկը մյուսի արյունը խմելու, ճիգ էին թափում իրար վնասելու, անուղղա վարքի եւ անխելքության պատճառով»:<sup>44</sup> Այս իրականության հաղթահարման, հույսի, հավատի ու համերաշխության հաստատման բեռը ծանրացել էր թե՛ պետության եւ թե՛ եկեղեցու ուսերին:

Նման իրողությունների պայմաններում չափազանց հետաքրքիր է Գրիգոր Լուսավորչին **համաժողովրդական հավանությանը** հոգեւոր առաջնորդ կարգելու հանգամանքը: Ինչպես վկայում է Ազաթանգեղոսը՝ «...Տրդատ թագավորը իր կին՝ Աշխեն տիկնոջ ու իր քույր Խոսրովիդուխտի համաձայնությամբ հրաման տվեց իր ամբողջ զորքերը միատեղ ժողովի կոչել: Ամեն կողմից, ըստ հրամանի, շուտափույթ հասան նշանակված վայրը՝ Վաղարշապատ քաղաքն Այրարատ գավառում: Թագավորն էլ ճամփա ընկավ այնտեղ հասնելու: Ամբողջ զորքը առհասարակ կուտակվեց՝ մեծամեծներ, կուսակալներ, գավառապետներ, պատվավորներ, պատվականներ, զորականներ, պետեր, իշխաններ, նախարարներ, ազատներ, դատավորներ ու զորագլուխներ հասան, ներկայացան թագավորին:

Թագավորը ամենքի հետ խորհուրդ արեց, որ փութան, հաս-

նեն բարի գործերի ժառանգորդ դառնալու: Եկեք, ասում է, փութանք Աստծու կողմից մեզ տրված կյանքի առաջնորդին՝ Գրիգորին հովիվ դարձնել, որպեսզի մկրտությամբ լուսավորի եւ վերանորոգի մեր արարիչ Աստծու օրէնսուսոյց խորհրդով»:<sup>45</sup>

Այս վկայության մեջ ուշադրության են արժանի հետեւյալ հանգամանքները.

- գրաբարյան «հրաման ետ ի ժողով կոչել միաբանութեամբ ամենայն զօրաց իւրոց» արտահայտությունը, երբ բառացի թարգմանաբար ներկայացվում է «հրաման տվեց իր ամբողջ զորքերը միատեղ ժողովի կոչել» տեսքով, իմաստային լուրջ աղավաղում է բովանդակում: Տեքստի հետագա շարադրանքից էլ պարզ է դառնում, որ խոսքը թագավորին գորակցողներին ի մի բերելու եւ միաբանությամբ որոշում կայացնելու մասին է, այլ ոչ թե զորուժի հավաքի,
- թագավորն «ամենքի հետ խորհուրդ առնելով» է ցանկանում «Գրիգորին հովիվ դարձնել»՝ երաշխավորելու համար այս կարեւորագույն հարցում հասարակական համաձայնության կայացումը,
- ծնվում է նոր երեւոյթ՝ ի դեմս ազգային եկեղեցական ժողովների, որոնք հետագա հարյուրամյակների ընթացքում վճռական դերակատարություն են ունեցել մեր ինքնության որակների արժեհամակարգային հստակեցումների, հասարակական համաձայնությամբ կյանքի հիմնական կանոններն ու սկզբունքները սահմանելու, դրանց իրականացումը երաշխավորելու գործում:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելով՝ պետականորեն ընդունվում էր ոչ միայն քրիստոնեության դավանաբանական դոկտրինը, այլեւ ողջ արժեքային համակարգը, որի մեջ առանձնահատուկ տեղ ունի **քրիստոնեական իրավամտաժողովությունը**: Վերջինիս մանրամասներին մենք նպատակ չունենք հանգամանորեն անդրադառնալ:<sup>46</sup> Կփորձենք ընդ-

43 Овсеян О.А. и др.: Политико-правовая мысль Армении //История политических и правовых учений: средние века и Возрождение. М., 1986, էջ 109:

44 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երեւան, 1987, էջ 55:

45 Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, Երեւան, 1983 թ., էջ 445:

46 Այդ մասին մանրամասն տե՛ս Պապայան Ռ., Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները /գիտ. խմբ.՝ Գ.Գ. Հարությունյան, Մ.Ա.Ս. Էջմիածին,

հանրական ձեռով ներկայացնել քրիստոնեական իրավունկալման հայեցակարգային հիմնական բնութագրիչները՝ հետագայում հայ իրականության մեջ դրանց իրացումը բացահայտելու նկատառումներով:

Աստվածաշնչյան ողջ նյութի՝ Հին ու Նոր կտակարանների «օրենսդրական», պատմական, խրատական, մարգարեական գրքերի, Կենսաց Գրքից մինչև Հովհաննու Հայտնություն, «աստվածաշնչյան իրավունքի» հիմնարար սկզբունքների ուսումնասիրությունը վկայում է, որ.

1. Բոլոր տիպի հարաբերությունների առանցքը մարդն է, որին Աստված պարգևել է իր պատկերն ու նմանությունը՝ անանց արժեքների մի համակարգ, որոնք անօտարելի են մարդուց, նրա գոյի բովանդակությունն են, և դրանց բռնանալը հակամարդկային, հակաիրավական ու Աստծուն հակառակ գործել է նշանակում: Քրիստոնեական իրավամտածողության հայեցակարգային հիմքը մարդու աստվածակերպությունն է,<sup>47</sup> որի համատեքստում են մեկնաբանվում նաև մարդու իրավունքներին, հասարակական համակեցությանը, պետության դերին, իշխանության բնույթին, քաղաքական համակարգին ու, ընդհանրապես, իրավական ցանկացած հարաբերությանը վերաբերող սկզբունքներն ու գործնական մոտեցումները:

2. Օրենքի հիմքն աստվածային իրավունքն է, այդ օրենքներն են իրավական օրենքներ:<sup>48</sup> Քրիստոնեական իրավունկալման բանաձևն այն է, որ իրավունքը գիտություն է բարու եւ արդարի մասին, որոնք իրենց հերթին աստվածային բնույթ ունեն, քանզի Աստված է իրավունքի աղբյուրը: Առաջ քաշելով օրենքի ու դրա իրավական բովանդակության համապատասխանության հիմնախնդիրը,<sup>49</sup> «օրենքների ոգին» համարելով պոզիտիվ օրենսդ-

րության հիմք,<sup>50</sup> կարեւորելով «...մարդու բնությանը ներդաշնակ, ըստ մեր բանական հոգու հաճության» օրենքներ ունենալու անհրաժեշտությունը,<sup>51</sup> իրավունքը դիտարկելով որպես «բացարձակ հասկացության, ինքնագիտակցված ազատության առկա եղելություն»,<sup>52</sup> գտնելով, որ բնական իրավունքը բխում է հենց մարդու աստվածաստեղծ էությունից, որը եւ նրան մղում է փոխադարձ առնչությունների,<sup>53</sup> իրավունքը բնորոշելով որպես «մարդկության համաշխարհային պատմության մեջ ազատության մաթեմատիկա»,<sup>54</sup> իրավափիլիսոփայական միտքը դարերի ընթացքում աստիճանաբար հանգեց այն ընդհանրացմանը, որ իրավունքի գերակայության երաշխավորումն անկյունաքարային արժեք է քաղաքացիական հասարակության կայացման համար:

3. Քրիստոնեությունն առաջադրեց իրավունքի հաստատման, պետական իշխանության կառուցման, «միջմարդկային» հարաբերությունների կազմակերպման աստվածատուր սկզբունքները, որոնք չպետք է կտրվեն իրենց նախասկզբից, աստվածային էությունից՝ ինքնաժխտման ու այլակերպման չարժանանալու համար: Իսկ դա հնարավոր է, եթե մարդիկ իրենց արածն ու անելիքը չափում ու կշռում են մնայուն արժեքներով՝ հետեւելով աստվածային պատվիրաններին («Ե՛ս եմ քո Տէր Աստվածը, [...] Ինձնից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար» - Ելից 20:3, «Քեզ կուռքեր չպիտի կերտես: Չպիտի երկրպագես ու չպիտի պաշտես դրանց» - Ելից 20:4-5, «Քո տէր Աստծու անունն զուր տեղը չպիտի արտասանես» - Ելից 20:7, «Եօթներորդ օրը քո Տէր Աստծու շաբաթ օրն է: Այդ օրը դու ոչ մի գործ չպիտի անես...» - Ելից 20:10, «Պատուի՛ր քո հօրն ու քո մօրը» - Ելից 20:12, «Մի՛ սպանիր» - Ելից 20:13, «Մի՛ շնացիր» - Ելից 20:14, «Մի՛ գողացիր» - Ելից 20:15,

50 Монтескье Ш. О духе законов // Монтескье Ш. Избр. произведения. М., 1955, էջ 159:

51 Որոգայթ փառաց, Երեւան, 2002, էջ 71:

52 Гегель Г. Философия права. М., 1990, էջ 90:

53 Гроций Гуго Де Гроот. О праве войны и мира // Антология мировой правовой мысли. Т. III. М., 1999, էջեր 21-26:

54 Ներսեսյանց Վ.Ս., Ցիվիլիզմի մանիֆեստը, Երեւան, 2001, էջ 21:

47 Ինչպես ժամանակին դիպուկ Անանձեւել է Դավիթ Անհաղթ՝ «փիլիսոփայությունը Աստծուն նմանվելն է ըստ մարդկային կարողության» (Դավիթ Անհաղթ, Երկեր: Երեւան, 1999 թ., էջ 45):

48 «Ով պահանջում է, որ տիրի օրենքը, նա պահանջում է, որ տիրի միայն աստվածությունն ու Անանկանությունը» //Аристотель. Соч. в 4 тт. Т. 4, էջ 481:

49 Արիստոտել, Աբենական հասարակարգը: Երեւան, 2003, էջեր 26-27:

«Մուտ վկայություն մի՛ տուր» - Ելից 20:16, «Այն ամենի վրայ, ինչ քո մերձատրինն է, աչք մի՛ ունեցիր»- Ելից 20:17):

Իրավունքների դրսեւորման սահմանների հստակեցումը, **չար-գեվլածի թույլատրելիության սկզբունքի սահմանումը՝** ազատության իրավական հիմք ստեղծելով հանդերձ, հասարակական հարաբերությունների ներդաշնակման առանցքն են դառնում: Մարդկային համակեցության աստվածային սկզբունքներից բխում է, որ պետությունը նույնպես պետք է կառուցված ու կազմակերպված լինի ըստ աստվածային իրավունքի («բնական իրավունքը ենթադրում է նաեւ բնական պետություն»):<sup>55</sup> Քրիստոնեության անկյունաքարային արժեքների մեջ են ամրագրված բնականոն համակեցության եւ քաղաքացիական հասարակության կայացման հիմնարար սկզբունքները: Ինչպես նշում է Ռ. Պապայանը՝ «Տասը պատվիրանները, որոնք բիբլիական օրենսդրության հիմքն են, հաստատում են այն ճշմարտությունը, որ Աստծո հռչակած իրավունքները համընդհանուր են եւ հավասարաչափ են վերաբերում բոլոր մարդկանց, քանի որ մատնանշում են ոչ թե այն անձի իրավունքները, ում հասցեագրված են, այլ նրա շուրջ գտնվող բոլոր մարդկանց նույնանման իրավունքները»<sup>56</sup> («Մի՛ սպանիր»՝ նշանակում է ոչ թե՛ «դու ապրելու իրավունք ունես», այլ՝ «բոլորն ունեն այդ իրավունքը», «Մի՛ շնացիր»՝ նշանակում է, որ բոլոր այլ մարդկանց ընտանիքներն են անձեռնմխելի, «Մի՛ գողացիր»՝ նշանակում է ուրիշների սեփականության իրավունքը ճանաչելու պահանջ»<sup>57</sup>: **Այլոց իրավունքների երաշխավորումն է դառնում անհատի հասարակական վարքագծի կանոնակարգման սահմանը:** Միաժամանակ շեշտադրվում է օրինապահությանն անվերապահորեն հետեւելու հրամայականը, որ վերաբերում է բոլորին ու, առաջին հերթին՝ իշխանությանը օժտվածներին:

4. Պետական իշխանության պատմական զարգացման բոլոր

55 Ներսեսյանց Վ., Իրավունքի եւ պետության տեսություն, Երեւան, 2001, էջ 75:

56 Պապայան Ռ., Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, Երեւան, 2002, էջ 272:

57 Նույն տեղում:

փուլերում կարեւորագույն դեր է վերապահվել օրենքների ու կարգի սահմանմանը, դրանց իրագործմանը եւ օրինականության պահպանմանը: Իրավունքի արդի տեսությունն իշխանությունների տարանջատումը եւ հավասարակշռումը դիտարկում է որպես պետական իշխանության իրականացման առանցքային խնդիր: Իշխանությունների երեք թեւերի գաղափարը՝ գործառույթների այն նույն տարանջատմամբ, որն առկա է նաեւ մեր ժամանակների պետական տեսության ու պրակտիկայի մեջ, Աստվածաշնչում հստակ ուրվագծված է. «Մեր դատավորը Տէրն է, մեր օրէնսդիրը Տէրն է, մեր թագավորը Տէրն է» (Եսայի 33:22):<sup>58</sup>

5. Քրիստոնեության գաղափարաբանական արժեհամակարգի առանցքը մարդն է, որն իր կյանքը պետք է կառուցի աստվածահաճո իրավական նորմերի ու օրենքների հիման վրա: Այսուհանդերձ, կարեւոր տեղ է հատկացվում նաեւ ժողովրդի ձայնին ականջալուր լինելուն, նրա կարծիքը հաշվի առնելուն («Բոլոր իսրայէլացի տղամարդիկ հավաքվեցին, եկան Սամուէլի մօտ [...] եւ ասացին նրան «Դու, տա, ծերացել ես, իսկ քո որդիները քո ճանապարհով չեն գնում: Արդ մեզ վրայ մի թագաւոր դիր, որ մեզ դատաւորութիւն անի...»: Սամուէլն աղօթեց Տիրոջը, եւ Տէրն ասաց Սամուէլին. «Լսիր ժողովրդի ձայնը, ինչ էլ որ նա ասի քեզ...» - Թագ. Ա 8:4): Սակայն ըստ աստվածաշնչյան մեկնությունների՝ «ներքեւից» ասելիքը չի կարող Աստծուն հակառակ լինել, շրջանցել աստվածային այն պատգամը, համաձայն որի որպես արդարության սկզբունք շեշտվում է. «Մեծամասնութեանը հետեւելով՝ չար գործերի յետեւից մի՛ ընկիր» (Ելից 23:2): Հստակ է, որ **ժողովրդավարությունը ժողովրդի կողմից իրականացվող այնպիսի գործողություն է, որի հիմքում ընկած են անփոփոխելի բարձրագույն արժեքները:** Ուշադրության է արժանի, որ ներկայումս մի շարք երկրների սահմանադրություններում ամրագրված է (օր., Գերմանիա, հոդվ. 1, Վրաստան, հոդվ. 7, ՌԴ, հոդվ. 2, 18 եւ այլն), որ մարդու իրավունքները բարձրագույն արժեք են, իսկ **ժողովուրդը** եւ պետությունն իրենց իշխանությունն իրականաց-

58 Նույն տեղում, էջ 287:

մելիս **սահմանափակված են** մարդու իրավունքներով եւ հիմնարար ազատություններով՝ որպէս անմիջական գործող իրավունք:

6. Քրիստոնեությունը մարդու գործելակերպի հիմնական առաքելությունը համարելով դրախտի վերագտնումը, նրա գոյը չի տարանջատում հոգեւոր եւ աշխարհիկ ինքնադրսետորումների: **Նման սեպանջատումն անասովածության դրսետորում է:** Քրիստոնեական գաղափարաբանությունն ընդունում է միայն հոգեւոր իշխանության եւ աշխարհիկ իշխանության գործառութային սահմանազատումը՝ ընդհանուր նպատակ ունենալով մարդու համար աստվածային արժեքներով ապրելու նախապայմանների ապահովումը:

Իրավամտածողության գաղափարաբանական բերված մոտեցումները վկայում են, որ քրիստոնեությունը մարդկային հանրության համահավաք գոյի գլխավոր առաքելությունը համարելով մարդու ստեղծարար ներուժի գործադրման անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, դրա համար համակարգային իրավական մոտեցումներ ու լուծումներ առաջադրեց: Քրիստոնեությունը մարդու ինքնաճանաչման որակապէս նոր աստիճան խորհրդանշեց: Այն մարդ-հասարակություն շղթան դիտարկելով միասնական օրգանական կապի մեջ, քաղաքացիական հասարակության կազմավորման արժեհամակարգային հիմնաքարը դրեց: «Եկեղեցին,- նշում է Ներսես Մելիք-Թանգյանը,- իբրեւ բարոյական-կրոնական ղեկավարիչ հիմնարկություն, կամայականությունների առաջն առնելու, անձնական քմահաճույքներն արմատախիլ անելու եւ իր անդամներին որոշ ուղղությամբ առաջնորդելու համար, պարտականություն է համարում օրենքով, կանոններով որոշել ամեն մի անդամի հարաբերությունը դեպի եկեղեցին, դեպի միմյանց եւ դեպի այլ անհատներ ու շրջաններ, որոնք եկեղեցուց դուրս են: Այս կերպով սահմանում է ամեն մի անհատի եւ ամբողջությամբ **իրավունքների** սահմանները եւ պարտավորությունների կարգը»:<sup>59</sup> Հեղինակը շեշտում է նաեւ, որ իրավունքը մի կողմից ապահովում է մարդու ազատությունը՝

59 Հայոց եկեղեցական իրավունքը, Ներսես Մելիք-Թանգյան, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 7:

«թույլ չտալով ուրիշներին ոտնակոխ անելու այդ սրբազան կարգը», մյուս կողմից՝ զսպում է մարդու անհատական քմահաճույքը՝ ուղղված ընդհանուրի բարեկեցության դեմ, նրան պահում է սահմանված նորմերի շրջանակում:

Ցանկանում ենք առանձնակի ուշադրություն հրավիրել այն հանգամանքին, որ **քրիստոնեությունը մարդկային համակեցության բոլոր կանոնների ու «միջմարդկային» հարաբերությունների հիմքում դրեց գերակա, անբեկանելի, մնայուն արժեքների ամբողջական համակարգ, որն իր իրավագիտական նշանակությամբ սահմանադիր բնույթ ունի:** Ինչպէս նշում է Վահան վարդապետ Բաստամյանը Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոց»-ի առաջաբանում՝ «Քրիստոնեությունը, ինչպէս հայտնի է, մեծ հեղափոխություն է գործում Հայոց ազգի կրոնական, բարոյական, ընտանեկան, հասարակական եւ քաղաքական կյանքի մեջ: Ազգի պետական եւ ժողովրդական կյանքը ստանում են կրոնական ուղղություն. կրոնը եւ եկեղեցին դառնում են «Հիմն ազգութեան» [...]: Եվ ահա եկեղեցին ներգործելով ազգի կյանքի բարոյական, մտավորական, ընտանեկան եւ քաղաքական կողմերի վրա՝ անշուշտ մեծ ներգործություն պիտի ունենար նաեւ «նորա իրաւաբանական կողմի» վրա»:<sup>60</sup> Այդ ազդեցությունները էական են եղել մեր ժողովրդի հետագա ողջ պատմության ընթացքում եւ դրանց ներգործության դաշտում են ձեւավորվել նաեւ հայ սահմանադրական մշակույթի սաղմերը:

60 Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց /Իրաւամանական հետազոտութիւնք հանդերձ ծանօթութեամբ Վահան Ծ. Վարդապետի Բաստամեանց, Վարդապատ, 1880, էջ 68 (Այս հիմնահարցն իր լազմաթիվ անդրադարձերն է ունեցել հայ հին իրավունքին նվիրված ուսումնասիրություններում, որոնց համառոտ մատենագրությունը տես Ludwig Burgmann und Hubert Kaufhold, **Bibliographie** zur Rezeption des byzantinischen Rechts im alten Rußland sowie zur Geschichte des armenischen und georgischen Rechts. LÖWENKLAU-GESELLSCHAFT E.V. FRANKFURT, 1992)



## 2.2. ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԻՐ ԳԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայ պատմագրությունը բազմաթիվ անդրադարձեր ունի ազգային-եկեղեցական ժողովների գումարման հանգամանքներին՝ հիմնական շեշտը դնելով փաստագրական նյութի ներկայացման, դրանց դերի ու նշանակության արժեվորման, պատմական ժամանակաշրջանի վերլուծության ու մի շարք այլ հանգամանքների վրա: Որոշ ուշադրություն է դարձվել նաև այդ ժողովների ընդունած կանոնների ընդհանուր իրավագիտական վերլուծությանը: Այսուհանդերձ, մեծ բաց ենք համարում, որ ազգային-եկեղեցական ժողովների սահմանադիր դերին պատշաճ ուշադրություն չի դարձվել: Բանն այն է, որ հենց այդ ժողովներն են դարձել հայ սահմանադրական մշակույթի ձևավորման հենքը:

Մենք կփորձենք անդրադառնալ տվյալ հարցին՝ կարելու էր վերջին հանգամանքն ու ելնելով հետևյալ չափանիշներից.

ա) որքանով է տվյալ ժողովը «սահմանադիր», հանրային ներկայացուցչական մարմին, ինչպե՞ս է երաշխավորված ժողովի «լեգիտիմությունը»՝ որպես ազգային համաձայնությամբ վարքագծի ընդհանուր կանոն ընդունող մարմին,

բ) որքանով են ընդունված նորմերն իրավական ու համապարտադիր բնույթի եւ ունե՞ն, արդյոք, գերակա, «սահմանագծային» նշանակություն:

Առաջին պաշտոնական ազգային-եկեղեցական ժողովը, ըստ պատմագիրների վկայության, Աշտիշատի ժողովն էր՝ Ներսես Մեծի նախագահությամբ 365թ.՝ հոգեւորականների ու աշխարհականների մասնակցությամբ:<sup>61</sup> Վերջին հանգամանքը նկատի ունենալով՝ Մելիք-Թանգյանը շեշտում է, որ «...այս փառավոր սկզբունքը մնաց իբրև հիմնական կետ մեր պատմության մեջ հե-

տագա դարերի բոլոր ժողովներում. մինչև անգամ ոչ թե կարգադրական, այա դավանաբանական հարցեր որոշող բոլոր մեր ժողովներում մասնակցել են աշխարհականները: Շեշտելի է այս սկզբունքն այն տեսակետից, որ մյուս եկեղեցիները կարող են նախանձով նայել այս բանի վրա եւ ձգտել նույն դրությամբ հասնել, քանի որ եկեղեցի ասելով հասկանում ենք հավատացյալների ժողով, որը երկու դասակարգի մասնակցությամբ միայն կարող է վճռել բոլոր եկեղեցական հարցերը եւ խնդիրները»:<sup>62</sup>

Պատմագրությունը վկայում է նաև, որ «Ժողովների միջոցով եկեղեցական հարցեր վճռելը սկսվեց առաքելականների ժամանակ. առաջին անգամ ժողովվեցին նրանք եւ որոշեցին թույլ չտալ քրիստոնյաներին կատարելու մովսիսական ծեսերը (թլպատություն...)»:<sup>63</sup> Նման տիպի ժողովների ի հայտ գալը՝ որպես ընդհանուր քրիստոնեական երեսույթ, **հայ իրականության մեջ դրսևորվեց այն էական առանձնահատկությամբ, որ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը (կամ ինչպես նշում է Մելիք-Թանգյանը՝ «Հայոց աշխարհը եղավ առաջինը, որ քրիստոնեությունը դարձրեց քաղաքացիական կրոն»)**<sup>64</sup> **անհրաժեշտաբար պահանջ առաջադրեց. հոգևոր ու աշխարհիկ կանոններն ընդհանուր սկզբունքներից բխեցնել, քաղաքացիական օրենքներով նպաստել քրիստոնեության տարածմանը, իսկ եկեղեցական կանոնները պարտադիր դարձնել բոլոր քրիստոնյա հպատակների համար՝ իբրև քաղաքացիական օրենքներ:** Պատմագիրների վկայությամբ՝ Աշտիշատի ժողովի որոշումները նույնպես ուղղված էին քրիստոնեության ամրապնդմանը եւ երկիրը քայքայումից փրկելուն:

**«Աշտիշատի ժողովը պաշտոնական կանոններ սահմանող ժողովների հիմքն է դնում Հայաստանում»**<sup>65</sup> (ընդգծումը մերն է - Գ. Հ.): Հետագա դարերի ընթացքում նույնպես հրավիրվում են նման ժողովներ, որոնց մենք կանդրադառնանք: Սակայն ցանկանում

62 Նույն տեղում, էջ 314:

63 Նույն տեղում, էջ 307:

64 Նույն տեղում, էջ 308:

65 Տես նույն տեղում, էջ 313:

61 Հայոց եկեղեցական իրավունքը, Ներսես Մելիք-Թանգյան, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 313:

ենք հատուկ շեշտել, որ «պաշտոնական կանոններ սահմանող» ժողովները հրավիրվել են բացառիկ, ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում եւ համազգային ներկայացուցչականություն են ունեցել:

Աշտիշատի ժողովի մասին առավել ամբողջական վկայություն բողել է Փավստոս Բուզանդը: Նա գրում է. «Ժողովվեցին Աշտիշատ գյուղում, որտեղ առաջին անգամ եկեղեցի էր շինված [...]: Բոլորը հոժարությամբ ժողովի եկան եւ օգտակար խորհրդակցություն ունեցան՝ **աշխարհական կարգերը բարեկարգելու, հավատի ընդհանուր կանոններ սահմանելու:** (Այս ժողովում) **կարգ ու կանոն սահմանեցին, կազմակերպեցին եւ Հայոց աշխարհի բոլոր ժողովուրդը դարձրին իբրեւ վանականների մի ընդհանուր միաբանություն, բացի ամուսնությունից»**<sup>66</sup> (ընդգծումը մերն է - Գ. Հ.): Ուշադրության է արժանի «(Այս ժողովում) կարգ ու կանոն սահմանեցին, կազմակերպեցին եւ Հայոց աշխարհի բոլոր ժողովուրդը դարձրին իբրեւ վանականների մի ընդհանուր միաբանություն...» արտահայտության գրաբարյան բնագիր տարբերակը՝ «Յայնմ ժամանակի կարգեցին կազմեցին կանոնեցին յարիներցին, եւ արարին զամենայն ժողովուրդս երկրին Հայոց իբրեւ կարգ միաբանութեան վանականաց համաշխարհի...»:<sup>67</sup> Այս ժողովի արդյունքները Փավստոս Բուզանդի բնորոշմամբ՝ «**Կարգեցին, կազմեցին, կանոնեցին, օրինեցին**»<sup>68</sup>, լավագույնս է ներկայացնում Աշտիշատի ժողովի օրինաստեղծ դերն ու սահմանադիր բնույթը, ինչն աշխարհաբար թարգմանության մեջ («կարգ ու կանոն սահմանեցին, կազմակերպեցին...») նեղացվելով՝ ավելի շատ վարչա-կազմակերպչական գործառույթ է դառ-

նում: Նշված հասկացությունները (կարգեցին, կազմեցին, կանոնեցին, օրինեցին) հայ միջնադարյան հուշամատյաններում բնորոշել են իրավաստեղծ գործունեության տեսակներ, հարաբերությունների կանոնակարգում, վարքագծի կանոնների սահմանում: Սակայն առանձնահատուկ դեր են ունեցել ազգային-եկեղեցական ժողովները, որոնց ընդունած կանոնները համընդգրկուն բնույթ ու գերակայող, «սահմանագծային» իրավական ուժ են ունեցել: Այդ առումով, ազգային-եկեղեցական ժողովները համեմատելի են սահմանադիր ժողովների հետ, եւ առանց վարանելու կարելի է եզրակացնել, որ դրանց նախատիպն են հանդիսացել:

Մովսես Խորենացին Աշտիշատի ժողովի առնչությամբ վկայում է. «Յերրորդ ամի թագաւորութեանն Արշակայ եկաց եպիսկոպոսապետ Հայոց մեծն Ներսէս, որդի Աթանազիներայ, որդոյ Յուսկան, որդոյ Վրթանայ, որդոյ սրբոյն Գրիգորի: Եւ ի Բիւզանդիոյ դարձեալ ի Կեսարիայ, եւ եկեալ ի Հայս՝ զամենայն կարգս ուղղութեան հարցն իւրոց նորոգեաց, այլ եւ առաւել եւս. քանզի զբարեկարգութիւնն զոր ետես ի Յունաց աշխարհին, մանաւանդ ի թագաւորեալ քաղաքին, ի սմա նկարագրէ: Ժողով արարեալ եպիսկոպոսաց եւ համարէն աշխարհականաւք, **կանոնական սահմանադրութեամբ հաստատեաց** զողորմածութիւն, խլելով եւ զանգթութեանն արմատ, որ բնաբար սովորութեամբ էր յերկրիս մերում»:<sup>69</sup> Խորենացու այս ձեւակերպման հետագա աշխարհաբար թարգմանությամբ, ինչպես նշել ենք, «կանոնական սահմանադրութեամբ հաստատեաց» բառակապակցությունը ներկայացվել է «կանոնական սահմաններով հաստատեց» տեսքով<sup>70</sup>, որը, իրավագիտական առումով, գրեթե իմաստագուրկ արտահայտություն է: Խորենացու բնագրին հավատարիմ վկայությունը՝ «Ժողով արարեալ եպիսկոպոսաց եւ համարէն աշխարհականաւք, կանոնական սահմանադրութեամբ հաստատեաց...», անառարկելիորեն ապացուցում է, որ **ի դեմս Աշտիշա-**

66 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն (թարգմանությունը եւ ծանոթագրությունները Ստ. Մալխասյանի), Երեւան, 1987, էջ 119:

67 Նույն տեղում, էջ 118:

68 «Օրինեցին» եւ «յարիներցին» Սառաձեւերը՝ կարգ ու կանոն սահմանելու իմաստով, հանդիպում է հայ մատենագրության տարբեր հուշարձաններում: Մասնավորապես, Արիամ Կրետացու «Պատմութիւն» աշխատության մեջ ասվում է. «...երկու կարգ օրինեցին՝ եղեգնեայ պարսպէն Խանին մինչեւ ցնետածիզ մի եւ այլ անելի, զոր ալայ ասեն օսմանցիքն եւ ամենեցուն ձեռքն մեծամեծ թֆանկներն» (ըստ «Հայ դասական մատենագրություն» [www.digilib.am](http://www.digilib.am), version 1.0 նյութերի):

69 Տեքստի աշխարհամար տարբերակը տե՛ս Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, Ե դար, Երեւան, 1997, էջ 225:

70 Նույն տեղում:

**տի ազգային-եկեղեցական ժողովի՝ մենք գործ ունենք սահմանադրական կանոններ ընդունած ներկայացուցչական բնույթ ունեցող սահմանադիր ժողովի հետ:**

Հակոբ Մանանդյանը, խոսելով Ներսես կաթողիկոսի ու նրա գործունեության մասին, նշում է, որ «Նրա նախագահությամբ տեղի ունեցավ Աշտիշատում առաջին եկեղեցական **օրենսդիր ժողովը** (ընդգծումը մերն է-Գ.Հ.), որի կանոնական որոշումները վերաբերում էին ո՛չ միայն կրոնական-եկեղեցական խնդիրներին, այլև աշխարհական կյանքին ու հասարակական-սոցիալական հարաբերություններին»:<sup>71</sup> Այստեղ ուշադրությունը դարձվել է ժողովի իրավաստեղծ դերին, այլ ոչ թե նորմերի սահմանադրական բնույթին, որը միարժեք բնորոշված է Խորենացու մոտ:

Աշտիշատի ժողովը՝ լինելով առաջինը, հայ իրականության մեջ կարելու նախադեպ է հանդիսացել նույնիսկ պետականության բացակայության պայմաններում ազգային գործող օրենսդրություն ունենալու համար: Այդ ժողովի հրավիրման նախաձեռնությունն ամբողջությամբ Կաթողիկոսինն էր, որի բարձրագույն որակները՝ ընդհուպ մինչև կաթողիկոս դառնալը, ահա թե ինչպես է բնութագրում Փավստոս Բուզանդը. «Աստծու երկյուղը սրտում ուներ, խստիվ պահպանում էր նրա պատվիրանները, մարդասեր, սուրբ եւ պարկեշտ էր, շատ իմաստուն էր, անաչառ, իրավադատ, հեզ, քաղցր, խոնարհ, աղքատասեր, ամուսնական կյանքում օրինավոր, Աստծու սիրովը լցված»:<sup>72</sup>

Աշտիշատի ժողովի ավանդույթը լավագույնս զարգացրեց Շահապիվանի ժողովը, որի հրավիրման թվականներ են նշվում 444-447թթ.: Այս ժողովի առնչությամբ Ներսես Մելիք-Թանգյանը նշում է, որ «Շահապիվանի ժողովը հայոց ամենափառավոր ժողովներից մեկն է»:<sup>73</sup> Շահապիվանի ժողովի ներկայացուցչական կազմը նկարագրված է հետեւյալ կերպ. «Եվ հավաքվեցին 40 եպիսկոպոսներ ու բազում քահանաներ, սարկավագներ, նախան-

ձախնդիր ծառայողներ եւ սուրբ եկեղեցու ամբողջ հոգեւորականությունը, բոլոր իշխանները՝ գավառների կառավարիչներ, գավառների ղեկավարներ, գերագույն դատավորներ, գանձապետեր, զորապետեր, հազարապետեր, գեղջավագներ, տարբեր շրջանների ազատներ»<sup>74</sup>:<sup>75</sup>: Հստակ է եղել նաեւ ժողովի հրավիրման նպատակը. «Հայոց աշխարհի ավագ Նախարարները, որոնք օրենքների եւ սրբությունների նախանձախնդիր պաշտպաններն էին, այսպես էին ասում. «Վերականգնեք սուրբ Գրիգորի, Ներսեսի, Սահակի եւ Մաշտոցի սահմանած կարգ ու կանոնը, ինչպես նաեւ ձեր կամքով սահմանեք այլ բարօրություններ, եւ մենք կամավոր ու սիրով կընդունենք, քանի որ թուլացել են եկեղեցու կարգ ու կանոնները, եւ մարդիկ վերադարձել են անօրինություններին: Դուք սահմանեք Աստծուն ցանկալի եւ եկեղեցուն կյանքի կոչելու գործում պիտանի օրենքներ, իսկ մենք կհնազանդենք եւ դրանք ամուր կպահենք: Իսկ եթե ինչ-որ մեկը՝ եպիսկոպոս, թե քահանա, ազատ, թե շինական, ճշտությամբ չպահպանի սահմանված օրենքները, թող պատիժ կրի եւ տուգանք մուծի»:<sup>76</sup> Ի դեպ, ըստ Ներսես Մելիք-Թանգյանի, այս ժողովին մասնակցել են նաեւ բոլոր նախարարները, Վասակ մարզպանը, Վահան հազարապետը, Վարդան Մամիկոնյանը: Շեշտվում է նաեւ, որ «Ամբողջ տիեզերական քրիստոնեայ ժողովների մեջ այսպիսի փառաւոր ժողով չի եղել, ուր մասնակցեին հոգեւորականները իրենց դասերով եւ իշխանները աշխարհական զանազան դասակարգերով»:<sup>77</sup> Հեղինակը նաեւ ժողովի հրավիրման ու կազմակերպման, դրա դերի ու բնույթի կարելու մանրամասների է անդրադառնում: Մասնավորապես, շեշտվում է, որ.

ա) այս ժողովը հրավիրեց եւ նախագահեց կաթողիկոսը,

74 «Ազատներ» հասկացության տակ նկատի է առնվել ինչպես պետական հարկերից եւ պարիսկներից ազատ խոշոր ֆեոդալ-հողատերերի խավը, այնպես էլ մանր ֆեոդալ-հողատերերինը:

75 Ավագյան Ռ. Հ., Հայ իրավական մտքի գանձարան, Երեւան, 2001, էջ 121:

76 Նույն տեղում:

77 Հայոց եկեղեցական իրավունքը, Ներսես Մելիք-Թանգյան, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 320:

71 Հակոբ Մանանդյան, Երկեր, գիրք Բ, Երեւան, 1978, էջ 164:

72 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երեւան, 1987, էջ 109:

73 Ներսես Մելիք-Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունքը, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 319:

- բ) ինչպես բուն ժողովում, նույնպես եւ «նախընթացում» մասնակցել են հոգեւոր ու աշխարհական «տարրը»՝ «ամեն տեսակ դասակարգերով»,
- գ) այս ժողովը **հաստատել է** դրանից առաջ տեղի ունեցած «...բոլոր ժողովները եւ Հայրապետական կանոնները, որոնք մինչեւ այդ օրը ազգի կողմից թէւ ընդունված էին, բայց ժողովական Հաստատութեամբ չէին վաւերացրած» (ուշադրության է արժանի հատկապես այն հանգամանքը, որ այս ժողովը հաստատելով «Նիկայի, Պօլսոյ, Եփեսոսի ժողովների եւ Լուսաւորչի, Ներսէսի, Սահակի, Մեսրոպի եւ ապա Առաքելական կանոնները», երաշխավորում է դրանց լեգիտիմությունը, իսկ ժողովն իրականացնում է վավերացման գործառույթ),
- դ) այս ժողովում «...եկեղեցական կանոնները ստանում են քաղաքացիական օրէնքի պարտաւորական ոյժը, պատժի եւ տուգանքի տակ ձգելով օրինազանցներին»,
- ե) «Այստեղ սահմանում են մարմնական պատիժներ ամենախիստ աստիճանի մինչեւ անգամ, որ բոլորովին համապատասխան չէ աւետարանի ոգուն, եւ որոնք չեն երեւում նոյն ժամանակուայ օտարների կանոններում»<sup>78</sup>:

Մենք հետագայում կանդրադառնանք Շահապիվանի ժողովի կողմից ընդունված կանոններին, դրանց սահմանադրաիրավական բնույթին: Այստեղ ցանկանում ենք փաստել այն իրողությունը, որ Աշտիշատի ժողովի համեմատ Շահապիվանի ժողովն իր ներկայացուցչական պարագայով ու սահմանադիր բնույթով նկատելիորեն քայլ առաջ էր, որով ավելի **ակնառու է դառնում սահմանադրական նշանակություն ունեցող նորմերի ընդունման, դրանց միջոցով հասարակական համաձայնության միջավայրի երաշխավորման որոշակի մշակույթի ձեւավորման իրողությունը միջնադարյան Հայաստանում:**

78 Նույն տեղում, էջ 321:

V դարի վերջերին հայ իրականության մեջ քննության առարկա հիմնահարցի տեսանկյունից տեղի է ունենում բացառիկ կարեւոր իրադարձություն: Եթե նախկինում ազգային-եկեղեցական ժողովների հրավիրման նախաձեռնողը եղել է եկեղեցին՝ նպատակ ունենալով հանրային կյանքի բոլոր ոլորտները «վերանորոգել», ապա V դարում այդպիսի նախաձեռնություն է դրսեւորում Վաչագան թագավորը: Մովսես Կաղանկատվացին հիշատակում է. «Աղվանից արքա Վաչագանի տարիներին աշխարհականների ու եպիսկոպոսների, քահանաների ու քորեպիսկոպոսների, ազնվականների ու ռամիկների միջեւ բազմաթիվ հակառակություններ էին լինում: Արքան կամեցավ մի բազմամարդ ժողով գումարել Աղվենում, որ կայացավ մարերի [մայիս] ամսի տասներեքին»:<sup>79</sup>

Այդ ժողովի արդյունքը եղավ Կանոնական **սահմանադրության** ընդունումը:

Պատմագրության կողմից 21 հոդված բովանդակած այդ Սահմանադրության ընդունման ժամկետ է համարվում 488 թվականը:<sup>80</sup>

Ուշադրության արժանի է նաեւ ընդունված փաստաթղթի վավերականության երաշխավորման ընթացակարգը, երբ Կանոնական սահմանադրությունը եզրափակվում է հետեւյալ հոդվածով. «Այս պայմանները թագավորի ներկայությամբ դրեցին եպիսկոպոսներ, քահանաներ, ազնվականներ [...]: Այս հրամանը մատանիներով կնքեցին արքայի հրամանատար Մուծիկը, պալատի վերակացու Միրօրիկը եւ տոհմապետեր Մարութը, Տիրագրը, Սպարակոսը, Ղաման, Բակուրը, Ռատանը, Արչեսը, Գարդմանա տեր քաջ Վարդանը, Խուրսը, Գերմանոսանը, Խոսկենը, Փիրոզը, Նահապետը, Աղվանքի բոլոր ազնվականները եւ գրության ավելի վավերական լինելու համար կնքվեց նաեւ Աղվանքի թագավոր Վաչագանի մատանիով»:<sup>81</sup> «Հրամանը մատանիներով կնքեցին»

79 Մովսես Կաղանկատվացի. Պատմություն Աղվանից աշխարհի /թարգմանությունը, առաջավանդակ եւ ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երեւան, 1969, էջ 65:

80 Տե՛ս Ռ. Հ. Ավագյան. Հայ իրավական մտքի զանձարան, հ. 1, Երեւան, 2001, էջեր 132-137:

81 Մովսես Կաղանկատվացի. Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 69:

արտահայտությունը պարզապես վկայում է ընդունված նորմերի համապարտադիր լինելու հանգամանքի վավերացումը: Էական է նաև, որ հասարակական լայն համաձայնության արդյունք հանդիսացող եւ գերակա բնույթ ունեցող կանոնների վավերականության հարցին նույնպես առանձնահատուկ ուշադրություն է հրավիրվել:

Այս առնչությամբ կցանկանայինք առանձնացնել հետևյալ պարագաները.

1. Հինգերորդ դարի կեսերին հայ իրականության մեջ հասունացել էր այնպիսի միջավայր, երբ հասարակության տարբեր շերտերի միջև առաջացած «...հակառակությունները» փորձ էր արվում լուծել ոչ թե ուժի թելադրանքով կամ վարչարարությամբ (այդ թվում՝ Արքայի հրամանով կամ մահակներով), այլ իրավական ճանապարհով՝ սահմանադրական օրենքի ընդունման միջոցով: Այս հանգամանքն առաջին հերթին վկայում է նախաձեռնության հեղինակի բարձր մտավոր որակների ու իրավագիտակցության մասին, ինչպես նաև՝ այդ որակները հասարակության կողմից ընկալված լինելու եւ նման միջավայրի հասունացած լինելու մասին:
2. Փաստորեն Սահմանադիր ժողովի կողմից Սահմանադրության ընդունման՝ իր ժամանակի համար զարմանալիորեն առաջադիմական այս իրողությունը վկայում է, որ հասարակական հարաբերությունների կանոնակարգման հիմքում դրվել են հասարակական համաձայնության սկզբունքները՝ վեր կանգնելով սոցիալական ու այլ բնույթի շերտավորումներից:
3. Կանոնները բնորոշվում են ոչ այլ կերպ, քան **սահմանադրական**՝ դրանց տալով հատուկ կարգավիճակ, ճանաչելով ազգային համաձայնությամբ սահմանված նորմերի գերակայությունը ցանկացած այլ նորմի ու կանոնի նկատմամբ: Առաջին հերթին ուշադրության է արժանի «սահմանադրություն» հասկացության հաստատվելը հայ իրավական մշակույթում: Ինչպես իրավագիտորեն նշում են Կ. Ղահրամանյանը եւ

Վ. Հովհաննիսյանը՝ «Հիշյալ իրավագիտական փաստաթուղթը ոչ միայն անվանումով, այլև իր ընդունման եղանակով ու բովանդակությամբ ընդհանուր եզրեր ունի Սահմանադրության՝ իբրև իրավաբանական փաստաթղթի հետ»:<sup>82</sup>

Ուշագրավ է, որ Ս. Հովհաննիսյանն իր հոդվածներից մեկը վերնագրել է. «Աղվենի **սահմանադիր ժողովի** կանոնները եւ նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ» (ընդգծումը մերն է-Գ.Հ.): Հեղինակը քննարկելով Աշտիշատի, Շահապիվանի եւ Աղվենի ժողովներում ընդունված կանոնների ընդհանրությունն ու տարբերությունները, հիմնական ուշադրությունը դարձնելով Աղվենի ժողովի հրավիրման ժամանակի ճշգրտման վրա, չի անդրադարձել ժողովի սահմանադիր բնույթի հիմնավորումներին: Սակայն հատուկ շեշտելով արքայի կողմից ու նրա ամառանոցում ժողովի հրավիրման պարագան, ինչպես նաև ուշադրություն հրավիրելով «Աղվենի ժողովի հրավիրման մեթոդի» եւ հասարակության ներսում ի հայտ եկած հակասությունները հարթելու «ուրույն ճանապարհի» վրա, անվերապահորեն այդ ժողովը որակում է որպես սահմանադիր ժողով:<sup>83</sup>

Հետաքրքիր է նաև, որ իրավագիտության դոկտոր Արսեն Գլտճյանի խմբագրությամբ 1913թ. Թբիլիսիում հրատարակված «Կանոնագիրք Հայոց» արժեքավոր ժողովածուում Աղվենի ժողովում ընդունված կանոններին անդրադարձն սկսվում է հետևյալ վերտառությամբ. «Կանոնք Աղուսանից», այնուհետև գլխա-

82 Ղահրամանյան Կ., Հովհաննիսյան Վ., 1500-ամյա հայկական Սահմանադրությունը. ընդունման հանգամանքները եւ նշանակությունը, Երևան, 1999, էջ 17:

83 Հովհաննիսյան Ս., Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները եւ նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ // Պատմամասնափրական հանդես, 1967, N 4, էջ 274:

տառերով ու ընդգծված ավելացվում է. «**ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ**»:<sup>84</sup>

Նպատակ չունենալով անդրադառնալ հիշատակված ժողովների հրավիրման ժամկետներին, մասնակից անձանց, տարաբնույթ հարաբերություններին առնչվող պատմական մանրամասներին, ցանկանում ենք սահմանադրագիտական չափանիշների տեսակետից կատարել հետեյալ ընդհանրացումները: Բերված պատմական վկայություններից հետեւում է.

1. թե՛ Աշտիշատի, թե՛ Շահապիվանի եւ թե՛ Աղվենի ժողովները հրավիրվել են հասարակական հարաբերությունների կանոնակարգման, առաջացած «հակառակությունների» իրավական կարգավորման նպատակով,
2. այդ ժողովներն ունեցել են համազգային ներկայացուցչական պարագա, եղել են հրապարակային,
3. որոշումներն ընդունվել են ազգային համաձայնությամբ՝ երկրում փոխըմբռնման ու համաձայնության մթնոլորտ ստեղծելու ակնկալիքով,
4. այդ որոշումներն իրենց «լեգիտիմության» աստիճանով ու իրավական ուժով գերակա են եղել բոլոր այլ որոշումների նկատմամբ,
5. ընդունված կանոններն իրենց բնույթով ու իրավական նշանակությամբ ունեցել են հիմնադիր, իրավական, կազմակերպական գործառույթ, գաղափարաբանական հստակ ուղղվածություն՝ ինչը բնորոշ է սահմանադրական նորմերին, վերաբերել են հանրային կյանքի՝ տվյալ ժամանակի համար առավել կարեւոր հիմնախնդիրներին ու հարաբերություններին:

Հետեւությունը միանշանակ է. ի դեմս հիշատակված ժողովների՝ գործ ունենք **սահմանադիր** ժողովների հետ:

Ցանկանում ենք ավելացնել նաեւ, որ սահմանադիր ժողովների

<sup>84</sup> Կանոնագիրք Հայոց/ Դուկասեան մատենադարան, խմբեց Արսէն Դլտճեան, Թիֆլիզ, 1913, էջ 192:

հրավիրման ավանդույթը հայ իրականության մեջ շարունակական բնույթ է ունեցել: Այդպիսին են եղել նաեւ Դվինի (VI, VII դդ.), Պարտավի (VIII դ.), Սիսի (1243 թ.), Չազավանի (1268 թ.), Երուսաղեմի (1651 թ.) ժողովները:<sup>85</sup> Հետաքրքիր վկայություններ կան նաեւ 1204 թ. Սիսի ժողովի մասին, որի որոշումները մերժվել են, քանի որ ժողովը «լեգիտիմ» չի համարվել, չի ունեցել ազգային-եկեղեցական անհրաժեշտ ներկայացուցչական պարագա:<sup>86</sup> Իսկ ահա Սիսի 1243 թ. ժողովի կանոնների վավերականությունը եւ համապարտադիր բնույթն ապահովելու համար ընդունված 25 կանոնները՝ Կաթողիկոսի կից գրությամբ, ուղարկվում են բոլոր հայ եպիսկոպոսներին ու իշխաններին՝ դրանց կատարումը երդմամբ երաշխավորելու եւ ստորագրությամբ վավերացնելու պահանջով: Բոլորի կողմից այն անվերապահորեն իրականացվում է:<sup>87</sup>

Ուշադրության արժանի վկայություններ կան Պարտավի (771թ.) ժողովի հրավիրմանն առնչվող նրբերանգների մասին.

<sup>85</sup> Արսէն Դլտճյանի դասակարգմամբ Հայոց կանոնախմբերը հետեյալներն են. «1. Ս. Գրիգորի առաքելոց Հայոց, 2. Աշտիշատի ժողովի (365 թ.), 3. Ս. Սահակայ Հայոց Հայրապետի, 4. Շահապիվանի ժողովի (447 թ.), 5. Յովհաննու Մանդակունւոյ (480-487 թ.), 6. Կարնոյ ժողովի (510-515 թ.), 7. Ներսէսի Հայրապետի եւ Մամիկոնէից Ներշապուհ եպիսկոպոսի (554 թ.), 8. Ներսէսի Հայոց կաթողիկոսի (VI դար), 9. Դունայ ժողովի (649), 10. Վերջնոյ Սահակ կաթողիկոսի (677-703), 11. Յովհաննու Իմաստասերի (Դունի 719 թ. ժողովի), 12. Մանազկերտի ժողովի (727), 13. Պարտաւի ժողովի (768 թ.), 14. Սիսի ժողովի (1243 թ.), 15. Երուսաղեմի ժողովի (1651 թ.)» (տե՛ս Կանոնագիրք Հայոց, Թիֆլիզ, 1913, առաջաժամ, էջ Բ):

Իր հերթին, Լեւոն Մելիքսեթ-Քեչըր նշում է. «Հարկ է նկատի ունենալ, որ իրավունքի պատմության տեսանկյունից հայկական հիշյալ Ուլոր ժողովներից մեծ նշանակություն կարող են ունենալ միայն նրանք, որոնց հիման վրա մշակվել են կանոնական որոշումներ, մասնավորապէս, եկեղեցա-իրավական ընդհանուր օրենքներ: Այդ մասին կարելի է դատել Աշտիշատի, Շահապիվանի, Դվինի, Կարինի, Մանազկերտի, Պարտավի եւ այլ ժողովների ընդունած նյութերից» (Меликсет Бек Л. Об источниках древнеармянского права // Известия Кавказского историко-археологического института. Тифлис, 1917-1925, N 11, էջեր 156-157):

<sup>86</sup> Տե՛ս Հայոց եկեղեցական իրավունքը, Ներսես Մելիք-Թանգյան, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 448, ինչպէս նաեւ: Մխիթար Գոշ. Դատաստանագիրք Հայոց Դրաւաւանական հետազօտութիւնք հանդերձ ծանօթութեամբ Վահան Ժ. Վարդապետի Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, էջեր 87-89::

<sup>87</sup> Տե՛ս Торосян X., Суд и процесс в Армении в X-XIII вв., Ереван, 1985, էջ 33:

«Դուինում չկարողացանք ժողով անել բարբարոսների պատճառով, գնացինք Պարտաւ Աղուանից մայրաքաղաքը, ուր մասնակից եղան ժողովին Աղուանից կաթողիկոս Դաւիթը եւ նրանց իշխանները. **ժողովում միաձայնութեամբ կարգեցինք հետեւյալ կանոնները առաջնորդների եւ նրանց ժողովրդի բարեկարգութեան համար»<sup>88</sup> (ընդգծումը մերն է - Գ.Հ.):**

Դվինի (648թ.) ժողովի առնչությամբ հիշատակվում է, որ «Ներսէս Գ. [...] ժողով գումարեց եպիսկոպոսների եւ նախարարների մասնակցութեամբ, մշակելու նախ՝ այն պատասխանը, որ պիտի ուղարկէին Պօլիս կայսրին եւ պատրիարքին,<sup>89</sup> երկրորդ՝ կազմելու դաւանաբանական ձեռնարկ փաստական պատճառաբանութեամբ, եւ երրորդ՝ իբրեւ ուղեցույց՝ հաւատոյ ձեռնարկ սահմանելու բոլոր հայերի համար, որպէս զի բոլորի համար պարզ լինի հայոց դաւանութիւնը եւ նրա տարբերութիւնը յունականից»:<sup>90</sup>

Պատմական որոշ զուգահեռներ անցկացնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ շատ երկրներում «սահմանադրություն» ընդունելու իրավասությունը պարզապէս վերապահվում էր թագավորին, որն իր հրամանով սահմանում էր վարքագծի գերակա կանոններ: Տիպական է, օրինակ, Իտալիայի թագավոր Ֆրիդրիխ Երկրորդի 1231թ. Սահմանադրությունը, որի առնչությամբ թագավորը պարզապէս հրամայում է, որ իր կողմից սահմանված կանոններն անվերապահորեն կատարվեն բոլորի կողմից:<sup>91</sup> Անկախ կանոնների բովանդակային ընդգրկումից, էական է այն հանգամանքը, որ գործ ունենք «վերելից» դրանց հարկադրման, այլ ոչ թե հասարակական համաձայնության իրողության հետ:

88 Հայոց եկեղեցական իրավունքը, Ներսէս Մելիք-Թանգյան, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 426:

89 Խոսքը վերաբերում է Հունաց կայսերի եւ պատրիարքի նամակներին՝ ուղղված Ներսէս կաթողիկոսին ու Թեոդորոս Ռշտունուն, որոնցով հորդորում են սիրով լինել հույների հետ, վերջ տալ թշնամական ցույցերին, որոնք դրսևորվում էին հայերի կողմից՝ Դվինում գտնվող հունաց գործերի նկատմամբ:

90 Նույն տեղում, էջ 391:

91 Տե՛ս Антология мировой правовой мысли, т. II, М., 1999, էջեր 492-495:

Անկախ այն բանից, թե պատմական ինչ իրողությունների պարագաներում են գումարվել ազգային-եկեղեցական ժողովները Հայաստանում, եւ ընդունված որոշումները որքանով են արտացոլել հանրային կյանքի առկա իրողությունները, ակնհայտ է այն ճշմարտությունը, որ **դրանք դարձել են հասարակական համաձայնության կայացման ամբիոն եւ բացառիկ են եղել այդ ժողովների համախմբող, կանոնակարգող, ազգային միաբանություն ու համերաշխություն ապահովող, օրենքի, կարգի ու կանոնների նկատմամբ հասարակական անհրաժեշտ վերաբերմունք ձեւավորող դերն ու նշանակությունը:** Այդ որոշումներն ու կանոնները, սնվելով հանրային կյանքի կոնկրետ իրողություններից, իրենց հերթին արմատավորել են նաեւ սովորութային կայուն նորմեր ու ավանդույթներ, որոնք մեծ դեր ու նշանակություն են ունեցել մեր ժողովրդի պատմական ճակատագրում: Ավելին, պետականության կորստի պայմաններում նույնպէս այդ ժողովների որոշումներն ունեցել են գործող Սահմանադրության՝ հանրային կյանքը կանոնակարգող գերակա **ազգային իրավական նորմերի նշանակություն:**

Եվրոպական իրավական միտքը ներկայումս փաստում է, որ Սահմանադրությունը ոչ այնքան պետության հիմնական օրենքն է, որքան քաղաքացիական հասարակության գերագույն իրավական փաստաթուղթը: Մենք այս հարցին հետազայում նույնպէս կանդորադառնանք: Սակայն սահմանադիր ժողովների ու դրանց ընդունած որոշումների առնչությամբ տեղին է ընդգծել, որ մենք գործ ունենք այնպիսի իրողության հետ, որ նույնիսկ պետականության կորստի պայմաններում հայ հանրային կյանքը դարեր շարունակ առաջնորդվել է իր կանոնական սահմանադրություններով, որոնք քարացած նախապաշարումների ժողովածու չեն եղել, այլ **մշտապէս, ազգային լայն համաձայնությամբ վերանորոգվել են ու դարձել ընդհանուր վարքագծի կանոններ բովանդակող գերակա փաստաթուղթ:** Հատկապէս մեր ազգային-քաղաքական ապակենտրոն համակարգի պայմաններում, երբ համեմատաբար թույլ են գտնվել կենտրոնաձիգ ուժերը, իսկ երկպառակությունները մեր պատմության մշտական ուղեկիցն են եղել,

առանձնահատուկ կարեւորվում է ազգային-եկեղեցական ժողովների ազգային, քաղաքական, իրավական, ընդհուպ՝ պետական-նազիտական դերն ու նշանակությունը: Թերեւս, պետականության բացակայության պարագաներում մեր ինքնության որակների պահպանման ու ազգային լինելության հարցում նույնպես զգալի չափով պարտական ենք նաեւ սահմանադիր ժողովներին ու դրանց կողմից ընդունված կանոններին:

Այսքանից հետո միայն զարմանալ կարելի է, որ XXI դարում նորանկախ Հայաստանի Հանրապետությունում «Հայոց մեծ դարձի 1700-ամյակին» նվիրված հրատարակվում է «Քրիստոնյա Հայաստան»<sup>92</sup> ավելի քան հազար էջանոց հանրագիտարան, որում ոչ մի խոսք չի ասվում ազգային-եկեղեցական ժողովների սահմանադիր դերի ու կանոնական սահմանադրությունների մասին: Դա այն դեպքում, երբ դեռեւս 1837թ. Վենետիկում հրատարակված Հայկազյան լեզվի նոր բառագրքում հղումներ կատարելով քրիստոնեական շրջանի մեր պատմության ակունքներին, տրվում է Սահմանադրության անգերազանցելի բնորոշում:

Նույն ձեռագիրն է ու նույն անթույլատրելի մոտեցումը՝ անհրաժեշտ կարեւորություն չտալով գրաբարյան հասկացութային ձեւակերպումներին, դրանք պարզ բառային կամայական մեկնաբանման առարկա դարձնելով՝ մի ամբողջ մշակութային երետույթ ենք դուրս մղում մեր պատմությունից՝ ի դեմս սահմանադրական մշակույթի, երբ այն պատմական անուրանալի իրողություն է եւ խոր արմատներ ունի:

### 2.3. ԿԱՆՈՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

Սահմանադրության՝ որպես երկրի Հիմնական օրենքի, իրավագիտական ցանկացած վերլուծություն առաջին հերթին բացահայտում է դրա հիմնադիր, իրավական, կազմակերպական գործառույթների բնույթն ու դերը, գաղափարաքաղաքական ուղղվածությունը, դրանում ներառված նորմերի սահմանադիր բնույթը: Առանձնահատուկ ուշադրություն է հրավիրվում այն հանգամանքին, որ սահմանադրությունները կյանքի կոչվեցին երեք հիմնական առաքելություն իրականացնելու համար.

1. սահման դնելու պետության, իշխանության կառույցների ու պաշտոնատար անձանց գործառույթներին,
2. սահմանել իշխանական գործառույթների իրականացման կարգն ու մեխանիզմները,
3. որոշել մարդու քաղաքական, տնտեսական, սոցիալական ազատությունների սահմանները, երաշխավորել նրա անօտարելի իրավունքները:

Սահմանադրությունը լինելով առանձնակի կարեւորության իրավաքաղաքական փաստաթուղթ, տվյալ հասարակական հարաբերությունների ամբողջականացված դինամիկ մոդելը, իր հիմքում ունենալով որոշակի սոցիալական հանրության արժեհամակարգային կողմնորոշիչները, բովանդակում է երեք կարգի իրավանորմեր՝ նորմ-նպատակ, նորմ-սկզբունք եւ առավել կարեւոր նշանակության իրավահարաբերություններ կանոնակարգող ու գերակա բնույթով օժտված նորմեր: Նորմը սահմանադրական կոչվելու համար ոչ միայն պետք է վերոնշյալ բնութագրիչներից որեւէ մեկն ունենա, այլեւ ընդունված լինի սահմանադրական նորմերի համար նախատեսված ընթացակարգով, հասարակական համաձայնության արտացոլումը լինի:

Ազգային-եկեղեցական ժողովների բնույթն ուսումնասիրելիս համոզվեցինք, որ դրանք իրենց էությամբ սահմանադիր ժողովներ են եւ ընդունել են հասարակական համաձայնության ար-

<sup>92</sup> ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ. Հանրագիտարան, Երեւան, 2002:



դյունք հանդիսացող, համապարտադիր ու գերակա իրավաբանական ուժ ունեցող վարքագծի կանոններ:<sup>93</sup> Փորձենք դրանում համոզվել նաեւ այդ կանոնների բովանդակային որոշ վերլուծության միջոցով:

Այդ կանոններին, որպէս սահմանադրական կանոններ, պատմագրության մեջ բազմաթիվ անդրադարձեր եղել են. օրինակ, Խորենացի՝ V դար, Հովհաննես Օճնեցի՝ VIII դար, Թովմա Արծրունի՝ X դար, Ուխտանես՝ XI դար, Վարդան Արեւելցի՝ XIII դար, Միքայել Չամչյանց՝ XVIII դար եւ այլն:<sup>94</sup> Վերջին հարյուրամյակներում բազմաթիվ հեղինակներ են անդրադարձել ազգային-եկեղեցական ժողովների կողմից ընդունված կանոնների համեմատական ու բովանդակային վերլուծությանը, որոնց մասնակի մենք անդրադառնում ենք ու հիշատակում՝ մեր կողմից ուսումնասիրվող նյութի շրջանակներում: Այս պարագայում ցանկանում ենք մեկ հիմնական հարցի պատասխան գտնել. որո՞նք են կանոնական սահմանադրության իրավագիտական հիմնական բնութագրիչները՝ դրանում ներառված իրավանորմերի բնույթից ելնելով:

Ամենից առաջ ընդհանրականն այն է, որ **իրենց իրավաբանական ուժով այդ նորմերը համապարտադիր բնույթ են ունեցել** ու դրանցից շեղումը հասարակության կողմից մերժելի ու պարսա-

93 Գրականության մեջ հաճախ այդ կանոնները կոչվում են օրենքներ կամ վճիռներ: Այս առնչությամբ հստակ պարզամանում է տվել Ներսես Մելիք-Թանգյանը, նշելով, որ «Եկեղեցու մեջ կանոնն այն է, ինչ որ օրենքը պետության մեջ: Կանոնի եւ օրենքի տարբերությունը պարզ կերպով որոշվեց Յուստինիանոսի ժամանակներից Հռոմեական իրավագիտության մեջ...: Յուստինիանոսի իրավական գրքում կանոն եզրը հատկացվում էր միայն եկեղեցական սահմանադրություններին, զուգակշիռ դնելով դրան քաղաքացիական կարգադրությունները, որ կոչվում էին օրենք» (Հայոց եկեղեցական իրավունքը. Ներսես Մելիք-Թանգյան, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 12): Մեկնալմանելով «կանոնական» հասկացության իրավագիտական իմաստը՝ հեղինակը գտնում է, որ «կանոնական ածականը շատ անգամ յատկացուում է այն կաթողիկոսական կոնդակներին, որոնք զուտ եկեղեցական հրահանգներ են ամփոփում եւ պարտադիր նշանակություն ունեն, ինչպէս է օր. Գեորգ Դ-ի 1868 Կանոնական Կոնդակը» (նույն տեղում, էջ 13):

94 Այդ մասին տես սույն գրքի հավելվածում, ինչպէս նաեւ՝ Գ. Հարությունյան, Սահմանադրական մշակույթ, Երեւան, 2005, էջեր 75-83:

վելի է համարվել: Ավելին, այդ նորմերից շեղումով է բացատրվել հանրային կյանքում ու երկրի համար էական ազդեցություն ունեցող բացասական ամեն մի երեւոյթ: Օրինակ, խոսելով Աշոտ Արծրունու՝ գերությունից վերադարձից հետո (868թ.) դրսեւորած վարքի մասին, Թովմա Արծրունին վկայում է. «Բայց զի՞նչ աստանօր ինձ ասելի է, զի թեպէտ դառնալով դարձան յայտնապէս յերկրպագութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ այլ զկանոնական **սահմանադրութիւնն** ոչ բերելով ուղղակի, ոչ միայն Աշոտ, այլ եւ ամենայն իշխանքն Հայոց, որք գերեդարձքն եղեն. զուրացութեանն ի բաց դնելով զվատթարութիւն, սակայն **կանոնական սահմանադրութեանն** արտաքոյ մնացեալ, գայթ ի գայթս զքրիստոնէութեանն վարս բերելով անառակութեամբք եւ արբեցութեամբ, խառն անկողնօք եւ պղծութեամբք, աղտապիղծ սարսափելի եւ գարշելի խառնակութեամբ արուսպղծութեամբք, որ անցուցանէ զանցանէ զանասնական խառնակութեամբքն երիքովեան եւ սողմական լրբութեամբ, անամօթաբար այր զարամբք բորբոքեալ, դեզադէզ զհրացանն բերելով յերկնուստ զանգրաւ կիզումն, անցուցեալ զանցուցեալ զաստակչական կործանմանն ջրհեղեղին»:<sup>95</sup> Ինչպէս տեսնում ենք, կանոնական սահմանադրությունից «հեռու մնալով»՝ Աշոտը եւ «գերեդարձ» եղած բոլոր իշխանները «քրիստոնյայի՝ իրենց անհաստատ վարքին խառնեցին անառակությունը, արբեցությունը...», որի համար հասարակական պարսավանքի են արժանանում:

Կանոնական սահմանադրության նորմերը գործել են ոչ թե որպէս սովորութային նորմեր, այլ **պարտադիր իրավական բովանդակություն են ունեցել**:

Իրենց բնույթով **այդ նորմերն առաջին հերթին սահմանագծային վարքագծի կանոններ են սահմանում**: Օրինակ, ամուսնա-ընտանեկան հարաբերությունների կանոնակարգման առումով Աշտիշատի ժողովի կողմից ընդունված առաջին կանոնը սահմանում է. «Ժողովը հրահանգեց նախարարներին իրենց տոհմական

95 Ներկայացվում է Թովմա Արծրունի. «Արծրունաց տան պատմություն»՝ «Հայ դասական մատենագրություն» www. digilib. am, version 1.0 նյութերի հիման վրա:

ժառանգությունը պահպանելու համար մերձավոր ազգականների միջև խնամիրություն չանել»։ Նույն խնդրին անդրադառնալով՝ Շահապիվանի ժողովը ոչ թե նորմ-սկզբունք է ընդունում, այլ առավել հստակ կանոնակարգում է այս հարաբերությունները, սահմանելով. «Ոչ ոք չպետք է համարձակվի ամուսնանալ քրոջ, քեռորդու, եղբորորդու կամ հորաքրոջ, կամ ազգականի հետ մինչև չորրորդ ծնունդը: Ով հաղորդ կլինի այսպիսի պսակին, պսակը կօրհնի կամ հարսանիքին կզնա, եթե եպիսկոպոս է կամ երեց, աթոռից եւ քահանայությունից ընկնեն եւ պաշտոնյաների հետ չխառնվեն...»:<sup>96</sup> Հստակեցվում է ոչ միայն նորմը (ի՞նչ ասել է մերձավոր ազգական, երբ ազգականը կարող է մերձավոր չհամարվել եւ այլն), այլեւ հստակ սանկցիաներ են նախատեսվում եւ երաշխավորվում է կատարման համապարտադիր բնույթը: Այս հիմնախնդրին անդրադարձել է նաեւ Աղվենի սահմանադիր ժողովը եւ Կանոնական սահմանադրության նորմ է ամրագրել. «Ոչ մի տղամարդ երրորդ պորտի ազգակցուհի կին չպետք է առնի եւ եղբոր կնոջ հետ չպետք է ամուսնանա»:<sup>97</sup>

Կ. Յ. Բասմաջյանը դեռեւս 1901թ. անդրադառնալով հայ իրավունքի մասին օտար հեղինակների ուսումնասիրություններին, հիշատակելով դոկտոր Ֆերդինանդ Բիշոֆին, դոկտոր Կոնլերին, պրոֆ. Ռ. Գարեստին եւ այլոց, իր հերթին շեշտում է, որ «Հայկական իրավանց հիմնական տարրը, Վաղարշակէն մինչեւ Բագրատունեաց ժամանակ, ընտանիքի նահապետական կազմակերպութիւնըն էր, հաստատուած ասանդութիւններու եւ մանաւանդ Ս. Գրոց վրայ, որ իր կարգին ծնունդ տուած է Կանոնադրոց»<sup>98</sup> (ընդգծումը մերն է-Գ.Հ.): Ուշադրության արժանի ընդհանրացում է անում Ա. Գլտճյանը, որը 1913թ. Հայոց հին իրավունքին նվիրված ծավալուն ուսումնասիրության մեջ, անդրադառնալով օտար հետազոտողներին, ըստ էության այն հետեւու-

թյունն է անում, որ անտեղի է հայ իրավունքի վրա օտար ազդեցությունների փնտրտուքը, քանի որ հայ իրավունքն իր արժեքային հենքով, բնույթով ու ամբողջականությամբ ինքնուրույն ձեռագիր ու զարգացում է ունեցել («Որ հայերը ունեցել են ազգային իրավունք [...] այդ մասին մեր հայրենի իրաւունքի աղբիւրները մատակարարում են բաւականին ապացոյցներ»):<sup>99</sup>

Միանգամայն ճշմարտացի է Ս. Հովհաննիսյանը, նշելով, որ «Յուրաքանչյուր օրենք կամ կանոնախումբ իր դարաշրջանի ծնունդն է: Նրանք արտահայտում են տիրապետող աշխարհիկ եւ հոգետր դասերի նյութական եւ հոգետր շահերը, ուժերի փոխհարաբերությունը, նրանց կամքը: Նրանք իրենց վրա կրում են դարաշրջանի իրավագիտակցության կնիքը»:<sup>100</sup> Միաժամանակ, համեմատելով տարբեր ազգային-եկեղեցական ժողովների կողմից ընդունված կանոնական սահմանադրությունների նորմերը, տեսնում ենք թե՛ կարգավորման առարկայի ընդհանրություններ (հատկապէս բնորոշ է, որ բոլորում անդրադարձ կա ամուսնաընտանեկան հարաբերություններին,<sup>101</sup> հոգետր իշխանությունը կրողների վարքին եւ այլն) եւ թե՛ իրավամտաժողովության արժեհամակարգային որոշակի ընդհանրականություն: Վերջինիս հիմքը քրիստոնեական ընդհանուր գաղափարաբանությունն է եւ աստվածային պատվիրանների կյանքի կոչման իրավական ու բարոյական անհրաժեշտ նախադրյալների ստեղծման հրամայականը: Ընդհանրականն այն է, որ կանոնական սահմանադրությունները կոչված են եղել, մի կողմից, քրիստոնեության ամրապնդմանը, մյուս կողմից՝ երկիրն անօրինություններից, կամայականություններից, քայքայումից փրկելուն:

99 Արսէն Դլտճեան, Հայոց հին իրավունքը, Ալեքսանդրապոլ, 1913, էջեր 3-13:  
100 Հովհաննիսյան Ս., Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները եւ նրանց աղբիւրը Աշտիշատի կանոնների հետ // Պատմա-Սահմանադրական հանդես, 1967, N 4, էջ 270:  
101 Առանձնակի կարեւորություն է այս խնդրին տալիս Շահապիվանի ժողովը, որը կանոնակարգել է ազգակցական ամուսնության, ամուսնական անհավատարմության, շնացողության, կնոջ անլուծյալ պատճառով ամուսնալուծության, խորթ մոր հետ մեղք գործելու, ամուսնուց կնոջ հեռանալու, առեւանգման ամուսնության հետ կապված հարաբերությունները:

96 Տե՛ս Ավագյան Ռ. Հ., հիշյալ աշխատությունը, էջ 128:  
97 Նույն տեղում, էջ 139:  
98 Բասմաջեան Կ. Յ., Հայկական իրաւունք ի սկզբանէ մինչեւ մեր օրերը // ԲՍՆԱՍԷՐ, Փարիզ, 1901, պրակ Բ եւ Գ, էջ 68:

Ընդունված կանոնների վերլուծությունը միաժամանակ վկայում է, որ մարդկային համակեցության բոլոր կանոնների ու «միջմարդկային» հարաբերությունների հիմքում դրվեց աստվածային իրավունքը, որի արժեհամակարգի առանցքը, ինչպես նշել ենք, մարդն է, որն իր կյանքը պետք է կառուցի աստվածահաճ իրավական նորմերի ու օրենքների հիման վրա:

Բնականաբար, կոնկրետ լուծումները թելադրվում էին պատմական տվյալ ժամանակաշրջանի հիմնախնդիրների հրատապության ու առաջնահերթության աստիճանից ելնելով: Օրինակ, Ներսես Մելիք-Թանգյանը Շահապիվանի կանոնների առնչությամբ վկայում է, որ այդ կանոնները պարզ հայելին են Հայաստանի ծանր դրության: Հայոց թագավորությունը վերացել էր, երկիրն ընկել էր Պարսից գերիշխանության տակ, պարսիկ կառավարիչները եւ ասորի անառակ կաթողիկոսները տակն ու վրա էին արել Հայաստանը, խախտել բազմերախտ հայրապետների կարգերը, մտցրել օտարը, վատը եւ անկարգը: Բազմացել էր, «ըստ պատմագրաց», կնահանների, պռռնիկների, գողերի, չարագործների, հավատորացների, ազգատեացների թիվը, ամենաթեթեւ ծառայություններով ստանում էին ահագին պատիվներ եւ պարսիկ դառնալով՝ կեղեքում էին ժողովրդին, քանդում եւ պղծում եկեղեցիները եւ հավատացյալ հայերին ստիպում փոխել կրոնը: Ահա այս պատճառները ստիպեցին բոլոր ժողովականներին միաձայն հաստատել այնպիսի կարգ ու կանոններ եւ պատիժներ, որոնք տեսնված չէին եւ չեն էլ տեսնվել հայոց եկեղեցական պատմության մեջ:<sup>102</sup>

Այսուհանդերձ, կանոնական որոշումների համար ոչ պակաս կարեւոր էր այն հանգամանքը, որ ընդունված **սահմանադրական կանոնները չպետք է վերացական, գուտ կողմնորոշիչ-բարոյական նշանակություն ունենային:** Սահմանադրական իրավանորմի բնորոշ գծերից է նաեւ դրա ոչ միայն համապարտադիր, այլեւ իրական իրավակարգավորիչ դերը: Այս առումով նույնպես պատմությունը վկայում է, որ կանոնական սահմանադրությունները չեն

<sup>102</sup> Տե՛ս Հայոց եկեղեցական իրավունքը, Ներսես Մելիք-Թանգյան, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 321:

մնացել որպես բարի ցանկությունների ժողովածու, այլ ունեցել են չափազանց մեծ իրավակիրառական նշանակություն: Օրինակ, խոսելով Աշտիշատի ժողովի որոշումների գործնական արդյունքների մասին՝ Հակոբ Մանանդյանն արձանագրում է, որ «Համաձայն այդ ժողովի որոշումների, Հայաստանում բացվեցին ամենուրեք բարեգործական հիմնարկներ: Բորոտների, ընկնավորների ու ախտավորների համար կառուցվեցին հիվանդանոցներ եւ անկելանոցներ, հաշմանդամների, անաշխատունակների եւ աղքատների համար՝ ապաստարաններ ու աղքատանոցներ, հիմնվեցին նաեւ վանքեր, դպրոցներ ու իջեւաններ: Այս հաստատությունները պահվում էին եկեղեցական կալվածքների եկամուտներով ու նաեւ ժողովրդից զանձվող առանձին տուրքերով»:<sup>103</sup> Հատուկ կարեւորելով այդ ամենը, նաեւ մերձավորների միջեւ խնամիրության ու մեռելների վրա դառն լացուկոծի վերացումը, Հովհաննես Դրասխանակերտցին արձանագրում է, որ «դրանից հետո մեր ժողովրդին կարելի էր տեսնել ոչ թե որպես այլանդակ բարբարոսներ, այլ որպես համեստ քաղաքացիներ»:<sup>104</sup>

Իր հերթին, Շահապիվանի ժողովի ընդունած կանոնների առնչությամբ Խաչիկ Սամուելյանն արձանագրում է, որ «Շահապիվանի ժողովի կանոնական որոշումները բնորոշ են նրանով, որ սահմանում են ոչ միայն եկեղեցական իրավունքի, այլեւ քաղաքացիական ու քրեական իրավունքի նորմեր, որոնց կիրառումը [...] պարտադիր է դառնում նաեւ աշխարհիկ ֆեոդալների համար»:<sup>105</sup> Շահապիվանի ժողովի ընդունված 20 կանոնը վերաբերում են Հայաստանի ներքին կյանքի հրատապ ու կարեւոր այնպիսի հարցերի, ինչպիսիք էին ամուսնա-ընտանեկան հարաբերությունների կարգավորումը, հոգեւորականների գործունեությունն ու վերջինիս վերահսկումը, աղանդավորության դեմ պայքարը, կուսակրոնությունը եւ այլն:

Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին,

<sup>103</sup> Հակոբ Մանանդյան, Երկեր, գիրք Բ, Երեւան, 1978, էջ 164:

<sup>104</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն /աշխարհավար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Գ.Բ. Թոսունյանի, Երեւան, 1996, էջ 49:

<sup>105</sup> Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երեւան, 1939, էջ 122:

որ նույնիսկ քրեաքաղաքացիական իրավահարաբերություններ կանոնակարգող նորմերը սահմանադիր բնույթ ունեն՝ հստակեցվում են իրավունքը, դրա սահմանափակման եզրերը, եւ ապա այն խախտելու դեպքում նախատեսվում է սանկցիան (օրինակ, ամլության պատճառով կնոջն արձակելու մասին նորմով սահմանվում է. «եթե մեկը կնոջն արձակի ամլության պատճառով, կինը կարող է վերցնել ամբողջ կարասին, որ հետը բերել էր, ինչպես նաեւ հանդերձը, արծաթը, ադախնուն, անասունը. եթե բացի ամլությունից կինը ուրիշ արատ չունի. մարդը թող տուգանք մուծի անարգանքի համար. եթե ազատ է՝ 1200 դրամ, եթե շինական է՝ 700 դրամ [...]»):

Խոսելով Աղվենի ժողովի ընդունած կանոնների մասին՝ Վարագ Առաքելյանն ընդգծում է, որ «Աղվենի ժողովի կանոնները ցույց են տալիս, որ Վաչագան Բարեպաշտը խորամիտ ու տաղանդավոր թագավոր է եղել, եւ ամենից առաջ նրան հետաքրքրել է երկրի մշակութային կյանքի զարգացումը, իրավական նորմերի ստեղծումը, հայ եկեղեցու հզորացումը...: Ըստ այդ կանոնների՝ արգելվում էին կնաթողությունը, մեռելների վրա հեթանոսական ողբն ու կոծը, կախարհների դիմելը եւ այլն, որոնք այն ժամանակվա համար հսկայական քաղաքակիրթ նշանակություն ունեին»:<sup>106</sup>

Ընդհանրացնելով՝ կարող ենք արձանագրել, որ կանոնական սահմանադրության իրավանորմերը որքան էլ իրենց իրավաբանական բնույթով ու բովանդակությամբ տարբեր են ժամանակակից սահմանադրական նորմերի համեմատությամբ, այսուհանդերձ, իրենց պատմական կոնկրետ ժամանակաշրջանում եւ կոնկրետ հասարակական իրողությունների պայմաններում ունեցել են հանրային կյանքի կանոնակարգված զարգացումը երաշխավորելու համար նույնքան ու, թերեւս, առավել կարեւոր դեր ու իրավակիրառական նշանակություն: Դրանք ժամանակի գաղափարաբանական արժեհամակարգի հիմնական սկզբունքներից բխող ու գերակա նշանակության իրավակարգավորիչ դեր են ունեցել հոգեւոր ու աշխարհիկ կյանքում: Տաճատ Արքեպիսկոպո-

<sup>106</sup> Մովսէս Կաղանկատվացի, Պատմություն Աղվանաց աշխարհի, Երեւան, 1969, առաջաձևան, էջ XI:

սի ընդհանրացված բնութագրմամբ «Դարերով զրկուած մնալով սեփական պետական կեանքէ, դարերով հարկատու մնալով ներխուժող թշնամի ժողովուրդներու տիրապետութեան տակ, կորսրցնելով հանդերձ աշխարհիկ իշխանութիւնը, որպէս սեփական Եկեղեցի եւ Մշակոյթ ունեցող պատմական ազգի մը գավակները, կառավարուած ենք մեր **Ազգային, Եկեղեցական եւ համայնքային օրէնքներով**»<sup>107</sup> (ընդգծումը մերն է.-Գ.Հ.): Դրանց ամբողջությունն է կազմել պատմական այդ ժամանակահատվածում մեր սահմանադրական մշակույթի բովանդակությունը: Վերջինիս էական առանձնահատկություններից է պետականության, «աշխարհիկ իշխանության» բացակայության պայմաններում «**ազգային օրէնքների**»՝ որպէս իրավական իրողության, գոյությունը: Այս հանգամանքը ներկայումս կարող է դժվարընկալելի լինել: Սակայն պատմական իրողություն է, որ «ազգային օրէնքները» ընդունվել, գործել, բարեփոխվել եւ շարունակական դերակատարություն են ունեցել հայ հասարակական հարաբերությունների իրավակարգավորման գործում նաեւ պետականության կորստի պայմաններում: Դրանք հանդես են եկել որպէս «վերպետական» երեւոյթ: Ոչ ուղղակի, սակայն փոխաբերական համեմատություն կարելի է անցկացնել արդի միջազգային իրավունքի հետ, երբ միջազգային պայմանագրերի նորմերը ոչ միայն ազգային իրավական համակարգի մաս են կազմում, այլեւ դրանք ներպետական օրենսդրության նկատմամբ գերակա բնույթ ունեն: Պատմականորեն մեր «ազգային օրէնքները», ընդունված լինելով ոչ թե պետական իշխանության, այլ համազգային ներկայացուցչական մարմնի՝ ազգային-եկեղեցական ժողովի կողմից, ունեցել են գերակա բնույթ եւ, դարձյալ հարաբերական առումով, ոչ միայն ներկայացուցչական, այլ ինչ-որ տեղ նաեւ անմիջական ժողովրդավարության դրսեւորում են (բնորոշ է հատկապէս Շահապիվանի ժողովի առնչությամբ բերված վկայությունը): Այս հանգամանքը նույնպէս սահմանադրական մշակույթի կարեւոր բնութագրիչ է:

<sup>107</sup> Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Անթիլիաս, Լիճնան, 1968, էջ 7-8:

2.4. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆՈՐՈՇ  
ԳԾԵՐԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ  
ԻՐԱՎԱՔԱՎԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԷՋԵՐՈՒՄ

Հայ ժողովրդի պատմությունը ոչ միայն ձեռքբերումների, այլև, ցավոք, մեծ կորուստների պատմություն է: Մեր կազմակերպված գոյի որակների վրա իր խոր կնիքն է թողել հատկապես պետականության դարավոր կորուստը: Այսուհանդերձ, թերեւս նաեւ դժվարությունների թելադրանքով ու ինքնության պահպանության գերճիգերով է պայմանավորվել, որ հայ իրականության մեջ, ինչպես տեսանք, սահմանադրությունը մշտապես շարունակել է լինել ապրող իրողություն եւ սահմանադրական մշակույթի եզակի դրսեւորումներ են արձանագրվել, որոնք այսօրվա համար ունեն մեծ խորհուրդ ու նաեւ՝ իմաստավորման անհրաժեշտություն:<sup>108</sup> Մենք կփորձենք շարունակել անդրադարձը մեր պատմության քրիստոնեական վաղ շրջանի որոշ իրողությունների՝ այսօրվա խնդիրների համատեքստում դրանց արժեվորման անհրաժեշտությունից ելնելով: Սակայն հարկ ենք համարում կրկին շեշտել, որ **սահմանադրական մշակույթի տարրերը, որպես բանականորեն իմաստավորված արժեհամակարգի մաս, որպես սոցիալական հանրության՝ փոխհամաձայնությամբ ապրելու իրողություն, գոյություն են ունեցել մարդկային հասարակության արշալույսին եւ գոյություն ունեն նաեւ պետության «չգրված» սահմանադրությունների պարագաներում:**

Մեր ժողովրդի պատմությունը (ոչ միայն քրիստոնեական շրջանի) նույնպես լավագույնս վկայում է այդ ճշմարտությունը: Դեռեւս Ք. ա. 28-27-րդ դարերում Հայկական լեռնաշխարհի Ա-

108 Ինչպես իրավագիտորեն նշում է պրոֆեսոր Խ. Սամուելյանը՝ «Հայ իրավունքը մեզ չի հասել, ինչպես հռոմեական Corpus juris-ը կամ Ուլթիոնական օրենքների Համնուրամիի ժողովածուն, կամ այլ հին ժողովուրդների իրավունքները՝ պետականորեն օրենսդրված, ազգային ամփոփ մի կողմի վերածված» (Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երեւան, 1939, էջ 3): Այսուհանդերձ, «...հայ իրավունքն իր համապատասխան տեղն է գրավում իրավագիտության մեջ» (նույն տեղում, էջ 4):

րատտա երկիրը Հարավային Միջագետքի հնագույն ժողովրդին՝ շումերներին հայտնի էր որպես «սուրբ օրենքների երկիր» անունով: Ըստ սեպագիր ամենահին արձանագրությունների՝ շումերական վիպերգերի, Արատտայում ղեկավարումն իրականացնում էին «էն» (գերագույն քուրմ) տիտղոսը կրող կառավարիչները:<sup>109</sup> Առավել կարեւոր պետական հարցերը՝ պատերազմ հայտարարել, հաշտություն կնքել եւ այլն, Արատտայի գերագույն քուրմը **որոշում էր ավագների ժողովի հետ խորհրդակցելով:**

Շումերական վիպերգերում աղոտ հիշատակություն կա նաեւ այն մասին, որ այդ օրենքները գրի են առնված եղել պատկերագրերի տեսքով: Այսօր դժվար է ասել, թե այդ ինչ «սուրբ օրենքներ» են գործել Արատտայում, որոնք զարմացրել են հարեւան ժողովուրդներին, սակայն դյուրին է կռահել, որ խոսքը սովորության իրավունքի ամենահին դրսեւորումների մասին է:

Հայ իրավունքի պատմության ճանաչված մասնագետ Խաչիկ Սամուելյանը գրել է. «Ամեն մի սովորույթ անխտիր չի կարող իրավունքի աղբյուր լինել, այլ միայն այն սովորույթները, որոնք հասարակական համակեցության մեջ գործադրվում եւ պահպանվում են իբրեւ պարտադիր նշանակություն ունեցող որոշ նորմեր»:<sup>110</sup> Նախնադարյան մարդը, հազարամյակներ շարունակ խմբովին պայքար մղելով իր գոյության համար, մշակել էր համակենցադային կարգեր, որտեղ, որպես մարդկանց միջեւ հարաբերությունների հիմնական կարգավորիչ, հանդես էր գալիս սերնդե-սերունդ փոխանցվող սովորույթը: Պետական կազմավորումների ի հայտ գալով՝ վավերացվեցին եւ իրավական կանոններում ներառվեցին մի շարք սովորույթներ, որոնք, իբրեւ պարտադիր նշանակություն ունեցող նորմերի համակցություն, իրավունքի պատմության մեջ ստացել են սովորության իրավունք անվանումը՝ ունենալով այն պահպանելու յուրահատուկ համակարգ:

109 Մովսիսյան Ա., «Հնագույն պետությունը Հայաստանում», Երեւան, 1992, էջ 53:

Գ-Ժվար չէ ենթադրել, որ հին աշխարհի իրավունքի նշանավոր հուշարձանից՝ «Համնուրաբի օրենքների» ստեղծումից շուրջ հազար տարի առաջ Արատտայում արդեն գործող օրենքներն ինչպիսի արձագանք պիտի գտնեին հարեւան երկրներում:<sup>111</sup>

Հայկական ցեղերի մեկ այլ պետական կազմավորման՝ Հայասա-Ազգի իրավական համակարգի մասին որոշ տեղեկություններ են պարունակում Ք. ա. 14-րդ դարում խեթական պետության՝ Խաթթի տիրակալ Սուպիլուլիումասի (Ք. ա. 1380-1340թթ.) եւ Հայասայի թագավոր Խուկկանայի (Հականա) միջեւ կնքված միջպետական պայմանագիրը:<sup>112</sup> Ըստ այդ պայմանագրի՝ Հայասայի թագավորը, կնության առնելով խեթական արքայի քրոջը, պարտավորվում էր հավատարիմ լինել Սուպիլուլիումասին, նրան տրամադրել ռազմական օգնություն, վերադարձնել Խաթթիից փախած անձանց (ստրուկներին, որոնց, հավանաբար, ազատ կարգավիճակ էր տրվում Հայասայում, հակառակ դեպքում նրանք չէին փախչի Խաթթիից): Հետաքրքիր է, որ այդ պայմանագրով Սուպիլուլիումասը դիմել է նաեւ «Հայասայի մարդկանց», որի ներքո, հետազոտողների կարծիքով, պետք է հասկանալ «ժողովրդական հավաքը»: Հայասա-Ազգիում հիշատակվում է նաեւ «ավագների խորհուրդը»: Այս երկու մարմինները հիշեցնում են հենց հարեւան խեթերի տուլիան (թագավորի մերձավորներից եւ պալատական իշխաններից կազմված խորհուրդը)<sup>113</sup> եւ պանկուսը (ժողովրդական հավաքը, որն աստիճանաբար փոխվեց զինվորական խորհրդի):

Յավոք, քիչ բան է հայտնի նաեւ Արարատի կամ Վանի թագավորության (Ուրարտու) պետաիրավական համակարգի մասին: Ուրարտագետ Հ. Կարազոյանի կարծիքով, ջրաշինական եւ այլ կառույցների, այգիների մոտ գտնված արքայական կոթող-արձանագրությունները՝ «անեծք-բանաձեւերի» տեսքով,

պետության արքունական-տաճարային օրենսգրքի հատվածներ են: Բուն օրենսգրքի ամբողջական շարադրանքն առայժմ հայտնաբերված չէ: Կարծիք է հայտնվել նաեւ, որ Արարատյան թագավորության դիցարանում հասարակական կարգ ու կանոնի պահապան աստվածը Արդին էր, իսկ մարդկանց գրաված տեղն ու դիրքը սահմանում էր Բարձիա դիցուհին:

Մեր պատմության մեջ հետագա դարերի ընթացքում գործող իրավաբանական նորմերի ժողովածուների բացակայությունը բնավ հիմք չէ ենթադրելու, թե Հայաստանում գոյություն չի ունեցել իրավական լայն գործունեության նախադրյալ: Հայաստանն իր հասարակական հարաբերությունները կարգավորել է իրավաբանական որոշ նորմերով: Հայ մատենագրությունը վկայում է, թե ինչպես են հայ թագավորները օրենքներ ընդունել: Օրինակ, Խորենացին Վաղարշակ թագավորին (Ք. ա. 2-րդ դար) է վերագրում հայ նախարարությունների «հաստատումն ու կարգումը» (ճիշտ կլինի գրել վերահաստատումն ու վերակարգումը, որովհետեւ Հայոց նախարարական տներից շատերը հայտնի էին դեռ Արարատի թագավորության ժամանակներից): Նա նաեւ «իր թագավորական տանը օրենքներ է հաստատում», «սահմանում զինվորական կարգեր», «սահմանում է իրավարարներ արքունի տանը, իրավարարներ՝ քաղաքներում եւ ավաններում»:<sup>114</sup>

Սակայն Հայաստանում շատ ավելի գործուն դեր են խաղացել սովորութային իրավունքի նորմերը: Ինչպես գրում է Խ. Սամուելյանը՝ «...սովորութական իրավունքի ավանդական դերը հասարակական հարաբերություններում այնքան ուժեղ եւ արմատացած է եղել, որ կարիք չի զգացվել այդ ամենը գրավոր ձեւերի վերածել: Թերեւս, սովորութական իրավունքի այդ ընդհանրացած բնույթին պետք է վերագրել հայ թագավորների օրենսդրական գործունեության սղությունը»<sup>115</sup>:

Սովորութային իրավունքի իմաստ ունեն մեր հին մատենագ-

111 Шамшадуршати итѣи Авакян Рубен, Авакян Рафаель: Истоки правовой мысли протоармян Древней Месопотамии и Армянского нагорья // ЕФ МНЮИ - XXI ВЕК, N 23, март, 2005, էջեր 51-62:

112 История Древнего Востока; т. 2. М., 1988, էջ 146:

113 Войтех Замаровский, "Тайны хеттов". М., 1968« էջ 254:

114 Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», գիրք 2, գլ. է, ը :

115 Սամուելյան Խ., «Հին հայ իրավունքի պատմություն», հ. 1, Երեւան, 1939, էջեր 34-35:

րության մեջ գործածված «օրենք նախնյաց», «կարգ նախնյաց», «սահմանք» հասկացությունները, որոնք, սակայն, իրենցից քարացած օրենքների կանոնացված ամբողջություն չեն ներկայացրել, այլ սնվել ու մշակվել են ազգի բարոյական ու գեղագիտական չափանիշների դրական թանձրուքից, կրել են ժողովրդի՝ դարերի խորքից եկող իմաստության կնիքը: Եվ եթե այսօր զարմանում ու հիանում ենք Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» կամ Սմբատ Գունդատաբլի «Դատաստանագրքի»՝ իրենց ժամանակի համար անսովոր «մարդասիրական» հողավճներով, շնորհիվ այն բանի, որ դրանք բովանդակում են հայ սովորությանին իրավունքի բազմաթիվ նորմեր: Մխիթար Գոշի այն վկայությունը, «որ ոչ թուին ի կանոնաց, ի կենդանի առաք ձայնէ» (Դատաստանագրք, 1, 6թ), հաստատում է, թե ինչ մեծ դեր էր կատարում սովորությանին իրավունքը հայ իրականության մեջ:

Սովորությանին իրավունքի անչափ հարուստ նյութ է բովանդակում հայ ազգագրությունը, որը, ցավոք, լայնորեն ուսումնասիրված չէ այդ տեսանկյունից: **Նենց միայն մեր էպոսի վերլուծությունը բավարար է սովորությանին իրավունքի նորմերի թաքնված մի գանձարան բացելու եւ, թերեւս, պատասխանելու այն հարցին, թե ինչու «Մասնա ծները», ի տարբերություն այլ ժողովուրդների դյուցազնավեպերի, այդչափ զերծ է սպանությունների ու պատերազմների սարսափազդու տեսարաններից, մարդկային դաժանությունից ու նենգությունից, հեղվող արյան գետերից:**

Այսուհանդերձ, իրավական որոշակի համակարգ ու սահմանադրականության տարրեր ձեւավորվել են պատմական տեւական ժամանակահատվածում եւ, ինչպես տեսանք, առանձնահատուկ հետետողականությամբ են դրսեւորվել հայ իրականության մեջ՝ հատկապես քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելուց հետո, աշխարհիկ ու հոգեւոր կյանքի միասնական կանոնների սահմանման անհրաժեշտության պայմաններում:<sup>116</sup> Օ-

116 «Կանոնադիր գործունեությունը եւ կանոնական որոշումները, որպես կանոնական իրավունքի աղբյուրներ, աչքի ընկնող նշանակություն ունեցան ընդհանրապես հայոց պատմության եւ մասնավորապես հայ իրավունքի պատմության մեջ» - Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երեւան, 1939, էջ 43:

րենքի, իրավունքի, արդարադատության, պատժի անխուսափելիության, գործած մեղքին համապատասխան հատուցման, «բանականություն» եւ «օրենք» հասկացությունների փոխկապվածության, ինչպես նաեւ պետության կառավարման գործում դրանց դերի ու հասարակության կայունության ապահովման հարցերին ուշագրավ անդրադարձեր են ունեցել Մեսրոպ Մաշտոցը (362-440), Եզնիկ Կողբացին (շուրջ 380-450), Եղիշեն (410-475), Մովսես Խորենացին (շուրջ 410-495) եւ միջնադարի բազմաթիվ այլ ականավոր հայ մտածողներ: Ընդ որում, տարբերակելով աստվածային արդարադատությունը մարդկայինից, շեշտվել է, որ «բազմավորների օրենքը հանցավորներին է պատժում, իսկ Աստված՝ հանցավորին եւ ազգը. հանցավորին որպես օրենսդիր, իսկ ազգին՝ որպես առաջագետ»:<sup>117</sup> Այս ժամանակաշրջանի բնորոշ գծերից մեկն այն էր, որ մեծապես **կարեւորվում էր օրենքի ու արդարադատության դերը հասարակական համերաշխության հաստատման, պետության կայուն զարգացումը երաշխավորելու գործում:**<sup>118</sup>

Օրինակ, Աղվենի սահմանադիր ժողովի բուն նպատակը, ինչպես նշել ենք, սահմանադրական կանոնների օգնությամբ հասարակության մեջ առկա «բազմաթիվ հակառակությունների» հաղթահարումն էր: Դրան հասնելու ճանապարհ է ընտրվում այնպիսի ընդհանուր կանոնների սահմանումը, որոնցից կբխեն հոգեւորականների ու աշխարհականների գործողությունները, որոնք այլեւս **սահմանափակվում են** սույն կանոններով: Վերջիններս Աստծու առաջ տիրոջն ու ծառային չեն տարբերակում («Կիրակի օրը տերն ու ծառան պետք է գնան մայր եկեղեցի, աղոթքներ ու հիշատակ կատարեն եկեղեցում...»), սահմանում են բարոյական համակեցության հստակ մոտեցումներ («Ոչ մի տղամարդ երրորդ պորտի ազգակցուհի կին չպետք է առնի եւ եղբոր կնոջ հետ չպետք է ամուսնանա»), հստակեցնում են լիազորություններ

117 Եղիշե, Սրմոյ հօրն մերոյ Եղիշէի Վարդապետի մատենագրութիւնք, Վենետիկ, 1859, էջ 336:

118 Մասնավորապես տե՛ս Սիրումյան Կ., Հայ քաղաքական մտքի պատմությունից, Երեւան, 2002, էջ 108:

րի շրջանակները («Ազնվականները առանց եպիսկոպոսի իրավունք չունեն քահանային հեռացնել կամ նշանակել՝ չնայած որ իրենց դաստակերտն է. եպիսկոպոսն էլ չպետք է առանց նրանց ազատի կամ նշանակի...»): Մեկ տասնյակից ավելի նորմեր են սահմանվում աշխարհիկ ու հոգեւոր այլ հարաբերությունները կանոնակարգելու համար:

**Սահմանել կանոններ եւ սահման դնել գործողություններին,** այն իրականացնել ներկայացուցչական ժողովի միջոցով<sup>119</sup> եւ ձեռք բերված փոխհամաձայնությունը վավերացնել Աղվանքի բոլոր ազնվականների կողմից ու «...գրության ավելի վավերական լինելու համար» կնքել Արքայի մատանիով՝ սրանք լոկ վկայություններ չեն հայ եւ համաշխարհային իրավունքի պատմության մեջ Սահմանադրություն երեսույթի ու սահմանադրական մշակույթի հիմնատարների ծնունդի մասին: Մենք գործ ունենք առանձնահատուկ ուշադրության արժանի իրավափիլիսոփայական այնպիսի իրողության հետ, երբ չափազանց հետաքրքիր ընդհանրություններ ենք տեսնում, օրինակ, 488թ. Աղվանքում Սահմանադրության ընդունման անհրաժեշտության հիմնավորումների ու կարգի եւ 1787թ. ԱՄՆ-ի, 1791թ. Լեհաստանի ու Ֆրանսիայի, հետագայում նաեւ այլ երկրների սահմանադրությունների ընդունման միջեւ: Նույնն է ընդհանուր փիլիսոփայությունը՝ սահմանել հասարակական գոյի հիմնական կանոնները, որոնք գերակա են այլ օրենքների ու կանոնների նկատմամբ, ինչպես նաեւ սահման դնել իշխանավորների գործողություններին՝ դրանք պահելով սահմանադրական կանոնների շրջագծում, դա իրականացնել հրապարակայնորեն ու հասարակական լայն համաձայնության պայմաններում՝ ի դեմս պետության գլխի կողմից հրավիրված Սահմանադիր ժողովի գումարման:

Պատմականորեն կարելի է գուգահեռներ անցկացնել այս

119 Ինչպես վկայում է ևս. Սամուելյանը, ընդհանրապես հայ միջնադարյան իրականության մեջ «...Ազգային եկեղեցական ժողովներն իրենց վերապահում էին օրենսդիր կամ իրավադիր ֆունկցիաներ» (նշվ. աշխ., էջ 45):

Սահմանադրության եւ Արիստոտելի կողմից ներկայացված «Աթենական հասարակարգի» (Աթենքի սահմանադրության) միջեւ:<sup>120</sup> Հայտնի է նաև, որ Արիստոտելն իր տրամադրության տակ ունեցել է առնվազն 158 «հասարակարգ», որոնցում նկարագրված են եղել թե՛ հին հունական աշխարհի քաղաք-պետությունների, թե՛ հին աշխարհի այլ պետությունների հասարակարգերը՝ սկսած Կարթագենի պետական կառուցվածքից ու վերջացրած Հնդկաստանի «սահմանադրությամբ»: Սակայն այս գործերից մեզ է հասել միայն Աթենքի սահմանադրությունը, որը հայտնաբերվել է միայն 1890թ., Եգիպտոսից Բրիտանական թանգարան բերված պապիրուսներում, որը 1891թ. հրատարակել է անգլիացի գիտնական Ֆ. Զենյունը, իսկ վերջնականապես վերծանվել է անգլյալ դարի սկզբներին: Ամենայն հավանականությամբ՝ Արիստոտելն ի՛նքը միայն ի վիճակի չէր լինի այդ վիթխարի գործն անելու: Թերևս, այդ 158 սահմանադրություններն ուսումնասիրվել է Արիստոտելի հանձնարարությամբ ու անմիջական ղեկավարությամբ, իսկ դրանցից Աթենքինը գուցե հենց ի՛նքն է գրել կամ խմբագրել: Համենայն դեպս, հին հեղինակներն առանց տատանվելու այս գործը վերագրում են Արիստոտելին:

Արիստոտելն այս վիթխարի գործը ձեռնարկել է հատուկ նպատակով, այն է, որ հետագայում, դրանց վերլուծության հիման վրա, գրի իր “Politica” վերնագրով հիմնարար աշխատությունը: Ինչևէ, մեզ հասած թեկուզ միայն այս «հասարակարգի» նշանակությունն անգնահատելի է թե՛ պատմական, թե՛ իրավագիտական, թե՛ իրավունքի պատմության, թե՛ բանասիրական ու այլ առումներով:

«Աթենական հասարակարգը» ինքնին բաժանվում է երկու մասի. առաջին քառասուն գլուխը նվիրված է Աթենքի սահմանադրության պատմությանը, որն ամփոփված է 41-րդ գլխում (ցավոք, աշխատության սկիզբը չի պահպանվել): Երկրորդ մասում Արիստոտելը մանրամասն նկարագրում է Աթենքի իր օրերի հասարակարգը կամ սահմանադրությունը: Արիստոտելը հիշատակում է աթենական Սահմանադրության տասնմեկ փոփոխու-

120 Տե՛ս Արիստոտել, Աթենական հասարակարգը, Երեւան, 2000:



թյուն, ընդ որում, Աթենքը բնակեցնող առասպելական Իոնի հասարակարգն այս տասնմեկի մեջ չի մտցնում՝ համարելով այն ելակետային, որի առաջին, թեթևակի փոխողը, ըստ Արիստոտելի՝ նույնպես առասպելական Թեսեսն էր: Դրանից հետո գալիս է Դրակոնի սահմանադրությունը, երբ կազմվեց օրենքների առաջին ժողովածուն: Երրորդը Սոլոնի հասարակարգն էր, որից էլ սկիզբ է առնում «դեմոկրատիան»: Չորրորդը Պիսիստրատոսի տիրանությունն էր, հինգերորդը Կլիսթենեսի սահմանադրությունը, որն ավելի դեմոկրատական էր, քան Սոլոնինը: Վեցերորդը պարսկական պատերազմներից հետո հաստատված Արեոպագոսի խորհրդի իշխանությունն էր: Յոթերորդը Արիստիդեսի ուրվագծած սահմանադրությունն էր, որն Էփիալտեսը կատարելագործեց՝ տապալելով Արեոպագոսի բռնակալությունը: Ութերորդը չորս հարյուրի իշխանությունն էր, որին հետևեց իններորդ՝ վերականգնված դեմոկրատիան: Տասներորդը Երեսունի ու երկու տասի տիրանությունն էր: Տասնմեկերորդը վերջնականապես հաստատված դեմոկրատիան էր, որն արդեն տեր էր ամենայն ինչի ու ամենայն ինչ ղեկավարում էր քվեարկությամբ՝ թե՛ Հավաքում, թե՛ դատարաններում, ու այս անգամ արդեն գերագույն իշխանությունը մասնատված - փոխանցված էր բոլոր տեսակի դատարաններին, այսինքն՝ գերագույն ու կենտրոնացված իշխանության մենաշնորհ չկար: Գերագույն իշխանությունը, այնուամենայնիվ, **Ժողովրդական հավաքինն էր**, որը, փաստորեն, մշտական գործող մի հանրաքվե էր եւ, ինչպես նշում է Արիստոտելը՝ «...երբ դեմոկրատիան քվեարկելու գործություն ունի, ապա ինքն է հասարակարգի տերը»:<sup>121</sup>

Հայ իրականության մեջ, ի դեմս կանոնական սահմանադրությունների, ոչ միայն որոշակի զարգացում ստացավ հին հունական ժողովրդավարական-իրավական մշակույթը, **այլեւ այն լրացվեց «քվեարկելու գործություն» ունեցող եւ հասարակական համաձայնության դրսևորում հանդիսացող նոր իրողությամբ՝ ի դեմս հատուկ հրավիրված Սահմանադիր ժողովի:**

121 Նույն տեղում, էջ 26:

XVIII դարի վերջին քաղաքակրթությունը պետության Հիմնական օրենքի ի հայտ գալը՝ Սահմանադրության անհրաժեշտությունը, կապեց հասարակական համաձայնության հենքի վրա երկրի կայուն եւ դինամիկ զարգացումը երաշխավորելու անհրաժեշտության հետ: Ըստ էության, նույն նպատակն է հետապնդվել նաեւ հայ իրականության մեջ վաղ միջնադարում: **Պատմությունը վկան է նաեւ այն իրողության, որ նման իրավական հենքի վրա, հասարակական համաձայնությամբ առաջնորդվելով, ձեռք են բերվել մեծ հաջողություններ, եւ երկիրը զարթոնք է ապրել, իսկ բռնության, «անհասկացողությունների», տարաբնույթ «հակառակությունների» տիրապետման պայմաններում ուղեկից են եղել անխուսափելի կորուստներն ու ավերածությունները:**

Մովսես Խորենացին Հայոց պատմությունն սկսում է «...մեր առաջին թագավորների եւ իշխանների անհմաստասեր բարքերի մասին» կշտամբանքի խոսքերով եւ արժանին է հատուցում նրանց, որոնց «...շարադրած գրվածքները կարդալիս **աշխարհական կարգերի գիտություն ենք ձեռք բերում եւ քաղաքական կարգեր ենք սովորում**»<sup>122</sup> (ընդգծումը մերն է - Գ.Հ.): Անտարակույս, այդ արժանիներից էր նաեւ Վաչագան Թագավորը, որի հմաստությունից քաղվելիք դասերն այժմեական հնչեղություն ունեն:

Չափազանց արժեքավոր են նաեւ Մատթեոս Ուռհայեցու վկայությունները, երբ խոսելով Աղվենի Կանոնական սահմանադրության ընդունման ժամանակաշրջանին առնչվող իրադարձությունների մասին, նշում է. «...Այն ժամանակներում էր, որ չորս մասի բաժանվեց սուրբ Գրիգորի Աթոռը ...Այն ժամանակներում էր, որ բանական ոչխարները շնաբարո դարձան, գազանները սիրտ ձեռք բերեցին եւ հանդգնեցին եւ սկսեցին հայրապետների երեսին հաչել: ...Սակայն նման տակնուվրայությունը եւ սրտմտությունը չկարողացավ մուտք գործել Աղվենից երկիրը, որ կոչվում է Խորին աշխարհ Հայոց...»:<sup>123</sup>

122 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երեւան, 1997, էջ 70:

123 Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, Երեւան, 1991, էջ 247:

Կրկին ու նոր տեսանկյունով անդրադարձ կատարելով սահմանադիր ժողովներին ու կանոնական սահմանադրություններին, կարող ենք ընդհանրացնել, որ հայ միջնադարյան իրականության մեջ գործ ունենք սահմանադրական մշակույթի կոնկրետ դրսևորումների, **սահմանադրականության կարևոր տարրերի դրսևորման իրողության հետ՝** անկախ պետականության առկայությունից կամ կորստից:

Ուշադրության է արժանի նաև օտարագգի հետագոտողների տեսակետը միջնադարյան հայ հասարակական հարաբերությունների առնչությամբ: Ինչպես նշում է Ի. Կոհլերը՝ «Հայաստանի քաղաքական անյաջողությունն իր քաղաքային եւ իրաւագիտական կազմութեան հետ սերտ յարաբերութիւն ունի: Արդէն հին ժամանակներէն՝ թագաւորութեան օրերէն, դեռ Հայկազեան Հարստութեան ժամանակն, որ մինչեւ առասպելական նախաժամանակն կը հասնի, կար բազմութիւն մը գրեթէ՝ ինքնիշխան ժառանգական իշխաններու՝ նախարարաց, որոնք իրենց երկրի մեջ կատարեալ անկախ էին: Բայց թագավորին հարկ տալու օրէնք մը կար, նաև պարտաւորութիւն մը պատերազմի երթալու անոր հետ, սակայն ասոր կը պակասէր ծանրագոյն նուիրականութիւն՝ աւատային ultima ratio -ն, կուզեմ ըսել՝ եթէ մէկն զանց առնէր պարտքը, աւատը չէր կորուսաներ»:<sup>124</sup> Այնհայտ է, որ հասարակական համակարգի խիստ ապակենտրոնացումն իր մեջ լուրջ վտանգներ է պարունակել եւ նման պարագաներում կենտրոնաձիգ արժեքների դերը բացառիկ կարևորվել է: Հայ առաքելական եկեղեցու հետ մեկտեղ այդ հարցում բացառիկ են եղել նաև ազգային-եկեղեցական ժողովների ինքնուրույն դերն ու կանոնական սահմանադրությունների համախմբող նշանակությունը:

Միանշանակ է եւ այն, որ երբ հայ իրականության մեջ շեշտը դրվել է փոխհամաձայնությամբ ձեռք բերված կանոնների միջոցով ողջ հանրային կյանքը կարգավորելու վրա, ակնառու առաջընթաց է գրանցվել բոլոր ոլորտներում: Թեկուզ սաղմնային վի-

ճակում, սակայն սահմանադրական մշակույթը մեր լինելության ու զարգացման համար առանցքային նշանակություն է ունեցել դեռևս մարդկային հանրության պատմության արշալույսին: Հակառակը, անհամաձայնությունները կամ դրանք բռնությամբ հաղթահարելու փորձերն են դարձել անհաջողությունների պատճառ: Դարերի կշիռ ունեն մեծ Քերթողահոր խոսքերն Արշակունյաց թագավորության կործանման առիթով հնչեցրած ողբում, ուր որպես հիմնական պատճառներ շեշտադրվում են. «...վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը»:<sup>125</sup> Խորենացու ընդհանրացումները բացառիկ կարևոր նշանակություն ունեն եւ լուրջ դասեր են բովանդակում, քանի որ, ինչպես արդարացիորեն նշում է Ռ. Միրումյանը՝ «Ի տարբերություն Մետրոպոլիտ Սկեպսացու, որը մոդելավորում է հայերի ապագան նրանց ներկայի իմաստավորման հիման վրա, Խորենացին կանխորոշում է հայ ազգի ապագան նրա անցյալի արժեքներում, քանզի անցյալն է գտնում ազգի ապագայի նախագծի՝ ազգային պետականության վերականգնման անհրաժեշտության հիմնավորման հիմքը»:<sup>126</sup>

Կրկին անդրադարձ կատարելով ազգային-եկեղեցական ժողովների կողմից կանոնական սահմանադրությունների ընդունման իրողություններին, անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ քրիստոնեությունը պետական կրոն ընդունելուց հետո, երբ հոգեւոր ու աշխարհիկ կյանքի կանոնները հիմնականում համատեղ են սահմանվել, ամենաբնորոշ եւ ուշադրության արժանի հանգամանքներից է այն, որ **իրավական կարգավորումների հիմքում դրվել է հասարակական համաձայնության գործոնը**, որը սահմանադրական մշակույթի առանցքային դրսևորումներից է: Հասարակության ներսում հարաբերությունները կանոնակարգվել են ժողովական մակարդակում ձեռք բերված համաձայնությամբ եւ ոչ թե պարտադրանքի ու միանձնյա թելադրանքի ուժով: Այս իրո-

125 Սովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե դար, Երեւան, 1997, էջ 275:

126 Միրումյան Ռ.Ա., Պատմափիլիսոփայական հայեցակարգերը XIX դարի հայ փիլիսոփայության մեջ. Մեթոդալմանական վերլուծություն, Երեւան, 2003, էջ 42:

124 Գոլեր [Ի. Կոհլեր], Իրաւունք Հայոց, Վիեննա, 1890, էջ 3:

ղությունն ընթացնելու բանալին մեզ առաջին հերթին տալիս է Մովսես Խորենացին՝ Աշտիշատի ժողովի առնչությամբ վերոնշյալ իր հիշատակությամբ (Մեծն Ներսեսը «...եպիսկոպոսների եւ աշխարհականների ժողով գումարեց, կանոնական սահմանադրությամբ հաստատեց ողորմածությունը, արմատախիլ արեց անգթությունը...»):<sup>127</sup> Արդեն նշել ենք, որ այս ժողովն արգելեց ամուսնությունը մերձավոր ազգականների միջեւ, դատապարտեց նենգությունը, քսությունը, ազահությունը, որկրամոլությունը, հափշտակությունը, արվամոլությունը, բամբասանքը, մոլի հարբեցողությունը, ստախտությունը, պռոնկությունը, արյունահեղ սպանությունը, ինչպես նաեւ պարտավորեցրեց նախարարներին գթասրտությամբ վարվել աշխատավորների հետ, իսկ ծառաներին՝ հնազանդ լինել իրենց տերերին: Որոշվեց տկարների համար կառուցել հիվանդանոցներ, որբերի ու այրիների համար՝ որբանոցներ ու այրիանոցներ, օտարների ու հյուրերի համար՝ հյուրանոցներ, դրանք պահելու համար սահմանվեցին տուրքեր ու հարկեր: Որոշվեց երկրում լուսավորություն տարածելու նպատակով Հայաստանում բացել հունարեն եւ ասորերեն լեզուներով դպրոցներ (նպատակը երկրի ներսում կրթություն տալը եւ այդ նպատակով երիտասարդների արտահոսքը կասեցնելն էր): Այս բոլորն իրենց հերթին ստեղծում էին նոր միջավայր ու խթան սահմանադրական մշակույթի հետագա զարգացման համար:

Տգիտությամբ չարափառությունը չհիմնավորելու համար հայ միջնադարյան պատմությունն ունի նաեւ այլ ծանրակշիռ վկայություններ՝ հասարակական համաձայնության արդյունք հանդիսացող իրավական կանոններին հետեւելու շեշտադրումներով: Այս առումով հատկապես առանձնանում է Հայոց Կաթողիկոս Հովհաննես Օձնեցու (Հովհան Իմաստասեր Օձնեցի) Կանոնագիրքը (հաստատվել է Դվինի Զ ժողովում 719թ.): Ինչպես իրավացիորեն վկայակոչում է Ռ. Ավագյանը, համարձակ կարելի է ասել, որ Հովհան Իմաստասեր Օձնեցին աշխարհում առաջիննե-

<sup>127</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե դար, Երեւան, 1997, էջեր 224-225:

րից մեկն էր՝ բյուզանդական կայսր Փլավիոս Հուստինիանոսից (482-565 թթ.) հետո եւ առաջինը Հայաստանում, որ իրականացրեց հայկական «Corpus juris canonici»-ի համակարգումը, օրենքների մի ժողովածու, որ գոյություն է առնում հիերոկրատիան գլխավորող կաթողիկոսից եւ բովանդակում է հայ եկեղեցական ժողովներում վավերացրած եւ ընդունված կանոնադրությունները»:<sup>128</sup> Հայոց Կանոնագիրքը բացառիկ երեւոյթ է ամենից առաջ այն առումով, որ այն ամփոփեց սահմանադիր բնույթ ու նշանակություն ունեցող կանոններ եւ իր ժամանակի համար դարձավ IV-VIII դարերին բնորոշ հայ սահմանադրական մտքի յուրատեսակ խտացում: Կանոնագիրքը հավաստեց նաեւ, որ կանոնական սահմանադրությունները բովանդակել են հստակ արժեքային հենքի վրա խարսխված ու կենսունակ նորմեր, որոնք իրենց թե՛ իրավակիրառական նշանակությամբ եւ թե՛ որպես հասարակական վարքագծի հիմնարար կանոններ, մեծ դեր են կատարել ազգի համահավաք գոյի կազմակերպված ընթացքը երաշխավորելու համար: Կանոնագիրքը, համատեղելով ու ներդաշնակելով արդեն իսկ եղած կանոնները, շեշտելով դրանց կարեւորությունը տվյալ ժամանակի ու ապագայի համար, լինելով առաջին համահավաք իրավական փաստաթուղթը մեր ժողովրդի պատմության մեջ՝ որակապես նոր աստիճանի բարձրացրեց հայ սահմանադրաիրավական մշակույթը եւ գերակա իրավանորմերի դերը հանրային կյանքում, հոգեւոր ու աշխարհիկ հարաբերություններում:<sup>129</sup> Այն բացառիկ դեր կատարեց հայ իրավունքի ու իրավամտածողության հետագա զարգացման գործում:

Կանոնագրքի իրավափիլիսոփայական հիմնական առանձնահատկություններից է այն, որ շեշտը դրվում է մարդկային էության որակների վրա: Մարդն իր արժանապատվությամբ եւ սո-

<sup>128</sup> Ավագյան Ռ.Հ., Հայ իրավական մտքի գանձարան, հ. 1, Երեւան, 2001, էջ 144:

<sup>129</sup> Հովհան Իմաստասեր Օձնեցի կաթողիկոսը ոչ միայն մշակեց իրավական մեծ արժեք ներկայացնող 32 կանոնները, այլեւ մեկ ժողովածուի մեջ ամփոփեց 24 կանոնախումբ եւ կազմեց «Կանոնագիրք Հայոցը», որը հաստատեց Դվինի V ժողովը 719 թ.: X դարի կեսից այն համալրվում է 26 նոր կանոնախումբերով, իսկ XVII

ցիալական դերով դիտվում է որպես բարձր արժեք, եւ իրավա-կարգավորման գլխավոր խնդիրն է համարվում, ինչպես նշում է Վ. Հակոբյանը՝ «խրատի, բարոյական դատապարտման եւ կամ ապաշխարության միջոցով կանխել մարդկանց համակեցության կանոնների հնարավոր խախտումները»:<sup>130</sup> Նման իրավամտա-ծողությունը, անտարակույս, վկայում է քաղաքակրթական բարձր որակների եւ իրավական մշակույթի հիմքում ընկած ծանրակշիռ արժեքների մասին: Միանգամայն իրավացի է Վ. Վարդանյանը՝ շեշտելով, որ «Օձնեցու գորավոր միտքն ու իմաստնու-թյունը կոփեցին հայոց օրենսդրությունը, համակարգելով դատա-վարական իրավունքը, ժողովրդի ներքին կյանքը կարգավորող ի-րավանդրմերն ու կանոնական սահմանումները»:<sup>131</sup>

Հայ ժողովրդի պատմությունը, որքան էլ լի է եղել իր նկատ-մամբ գործադրված բռնություններով ու ավերածություններով, միեւնույն է, դրանք չեն կարողացել խաթարել ինքնության հիմ-նական որակները: Գրանց մեջ շարունակաբար գերակայել են մարդասիրությունը, երեսույթների խորքային խոհափիլիսոփա-յական ընկալումը, հավատարմությունը հոգեւոր արժեքներին ու օրինականությանը: Հայ իրականության համար անասան ար-ժեք է եղել այն իրողության գիտակցումը, որ «...հոգիների կորս-տյան դուռն առավել է, քան՝ մարմինների, երբ խտտորվում են Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու անբիծ, ուղիղ եւ առաքելաբարոզ հա-վատից»:<sup>132</sup> Հազար տարի առաջ Գրիգոր Նարեկացին իր Մա-տյանում լավագույնս ներկայացրեց հայ ինքնության հոգեւոր ըն-կալումների խտացումը՝ «...նշավակելով ամենատարբեր կրքերն ամենքի» շեշտեց, որ մարդ արարածի գործած մեղքերը, որքան էլ բազում ու բազմաբնույթ լինեն, ոչ այնքան նրա հանցանքն են,

130 Տե՛ս Կանոնագիրք Հայոց / աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի, Երեւան, 1964թ., հատոր Ա, էջ XII.

131 Վարդանյան Վ., Հայոց եկեղեցու պետաիրավական եւ գաղափարական շահերի պաշտպանությունը Հովհաննես Օձնեցու կողմից // Սուրբ Հովհաննես Օձնեցի Հայրապետը եւ իր ժամանակը (2003թ. հունիսի 3-5-ի գիտաժողովի նյութերը): Ս. Էջմիածին, 2004, էջեր 25-26:

132 Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երեւան, 1999, էջ 123:

որքան նրա դժբախտությունը: Եվ հայ ժողովրդի շուրթերից հն-չեցնելով «...ամենաբարձր արոթքն առ Աստված», Նարեկացին մարդուն դարձի բերելու հնարավորություն ու նրան մարդ ապ-րեցնելու միջոցն էր աղերսում Աստծուց: Իսկ դա հնարավոր էր համարում համերաշխության, արդարության, օրենքին հետեւող ու «հոգով բժշկված» հասարակության պայմաններում, ուր ար-դարությունը չի կարող «... նվազելով իսպառ չքանա» կամ «...ի-րավունքների նժարը սաստիկ թեթեւանա»՝ ծանրացնելով «... ա-նհրավության կողմը»:

Պատմագրության փաստումով 1130 թվականին է ստեղծվել Գավիթ Ալավկա որդու՝ նախաբանից եւ 97 հոդվածներից կազմ-ված «Կանոնական օրինադրությունը»,<sup>133</sup> որը, համարվելով հայ-կական ինքնուրույն դատաստանագրքի ստեղծման առաջին փորձ,<sup>134</sup> հենվելով հայ սովորության իրավունքի վրա, ստեղծում է հասարակության մեջ աննախադեպ խորացող արատավոր ե-րեսույթների դեմ իրավական պայքարի լուրջ նախադրյալներ: Գա Հայաստանի համար այնպիսի ժամանակաշրջան էր, որ, Մովսես Կաղանկատվացու խոսքերով ասված՝ «...երեք կատա-ղի գորապետերը՝ սովը, սուրը եւ մահը ծվատում էին անխնա»:  
Անհրաժեշտ էր խիստ օրենք եւ հստակ կարգ ու կանոն՝ առողջ բարքեր ու օրինավոր կենցաղ հաստատելու համար:

Հայ իրականության մեջ խորապես գիտակցվում էր նաեւ, որ միայն լավ օրենքն ու կարգը բավարար չեն, հարկավոր է, որ մարդիկ նույնպես հասկանան այդ օրենքներով ապրելու անհ-րաժեշտությունը, այդ գիտակցությունը լինի ոչ թե պարտադ-րանք, այլ համոզումը, որը խարսխված լինի կայուն ու աստվա-ծահաճո, մարդու բանական բնությունից թելադրվող արժեքների վրա: Ինչպես գեղեցիկ բանաձեւում է Պողոս Պատրիարք Ադ-րիանուպոլսեցին. «Մարդու բարքը ներքուստ ուղղվում է խղճից եւ արտաքուստ՝ օրենքից: Որովհետեւ եթե խիղճը, թյուր կամքից

133 Տե՛ս Ավագյան Ռ. Հ., Հայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա. IX դ.-մ.թ. XIX դ.), Երեւան, 2001, էջ 182:

134 Տե՛ս Ղազինյան Գ.Ս., Քրեական դատավարության պատմական եւ արդի հիմնախնդիրները Հայաստանում, Երեւան, 2001, էջ 21:

թելադրվելով, կռվում է ընդդեմ ուղիղ բանականության, օրենքը հանդիմանելով սանձում է նրան ու հնազանդության բերում: Խիղճը՝ իբրև բնության կողմից հաստատված ներքին դատավոր, եւ օրենքը՝ իբրև Աստծուց հաստատված արտաքին իրավարար,<sup>135</sup> կշեռքի երկու թաթի նման արդարության մետր կենտրոնում են պահում»:<sup>136</sup>

Նշված հանգամանքը դեռևս XII դարում հատուկ կարեւորելով էր, որ Ներսես Շնորհալին (Ներսես Գ Կլայեցի) իր խոսքն ուղղեց ոչ միայն առ Աստված, այլև «Թուղթ ընդհանրականով» (1166թ.) իր պատվիրաններն ուղղեց հոգեւոր դասին, «Աշխարհի իշխաններին» ու ժողովրդին: «Թուղթ ընդհանրականը», լինելով Շնորհալու անդրանիկ կոնդակը եւ նրա արձակ գործերի պսակը, բացառիկ նշանակություն ունի նաեւ իրավական ու սահմանադրական մշակույթի ընդհանրացումների առումով: Այս փաստաթուղթը եզակի է հայեցակարգային-ծրագրային ընդգրկումով, արժեհամակարգային ընդհանրացմամբ, նորմ-նպատակների, նորմ-սկզբունքների ու «վարվեցողության» նորմերի փոխներդաշնակությամբ: Կազմելով հասարակական բոլոր շերտերին ուղղված («Առ կրօնատրս», «Առ առաջնորդս սրբոց ուխտից վանականաց», «Առ առաջնօրդս եկեղեցւոյ», «Առ զինուորյաց դասս», «Առ երկրագործս», «Առ կանանց դասս» եւ այլն) հոգեւոր ու բարոյական բարձր արժեքների վրա խարսխված կանոններ ու խրատներ, Շնորհալին համոզված էր, որ այդ պարտավորությամբ ապրելով եւ գործելով միայն կարելի է հաջողություն ակնկալել, հաղթահարել «չարության ու բազմիշխանության» տագնապները, առաջնորդվել «արդարության շավիղներով»: Աշ-

135 Առանձնահատուկ ուշադրության է արժանի նաեւ այս արտահայտությունը՝ «...եւ օրենքը՝ իբրև Աստծուց հաստատված արտաքին իրավարար»: Փաստորեն 18-րդ դարի վերջին եւ 19-րդ դարի սկզբին Պողոս Պատրիարք Արիանուպոլսեցին խոսում է «Անական օրենքի» մասին, շեշտում է, որ մարդը միայն օրենքի պահպանությամբ կարող է «...Աստծո նման լինել՝ աստվածային մարդ»: Օրենքի հիմքը Աստվածային մայրն արժեքներն են, «...ով ուղիղ մտքից ու օրենքի հրամանից խտորվում է, Աստծուն ու իր Անությանը դեմ է դուրս գալիս» (Պողոս Պատրիարք Արիանուպոլսեցի. Խրատի թանգարան, Ս. Էջմիածին, 2002, էջ 163-164:

136 Նույն տեղում, էջ 163:

խարհականներին հորդորում էր «...չանիրաւել, չգրկել, չար գործակալներ չգործածել, անիրաւ դատաստան չկտրել, այրին ու աղքատը պաշտպանել, աշխատատրին վարձքը չկտրել, ամենուն հաւասար աչքով վերաբերուիլ, մարմնաւորի համար հոգեւորը չմոռնալ...»:<sup>137</sup> Առանց չափազանցելու կարելի է արձանագրել, որ «Թուղթ ընդհանրականը» բովանդակում է մարդու իրավունքներին ու իշխանությունների իրավասություններին վերաբերող բազում նորմեր: «Աշխարհի իշխաններին», մասնավորապես, պատվիրակվում է. «...անիրավությամբ մի՛ վարուէք հպատակների հետ՝ ծանր եւ դժուարակիր հարկեր դնելով, որոնք չեն կարող կրել, **այլ իւրաքանչիւրին օրէնքով եւ ըստ իր կարողութեան չափի՛ դատէք**» (ընդգծումը մերն է - Գ.Հ.), «Ոչ որի մի՛ գրկէք եւ մի՛ նեղէք աղքատներին ու տնանկներին...», «Ձեր երկրի վրայ չար եւ անիրաւ գործավարներ եւ գաւառապետեր մի՛ նշանակէք...», «Անիրաւութեամբ մի՛ դատէք որեւէ մէկին, այլ ուղիղ դատաստան արէք...», «Մի անտեսէք այրու եւ աղքատի իրաւունքներ...» եւ այլն:<sup>138</sup> Ուշադրության են արժանի Շնորհալու մոտեցումները միայն օրենքով դատելու, օրենքի հետադարձ ուժի, պատասխանատվության աստիճանի ու պատժի համաչափության եւ բազմաթիվ այլ իրավական հիմնահարցերի վերաբերյալ («...չլինի, որ բարկութիւնից դրդուած եւ անարդար իրաւունքով որոշում տաք՝ կա՛մ մէկին պատժէք, կա՛մ մահուան վճիռ կայացնէք, քանզի Նոր օրէնքը այս բանը չի թոյլատրում, իսկ Հին օրէնքը թէւ թոյլատրում է իւրաքանչիւրին պատժով կամ մահուամբ դատել, բայց ոչ՝ անտեղի, այլ՝ ըստ յանցանքների արժանի լինելու»):<sup>139</sup> Ավելին, ողջ պատվիրանների հենքը մարդն է՝ իր բարոյական կերպի, հոգեւոր անաղարտության, բանական գոյի իմաստավորված կազմակերպման անհրաժեշտությամբ:

Բերված վկայություններից անառարկելիորեն հետեւում է, որ

137 Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգապատում», հատոր Ա, Ս. Էջմիածին, 2001, էջեր 1647-1649:

138 Ս. Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, «Գանձասար» հանդես, 1991, էջեր 103-123:

139 Մասնավորապես տե՛ս նույն տեղում, էջ 112:

հայ միջնադարյան իրականության մեջ հասարակական համա-  
ձայնության արդյունք է եղել ոչ միայն օրենքի ու կանոնների ըն-  
դունումը, այլև ակնհայտ է, որ տարաբնույթ գործոններով պայ-  
մանավորված առանձնակի կարեւորվել է դրանց անհրաժեշտու-  
թյունը եւ հասարակական նման պահանջն ու անհրաժեշտ գի-  
տակցությունն է դրվել այդ կանոնների սահմանման հիմքում:<sup>140</sup>  
Իրավական մտքի բացառիկ օրինակներից մեկը հանդիսացող՝  
Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» (1184թ.) ստեղծման հիմ-  
նական պատճառներից է եղել նաեւ այն, որ «... չարն ընդհան-  
րապես գորացել է եւ նա հանգեցրել է «զբնաւորականն ի մեզ ա-  
րէնս» կամ «զգիտութիւնն, որ ի բնութենէ ունէաք»: Նույն այդ  
չարը, որ վերածվել է հոգու անկատարության, վերացրել է կա-  
տարելիությունը եւ վշտակցության, սիրո փոխարեն դրել ատելու-  
թյունը: Դատաստանագիրքը պետք է նպաստի վերականգնելու  
բնական օրենքի զգացողությունը, կատարելիությունը, եւ ատելու-  
թյունը միմյանց նկատմամբ փոխարինի վշտակցությամբ ու սի-  
րով»:<sup>141</sup> Դրա հետ մեկտեղ, նա պահանջում է, որպեսզի դատա-  
վորը լինի «...չափահաս, հմուտ, քաջուսումն, հանճարեղ, գի-  
տուն, օրէնսգետ, բարի, առաքինի, աննախանձ, ուշիմ, զգաստ,  
անաչառ, խիստ, անկաշառելի, համբերող»:<sup>142</sup> Առանձնահատուկ  
ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Մխիթար Գոշի  
իրավաբանական հայեցակարգը խարսխվել է բնական  
(աստվածային) իրավունքի տեսության վրա, որի հիմնական

140 Խոսելով կանոնական իրավունքի դերի ու որպես իրավունքի աղբյուր դրա նշանակության մասին, Ս. Հովհաննիսյանն իրավացիորեն շեշտում է, որ «...օտար եւ ազգային կանոնախմբերը հնարավորություն են ընձեռում ուրվագծելու հայ ըն-  
տանեկան, քրեական, քաղաքացիական իրավունքների կարեւոր ինստիտուտները, պատկերացում կազմելու այն մասին, թե ինչպես էր հայ եկեղեցին իրականաց-  
նում «գործակալութեան մեծի դատավորութեանն» գործունեությունը, ինչպես թա-  
գավորության գոյության, նույնպես եւ պետականությունից զրկվելու ողջ շրջանում»  
(տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, 8 հատորով: Երեւան, 1967-1984, հ. 2, էջ 482):

141 Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի /աշխատասիրությանմ Խոսրով Թորո-  
ւյանի, Երեւան, 1975, էջ ԺԴ:

142 Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց /Իրաւամանական հետազոտու-  
թիւնք հանդերձ ծանօթութեամբ Վահան Ծ. Վարդապետի Բաստամեանց, Վա-  
ղարշապատ, 1880, էջ 130:

սկզբունքներն են՝ մարդկանց հավասարությունը (Աստծո առ-  
ջեւ), ազատությունը, ապրելու իրավունքը, սեփականության ան-  
ձեռնմխելիությունը եւ այլն: Հետեւաբար՝ դրական իրավունքը  
պետք է բխեցնել բնական իրավունքի սկզբունքներից, որոնք  
մնայուն են ու անփոփոխ,<sup>143</sup> իսկ դրական իրավունքն ստեղծվում  
է մարդկանց կողմից եւ դրա վրա իրենց կնիքն են դնում ժամա-  
նակն ու կոնկրետ հասարակական պայմանները:<sup>144</sup> Բացառիկ  
կարեւոր ընդհանրացումներից մեկն էլ այն է, որ ըստ Մխիթար  
Գոշի՝ յուրաքանչյուր ժողովուրդ եւ երկիր պետք է ունենա սե-  
փական օրենսդրություն ու իրավական նորմեր, ընտրել դատաս-  
տանն «...ըստ ժամանակի, եւ ազգի, եւ աշխարհաց»:<sup>145</sup> Ըստ Վ.  
Բաստամյանցի՝ Մխիթար Գոշը «...լաւ գիտէ որ՝ դատաստա-  
նագիրքը յօրինվում է ժողովրդի համար, որ՝ նա պիտի պարու-  
նակէ իւր մեջ ժողովրդի գաղափարը եւ հայեացքը իրաւաբանա-  
կան յարաբերութեանց վերայ, որ՝ նա պիտի զարգանայ եւ կա-  
տարելագործուի ժողովրդի իրաւաբանական եւ առհասարակ  
մտաւոր զարգացման հետ միասին»:<sup>146</sup>

Մխիթար Գոշի Դատաստանագիրքը հիմք հանդիսացավ  
1518թ. լեհահայոց դատաստանագրքի կազմման համար, երբ լե-  
հական կառավարության կողմից այստեղ բնակվող հայերին դա-  
տական ինքնավարություն արտոնվեց:<sup>147</sup>

143 Ըստ Մխիթար Գոշի՝ Ոմական օրենքը «...այտնի է ամեն մարդուն Ոմագղ-  
մամ էւ չէ կարօտ գրաւոր սահմանադրութեան» (Մխիթար Գոշ, Դատաստանա-  
գիրք Հայոց /Իրաւամանական հետազոտութիւնք հանդերձ ծանօթութեամբ Վա-  
հան Ծ. Վարդապետի Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, էջ 94:

144 Տե՛ս Սիրումյան Կ., Հայ քաղաքական մտքի պատմությունից, Երեւան, 2002,  
էջեր 174-176:

145 Մխիթար Գոշ, նշվ. աշխ. (վերջին հղումը), Նախադրութիւն գրոց դատաս-  
տանի, էջ 3:

146 Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց /Իրաւամանական հետազոտու-  
թիւնք հանդերձ ծանօթութեամբ Վահան Ծ. Վարդապետի Բաստամեանց, Վա-  
ղարշապատ, 1880, էջ 93:

147 Այդ Դատաստանագիրքը լատիներեն թարգմանությամբ ներկայացվել է լե-  
հաց Սիգիզմունդ I թագավորին եւ մի շարք փոփոխություններով ու լրացումներով  
հաստատվել նրա կողմից 1519 թ. (տե՛ս Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական  
դատարանի արձանագրությունները (XVI դ.). աշխատասիրությանմ Վ. Գրիգորյա-  
նի, Երեւան, 1963, էջեր 54-55):

XII դարի հայ իրավական մտքի կարեւոր որակներ են դրսեւորվել նաեւ Ներսէս Լամբրոնացու (1153-1198) մոտ: Ինչպէս բնական աշխարհում, այնպէս էլ սոցիալ-քաղաքական ու բարոյական ոլորտներում ամեն ինչ համարելով հարաբերական, Լամբրոնացին միաժամանակ գտնում էր, որ մարդիկ ի վերուստ օժտված են ընտրության (կամքի) ազատությամբ, ուստի ամբողջությամբ պատասխանատու են իրենց բոլոր գործողությունների, արարքների ու դրանց հետեւանքների համար: Նա չափազանց կարեւորում էր դաստիարակության դերը հասարակության մեջ առկա անօրինականությունների եւ անարդարությունների հաղթահարման ու վերացման գործում: Գտնում էր նաեւ, որ հասարակության մեջ եղած թերությունների անտեսումն ու քողարկումը հանգեցնում է առկա սխալների եւ արատների խորացման:

Կամայականությունների ու օրինազանցությունների դեմ պայքարին էր կոչված նաեւ Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը (1265թ.), որը XIII-XIV դարերում գործնական խոշոր նշանակություն ունեցավ Կիլիկյան հայ պետականության ամրապնդման ու հզորացման գործում:<sup>148</sup> Ընդ որում, հետագոտողներն իրավացիորեն նշում են, որ եթէ Մխիթար Գոշի իրավական գիտակցությունն ու ստեղծած համակարգը ո՛չ միայն ելնում են բնական իրավունքի տեսությունից, այլեւ ներթափանցված են դրանով, ապա Սմբատ Սպարապետը, թեւ ելնում է բնական իրավունքի սկզբունքներից, այդուհանդերձ, նրա ստեղծած համակարգը լիովին վերաբերում է դրական իրավունքի ոլորտին:<sup>149</sup>

XIV դարի հայ իրավական միտքը՝ հանձինս Գրիգոր Տաթևացու (1346-1409), առանձնահատուկ կարեւորեց մարդ-հասարակություն փոխհարաբերության խնդիրը եւ առաջադրեց այն հայեցակարգային մոտեցումը, որ համապետական կարեւորագույն խնդիրները (երկրի բարեկարգման, խաղաղության ու պատերազմի եւ այլն) պետք է լուծվեն **հավաքական բանականությամբ**

148 Տե՛ս Смбат Спарпет: Судебник /աշխատասիրությամբ՝ Ա.Գ. Գալստյանի, Երևան, 1958, էջ 195:

149 Մասնավորապէս տե՛ս Միրումյան Կ., նշվ. աշխ., էջ 240:

**եւ հավաքական կամքով:** Ընդ որում, որպէս իրավունքի սուբյեկտ հանդես է գալիս ոչ թէ ինքնակալ միապետը, այլ ժողովուրդը, նրա միասնական կամքը: Միապետը, այս հայեցակարգի համաձայն, զրկվում է միահեծան իշխանությունից, համապետական խնդիրները միանձնյա լուծելու իրավունքից: Իրավացի են այն հեղինակները, որոնք գտնում են, որ տվյալ դեպքում գործ ունենք սահմանադրական միապետության որակների հետ:<sup>150</sup> Տաթևացին նույնպէս տարբերակում է «աստվածային իրավունքը» եւ դրական իրավունքը, որն ամրագրված է օրենսդրական զանազան փաստաթղթերում: Աստվածային օրենքներն անփոփոխ են ու բացարձակ, դրանց առջեւ բոլոր մարդիկ հավասար են: Դրական իրավունքի նորմերը պետք է խարսխված լինեն եւ բխեն աստվածային օրենքներից՝ ճշմարիտ արտացոլելով հասարակական-քաղաքական իրականությունը:<sup>151</sup> Տաթևացու իրավափիլիսոփայական հայացքներում ակնհայտ առանձնանում են այնպիսի եզրահանգումներ, որոնք ներկա չափանիշներով սահմանադրական սկզբունքների դեր ու նշանակություն ունեն:

Դարեր շարունակ մեր ինքնության կարեւոր որակներից ու հայ իրավամտածողության էական հատկանիշներից է եղել այն, որ «անօրինությունների» դեմ պայքարի ու «սիրով ապրելու» հիմնական միջոցը «Աստծուն ցանկալի ու եկեղեցուն կյանքի կոչելու գործում պիտանի օրենքներն» են, «մարդու բանական բնությանը» հարիր կանոնները,<sup>152</sup> որոնց «հնազանդելու» եւ դրանք ա-

150 Նույն տեղում, էջ 215:

151 Տե՛ս Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցման, Կ. Պոլիս, 1729, էջ 12:

152 Վերլուծամանների ուշադրությանն է արժանացել այն հանգամանքը, որ միջնադարյան հայ իրավունքում ակնհայտ վրա հոգեւոր արժեքների ազդեցությունը մեծ է եղել: Օրինակ, Խ. Սամուելյանը նշում է, որ «Մխիթար Գոշի հայացքով իրավունքը էթիկական մի հասկացություն է. իրավունք եւ Սարդականություն ասած Սաներն անանջատ առումներ են. նրանք կազմում են մի ամբողջություն, իրար համակերպված միասնություն» (Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երեւան, 1939, էջ 87):

մութ պահելու հասարակական կամքն ու պատրաստակամությունը նույնպես կարելի է: <sup>153</sup> Այս իրավափիլիսոփայությունն է ընկած նաեւ Դվինի (VI, VII դդ.), Պարտավի (VIII դ.), Սիսի (1243թ.), Չագավանի (1268թ.), Երուսաղեմի (1651թ.) ժողովների որոշումների հիմքում:

Պետականության դարավոր կորուստը, արտաժին գործոնների շարունակական ազդեցությունը հնարավորություն չեն տվել իրավամտաժողովրդի այս հարուստ ժառանգությունը սահմանադիր ժողովի միջոցով մարմնավորել երկրի միասնական ու ամբողջական սահմանադրության մեջ: Պատմական անցած ողջ ժամանակաշրջանի համար բնորոշ են եղել սահմանադրական մշակույթի ներկա ընկալումների տեսանկյունից ոչ ամբողջականացված դրսեւորումները: Սակայն հնարավոր չի եղել կադապարել մտքի թռիչքը: 1773թ. Հնդկաստանի Մադրաս քաղաքում հայր եւ որդի Շահամիրյանները նախաձեռնում եւ 1788թ. ավարտին են հասցնում իրավունքի բացառիկ մի հուշարձան՝ իրենց երազած անկախ Հայաստանի՝ 521 հոդվածից կազմված Սահմանադրությունը, որն անվանեցին «Որոգայթ փառաց»: Այս աշխատասիրությունը հասարակական-իրավական մտքի պատմության եզակի ձեռքբերումներից է, որում որոշակի համակարգով առաջադրված գաղափարները, տեսական խոր ընդհանրացումների արդյունք լինելուց զատ, միջազգային սահմանադրական զարգացումների անկյունաքարային արժեք են: Աշխատության հենց անվանումը, սահմանադրական իրավունքի ճանաչված պրոֆեսոր Դոմինիկ Ռուսոյի գնահատմամբ, իրավական ամբողջ մի տեսություն է: Այս Սահմանադրությունը կոչված էր երաշխավորելու «...ազատությունը պահպանելու հնարավորություն» եւ ստեղծելու «...անճողոպրելի որոգայթ՝ բոլոր վատթար

153 Ի դեպ, ինչպես Մխիթար Գոշի Դատաստանագրքի, այնպես էլ հետագայում ծնված իրավական կոթողներից շատերի (այդ թվում՝ 1760-ականներին ստեղծված եւ 1135 հոդված ընդհանրապես Աստրախանի Հայոց դատաստանագրքի) համար հիմնական աղբյուրներից մեկը հայ ժողովրդի սովորության իրավունքն էր (տես Դատաստանագրքը Աստրախանի Հայոց / աշխատասիրությամբ Ֆ.Գ. Պողոսյանի, Երեւան, 1967, էջ ԾԴ):

մարդկանց համար, որպեսզի հարկադրված լինեն մտնելու օգտաշատ գործողության լծի տակ»: <sup>154</sup> Այն պետք է անկյունաքարային նշանակություն ունենար արդար օրենքներով կառավարվելու, բնական իրավունքով ու արդարությամբ առաջնորդվելու համար: <sup>155</sup>

Անհրաժեշտ ենք համարում առանձնահատուկ շեշտել այն կարեւոր իրողությունը, որ XVIII դարում հայ սահմանադրական մշակույթը հենվում էր իրավունքի գերակայության սկզբունքի, բնական իրավունքների առաջնայնության գիտակցության, իշխանությունների տարանջատման, սահմանադրական գործառույթների, հակակշիռների ու զսպումների ներդաշնակության երաշխավորման վրա: «Որոգայթ փառացը» ոչ թե եվրոպական իրավական մտքի ներազդեցության արձագանք էր, այլ այն իրավաճանաչողական եւ գիտամեթոդաբանական առումով յուրովի ընդհանրացնում է Ադվենի, Աշտիշատի, Շահապիվանի, Դվինի, Պարտավի եւ այլ ժողովների, Հովհաննես Օձնեցու, Հովհաննես Սարկավագի, Դավիթ Ալավկա որդու, <sup>156</sup> Մխիթար Գոշի, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Մմբատ Սպարապետի եւ հայ հասարակական-իրավական մտքի էլի շատ ու շատ այլ երախտավորների բեղմնավոր գործունեության արդյունքները: Մեծ ընդհանրացում է բովանդակում Շահամիրյանների Սահմանադրության 389 հոդվածը, որում ամրագրվում է. «Օրենքի ամեն հոդված պարունակում է բազմաթիվ մանրամասներ, որոնք կարող են բացատրվել իմաստուն մարդկանց կողմից: Օրենքի մասին բոլոր բացատրությունները, եթե օգտակար նպատակ ունեն եւ հաճո են Հայոց տան ցանկությանը, <sup>157</sup> պետք է պատվի արժա-

154 Որոգայթ փառաց, Երեւան, 2002, էջ 15:

155 Նույն տեղում, էջ 16:

156 Դավիթ Ալավկա որդու «Կանոնական օրենսդրության» մասին Մանուկ Ամեդյանը նշում է, որ «... այդ երկն իր տեսակով մի նոր լիակ է եղել մեր հին գրականության պատմության մեջ, եւ այդ նորն էլ ծնունդ է նոր մտավոր հոսանքի» (տես Հայոց հին գրականության պատմություն // Ամեդյան Մ., Երկեր, հ. Դ, Երեւան, 1970, էջ 85):

157 Հայոց տունը ներկայացուցչական օրենսդիր մարմինն էր, ուստի օրենքի մեկնամանությունը չէր կարող հակասել օրինաստեղծ մարմնի կողմից դրա հիմ-



մանան, բայց ոչ այն բացատրությունները, որոնք դեմ են մարդու բնությանը»:<sup>158</sup> Այստեղ ոչ միայն օրենքի մեկնաբանման դասական կանոն է սահմանվում, այլև շեշտվում է, որ դրա հիմքը մարդու բանական բնությունն է: Ընդգծենք, որ ժամանակակից սահմանադրական իրավունքի համար նույնպես ելակետայինը մարդու բնական իրավունքներն ու ազատություններն են:

Անդրադարձ կատարելով ժողովրդի իշխանության, իրավունքի գերակայության, ներկայացուցչական ժողովրդավարության, իշխանությունների տարանջատման ու գործառնական անկախության, սոցիալական պաշտպանվածության, ընդհուպ՝ սահմանադրական արդարադատության եւ սահմանադրական բազմաթիվ այլ հիմնարար սկզբունքների, առաջին անգամ հայ իրականության մեջ ներկայացվում է սահմանադրական իրավունքի նորմերի ամբողջական ու կանոնակարգված համակարգ՝ ոչ միայն ընդհանրացնելով հայ եւ համաշխարհային իրավական մտքի ձեռքբերումները, այլև պետական նոր մտածողության սկիզբ դնելով: «Իրավունքի եւ արդարադատության ծառի պտղաբերումները» միայն կարող են «արդար կառավարությունների» բարեպաշտ գործելակերպի հիմքը դառնալ՝ արդարության ու օրինականության մեջ փնտրելով անհատի ու հասարակության երջանկությունը, ելակետ ունենալով «...օրենքով ու արդարությամբ մեր կյանքը վարելու» հրամայականը - սա է «Որոգայթ փառացի» մեծագույն պատգամը: Որպեսզի «...մեր կյանքը վարենք իբրեւ բանական եւ արժանապատիվ մարդ... մենք պետք է մեզ համար ընտրենք վարք, կարգ ու օրենք»,<sup>159</sup> չառաջնորդվենք «...անկարգությամբ ու անօրինությամբ», կարողանանք «...միախումբ հավաքվել՝ լսելու իրավունքի մասին, կազմելու օրենքներ...»:<sup>160</sup> Որքան դիպուկ ու հստակ է ասված, որքան ներդաշնակ է ընդհուպ XXI դարի առաջադիմական իրավամտածողությանը: Իրավական պետության կայացման միակ ճանապարհը օրենքը «կազմելուց» առաջ «իրավունքի մասին լսելու» խորհուրդը խորությամբ հասկանալն ու իրագործելն է: Հետեությունն այն է, որ «...ոչ մեզ մոտ եւ ոչ էլ մեր աշխարհում թող ո՛չ լինի եւ ո՛չ էլ հանդես գա որեւէ մեկը, ով իր արարքներով ինքնագլուխ ու կամայական մարդ լինելով՝ չպատժվի ըստ օրենքի, եւ թող մեր օրենքները լինեն մեր տերն ու թագավորը, մեր օրենքներից դուրս ուրիշ ոչ ոքի չընդունենք գերադաս, բացի միայն Արարիչ Աստծուց...»:<sup>161</sup>

Առավել քան այժմեական է նաեւ «Որոգայթ փառացի» ներածության մեկ այլ ընդհանրացումը. «...որքա՛ն ավելի **բարություն** է մեզ հարկավոր, **որ մեր կյանքը զսպենք օրենքով ու ազատությամբ**, որպեսզի արժանի դառնանք Տիրոջ պաշտամունքին...»<sup>162</sup> (ընդգծումը մերն է - Գ.Հ.): Իսկ այդ օրենքները պետք է շարադրվեն «...մարդու բնությանը ներդաշնակ, ըստ մեր բանական հոգու հաճության»:<sup>163</sup>

Չափազանց ուշագրավ է նաեւ Շահամիրյանների անդրադարձը հռոմեական իրականությանը. «...քանի դեռ սիրով ու հավատարմությամբ արիացած ու գոտեպնդված՝ նրանք անշեղ ու հավատարիմ մնացին իրենց օրենքներին, աննշան վիճակից աճեցին, բազմացան եւ իրենց օրենքների շնորհիվ երջանկացան...», սակայն երբ Հռոմի ծերակուտակները թույլ տվեցին, որ կայսեր պաշտոնը «մտնի ժառանգականության կարգը», «դրանով նրանց լույսի մեջ մուտք գործեց մի մեծ խավար, նրանց բարության մեջ՝ չարը, նրանց միաբանության մեջ՝ ճեղքվածք, նրանց համահավասարության մեջ՝ քարածգություն, դար ու փոս, այսինքն՝ վերին ու ստորին: ...Դրանով ամբարշտությունը մտավ նրանց մեջ»:<sup>164</sup>

Լինելով խորհրդարանական կառավարման ձեւ ունեցող պետության Սահմանադրություն՝ «Որոգայթ փառացը» նախատեսում է Հայոց տան (օրենսդիր մարմնի) ընտրությունների հստակ կարգ, եռամյա ժամկետ, որոշակիացված լիազորություններ, օ-

161 Նույն տեղում, էջ 48:

162 Նույն տեղում, էջ 38:

163 Նույն տեղում, էջ 71:

164 Նույն տեղում, էջ 47:

158 Նույն տեղում, էջ 192:

159 Նույն տեղում, էջ 20:

160 Նույն տեղում, էջ 35:

րենքի ընդունման ու նշանակումների իրականացման ընթացակարգեր եւ այլն: Օրենսդիր մարմինն է ձեւավորում գործադիր ու դատական իշխանությունները՝ օրենքով սահմանված կարգով: Իշխանության յուրաքանչյուր մարմին գործում է օրենսդրությանը իրեն վերապահված իրավասության շրջանակներում՝ «Հայրապետը, նախարարը, եպիսկոպոսը, տանուտերը, քահանաները, իշխանավորները՝ ոչ ոք ոչ մեկին իրենց դիրքին չվերաբերող հրաման չպետք է արձակեն եւ կամ ոչ ավելի, քան այն, որ ըստ յուրաքանչյուրի կարգի տրվել է նրանց թե՛ եկեղեցու եւ թե՛ Հայոց տան կողմից»<sup>165</sup> (հոդվ. 364): Սահմանվում է իրավական ակտերի ենթադասության որոշակի սկզբունք՝ «Ամեն մի փաստաթուղթ, թե՛ վաճառքի, թե՛ դաշնադրության եւ թե՛ այլ գործողությունների վերաբերյալ, ում կողմից էլ որ այն ստորագրված լինի՝ արժեք չի ունենա, եթե հակառակ է Հայոց օրենքին կամ **ընդդեմ է մարդու բանական բնությանը**»<sup>166</sup> (ընդգծումը մերն է - Գ.Հ.): Գերակայությունը տալով «մարդու բանական բնությանը», հստակ ու ամբողջական ձեւակերպում է տրվում **իրավահավասարության** սահմանադրական սկզբունքին (հոդվ. 3)՝ «Յուրաքանչյուր մարդկային բնություն թե՛ հայ եւ թե՛ այլ ազգից՝ ծնված Հայաստան աշխարհում եւ կամ օտար երկրից պանդխտած Հայաստան, թե՛ արական եւ թե՛ իգական սեռին պատկանող, ամենքն էլ ապրելու են համահավասար ու ազատ են լինելու իրենց բոլոր գործերում. ոչ ոք ոչ մեկի վրա իշխելու իրավունք չունի, իսկ նրանց ձեռքի գործերը պետք է վարձատրվեն համապատասխան ամեն մի աշխատանքի՝ ըստ Հայոց օրենքի»<sup>167</sup> Նույնիսկ դատապարտյալների իրավունքների պաշտպանության հարցերը չեն վրիպել Շահամիրյանների ուշադրությունից՝ «Պարտազանցների բանտը պետք է մաքուր կացարան լինի, որպեսզի վնաս չհասցնի բանտարկյալ անձանց առողջությանը»<sup>168</sup> (հոդվ. 148): Նախատեսելով սեփականության իրավունքի իրացման, սոցիա-

լական պաշտպանության խնդիրների սահմանադրական կանոնակարգման որոշակի նորմեր, միաժամանակ հատուկ կարեւորվում է ազգային-պետական առաջնահերթությունների խնդիրը: Հոդված 127-ով, մասնավորապես, սահմանվում է. «Հայոց տնից օժանդակություն պետք է լինի բոլոր մասնագետների, հատկապես փիլիսոփայության, աստղագիտության, բժշկության, երաժշտության, ճարտասանության եւ այլ [բնագավառների ներկայացուցիչների] նկատմամբ»<sup>169</sup>:

Ամեն ինչից վեր դասելով օրենքի «համահավասար» դերն ու գալիչ ուժը, դրա հիմքում դնելով իրավունքն ու «մարդու բնությանը ներդաշնակ» արժեքները, **հիմնվելով բնական իրավունքի (աստվածային իրավունքի) եւ հասարակական դաշինքի հայեցակարգերի վրա**, Շահամիրյանները շարադրեցին «Հայաստանյաց աշխարհի կառավարման համար» իրենց սահմանադրական կանոնները, որոնք, սահմանադրական մշակույթի բացառիկ արժեք լինելուց զատ, հանրագիտարանային մնայուն նշանակություն ունեն անցյալի ու ներկայի իրավամտաժողովուրդները կամրջելու, անկախ պետականության կայացման ճանապարհն անխտոր անցնելու համար անցյալից ուսանելի դասեր քաղելու առումով:

XVIII դարի երկրորդ կեսում ռուսահայ հասարակական կյանքի կարեւորագույն երեսույթներից է 1135 հոդված բովանդակող՝ Աստրախանի Հայոց դատաստանագիրքը, որը Եղիազար Գրիգորյանի, Գրիգոր Կանապանյանի եւ Հովհաննեսի որդի Սարգսի կողմից ստեղծվեց 1747-1765թթ. ընթացքում:<sup>170</sup> Ելնելով պատմական կոնկրետ իրողություններից, հաշվի առնելով Եկատերինա Երկրորդի կողմից հայերին ինքնավարություն տալու եւ 1765թ. «Ընդհանուր Հայ-Ասիական դատարանի», իսկ 1800 թվականից՝ մագիստրատի իրավունքով Հայկական դատարանի հիմնումը, ինչպես նաեւ այն գործնական դերը, որը վերապահվեց սույն դա-

165 Նույն տեղում, էջ 180:  
 166 Նույն տեղում, էջ 133:  
 167 Նույն տեղում, էջ 75:  
 168 Նույն տեղում, էջ 138:

169 Նույն տեղում, էջ 134:  
 170 Տե՛ս Դատաստանագիրք Աստրախանի Հայոց, Երևան, 1967, 359 էջ:  
 Ավագյան Ռ. Հ., Դատաստանագիրք Աստրախանի Հայոց // Իրավական գիտահանդես «Վասն արդարութեան», 2003, N38, էջեր 8-11:

տաստանագրքին, կարելի է եզրակացնել.

1. այս դատաստանագիրքն ունեցավ իրավաքաղաքական մեծ նշանակություն,
2. այն հայ իրավական մտքի շարունակականության ու զարգացման դրսևորում էր,
3. ազգային արժեքները, ավանդույթներն ու սովորույթները հարգելու եւ հաշվի առնելու ճանապարհով սահմանվեցին վարքագծի թույլատրելի կանոններն ու դրանցից շեղվելու դեպքում նախատեսվող պատժամիջոցները,
4. իրավական կարգավորումները վերաբերում էին ազգային պետականությունը կորցրած էթնիկ հանրությանը,
5. այն կառուցված էր քրիստոնեական գաղափարաբանության ու իրավընկալման մնայուն սկզբունքների վրա եւ հումանիստական ու առաջադիմական էր իր իրավակարգավորիչ դերով եւ նշանակությամբ:

Ռուսական ու Օսմանյան կայսրությունների տիրապետության տակ ապրող հայերի համար կենսական նշանակություն է ստանում ազգային «Կանոնադրությունների» մշակումը: Հատկանշական է 1850-60-ականներին Օսմանյան կայսրությունում հայերի սահմանադրական շարժումը եւ «Ազգային սահմանադրության» տարբերակների մշակումը: Հայերի համար Ազգային սահմանադրությունը դիտվում էր որպես հավաքական գոյի, ինքնության պահպանման երաշխիք: Իրավական առումով 1863թ. սուլթանի կողմից հաստատված ու գործողության մեջ դրված Ազգային սահմանադրությունը, «Սահմանադրություն» հասկացության Գրիգոր Օտյանի բնորոշմամբ՝ «...ազգի կամ պետության մեջ ամեն անհատի իր բնական իրավունքի եւ այդ իրավունքի գործողության տերը լինելու» հնարավորությունը տալուն էր կոչված:<sup>171</sup> Ներսես Մելիք-Թանգյանի ամփոփիչ գնահատմամբ՝ Ազգային սահմանադրությունն այն առավելությունն ունե-

ցավ, որ մշակվեցին ընդհանուր սկզբունքներ, քաղաքական եւ կրոնական ժողովների գործունեությունը Պատրիարքի վերատեսչությամբ ենթարկվեց «երեսփոխանական ժողովի» հսկողությանը: Մակայն Սահմանադրությունը եկեղեցական-հասարակական գործերի կառավարմանը տվեց ոչ թե ոգի, այլ կմախք՝ առանց արյան եւ նյարդերի. «...այդ մեծաբոմբին բառի տակ չէք գտնիլ դատակազմական, դատավարական որոշ ձեւեր եւ օրէնքներ, զանցառուների պատասխանատուութեան ենթարկելու եւ պատժելու հրահանգների կարգեր, չկան այնտեղ եկեղեցու վարչական, տնտեսական, քահանայական, ծխական, կալուածական խնդիրների վերաբերմամբ կարգ կանոններ, ամեն ինչ թողած է հին կարգով, միայն տալով ընդհանուրին սահմանադրական կերպարանք: Ահա եւ Սահմանադրությունը»:<sup>172</sup>

Ազգային սահմանադրության վերաբերյալ եղել են տարբեր կարծիքներ, այն համեմատվել է քառակուսի անիվներով սայլի հետ, նրա դրույթները համարվել են անորոշ, խիստ վերացական, ընդհուպ վիճարկելի է եղել «Սահմանադրություն», թե՞ «Կանոնադրություն» կոչելու պարագան: Այսուհանդերձ, Ազգային սահմանադրությունը, ինչպես նշել է Նիկոլ Աղբալյանը (երկեր, հ. 4, էջ 400), «ճանաչված է իբրեւ Հայ համայնքի հիմնական օրենք»: Այն առաջադիմական, ժողովրդավարական զարգացումների արդյունք ու արտահայտիչ է եղել: Անհատի ու հասարակության (ազգի) փոխհարաբերությունների սկզբունքների սահմանումը, եկեղեցու սահմանադրական կարգավիճակի ու իրավասությունների հստակեցումը, Ազգային կրոնական ժողովի ու «Քաղաքական ժողովի», «Ուսումնական խորհրդի», «Տնտեսական խորհրդի», «Դատաստանական խորհրդի», «Վանօրէից խորհրդի», «Ելեւմտից հոգաբարձութեան», «Կտակաց հոգաբարձութեան», «Հիվանդանոցի հոգաբարձութեան», «Թաղական խորհուրդների», «Ազգային ընդհանուր ժողովի» կազմավորմանն ու իրավասու-

171 Отян Г. На смертном пути. Зограб и Вадкес // Газета "Наше время".- Баку, 1919, 27 апреля.

172 Տե՛ս Հայոց եկեղեցական իրավունքը, Ներսես Մելիք-Թանգյան, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 735: (Այդ մասին տես նաև. Mesrob K. Krikorian, Canon Law Tradition of the Armenian Church: History and Actual system of the Ecclesiastical Right// (IUS CANONICUM IN ORIENTE ET OCCIDENTE. Peter Lang. Europäischer Verlag der Wissenschaften, 2003., էջեր 275-296):

թյունների հստակեցմանը, ինչպես նաև Սահմանադրության փոփոխությունների կարգին առնչվող սահմանադրական նորմերը վկայում են, որ իրավագիտական առումով գործ ունենք սահմանադրական մշակույթի ամբողջական, առաջադիմական լուրջ դրսևորումների հետ: Այս պարագայում, ի տարբերություն «Որոգայթ փառացի», սահմանադրական նորմերը հանդես չեն եկել որպես անհատական ցանկություն, այլ ձեռք են բերել էական իրավակիրառական նշանակություն:

Ներկայացված բոլոր ժամանակներում մեր երկրի պատմությունը, ինչպես նշեցինք, շարունակաբար եղել է կորուստների, օտարների կողմից հալածանքի, առանց պետականության՝ հրաշքով գոյատևած հավաքական տեսակի պատմություն: Պետականության ավելի քան յոթհարյուրամյա կորուստն իր կնիքն է դրել մարդկանց հասարակական գիտակցության վրա: Ակամայից ձեռախեղվել են քաղաքացիական շատ որակներ: Մշակելով ու գործադրելով համազգային նշանակության կանոնական սահմանադիր նորմեր, այսուհանդերձ, պետության օրենքն ընկալվել է նաև որպես օտարի պարտադրանք ու արգելակ իր ինքնության դրսևորումների հանդեպ:

Այսօրյա պատմական անդրադարձը վկայում է, որ մեր ազգային արժեքները կամ մագաղաթյա տարեգրություն ունեն, կամ գլխավորապես ծնվել ու վերարտադրվել են օտար հանգրվաններում՝ բնականաբար, չունենալով պետական հոգածություն ու աջակցություն:

Իրողություն է եւ այն, որ մենք՝ որպես հայ տեսակ, որպես ժողովուրդ, երրորդ հազարամյակի նախաշեմին վերահաստատեցինք մեր անկախությունը, սակայն դեռևս չենք կրում անկախ պետության լիարժեք քաղաքացու համար անհրաժեշտ քաղաքացիական որակներ: Դրանք հեշտությամբ ձեռք չեն բերվում: Ոչ միայն լուրջ խնդիր է պետականության կորստի դարերի փոշին թոթափելը կամ մտայնության ու աշխարհըմբռնման վերաիմաստավորման գիտակցումը, այլև ծրագրանպատակային լրջագույն աշխատանք է անհրաժեշտ ծավալել պետության քաղաքացի կերտելու գործում:

Չխորանալով վերջինիս բաղադրատարրերի վերլուծության մեջ, քննարկվող նյութի առումով ցանկանում ենք առանձնացնել ու շեշտել հատկապես պետության իրավական մշակույթի կարելությունը: Ինչպես տեսանք, սահմանադրականությունն ինքնին մշակութային երեւոյթ է:<sup>173</sup> Անառարկելի է նաև, որ իրավական մշակույթն ազգային-պետական մշակութային խորապատկերի անբաժանելի մասն է: Համոզվեցինք նաև, որ պատմականորեն հայ իրավական մշակույթն ուշագրավ ու համամարդկային ընդգրկման հուշարձաններ է թողել: Սակայն իրավական մշակույթը, լինելով ազգային մշակույթի օրգանական մաս, հիմնականում **կտրված է եղել ազգային-պետական մշակութային միջավայրից**, որը պարզապես չենք ունեցել պետականության կորստի շրջանում:

Պետականության կայացման ներկա առաջնահերթություններին պետք է դասել սահմանադրաիրավական այնպիսի մշակույթի ձեւավորումը, որը, սնվելով դարերի կուտակած մնայուն արժեքներից, հասարակական համաձայնության ու համերաշխության միջավայրի ստեղծման, մարդու՝ աստվածային պատվիրաններով ապրելու կանոնական սկզբունքներից, հիմք կծառայի անհատի քաղաքացիական որակների կազմավորման ու ամրապնդման համար, կդառնա իրավական ժողովրդավարության հաստատման նախադրյալ: Ժողովրդավարության հաստատումն ինքնին բավարար ու ինքնանպատակ չէ: Այն **պետք է լինի իրավական, սահմանադրական ժողովրդավարություն՝ համակարգին հաղորդելով ամբողջականություն եւ ազատական անհրաժեշտ որակներ:**

Երկրում սահմանադրականության հաստատման համար անհրաժեշտ են նաև համարժեք քաղաքական մշակույթ, այն կրող քաղաքական կառուցակարգ, ինչպես նաև դրանց նկատմամբ հասարակական հստակ պահանջ: Սահմանադրականու-

173 St'u Дик Ховард. К конституционной демократии во всем мире: американский взгляд. ВОПРОСЫ ДЕМОКРАТИИ. Электронный журнал Государственного департамента США. Том 9, номер 1, март 2004 г., <http://usinfo.state.gov/journals/journalr.htm>.

թյունը ենթադրում է հասարակական այնպիսի միջավայր, որին բնորոշ են **անխտրականությունը, բազմակարծությունը, հանդուրժողականությունը, արդարադատությունը եւ համերաշխությունը**: Դրանց ապահովումը պետք է կրի համակարգային բնույթ, ներառի հասարակական հարաբերությունների բոլոր ծայքերը, դառնա հավատի ու լավատեսության գլխավոր երաշխիքը: Այս որակները քաղաքական համակարգի բնութագրման գլխավոր չափանիշներն են, իսկ դրանց արմատավորումը՝ պետության գերագույն խնդիրը: Դրանց բացակայությունը վկայությունն է երկրում սահմանադրականության բացակայության, դրանց աղճատումը խոսում է սահմանադրական մշակույթի ցածր մակարդակի ու սահմանադրական ժողովրդավարության անլիարժեքության մասին:<sup>174</sup>

Այս նկատառումներն ու պատմության դասերը հաշվի առնելով, անհրաժեշտ ենք համարում հանգամանորեն կանգ առնել հայ նորագույն իրականության պայմաններում սահմանադրական մշակույթի տեղին ու դերին առնչվող հիմնահարցերին, որոնք, ցավոք, համակարգված վերլուծության առարկա դեռեւս չեն դարձել: Խոսքը գլխավորապես վերաբերում է XX դարում հայ իրականության մեջ տեղի ունեցած սահմանադրաիրավական զարգացումներին ու դրանց արդի միտումներին: Սակայն այս փուլում հայ իրականության մեջ սահմանադրական զարգացումների հիմնախնդիրների վերլուծությունը հիմնավոր ու առավել ամբողջական կարող է լինել, եթե այն համադրվի եվրոպական արժեհամակարգային զարգացումների հետ, քանի որ եվրոպական արդի գործընթացները մեր աշխարհաքաղաքական կողմնորոշումների համար վճռական գործոն են դարձել:

174 Ինչպես արդարացիորեն նշում է պրոֆ. Հովարդը, «Որպեսզի սահմանադրական, ազատական ժողովրդավարությունն իրական կյանքում գործի, անհրաժեշտ է, որպեսզի մարդիկ ունենան միմյանց նկատմամբ հավատի որոշակի մակարդակ ու համագործակցության ընդունակություն, այլ ոչ թե ատելության ու թշնամանքի ճամփարների լաժանվեն» (տե՛ս Дик Ховард, К конституционной демократии во всем мире: американский взгляд. ВОПРОСЫ ДЕМОКРАТИИ. Электронный журнал Государственного департамента США. Том 9, номер 1, март 2004 г., <http://usinfo.state.gov/journals/journalr.htm>):

### **3. ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆ ԻՐԱՎԱԿԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ, ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԽՈՐԱՊԱՏԿԵՐՈՒՄ**

#### **3.1. ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԱՍՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Եվրոպական սահմանադրական մշակույթը, խոր արմատներ ունենալով հանդերձ, զարգացման յուրօրինակ ուղի անցավ եվրոպական ինտեգրման խորացմանն ու իրավական գլոբալացմանը համընթաց: Դրա ներկա դրսեւորումների ու զարգացման միտումների ուսումնասիրումը չափազանց կարեւոր է ոչ միայն մեր երկրի արժեհամակարգային կողմնորոշումներից ելնելով, այլև այն պատճառով, որ եվրոպական սահմանադրական մշակույթը քաղաքակրթական մեծագույն արժեք է՝ միտված մարդկային հանրության ապագայի կողմնորոշիչներին:

Միջազգային առումով իրավական մտքի մերօրյա զարգացումները շարունակում են ընդհանուր գծերով պահպանել համակարգային երկու հիմնական ուղղվածությունը՝ պայմանավորված իրավունքի աղբյուրների բնույթի ու դասակարգման հանգամանքներով: Ընդհանուր առմամբ, դարերի ընթացքում են ձեւավորվել անգլոսաքսոնական եւ մայրցամաքային (եվրոպական) իրավական համակարգերի հիմնական առանձնահատկությունները: Դրանք իրենց կնիքն են դրել նաեւ սահմանադրական լուծումների վրա: Այսուհանդերձ, ներկայիս իրավական գլոբալացման հիմնական միտումներից է այն, որ այդ տարբերություններն աստիճանաբար հարաբերական բնույթ են ստանում, գերակայող են դառնում սահմանադրական ընդհանուր սկզբունքներն ու արժեքները, դրանց արմատավորումը հասարակական պրակտիկայում:

Միջազգային սահմանադրաիրավական մտքի ամենաընդ-

հանրական բնութագրիչն է այն, որ ներկայումս, առավել քան երբեք, կարելի է հասարակական հարաբերություններում սահմանադրական սկզբունքների ու նորմերի հուսալի երաշխավորումը, այդ հարաբերությունների, այսպես կոչված, սահմանադրականացումը՝ որպես իրավական, ժողովրդավարական պետական համակարգերի կայացման նախադրյալ: Եթե մինչև XVIII դարն իրավաբանական մտքի զարգացումը հանգեցրեց սահմանադրությունների ընդունման, սոցիալական հանրության Հիմնական օրենքի միջոցով հասարակական համաձայնության կայացման գաղափարին, ապա հետսահմանադրական շրջանի գլխավոր խնդիրը՝ **Սահմանադրության միջոցով երկրում սահմանադրականության երաշխավորումն է**, որը որակապես նոր աստիճանի է բարձրացնում սահմանադրական մշակույթը. այն ստանում է իրական բովանդակություն, հասարակության անդամների համար դառնում է ճանաչողության կարևոր բաղադրիչ, ապրող իրողություն: Վերջին հարյուրամյակների ընթացքում այս խնդրի հետետղական լուծումը դարձել է եվրոպական իրավական զարգացումների առանցքային ուղղությունը: Դժբախտաբար, մեզանում այն իր որակական արդի դրսևորումների մեջ նոր է այժմեականություն ձեռք բերում, քանի որ, ըստ էության, իրագործելի է միայն անկախ պետականության եւ արժեհամակարգային որոշակի կողմնորոշումների պայմաններում:

Սահմանադրականության իրողությունը, որը ժողովրդավարական հասարակությունում սահմանադրական մշակույթի դրսևորման գերակա ձեւն է, իր հերթին, բարդ հասարակական-քաղաքական եւ պետաիրավական երեւոյթ է: Այն առաջին հերթին ենթադրում է պետական ողջ համակարգում, հասարակական հարաբերությունների բոլոր ծալքերում **սահմանադրական ժողովրդավարության հաստատում**: Դա նպատակ է, որին ձգտում են սոցիալական առաջադիմության ուղին ընտրած երկրները: Սակայն այդ նպատակի իրականացումը, մասնավորապես, պահանջում է այնպիսի պարտադիր երաշխիքներ, ինչպիսիք են սահմանադրական նպատակների ու հիմնարար սկզբունքների ճանաչումը եւ երաշխավորումը պետության ու ողջ հասարակու-

թյան կողմից, սահմանադրական սկզբունքներին համապատասխանող պետական իշխանության առկայությունը, իրավունքի գերակայության սկզբունքի վրա կառուցված իրավական համակարգի կայացումը, սահմանադրական կարգի ու Սահմանադրության գերակայության հուսալի պաշտպանվածությունը եւ այլն:

Հարցը միայն այն չէ, թե ինչպիսին է Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգը եւ թե ինչ սկզբունքներ են դրված իրավունքի ու իշխանության փոխառնչությունների հիմքում: Էականն այն է, թե հասարակական կյանքում ինչպես է դրսևորվում տվյալ սահմանադրական կարգը, որքանով են միս ու արյուն ստանում Սահմանադրության հիմնարար սկզբունքները, ով է իշխանության իրական աղբյուրն ու կրողը, որքանով է երաշխավորված ու պաշտպանված մարդու արժանապատվությունը, գործնականում որքանով են տարանջատ, անկախ ու հավասարակշռված պետական իշխանության մարմինները: **Վերջիններիս երաշխավորումն է այն հիմնական չափանիշը, որով հնարավոր է գնահատել սահմանադրականության իրական վիճակը եւ սահմանադրական մշակույթի նկատմամբ հասարակության իմաստավորված վերաբերմունքը:**

Իրավունքի գերակայության սկզբունքի վրա խարսխված, իրավական պետության եւ քաղաքացիական հասարակության կայացման երաշխիք հանդիսացող Սահմանադրության եւ դրան համարժեք սահմանադրական ժողովրդավարության համատեղ ներդաշնակ գոյությունը ենթադրում է որոշակի անհրաժեշտ ու բավարար նախադրյալների առկայություն: **Դրանց մեջ ելակետային է ազատական իրավամտաժողովրդական կայացման ու դա հասարակական ընկալման եւ ընդգրկման աստիճանը:** Այդպիսի իրավամտաժողովրդություն է ընկած արդի եվրոպական սահմանադրական զարգացումների եւ սահմանադրական մշակույթի դրսևորման հիմքում:

Իրավունքի տեսափիլիսոփայական ընկալման ու իրավագիտական մեկնաբանման կարևոր փուլ է սկսվում ամբողջ Եվրոպայում դեռես XVIII դարի կեսերից: Այդ ժամանակաշրջանի բնորոշ առանձնահատկություններից էր այն, որ ձեւավորվում էր

բնական իրավունքի մասին առավել ամբողջական աշխարհայացք է մերժվում էր, այսպես կոչված, ավատատիրական իրավաբանական աշխարհայացքը: Նոր հայացքների կրողների մեջ հատկապես առանձնացան Ն. Մաքիավելին (1469-1527), Հ. Հրոցիուսը (1583-1645), Բ. Սպինոզան (1632-1677), Թ. Հոբսը (1588-1679), Ջ. Լոկը (1632-1704), Շ.- Լ. Մոնտեսքյուն (1689-1755), Ժ.-Ժ. Ռուսոն (1712-1778), Թ. Ջեֆերսոնը (1743-1826), Թ. Փեյնը (1737-1809), Ի. Կանտը (1724-1804), Գ. Հեգելը (1770-1831) եւ այլք: Հ. Հրոցիուսը, մասնավորապես, գտնում էր, որ բնական իրավունքը բխում է հենց մարդու էությունից, որը եւ նրան մղում է փոխադարձ առնչությունների: Բնական իրավունքի ճանաչումն **իրավագիտությանը գիտական բնույթ հաղորդեց:** Կամասահման իրավունքն ի վիճակի չգտնվեց հասնելու իր գիտական արմատներին:<sup>175</sup>

Տնտեսական հարաբերությունների զարգացումը, ազատ ու մրցակցային դաշտի ստեղծումը, մարդու իրավունքները՝ **որպես իշխանության սահմանափակման չափանիշ ընդունելը**, ինչպես նաեւ ազատական արժեքային համակարգի այլ տարրերի աստիճանաբար արմատավորումը եվրոպական արժեքային համակարգում վերջին ավելի քան 300 տարիների ընթացքում բյուրեղացան սահմանադրական այնպիսի նորմերում ու սկզբունքներում, որոնք XX դարի երկրորդ կեսից արդեն ոչ թե լոկ կարգախոս են, այլ ապրող արժեքներ: Ինչպես իրավագիտորեն նշում է Յու. Ա. Տիխոմիրովը, XVII դարը բերեց բնական իրավունքի գաղափարները, XVIII դարն առաջ քաշեց ազատական պետության անհրաժեշտությունը՝ հանձնելն Ռուսոյի ժողովրդական ներկայացուցչության եւ Մոնտեսքյոյի՝ իշխանությունների տարանջատման հայեցակարգերի, XIX դարի առաջին երրորդում Գերմանիայում ծնվեց իրավական պետության տեսությունը, սակայն այդ դարերը նույնպես հազեցած էին պատերազմներով, պետական հեղաշրջումներով, դաժան կառավարողներով, իսկ հայեցա-

կարգերը մնում էին գրքերում...<sup>176</sup> **Քաղաքացիական հասարակությանը բնորոշ արժեքները, իրավական, ժողովրդավարական պետության որակները ձեւավորվեցին դարերի ընթացքում, սակայն դարձան հասարակական կյանքի համակարգային կարգավորիչներ հատկապես նախորդ հազարամյակի վերջին մի քանի տասնամյակներում:** Փաստորեն, 1950-ականներից սկսած, ժողովրդավարական ընդհանուր արժեքներն ու իրավական պետության սկզբունքներն իրենց առավել համակարգված ու կոնկրետ արտահայտությունը գտան եվրոպական երկրների սահմանադրական լուծումներում՝ տվյալ համակարգին բնորոշ բազմաթիվ առանձնահատկություններ հաշվի առնելով: Եվ ինչպես նշում է պրոֆեսոր Դ. Հովարդը, սահմանադրականությունը, ժողովրդավարությունը եւ օրենքի իշխանությունն Արեւմտյան Եվրոպայում այսպես թե այնպես տիրապետող դարձան երկրորդ աշխարհամարտից հետո:<sup>177</sup>

Եվրոպական սահմանադրական մշակույթի հենքն է կազմում հունա-հռոմեական, անգլիական, գերմանական, ֆրանսիական եւ եվրոպական մի շարք այլ երկրների հարուստ իրավական մշակույթը: Այն նաեւ իր ծանրակշիռ ավանդն է ունեցել միջազգային սահմանադրագիտության մեջ, խոր հետք է թողել համաշխարհային սահմանադրական մշակույթի զարգացման գործում: Եվրոպական արդի սահմանադրական մշակույթի ձեւավորման գործում լուրջ ներդրում է հանդիսացել 1791թ. Լեհաստանի ու Ֆրանսիայի, 1814թ. Նորվեգիայի, 1831թ. Բելգիայի, 1866թ. Շվեդիայի, 1868թ. Լյուքսեմբուրգի, 1874թ. Շվեյցարիայի, 1901թ. Ավստրալիայի ու հետագայում այլ երկրների սահմանադրությունների ընդունումը, որոնց զգալի մասը մինչ օրս գործում են եւ ձեւավորել են կայուն սահմանադրական ավանդույթներ:

Այսուհանդերձ, XX դարի ընթացքում երկու աշխարհամարտեր տեսած, դրանցից որոշակի դասեր քաղած եւ ժողովրդավա-

175 Гроций Гуго Де Гроот. О праве войны и мира // Антология мировой правовой мысли. Т. III. М., 1999, էջ 21-26:

176 Тихомиров Ю.А. Теория компетенции. М., 2004, էջ 10:

177 Ховард Д. Конституционализм и развивающаяся демократия // Конституционное правосудие, 2004, N 3, էջ 20:

րությունն ու իրավունքի գերակայությունն անկյունաքարային արժեք դարձրած Եվրոպայի համար՝ որպես համընդհանուր սկզբունք, **սահմանադրական մշակույթի գլխավոր կարգախոսը դարձավ այն, որ օրենքը եւ պետությունը պետք է լինեն իրավական, երաշխավորեն հավասարությունը, ազատությունը եւ արդարությունը, որոնց արժեհամակարգային հիմքը մարդու անօտարելի իրավունքների գերակայությունն է:**<sup>178</sup> Ընդ որում, իրավական համակարգն ամբողջականանում է կենսունակ է դառնում, երբ այդ արժեքները դառնում են սահմանադրական արժեքներ, ստանում են ճանաչման ու պաշտպանության սահմանադրական երաշխիքներ:

XX դարի Եվրոպայի համար քաղաքացիական հասարակության կայացումը եւ իրավական, ժողովրդավարական պետության ստեղծումը դարձան համընդհանուր իդեալ, մարդկային բարօրության եւ մարդու ստեղծարար նախասկզբի լավագույնս իրացման նախապայման: Պատահական չէ, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհում, հատկապես Եվրոպայում, ընդունված կամ էապես բարեփոխված գրեթե բոլոր սահմանադրությունները որպես նորմ-նպատակ եւ նորմ-սկզբունք ամրագրում են պետության իրավական եւ ժողովրդավարական լինելու հանգամանքը, ինչպես նաեւ ընդունում են միջազգային իրավունքի նորմերի գերակայությունը ներպետական օրենսդրական նորմերի նկատմամբ:

**Եվրոպական սահմանադրական մշակույթին բնորոշ դարձան մարդու արժանապատվության, նրա սահմանադրական իրավունքների ու ազատությունների ճանաչումը որպես անմիջական գործող իրավունք**, որոնք ներպետական ու համաեվրոպական պաշտպանության իրավական ու կառուցակարգային լուրջ երաշխիքներ ստացան: Սահմանադրական մշակույթի եվրոպական համակարգի կարեւոր օղակ դարձան դատական սահմանադրական վերահսկողության հատուկ մասնագիտացած ինստիտուտները՝ սահմանադրական դատարանները, որոնք հնա-

րավոր դարձրին վերացական, նախնական, պարտադիր ու ֆակուլտատիվ սահմանադրական վերահսկողությունը, ստանձնեցին Սահմանադրության գերակայության ու կայունության երաշխավորման պարտականությունը:

Ինչպես ամփոփ արձանագրվեց 2001թ. դեկտեմբերին Հնդկաստանում կազմակերպված միջազգային կլոր սեղանի ժամանակ, եվրոպական սահմանադրական մշակույթի գլխավոր բնորոշ գիծն այն է, որ **սահմանադրական արժեքների մեջ բարձրագույնը մարդն է՝ իր արժանապատվությամբ ու իրավունքներով:**<sup>179</sup>

**Եվրոպական սահմանադրական մշակույթի պսակը դարձավ Եվրոպական միության Սահմանադրությունը**, որը ոչ միայն նոր խոսք է սահմանադրագիտության մեջ, այլեւ սահմանադրական մշակույթի որակապես նոր աստիճան: Արժեհամակարգային ինտեգրումը, միասնական շահերի վրա խարսխված տնտեսական, քաղաքական, հումանիտար եւ, ընդհանրապես, համակարգային համագործակցությունը բերեց վերպետական գործակցության այնպիսի որակի, երբ ստեղծված միասնական տնտեսական, իրավական, կառուցակարգային բազան օրակարգային դարձրեց նաեւ վերպետական Սահմանադրության ստեղծման անհրաժեշտությունը: Նպատակ դրվեց խրախուսել խաղաղությունը, Միության արժեքները և մարդկանց բարեկեցությունը, իր քաղաքացիների համար երաշխավորել ազատության, անվտանգության և արդարադատության միջավայր, միասնական ազատ շուկա՝ առանց ներքին սահմանների և խեղաթյուրված մրցակցության, ապահովել հավասարակշռված տնտեսական աճ, կայուն զարգացում, սոցիալական շուկայական տնտեսություն, սոցիալական առաջընթաց ու բարեկեցություն, ներքին եւ արտաքին անվտանգության բարձր մակարդակ. միջազգային ասպարեզում ընդհանուր շահերի լավագույնս ապահովման հնարավորություն: Ինչպես նշում է Ֆրանսիս Սնայդերը, ներկայիս Եվրամիության սահմանադրական մշակույթը կազմված է երեք շերտից: Առաջինը

178 Այդ մասին տե՛ս նաեւ Политико-правовые ценности: история и современность / под. ред. В.С. Нерсесянца. М., 2000, էջեր 5-29:

179 <http://www.nls.ac.in/ncrcw/justice-iyer-paper.htm>



ժամանակակից իրավական ընդհանուր մշակույթն է, երկրորդը՝ Արեւմտյան իրավական մշակույթը, երրորդը՝ Եվրոպական միության ռեգիոնալ ինտեգրումով պայմանավորված իրավական մշակույթը:<sup>180</sup>

Եվրոպական միությունը՝ իր ընդլայնված կազմով ու զարգացման միտումներով, հանդես է գալիս որպես սահմանադրական կարգի որակապես նոր տեսակ, որը միավորում է անդամ պետությունների ժողովուրդներին՝ չխախտելով քաղաքական ինստիտուտների, մշակութային եւ լեզվական սովորույթների առկա այն առանձնահատկությունները, որոնք եվրոպական քաղաքակրթության զարգացման արդյունք են: Առանձնահատուկը հատկապես այն է, որ եվրոպական ինտեգրման արդյունքում **Սահմանադրությունը, դառնալով վերպետական երեւոյթ, ընդգծում է այն իրողությունը, որ դա ոչ թե պետության, այլ քաղաքացիական հասարակության Հիմնական օրենքն է**, Եվրոպական միության մեջ համախմբված քաղաքացիական հասարակության ընդհանուր համաձայնության արդյունք հանդիսացող վարքագծի ու գործելակերպի սկզբունքների ու կանոնների ամբողջություն: Սա այլեւս իրողություն է եւ վկայում է հասարակական զարգացման նոր աստիճանի, սահմանադրաիրավական հարաբերությունների նոր որակի, համընդհանուր եւ ազգային փոխհարաբերությունների նոր սկզբունքների մասին: Քաղաքակրթական որակապես նոր մակարդակում դրսեւորվող այս իրողությունը դեռեւս խորությամբ պետք է ուսումնասիրվի ու արժեվորվի, ինչպես նաեւ հաշվի առնվի յուրաքանչյուր երկրի իրավական զարգացումների պրակտիկայում: Միաժամանակ, Եվրամիության ընդլայնումը շարունակում է դեռեւս մնալ քննարկումների ու գիտական բանավեճերի առարկա: Կարելի է թեմաներից մեկը վերաբերում է իրավական, մասնավորապես՝ սահմանադրական մշակույթի ձեւավորմանը: Այս հարցում հեղինակների հիմնական մտահոգությունն այն է, որ դեռեւս տեսական ժամանակ է անհրաժեշտ, որպեսզի հնարավոր լինի համատեղել Անգլիայում, Արեւմտյան Եվրոպայի մյուս

երկրներում ու նաեւ Արեւելյան Եվրոպայի երկրներում դարերով ձեւավորված սահմանադրական մշակույթների առանձնահատկությունները:<sup>181</sup> Անտարակույս, այս խնդիրն առավել դյուրին կլուծվի Եվրոպական միության Սահմանադրությունը բոլոր երկրների կողմից վավերացվելուց հետո՝ ձեւավորելով եվրոպական սահմանադրական մշակույթի եւ առանձին երկրների սահմանադրական «ենթամշակույթների» մի միասնական ու ամբողջական համակարգ:

Ընդհանրացնելով, կարող ենք արձանագրել, որ եվրոպական ժողովրդավարական գործընթացները դեռեւս XX դարասկզբին նախադրյալներ ստեղծեցին ազատական տնտեսական հարաբերությունների ծավալման հետ մեկտեղ որդեգրել **իրավահասկացողության ազատական-իրավաբանական տիպը**:<sup>182</sup> Վերջինիս էությունը հանգում է մարդու բնական իրավունքների ճանաչմանը՝ որպես բարձրագույն արժեք, որպես անմիջական գործող իրավունք եւ պոզիտիվ իրավունքի հիմք:<sup>183</sup> Ժողովրդավարական զարգացումների անխուսափելի տրամաբանությունն էր, որ եվրոպական իրավական համակարգում **իրավունքի գերակայության երաշխավորումը դարձավ անկյունաքարային արժեք**: Եվրախորհրդի՝ 1949թ. մայիսի 5-ին Լոնդոնում ստորագրված կանոնադրության հոդված 3-ում, ինչպես նշել ենք, միանշանակ սահմանվեց, որ Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի իրավունքի գերակայության սկզբունքը: Նման

181 Մասնավորապես տե՛ս [http://www.iue.it/LAW/Events/WSWorkshopNov2003/Dupre paper.pdf](http://www.iue.it/LAW/Events/WSWorkshopNov2003/Dupre%20paper.pdf), <http://www.eurozine.com/article/2004-02-19-snyder-en.html>, German Law Journal - ESSAY Postnationalism, (Dis)organised civil society and Democracy in the European Union Is Constitutionalism Part of the Solution or Part of the Problem?, [http://www.germanlawjournal.com/past\\_issues.php?id=192](http://www.germanlawjournal.com/past_issues.php?id=192).

182 Ի դեպ, XX դարում ձեւավորված իրավաքաղաքական հայեցակարգերի ու շարժումների դասակարգում է առաջադրում Լ.Վ. Գոլոսկոկովը՝ հիմնական շեշտը դնելով Անական իրավունքի տեսության եւ իրավական պոզիտիվիզմի տարբեր դրսեւորումների վրա (տե՛ս Գոլոսկոկով Լ.Վ. Правовые доктрины: от Древнего мира до информационной эпохи. М., 2003, էջ 79-82:

183 Այդ մասին տե՛ս Ներսեսյանց Վ. Ս., Իրավունքի եւ պետության տեսություն, Երեւան, 2001, էջեր 30-47:

180 <http://www.eurozine.com/article/2004-02-19-snyder-en.html>

մոտեցումը նոր որակ հաղորդեց նաեւ միջազգային հարաբերությունների հետագա ծավալմանը՝ դրանց հիմքում դնելով արժեքային հստակ կողմնորոշիչ: Իր հերթին, սահմանադրական մշակույթի արժեհամակարգային հենքը դարձան **մարդկային արժանապատվությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, իրավունքի գերակայությունը եւ մարդու իրավունքների հարգումը**, արժեքներ, որոնք բնորոշ են **անխտրականության, բազմակարծության, հանդուրժողականության, արդարադատության եւ համերաշխության սկզբունքների վրա կառուցված հասարակությանը**, եւ որոնք դրվեցին XXI դարի կարեւոր ձեռքբերումներից համարվող՝ Եվրամիության Սահմանադրության հիմքում:

Եվրոպան նշված մոտեցումներին հասավ եւ իրավընկալման ներկա որակները դարձրեց հասարակական գոյի հիմք՝ աստիճանական, էվոլյուցիոն զարգացման ճանապարհով, որը հանգեցրեց, հեզելյան բնութագրմամբ, այնպիսի թռիչքի, երբ գործ ունենք նոր որակի հետ:

### 3.2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՐՍԵՎՈՐՄԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հայ իրականության մեջ սահմանադրական մշակույթի պատմական ձեւավորման շրթան ամբողջականացնելու եւ եվրոպական իրավամտածողության հոլովություն այն վերլուծելու նպատակով հարկ ենք համարում նախ համառոտ անդրադարձ կատարել վերջին հարյուրամյակում այդ երեսույթի դրսեւորման բնույթին ու առանձնահատկություններին՝ Հայաստանի առաջին Հանրապետությունում, խորհրդային Հայաստանում ու ապա նորանկախ Հայաստանի Հանրապետությունում: Դա պատմական այն ժամանակահատվածն է, երբ պետականության դարավոր կորստից հետո այն վերագտնելու եւ մեր ինքնության որակներն ազգային-պետական համակարգում զարգացնելու նոր հնարավորություններ ստեղծվեցին: Այս թեմային հետաքրքիր անդրադարձ է կատարել Ա. Վաղարշյանը, հատուկ ուսումնասիրության առարկա դարձնելով Հայաստանի սահմանադրական զարգացման պատմությունը՝ Հայաստանի առաջին, երկրորդ եւ երրորդ հանրապետություններում:<sup>184</sup> Հեղինակը շեշտելով, որ «...սրանք են այն աստիճանները, որոնցով անցել է Հայաստանի սահմանադրական զարգացումը», անում է նաեւ այն հետեւությունը, որ «Այդ զարգացման մեջ չկա պատմական հաջորդականություն, որովհետեւ հաջորդող սահմանադրաիրավական երեսույթները եւ ինստիտուտները չեն աճում նախորդներից: Դրանց միջեւ կապի բացակայությունը թույլ չի տալիս Հայաստանի սահմանադրական զարգացումը դիտարկել միասնական պատմական գործընթացի շրջանակներում, որովհետեւ պատմաքաղաքական եւ գաղափարախոսական հանգամանքների բերումով, դրանում յուրաքանչյուր նոր էտապ հանդիսանում է նախորդի լրիվ բացասումը»:<sup>185</sup>

184 Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր, Երեւան, 2003:

185 Նույն տեղում, էջ 13:

Չանդրադառնալով «լրիվ բացասման» հարցադրմանը, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ մման պնդումների ժամանակ տեսադաշտից դուրս է մնում ընդհուպ միջազգայնորեն ճանաչված՝ «չգրված սահմանադրությունների» հանգամանքը, այն իրողությունը, որ Սահմանադրությունը լոկ փաստաթուղթ կամ նորմերի ժողովածու չէ, այն արժեքային համակարգ է, մտածողության ու կենսակերպի ձեւ, ազգի մշակութային համակարգի բաղադրատարրը: Իսկ դրա դրսեւորումները հայ իրականության մեջ, ինչպես տեսանք, հազարամյակների տարեգրություն ունեն:

Ինչ վերաբերում է XX դարին, ապա իրոք գործ ունենք նոր իրողությունների հետ:

Չնայած Հայաստանի Առաջին Հանրապետությունը չհասցրեց ունենալ իր Հիմնական օրենքը,<sup>186</sup> այսուհանդերձ, 1918-20 թվականներին պատմական ծանր պայմանների մեջ հայտնված եւ գոյատեւման մաքառումների մեջ գտնվող անկախ Հայաստանի Հանրապետության պառլամենտն (Հայաստանի խորհուրդն, իսկ 1919թ. օգոստոսի 1-ից՝ Խորհրդարանը) ընդունում է մի շարք օրենքներ, որոնք սահմանադիր նորմեր են բովանդակում եւ սահմանադրական մշակույթի դրսեւորման ուշագրավ երեւոյթ են հանդիսանում: Դրանց մեջ հատկապես առանձնանում է 1919թ. մայիսի 26-ին ընդունված՝ «Միացյալ Հայաստանի անկախության ակտը հաստատելու մասին» օրենքը: Վերջինս ոչ միայն հստակեցնում է երկրում կառավարման ձեւն ու պետական իշխանության բնույթը, այլեւ ամրագրում է պառլամենտի ու կառավարության իրավական կարգավիճակը՝ որպէս «...միացյալ Հայաստանի ազատ ժողովուրդը շաղկապող բարձրագույն օրենսդիր ու գործադիր իշխանություն»:<sup>187</sup> Հայ իրականության մեջ առաջին անգամ իշխանությունների տարանջատումն օրենսդրական կարգավորում է ստանում:

186 Նման փորձ արվում է, երբ 1920 թ. սկզբներին արդարադատության նախարար Ա. Չիլինգարյանը նախաձեռնում է Սահմանադրության նախագծի մշակման գործը, որը, սակայն, ավարտին չի հասցվում:

187 Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.), Երեւան, 1998, էջ 212:

Սահմանադիր բնույթ ունեն նաեւ 1918թ. հունիսի 12-ին ընդունված՝ «Երդվյալ ատենակալների դատարանի ներմուծման մասին, Հայաստանի Հանրապետության տերիտորիայի վրա», 1919թ. հունվարի 26-ին ընդունված՝ «Պետական լեզվի մասին» եւ «ՀՀ Պառլամենտի ընտրությունների մասին», 1920թ. մայիսի 8-ի՝ «Արտակարգ դատարանների եւ նրա դատին ենթակա գործերի մասին», 1920թ. մայիսի 25-ի՝ «Ներկա տերիտորիայի չորս նահանգների մասին», 1920թ. մայիսի 30-ի՝ «Դատական պաշտոնյաների անկախության իրավունքի ժամանակավոր վերացման մասին», 1920թ. հունիսի 5-ի՝ «Նախարարների որոշ ֆունկցիաները գավառական ինքնավարություններին հանձնելու մասին», 1920թ. հունիսի 7-ի՝ «Հպատակության մասին», 1920թ. հոկտեմբերի 2-ի՝ «Պաշտոնյաների հանցանքների մասին», 1920թ. հոկտեմբերի 26-ի՝ «Գլխավոր ռազմական դատարանի ֆունկցիաները Հայաստանի սենատին հանձնելու մասին» եւ մի շարք այլ օրենքներ: Առանձին օրենքներում ժողովրդավարական սկզբունքներից որոշ նահանջ արձանագրելով հանդերձ, սահմանվել են նաեւ այնպիսի դրույթներ, որոնք այսօր էլ ուշադրության արժանի են: Օրինակ կարող է ծառայել 1919թ. փետրվարի 7-ին ընդունված տոների մասին օրենքը, որում ընդհանուր տոների կողքին պետականորեն ընդունվում են նաեւ ազգային փոքրամասնություններին վերաբերող առանձնահատուկ տոները:<sup>188</sup>

Ժամանակի նետած մարտահրավերները, որոնք արտացոլված էին նաեւ Հ. Քաջազնունու՝ առաջին վարչապետի կաբինետի ծրագրի մեջ, մասնավորապես պահանջում էին ամենակարճ ժամանակամիջոցում հաղթահարել սովի ու համաճարակի վտանգը, 300 հազար գաղթականության համար նվազագույն պայմաններ ստեղծել, լուծել փոքրամասնություններին առնչվող պայթյունավտանգ խնդիրները, օգտագործելով ներքին ու արտաքին բոլոր հնարավորությունները՝ երկրի կայուն զարգացման նախադրյալներ ստեղծել: Առաջին Հանրապետության տարիները՝

188 Տե՛ս Հայաստանի Խորհրդի հաստատած օրենքները, 1918-1919 թթ., մաս 1, Երեւան, 1919, էջ 48:

րին ընդունված ավելի քան 1200 օրենքների վերլուծությունը վկայում է, որ դրանց գերակշիռ մեծամասնությունը վերաբերում է կառավարության իրավասություններին առնչվող ու հրատապ կենսականություն ունեցող հարցերի լուծմանը: Նման վիճակը պայմանավորված էր նախ՝ ստեղծված ճգնաժամային իրավիճակով (օրինակ, Հայաստանի խորհրդի 1918թ. սեպտեմբերի 10-ի առավտյան նիստի օրակարգն այսպիսին էր. 1. Բժշկա-սանիտարական հանձնաժողովի շաբաթական զեկուցումը: 2. Պարենավորման հանձնաժողովի շաբաթական զեկուցումը: 3. Գաղթականական հանձնաժողովի շաբաթական զեկուցումը: 4. Դպրոցական հանձնաժողովի օրինագիծը դպրոցական վարչության կազմակերպման մասին: 5. Ընթացիկ հարցեր): Երկրորդ՝ դարձյալ իրավիճակի թելադրանքով, օրենսդիր մարմինն իր լիազորությունները տեւականորեն (Հայաստանի խորհուրդը՝ 1919թ. ապրիլի 27-ից մեկ ամսով, եւ 1919թ. հունիսի 5-ից մինչեւ օգոստոսի 1-ը, իսկ 1919թ. օգոստոսի 1-ից գործող համամասնական կարգով ընտրված Խորհրդարանը 1920 թ. մայիսի 5-ից մինչեւ Առաջին Հանրապետության անկումը) վերալիազորել էր կառավարությանը: Երրորդ՝ փորձ էր արվում օրենսդրական բացը լրացնել նաեւ ընդօրինակման ճանապարհով: Օրինակ, օրենսդիր մարմնի 1918թ. դեկտեմբերի 6-ի նիստում օրենսդրական հանձնաժողովի առաջարկությամբ օրենք ընդունվեց, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետության մեջ գործում են ռուսական օրենքներն այն լրացումներով ու հավելումներով, որ ընդունել են Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությունը, Անդրկովկասյան Սեյմն ու Կոմիսարիատը եւ Հայաստանի Խորհրդարանը»:<sup>189</sup>

Իրավիճակային խնդիրներին առաջնահերթ կարեւորություն տալով հանդերձ, երկրի իրավաքաղաքական կողմնորոշման առումով Հայաստանի Խորհրդարանը 1920թ. հունվարի 25-ի հանդիսավոր նիստում, մասնավորապես, արձանագրեց, որ «...հայ դեմոկրատիան հավասար մեկ անդամը կլինի համաշխարհային

ազատ դեմոկրատիայի ընտանիքին: Հայաստանը կլինի իսկապես ազատ ու դեմոկրատիկ եւ նրա սահմաններում հավասար իրավունքներ կվայելեն նրա մեջ ապրող բոլոր ժողովուրդները»:<sup>190</sup> Այսուհանդերձ, ընդունված մի շարք օրենքներ՝ իրավիճակի թելադրանքի հիմնավորումներով, ինչպես նշվեց, բովանդակում էին շեղում այդ սկզբունքից:

Քննության առարկա նյութի համատեքստում այս ժամանակաշրջանի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ սահմանադրական մշակույթն առավել մեծ չափով դրսեւորվում է ոչ թե իրավական ակտերում, այլ Խորհրդարանի վերահսկիչ դերում, նրա օպերատիվ գործնական աշխատանքում ու դրա հիմքում դրված իրավական սկզբունքներում: Միաժամանակ իրավացի է Ա. Վաղարշյանը, նշելով՝ որ Հայաստանը լինելով խորհրդարանական հանրապետություն, այսուհանդերձ գործել է «...պատասխանատու կառավարության սկզբունքը»:<sup>191</sup>

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո գործ ունենք բոլորովին այլ իրականության հետ, որը տրամազօրեն հեռանում է նախորդ հազարամյակների սահմանադրաիրավական մտածողության զարգացումների տրամաբանությունից: Նպատակ չունենալով համակարգային վերլուծության առարկա դարձնել խորհրդային Հայաստանի սահմանադրական զարգացումները,<sup>192</sup> հարկ ենք համարում ընդգծել, որ.

1. գաղափարախոսական իր հակասություններով ու վայրիվերումներով հանդերձ՝ խորհրդային ժամանակահատվածը հայ ժողովրդի ազգային կյանքում վերածնության նոր հնարավորություն ստեղծեց, ինչը պայմանավորված էր ոչ թե

<sup>190</sup> Հայաստանի Խորհրդարանի արձանագրությունները, 1920 թ. («ՀՀ ՍԴ գրադարան»), էջ 48:

<sup>191</sup> Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր, Երեւան, 2003, էջ 30:

<sup>192</sup> Խոսքը վերաբերում է Խորհրդային Հայաստանի 1922թ., 1937թ., 1978թ. սահմանադրություններին ու դրանց հենքի վրա տեղի ունեցող գործընթացներին, որոնք իրենց էությանմ, իրավափոխության կամ ու գաղափարամասնական մոլանդակությամբ նույնական էին ողջ ԽՍՀՄ տարածքում:

<sup>189</sup> Հայաստանի Խորհրդարանի արձանագրությունները, 1918 թ. («ՀՀ ՍԴ գրադարան»), էջ 169:

Սահմանադրության գոյությամբ կամ բացակայությամբ, այլ համակարգային հարաբերական կայունության, գոյատևման արտաձին վտանգների որոշակի հաղթահարման, խաղաղ աշխատանքի պայմաններ ստեղծելու հնարավորությամբ,

2. եթե հարյուրամյակների պատմական իրողությունն այն էր, որ պետականության կորստի պայմաններում գործող իրողություն էին սահմանադրական կանոնները՝ ի դեմս ազգային-եկեղեցական ժողովների կողմից ընդունված կանոնական սահմանադրությունների, այսինքն՝ չկար պետականություն, բայց որոշակի առումով կար ու գործում էր ազգային Սահմանադրություն, ապա խորհրդային շրջանում ձեւավորվեց այլ իրողություն՝ կար գրավոր Սահմանադրություն, որն իրական կյանքի հետ շատ քիչ առնչություն ուներ, սակայն զգալի էր սովորութային իրավունքի ու ավանդույթների դերը միջանձնային հարաբերություններում,
3. սահմանադրական նորմերն ու սկզբունքները կարգախոսային բնույթ կրելուց զատ, այն աստիճան քաղաքականացվեցին, որ զգալի չափով կորցրեցին իրենց իրավակարգավորիչ նշանակությունը,
4. եթե վերջին հարյուրամյակների սահմանադրական զարգացումները խարսխվում էին իրավունքի գերակայության սկզբունքի, մարդու բնական (Աստվածային) իրավունքները ճանաչելու եւ սահմանադրորեն երաշխավորելու վրա, ապա խորհրդային սահմանադրակարգի հիմքում դրվեց պետության, իշխանության ու միակուսակցական քաղաքական ուժի դերի բացարձականացումը, իսկ մարդու իրավունքներն ընդամենը պետության կողմից նրանց տրվող շնորհի դերում հայտնվեցին,
5. Սահմանադրությունը, կտրվելով հասարակական պրակտիկայից, կորցնելով իշխանության սահմանափակման իր առաքելությունը՝ չէր կարող հանդես գալ որպես հասարակական համաձայնության միջոց ու արտահայտություն:  
Իսկ ինչպիսի՞ն էր խորհրդային իրականությունն ընդհանրա-

պես իրավահարաբերությունների բնույթի առումով: Առանձնացնենք մի քանի ընդհանրացումներ.

1. այդ տարածքում գտնվող շատ երկրներ չէին անցել ազատ շուկայական տնտեսական հարաբերությունների զարգացման այն ճանապարհը, որը Եվրոպայի համար տեւեց ավելի քան երկուհարյուրամյակ: Շատերը պարզապես ավատատիրական հարաբերություններից անցում էին կատարել «սոցիալիզմի»,
2. ձեւավորվեցին բոլորովին այլ բնույթի սեփականատիրական հարաբերություններ: Արտադրության միջոցների պետական սեփականության գերիշխման պայմաններում ժողովուրդն օտարվեց իշխանությունից եւ վերջինիս սուբյեկտ լինելուց վերաձվեց իշխանության գործադրման օբյեկտի:<sup>193</sup> Սեփականության իրական տերը ոչ թե ժողովուրդը կամ նույնիսկ պետությունն էր, այլ իշխանությունը: Իսկ իրավունքը կոչված էր պաշտպանելու ոչ թե մարդուն ու նրա սեփականությունը, այլ իշխանությանը,<sup>194</sup>
3. դարերով ձեւավորված իրավամտաժողովությունն իր տեղը զիջեց աթեիստական աշխարհընկալման վրա կառուցված ու ձեւախեղված դոգմատիկ լեգիտա-պոզիտիվիստական իրավամտաժողովությանը,
4. միակուսակցականության պայմաններում իրավունքի աղբյուր դարձավ քաղաքական ուժի բացարձակ կամքը: Իրական նորմաստեղծ մարմին դարձավ կուսակցության բարձ-

193 Իրավափիլիսոփայական միտքը վաղուց փաստել է, որ Եվրոպայում, ինչպես նաեւ Հյուսիսային Ամերիկայում ժողովրդավարության զարգացումն օրգանապես կապված է մասնավոր սեփականության եւ շուկայական հարավերությունների հաստատման հետ (մասնավորապես տե՛ս Страхун Б. Перспективы демократии и конституционное правосудие // Альманах - Конституционное правосудие в новом тысячелетии. Ереван, 2002, із 217):

194 Շատ վերլուծաբաններ իրավացի են այն հարցում, որ տվյալ պարագայում նույնական են դառնում իրավունքը եւ ուժը, իրավունքը մեկնաբանվում է որպես օրինականացված ուժի դրսեւորում (տե՛ս Четвернин В. Российская Конституция: концепция правопонимания // Конституционное право: Восточноевропейское обозрение, вып. 4, 2003, էջ 28):

րագույն մարմինը, որն ուներ անսահմանափակ ու չհակակշռված իշխանություն:<sup>195</sup>

Բնականաբար, տասնամյակների ընթացքում կամասահման իրավամտածողությունը՝ իր քաղաքականացված ու ձեռախեղված դրսևորումներով, խոր արմատներ ձգեց ողջ նախկին ԽՍՀՄ-ում ու նաեւ՝ Արեւելյան Եվրոպայում:<sup>196</sup> Այս բոլորն իրավական համակարգային ձեռախեղումների լուրջ պատճառ հանդիսացան նաեւ հետխորհրդային շրջանում:

ԽՍՀՄ փլուզումից հետո լուրջ գործոն դարձան նաեւ անցումային շրջանի իրողություններով պայմանավորված որոշակի առանձնահատկությունները:

Ընդհանրապես մարդկության պատմության բոլոր ժամանակներում հասարակության համակարգային վերափոխումները համեմատվել են երկրաշարժերի հետ, որովհետեւ հիմնականում հանկարծահաս ձեռով ստեղծվում է որակական բոլորովին նոր վիճակ, որին բնորոշ են անորոշությունը, անկառավարելիությունը, ինստիտուցիոնալ համակարգերի կազմալուծումը կամ բացակայությունը, մտածողության ու արժեհամակարգի շփոթք, իրադրության անկանխատեսելի փոփոխությունները, անելիքի անհստակությունը, կարիքն ու սոցիալական գերլարվածությունը եւ այլն: Պարզապես դա հասարակական համընդգրկուն ստրես է, որի առաջին շրջանը տիպիկ շոկային իրավիճակ է, այնուհետեւ

տեւ տիրապետող են դառնում տագնապն ու անորոշությունը, որոնց հաղթահարմամբ են սկիզբ առնում կայունությունն ու զարգացումը:

Նման վիճակում հայտնվեցին հետհամայնավարական շրջանի գրեթե բոլոր երկրները: Այն առանձնահատուկ ընդգծումներով դրսևորվեց նախկին ԽՍՀՄ հանրապետություններում: Բանն այն է, որ վերջիններս ապրեցին կրկնակի փլուզում, նախ՝ հասարակական հարաբերությունների համակարգի եւ ապա՝ պետական կառույցի: Եթե առաջինը ենթադրում էր անցում շուկայական տնտեսական հարաբերությունների եւ իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա ժողովրդավարական, իրավական (որոշ նորանկախ երկրներում նաեւ սոցիալական) պետությանը բնորոշ հասարակական հարաբերությունների արմատավորում, ապա երկրորդը պարտադրում էր անհետաձգելի քայլեր՝ մասից ամբողջ դառնալու, ինքնուրույն պետական - հասարակական համակարգ ստեղծելու, տարաբնույթ վտանգները հաղթահարելու ուղղությամբ:

Նշված խնդիրների լուծումը պահանջում էր գործադրել ճգնաժամային կառավարման ողջ զինանոցը՝ անցումը կառավարելի դարձնելու, համակարգային վերափոխումների անխուսափելի բացասական հետեւանքները մեղմելու, քաղաքական, տնտեսական, հոգեբանական եւ ընդհանրապես արժեհամակարգային անորոշությունը հաղթահարելու, համակեցության նոր կանոնները հստակեցնելու, փլուզված կառույցների փոխարեն նորերը ձեւավորելու եւ բազմաթիվ այլ անհետաձգելի խնդիրներ լուծելու համար: Պահանջվում էր ջանքերի գերազույն լարում՝ կյանքի ռիսքը պահպանելու եւ տարածության ու ժամանակի մեջ նորովի կողմնորոշվելու համար: Այն, ինչ ընդհանուր էր բոլոր նորանկախ երկրներում, բազմապատիկ դժվարություններով էր դրսևորվում Հայաստանում՝ պայմանավորված երկրաշարժով, պատերազմով, շրջափակումով, անկենսունակ տնտեսությամբ, աշխարհաքաղաքական նոր իրողություններով:

Նման իրավիճակում առաջին պլան են մղվում ճգնաժամային կառավարման մոտեցումները (որն, ի դեպ, բնորոշ էր նաեւ Հա-

195 Գործնականում մեկ մարմնի ձեռքում էր կենտրոնացված քաղաքական եւ տնտեսական ոլորտներում կառավարման գործառնությունը, որի արդյունքում ձեւավորված գերկենտրոնացած կորպորատիվ համակարգն ինքնավերարտադրվում էր իշխանության շահի թելադրանքով՝ խորացնելով հակասությունն իշխանության եւ հանրության շահերի միջեւ: Պատահական չէ, որ գրականության մեջ այդ համակարգը հաճախ ընդգծվում է նաեւ որպես ընդամենական սոցիալիզմ (մասնավորապես տե՛ս Чиркин В.Е. Общечеловеческие ценности и современное государство // Государство и право, 2002, N2, էջ 5-13):

196 Միանգամայն արդարացի է Վ.Ս. Ներսեյանցը, նշելով, որ իրենց ամբողջ արտաքին տարվերաբնակումը հանդերձ, խորհրդային իրավական տարվերաբնակարգերը ներքնապես միասնական են «...իրավունքի, դրա օլլեկտիվ ընդունելու եւ իմաստի մացասման առումով» (Ներսեյանց Վ.Ս., Իրավագիտություն, Երեւան, 2002, էջ 220):

յաստանի Առաջին Հանրապետությանը՝ առաջադրելով երկակի խնդրի լուծում: Նախ. թույլ չտալ քառսի առաջացում եւ կազմակերպված ու կառավարելի ձեռով դուրս գալ այդ իրավիճակից՝ նվազագույնի հասցնելով կորուստները: Երկրորդ՝ հնարավոր կարճ ժամկետներում ճշտել առաջնահերթությունները, նախապատրաստել պետական մեքենան աշխատելու ֆունկցիոնալ կառավարման պայմաններում, ստեղծել հասարակական նոր հարաբերություններին բնորոշ օրենսդրական դաշտ ու կառավարման ինստիտուցիոնալ համակարգ:

Այս խնդիրների լուծումը եվրոպական նախկին համայնավար երկրների համար ուներ այն առանձնահատկությունը, որ, մի կողմից, ավելի հստակ էր անելիքը եւ պատկերացումն ապագայի նկատմամբ՝ հասարակական գիտակցությունից դեռեւս դուրս չէին մղվել այն արժեքները, որոնք պետք է վերականգնվեին, ու մեծ թիվ էին կազմում դրանք կրողները: Մյուս կողմից՝ կային ազգային-պետական ամբողջական համակարգ, համեմատաբար ինքնուրույն կառուցվածքի վրա խարսխված տնտեսություն, եվրոպական առաջադիմական արժեհամակարգերին ինտեգրվելու ավելի մեծ հնարավորություն, աշխարհաքաղաքական առավել բարենպաստ իրավիճակ:

ԽՍՀՄ հանրապետությունների համար ոչ միայն մեծ էր ինտեգրիայի գործոնը եւ տարիներով քողարկված ու առավել սրությամբ ի հայտ եկած հիմնահարցերի ազդեցությունը, այլեւ անհամեմատ դժվար էր ինքնուրույն գործելու հնարավորությունը: Գա պայմանավորված էր, մի կողմից, նրանով, որ տնտեսական կապերը եւ դրանց ներազդեցությունը քաղաքական գործընթացների համեմատությամբ ունեն հարաբերական անկախություն ու մեծ ինտեգրիա: Մյուս կողմից՝ առաջացել էր շահերի աններդաշնակություն նաեւ այն պատճառով, որ մինչեւ վերջ հստակ չէին անելիքները, նոր լուծումներն ու դրանց հասնելու ճանապարհները:

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունն իր առաջին քայլերն սկսեց ազգային-պետական իրավական համակարգն աւմուր ու կայուն հիմքերի վրա դնելու փորձով: Առաջին նման փաստաթուղթը 1990թ. օգոստոսի 23-ին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված՝ Հայաստանի անկախության մասին հռչակագիրն ազգային համագիրն էր: Հռչակագրի նախապատրաստման ու տարբեր նախագծերի համադրման համար ստեղծվեց հատուկ խորհրդարանական հանձնաժողով: Վերջինիս աշխատանքի բնույթը, ներկայացված տարբեր նախագծերի քննարկման ընթացքը շատ ընդհանրություններ ունեին հայ իրականության մեջ իրավիճակը սահմանադիր ժողովների հետ՝ առաջին հերթին հասարակական համաձայնության մթնոլորտի ապահովման առումով:<sup>197</sup> Պատահական չէր, որ Հռչակագիրն ընդունվեց մեծ խանդավառությամբ:

Բովանդակային առումով Անկախության հռչակագիրը հայ սահմանադրական մշակույթի պատմության մեջ որակապես նոր էջ բացեց: **Այն հիմնարար, հետեւողականորեն համակարգված, պատմատրամաբանական խոր ընդհանրացումներ բովանդակող, ազգային ինքնության առաջնահերթությունները հաշվի առնող, միջազգային սահմանադրաիրավական զարգացումների ընդհանուր տրամաբանությունից ելնող նորմերի ու սկզբունքների համակարգային ամբողջականություն է**, որը երբեք չի կորցնի իր թե՛ պատմական եւ թե՛ գործնական իրավական նշանակությունը:

Անհրաժեշտ ենք համարում առավել հանգամանորեն անդրադառնալ Հռչակագրի մի շարք կոնկրետ դրույթների: Այն առաջին հերթին հանդես եկավ որպես «Հայաստանի ժողովրդի միասնական կամքի» արտահայտություն: Անկախ պետականության հիմքում դնելով միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերն ու սկզբունքները, խնդիր ունենալով «ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը», հռչակվեց, որ «Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունն իրականացնում է անմիջականորեն եւ ներկայացուցչական մարմինների միջոցով՝ ՀՀ Սահմանադրության եւ օրենքների հիման վրա»:

197 Որպես առանձին նախագիծ ներկայացրած պատգամավոր, որպես Հռչակագրի նախապատրաստման հանձնաժողովի անդամ առանց վարանելու կարող եմ փաստել, որ Հայաստանի անկախության մասին հռչակագիրն ազգային համաձայնության աննախադեպ վկայություն է:

Սահմանադրաիրավական առումով բացառիկ կարեւորվում են քաղաքացիության կարգավիճակի, անխտրականության սկզբունքի, խոսքի, մամուլի, խղճի ազատության, քաղաքական ազատությունների, երկրի ինքնիշխանության, միջազգային իրավասուբյեկտության, տնտեսական, սոցիալական, մշակութային հարաբերությունների սահմանադրական հիմունքների եւ մի շարք այլ հիմնարար արժեքների վերաբերյալ հռչակագրային մոտեցումները: Դրանք սահմանադրական նոր զարգացումների համար սկզբունքային կողմնորոշիչներ դարձան: Հռչակագրով պարտավորվելով Հայաստանի Հանրապետությունում ապահովել «օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների տարանջատում», հիմք դրվեց որակապես նոր իրավական համակարգի, որը պետք է դառնար հռչակագրային նպատակների իրականացման երաշխիքը:

Անկախության հռչակագրին բնորոշ են ոչ միայն հավատարմությունն ազգային ակունքներին, այլեւ սկզբունքների ու նորմերի ներքին կուռ ամբողջականությունն ու փոխլրացումը, ներդաշնակությունն առաջադիմական իրավական լուծումներին ու սահմանադրական զարգացումների միջազգային միտումներին:

Հռչակագրային նորմերը, մինչեւ ՀՀ Սահմանադրության ընդունումը, իրենց հետագա որոշակիացումը գտան «Անկախ պետականության հիմնադրությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքում, որն ընդունվեց Գերագույն խորհրդի կողմից 1991թ. սեպտեմբերի 25-ին (ուժը կորցրել է ՀՀ Սահմանադրության 116 հոդվածի հիման վրա): Մույն սահմանադրական օրենքով, ամրագրելով ՀՀ սահմանադրական կարգը՝ որպես անկախ ժողովրդավարական պետություն, հասարակական հարաբերությունների հիմքում դրվեցին ժողովրդաիշխանության, իշխանությունների տարանջատման, մարդկանց իրավահավասարության, անխտրականության, իրավունքների ու ազատությունների ճանաչման ու ապահովման սկզբունքները: Ամրագրվեց նաեւ սահմանադրական այն կարեւոր սկզբունքը, որ իշխանության մարմինները կարող են իրականացնել միան օրենքով իրենց վերապահված լիազորություններ: Օրենքի հոդված 5-ը ամրագրեց, որ «Հայաստա-

նի Հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձը Հայաստանի Հանրապետության Նախագահն է, որը գլխավորում է ՀՀ գործադիր իշխանությունը եւ ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը երկրի ներսում եւ միջազգային հարաբերություններում»: Այս սահմանադրական օրենքը գործնականում պետական իշխանության նոր համակարգի ձեւավորման հիմքը դրեց եւ իրավական երաշխիք հանդիսացավ վերափոխելու խորհրդային օրենքներով ձեւավորված իշխանության միասնական բուրգը, որի գագաթին **Գերագույն խորհուրդն** էր, ու տարանջատելու օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունները:

Թե՛ Հայաստանի եւ թե՛ նորանկախ շատ երկրների համար հետագա տարիները, մինչեւ նոր սահմանադրությունների ընդունումը, դարձան հատվածական վերափոխումների եւ իրադրության որոշ կայունացման տարիներ: Զգալի չափով ամրապնդվեց վերափոխվող հասարակական հարաբերությունների օրենսդրական բազան, հիմնականում կազմավորվեցին պետական կառավարման ինստիտուտները, նոր որակ ստացավ տնտեսական անկախությունը՝ հատկապես սեփական դրամանիշի եւ ֆինանսաբանկային ինքնուրույն հարաբերությունների արմատավորման շնորհիվ, ձեւավորվեցին միջազգային գործուն կապեր, որոնք կողմնորոշեցին նաեւ տնտեսական բարեփոխումների բնույթը:

Այս փուլն ուներ նաեւ ներքին վտանգներ ու խութեր: Հայաստանի համար դա պայմանավորված չէր միայն դարաբաղյան պատերազմի ածանցյալ հետեւանքներով: Օրենսդրական բացերը, կառույցների անկատարությունը, կառավարման որոշ սխալներն ու մի շարք հարցերի անձեռնահաս լուծումները հասարակության մեջ պարարտ հող ստեղծեցին բացասական բազմաթիվ դրսեւորումների ու արժեհամակարգային ձեւախեղումների ի հայտ գալու ու խորանալու համար, որոնք շատ կարճ ժամանակամիջոցում խոր արմատներ ձգեցին:

1995թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը: Դրան նախորդել էին շուրջ չորս տարի տեւած բուռն քննարկում-



ները, որոնք վերաբերում էին թե՛ պետության կառավարման ձեւին, թե՛ իշխանությունների տարանջատմանն ու դրանց լիազորություններին եւ թե՛ սահմանադրական կարգի հիմունքներին ու մարդու իրավունքներին առնչվող մի շարք սկզբունքային հարցերի: Չնայած նոր Սահմանադրության շուրջ չհաջողվեց հասարակական համաձայնության այնպիսի մթնոլորտ ապահովել, ինչ Անկախության հռչակագրի պարագայում, ինչպես նաեւ հաղթահարել կամասահման իրավամտաժողովրդային խորհրդային ինտեգրացիան, այսուհանդերձ, կյանքը ցույց տվեց, որ ՀՀ Սահմանադրությունը վճռական դեր խաղաց երկրի հետագա կայուն զարգացումն ապահովելու եւ մի շարք ճգնաժամային իրավիճակներից սահմանադրական ելքեր գտնելու հարցերում:

Սահմանադրության նախաբանում ամրագրվեց. «Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները եւ համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, նվիրված հայրենիքի հզորացմանը եւ բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը»:

Միջազգային սահմանադրական պրակտիկան տարբեր մոտեցումներ է դրսևորում սահմանադրությունների նախաբանի իրավաբանական ուժի վերաբերյալ: Մեր համոզմունքն է, որ Սահմանադրության նախաբանում ամրագրված նորմ-նպատակները ելակետային են իրավակարգավորիչ նորմերի նկատմամբ եւ օժտված են Հիմնական օրենքին բնորոշ բարձրագույն իրավաբանական ուժով:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի Սահմանադրության՝ սահմանադրական կարգի հիմունքներում ներառված մի շարք դրույթներ: Դրանք, մասնավորապես, ամրագրում են, որ.

- Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդա-

վարական, սոցիալական, իրավական պետություն է (հոդված 1):

- Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին [...] (հոդված 2):
- Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ինչպես նաեւ հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ (հոդված 3):
- Պետությունն ապահովում է մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության եւ օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան (հոդված 4):
- Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա [...] (հոդված 5):
- Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքի գերակայությունը: Հանրապետության Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ եւ նրա նորմերը գործում են անմիջականորեն: Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքները, ինչպես նաեւ Սահմանադրությանը եւ օրենքներին հակասող ճանաչված այլ իրավական ակտերը իրավաբանական ուժ չունեն [...] (հոդված 6):
- Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում է բազմակուսակցությունը [...] (հոդված 7):
- Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում եւ պաշտպանվում է սեփականության իրավունքը [...]: Պետությունը երաշխավորում է սեփականության բոլոր ձեւերի ազատ զարգացումը եւ հավասար իրավական պաշտպանությունը, տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը (հոդված 8):
- Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքակա-

նությունը իրականացվում է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով (հոդված 9):

Մենք Սահմանադրության այս եւ մի շարք այլ դրույթների դեռեւս կանդրադառնանք հետագա շարադրանքում: Այստեղ ցանկանում ենք ուշադրություն հրավիրել հետեւյալ հանգամանքների վրա.

1. Սահմանադրագիտության միջազգային չափանիշներից ու մեր երկրի զարգացման խնդիրներից ու առաջնահերթություններից ելնելով մեծ նվաճում պետք է համարել բերված դրույթները՝ հատկապես կարեւորելով անփոփոխելի առաջին ու երկրորդ հոդվածներն ու 3 եւ 4 հոդվածների իրավափիլիսոփայությունը:
2. Երկրորդ աշխարհամարտից հետո Եվրոպական սահմանադրական զարգացումների անկյունաքարային արժեքը համարվում է այն, որ Արեւմտյան ու Արեւելյան Եվրոպայի երկրների մեծ մասը 50-ականներին ու 90-ականների վերափոխումների նոր ալիքի շրջանում սահմանադրական լուծումների հիմքում դրեցին այնպիսի կարեւոր սկզբունքներ, ինչպիսիք են.
  - մարդու արժանապատվությունն ու նրա իրավունքները բարձրագույն եւ անօտարելի արժեք են,
  - այդ իրավունքներն անմիջական գործող իրավունքներ են,
  - իրավունքների սահմանափակման գլխավոր չափանիշն այլոց իրավունքների երաշխավորումն է,
  - իշխանությունների տարանջատումն ու հավասարակշռումը պետք է երաշխավորի դիմամիկ ներդաշնակություն **գործառույթ-ինստիտուտ-իրավասություն** համակարգում,
  - երկրում սահմանադրականության ապահովման, սահմանադրական ժողովրդավարության հաստատման գլխավոր պայմանը Սահմանադրության գերակայության երաշխավորումն է:

Այս սկզբունքները ՀՀ Սահմանադրության մեջ անհրաժեշտ

հստակությամբ, խորությամբ ու հայեցակարգային հետետողականությամբ չամրագրվեցին:

3. Հետագա իրողությունները, մասնավորապես, վկայեցին, որ ժամանակին գերապատվությունը տալով պոզիտիվիստական իրավամտաժողովրդյանը, անհրաժեշտ սահմանադրական երաշխիքներ չեն ստեղծվել իրավունքի գերակայության երաշխավորման ու իշխանությունների տարանջատման սկզբունքի հետետողական իրացման համար:

Ուշագրավ է Լ. Ռեզնիչենկոյի դիտարկումն այն մասին, որ նորանկախ երկրներից շատերի համար բնորոշ էր նաեւ, այսպես կոչված, «նեգատիվ կոնստիտուցիոնալիզմի» դրսեւորումը, համաձայն որի Սահմանադրության ընդունման առաջնային խնդիրն էր բացասականի հաղթահարումը՝ բռնատիրության վերականգնման կանխումը, որի համար այդ երկրների սահմանադրություններում հիմնական ուշադրությունը դարձվում էր մարդու սահմանադրական իրավունքների հռչակմանը եւ դատական վերահսկողությանը, միաժամանակ երկրորդային նշանակություն տալով իշխանությունների իրական տարանջատման երաշխավորմանը: Էական առանձնահատկություններից է համարվում եւ այն, որ նորանկախ երկրներում սահմանադրական հիմնահարցերը չափազանց քաղաքականացվում էին: Դրանք, ի մասնավորի, հանգեցրին նրան, որ այդ երկրներում շատ սահմանադրական արժեքներ ձեւախեղված ընկալվեցին եւ որոշ առումով կուսակցության [կոմունիստական] դիկտատուրան փոխարինվեց մեծամասնության դիկտատուրայով, իսկ մարդը մնաց նույնքան իրավագուրկ:<sup>198</sup> Այս ամենը բնորոշ էին անցման շրջանի այն երկրներին, որտեղ դեռ առաջին քայլերն էին անում սահմանադրաիրավական արժեքների համակարգի հստակեցման, հասարակության քաղաքական կազմավորման մասին պատկերացումների որոշակիացման, սահմանադրական նոր դոկտրինաների ձեւավորման համար: Սակայն այս երեւույթները շարունակում են ունենալ նաեւ իներցիոն դրսեւորումներ:

198 Резниченко Л. ПРАВА ЧЕЛОВЕКА И КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО (Обзор материалов журнала “Конституционное право: восточноевропейское обозрение”), <http://www.hrights.ru/text/b9/Chapter4.htm>.

Սահմանադրական մշակույթի համակարգային ամբողջականության տեսանկյունից այնքան էլ կարելի չէ, թե պետությունը կառավարման ինչ ձև է ընտրել՝ նախագահական, կիսանախագահական, թե՛ խորհրդարանական: Դա քաղաքական ընտրություն է: Սակայն չափազանց կարելի է, որպեսզի ցանկացած ձեռի պարագայում հետետղականորեն իրացվեն սահմանադրական հիմնարար սկզբունքները, բացառվեն ներսահմանադրական հակասություններն ու փակուղային վիճակները, Սահմանադրությունը հանդես գա որպես դինամիկ օրգանական ամբողջականություն:

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական զարգացումները, թերեւս, դառնան առանձին ու հանգամանալի ուսումնասիրության առարկա: Այսուհանդերձ, լուրջ դասեր է անհրաժեշտ քաղել այն իրողությունից, որ թե՛ մեզանում էի թե՛ մի շարք այլ երկրների անցումային հասարակական համակարգերում տեղ գտան սահմանադրաիրավական որոշ ձեռախեղումներ, որոնք պայմանավորվեցին երեք հիմնական խումբ գործունեությունը:

1. իրավամտածողության եւ իրավակիրառական պրակտիկայի իներցիա,
2. սահմանադրաիրավական խեղված լուծումներ կամ թերացումներ,
3. առաջադիմական իրավական արժեքների մեխանիկական փոխառում կամ պատճենավորում՝ առանց դրանց իրացման անհրաժեշտ արժեքային համակարգի ու նախադրյալների ստեղծման եւ ազգային սահմանադրական մշակույթի հաշվառման, որն իրական կյանքում հանգեցնում է սահմանադրական հիմնական սկզբունքների տարաբնույթ ձեռախեղումների կամ գտնված լուծումները կտրվում են իրական կյանքից ու օժտված չեն լինում բավարար կենսունակությամբ: Նման պարագայում գործ ունենք ոչ թե ժողովրդավարության արմատավորման, այլ «ժողովրդավարական փորձարկումների (էքսպերիմենտի)» հետ, որի անհաջողությունն ի սկզբանե երաշխավորված է:

Ցավոք, անցումային հասարակություն ունեցող մի շարք երկրներում համակարգային փլուզումը դեռեւս մտայնության վերափոխման չի հանգեցրել: Հսկայական է մտածողության եւ աշխարհըմբռնման իներցիան, իրավական ասպարեզում շարունակում է տիրապետել ձեռախեղված պոզիտիվիզմը, որը հաճախ հանդես է գալիս լեգիտիմական ընդգծված դրսեւորումներով: Հայեցական մակարդակով կարգախոսի վերածելով իրավական պետության հասկացությունը, լրջորեն չի ընկալվում իրավունքի գերակայության երաշխավորման, իրավունքով իշխանության սահմանափակման, հասարակական հարաբերությունների սահմանադրականացման անհրաժեշտությունը: Իշխանության մասին պատկերացումները շարունակվում են մնալ ուժի ու ճնշում գործադրելու հնարավորության հարթությունում: Ժողովրդավարությունը դիտվում է որպես իշխանության բարեհաճ վերաբերմունք, մարդկանց՝ իշխանության կողմից թույլատրելի սահմաններում արտահայտվելու հնարավորություն: Սա ճանապարհ է ոչ թե դեպի վերափոխվող Եվրոպա, այլ միտված է միջնադարյան հետադիմական արժեքներին:<sup>199</sup> Եվրախորհրդի «ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 59-րդ լիագումար նիստում (17-19.06.2004թ.) Խորհրդարանական վեհաժողովի ներկայացուցիչը դիպուկ նկատեց, որ «...անցումային երկրներում ամենամեծ հիմնահարցն այն է, որ չեն կարողանում տարբերել «իրավունքի գերակայություն» եւ «օրենքի գերակայություն» հասկացությունները: Առանց իրավունքի գերակայության երաշխավորման, ցանկացած երկրում, թեկուզ ամենաժողովրդավարական սկզբունք-

199 Անցումային հասարակության համար Սավարար չէ միայն ժողովրդավարական ենթակառուցների ստեղծումը, որոնք իրենց հերթին հաճախ ձեռախեղված են կյանքի կոչվում: Առավել կարելի է քաղաքացիական անհրաժեշտ որակների արմատավորումը եւ «մենթալիտետի» վերափոխումը: Հակառակ պարագայում ժողովրդավարությունը կարելի արժեք, մարդկանց իրավունքների ու ազատությունների լիարժեք դրսեւորման նախադրյալ լինելուց կարող է իշխանության ձեռքին գենք ու միջոց դառնալ՝ ուղղված այդ իրավունքների ու ազատությունների ընդհատմանը (այս մասին, մասնավորապես, տե՛ս Ежи Мачкув. Демократия и авторитаризм в посткоммунистических трансформационных системах // Конституционное право: Восточноевропейское обозрение. 2003, N2, էջեր 2-7):

ներով ձեւավորված իշխանությունները տանելու են բռնապետության հաստատման»:

Դժվար է չհամաձայնել նման հարցադրմանը: Ավելացնենք, սակայն, որ միջազգային պրակտիկան վկայում է նաեւ ժողովրդավարության հաստատման երեք տարբեր ճանապարհների մասին. 1. էվոլյուցիոն զարգացում (որը որդեգրեց եվրոպական երկրների մեծ մասը), 2. անցում քառսի ու անիշխանության միջով (հետհամայնավարական տարածքի մի շարք երկրներում), 3. անցում՝ բռնապետության հաստատումով (դասական օրինակներ են Պորտուգալիան, Իսպանիան, Չիլի): Խնդիրն այն է, որ դրանցից յուրաքանչյուրն իր գինն ու ժամանակն է պահանջում: Միշտ անհամեմատ թանկ են վճարում 2-րդ եւ 3-րդ ուղին ընտրած երկրների ժողովուրդները՝ հաճախ չհասնելով բաղձալի արդյունքի: Այսօրվա Եվրոպան միարժեքորեն մերժում է այդ ճանապարհները: Հիմնական մոտեցումն այն է, որ ժողովրդավարության կարելի է հասնել միայն ու միայն իրավական հենքի վրա: Այնտեղ, ուր բռնադատվում է իրավունքը, ժողովրդավարական կարգախոսները լոկ միջոց են դառնում բռնատիրության հաստատման համար:

Անցումային հասարակարգերին բնորոշ է այն, որ խորհրդային իրավամտածողությունը հաճախ պարարտ հող է գտնում ինքնավերարտադրման համար: Դա մեծապես պայմանավորված է նրանով, թե ինչի է ձգտում իշխանությունը: Եթե նպատակն իրավունքի գերակայության հաստատումն է, ապա դյուրին է հաղթահարել իներցիան: Եթե խնդիրն իշխանության կամքի ուժային պարտադրումն է, ապա խորհրդային իրավական ինստիտուտներն այս հարցում անգերազանցելի են:

Իրավիճակի բարդությունը եւ առանձնահատկությունը կայանում է նաեւ նրանում, որ գործ ունենք ոչ միայն խոր արմատներ ունեցող իներցիայի հետ, այլեւ նրանում, որ համակարգային փլուզումն առաջ բերեց սեփականության վերաբաշխման անհրաժեշտություն, ինչով էլ պայմանավորված նոր երեւոյթներ ի հայտ եկան: Մի կողմից՝ մասնավոր սեփականության հաստատումն օբյեկտիվորեն առաջադրում է ժողովրդավարության ար-

մատավորման անհրաժեշտություն, մյուս կողմից՝ խորհրդային իրավակարգը, որը գլխավորապես ծառայում էր պետության եւ պետական սեփականության պաշտպանությանը, հիմնականում կորցրեց իր առարկան եւ իր հիմնական գծերով ու ինստիտուցիոնալ համակարգով պահպանվելով՝ դարձավ գեւք սեփականությունը վերաբաշխող իշխանության ձեռքին:<sup>200</sup> Նման վիճակը ժողովրդավարական զարգացումների ամենամեծ արգելակն է<sup>201</sup>: Դրա հաղթահարման առաջնահերթ պայմանը եվրոպական իրավական չափորոշիչներին հասու դառնալն է, այն բանի գիտակցումը, որ իրավունքն իշխանության մենաշնորհը չէ, այլ պատկանում է յուրաքանչյուր մարդու՝ անկախ նրանից, թե ինչ առնչություններ ունի, կամ՝ չունի, իշխանության հետ: «Ինչպես վկայում է քաղաքակրթության ամբողջ պատմությունը, - գրում է ակադեմիկոս Վ. Ներսեսյանցը, - մարդկանց ազատությունը կարելի է ճանաչել եւ արտահայտել միայն իրավական ձեռով, սոսկ որպես փաստացի տարբեր անհատների իրավունքի եւ պետության՝ ձեւականորեն հավասար սուբյեկտներ ճանաչելու միջոցով: Իրավունքը, որպես ձեւական հավասարության արտահայտություն, հասարակական հարաբերություններում ազատության եւ արդարության համընդհանուր հավասար չափն է: Մարդկանց հասարակական կյանքում, բացի իրավական ձեւից, չկա եւ սկզբունքորեն չի կարող լինել հավասարության, ազատության ու արդարության արտահայտության եւ կեցության որեւէ այլ ձեւ: **Իրավունքը մարդկության համաշխարհային պատմության մեջ ազատության մաքնմատիկան է...**»:<sup>202</sup> Եթե պետության քաղաքացիները հասարակական հարաբերություններում հանդես չեն գալիս որպես լիարժեք իրավու-

200 Տեղին է վերհիշել Արիստոտելի խորախորհուրդ ընդհանրացումը՝ օրենքը չի կարող լինել իրավունքի կարծնեւ իրավունք կամ ուժը ներկայացնել որպես իրավունքի աղբյուր:

201 Ինչպես իրավագիտուն Նշում է Ա. Սալմինը, ժամանակակից ժողովրդավարության իրական գոյության հիմնախնդիրը կայանում է հենց նրանում, թե ինչպես են հարավերակցվում պետական իշխանությունը, լյուրոկրատիան, քաղաքացիական հասարակությունը եւ քաղաքականությունը (տես Салмин А. Современная демократия. М., 1997. էջ 270):

202 Տես Ներսեսյանց Վ.Ս., Ցիվիլիզմի մանիֆեստը, Երևան, 2001, էջ 21:

մակ անհատներ, նրանք գործնականում իրավագուրկ են, ապա ազատական իրավանդությունների, իրավական պետության կամ իրավունքի գերակայության մասին խոսք լինել չի կարող, իսկ քաղաքացիական հասարակության մասին դատությունները կմնան որպես դատարկ կարգախոսներ:<sup>203</sup> Միանգամայն անհեռանկար է նաև, երբ շեշտը դրվում է ժողովրդավարության «ներմուծման» ճանապարհով իրավական հեղափոխություն իրականացնելու վրա՝ առանց վերջինիս համար անհրաժեշտ արժեքային համակարգի ու նախադրյալների ստեղծման: Դա կարող է հանգեցնել միայն անհաջող նմանակման:

Խնդիրը պետք է լուծվի ոչ միայն մտայնության կամ քաղաքական գիտակցության մակարդակում, այլև պետք է հաղթահարվեն իմացաբանական աղճատումները: Հետևաբար, իրավական, ժողովրդավարական պետության կայացման ամենակարճ ճանապարհը ոչ թե դարերի վրայից ցատկելու անպտուղ փորձն է կամ որոշակի արժեքներ ու սկզբունքներ հայեցական ընկալումներից ելնելով թոթային կարգախոսի ու առկա իրողությունների քողարկման միջոց դարձնելը, այլ **քաղաքացիական հասարակության եվրոպական արժեքները սեփական արժեքային համակարգի ու ազգային սահմանադրական մշակույթի շրջանակներում ճանաչելն ու հետետողականորեն, հաստատական հասարակության անդամների իմաստավորված սեփականությունը դարձնելը**: Սա նորանկախ պետության ծրագրանպատակային քաղաքականության ու գործունեության հիմնական գերակայությունը պետք է լինի: Սահմանադրաիրավական լուծումները, իրենց հերթին, կարող են կառուցվել միայն այդ արժեքների վրա՝ իրենց մեջ պարունակելով նաև հասարակությանը որոշակի ուղղությամբ համակարգային զարգացում հաղորդելու ու հասարակության կողմից ընկալված լինելու ներքին լիցք:

Միջազգային պրակտիկան վկայում է, որ ցանկացած երկրում

լուրջ խնդիրներ են առաջանում, երբ շեշտը դրվում է սահմանադրական լուծումների մեխանիկական փոխառման վրա: Յանկանում ենք կրկին շեշտել, որ Սահմանադրությունն արժեքային որոշակի համակարգ է, որը տվյալ սոցիալական հանրությանն է բնորոշ՝ իր կոնկրետ առանձնահատկությունների, առաջադրված խնդիրների, դրանց լուծման մոտեցումների ու ձևերի առումով: Սա չի նշանակում բացարձակացումն է կադապարում: Անհնարին է ընդհանուր սկզբունքների, միջազգային փորձի, միջազգային իրավունքի պահանջների, միջազգային արդարադատական նախադեպային իրավունքի եւ ընդհանրապես միջազգային սահմանադրական մշակույթի անտեսումը: Սակայն խնդիրը դրանք մեխանիկորեն պատճենահանելու փոխարեն սեփական արժեքային համակարգին ներդաշնակելն ու համակարգային առաջադիմությունը երաշխավորելն է: Ինչպես իրավագիտորեն նշում է պրոֆ. Վ. Օյատինսկին, փոխառումն անխուսափելի է, քանի որ ընդհանուր սահմանադրական սկզբունքներ ու մեխանիզմներ կան, որոնք վաղուց հայտնի են, ընդհանուր ճանաչում են գտել եւ հանդես են գալիս որպես, այսպես կոչված, միջազգային չափորոշիչներ կամ միջազգային իրավունքի նորմեր ու սկզբունքներ:<sup>204</sup> Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության նախագահ, պրոֆեսոր Չերիլ Սանդերսը, ընդգծելով տարբեր երկրների սահմանադրությունների լեզվական ու բովանդակային նմանությունները, շեշտում է, որ դրանց ստեղծման պատմության ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք միմյանցից են ածանցված՝ բացառությամբ, թերեւս, նախատիպ հանդիսացող այնպիսի սահմանադրական համակարգերի, ինչպիսիք են Միացյալ Թագավորության, ԱՄՆ-ի եւ ֆրանսիական համակարգերը:<sup>205</sup> Բնականաբար, փոխառվում են առաջին հերթին սահմանադրական հասկացություններն ու ընդհանուր սկզբունքները: Այսուհանդերձ, գերխնդիրն այն է, որ դրանք պետք է

203 Ուշադրության են արժանի ռուսական երկու հեղինակավոր ամսագրերի կողմից այս հիմնահարցերով կազմակերպված կլոր սեղանի նյութերը (տե՛ս Гражданское общество, правовое государство и право (Круглый стол| журналов Государство и право| и Вопросы философии|) // Государство и право, 2002, N1, էջ 12-50):

204 St' u Oсыатыньский В., Парадоксы конституционного заимствования // Сравнительное конституционное обозрение. 2004, N 3, էջ 53:  
205 Ch. A. Saunders Constitutional Culture in Transition // Constitotional Cultures / Ed. by M. Wyrzykowski. Warsaw: ISP, 2000. P. 37.

ներդաշնակ լինեն այն հասարակության արժեքային համակարգին, որի համար դառնում են սահմանադրական սկզբունքներ ու նորմեր: Հակառակ պարագայում դրանք թղթի էջերում էլ կմնան եւ կյանք չեն մտնի ու չեն դառնա ապրող իրողություն: Ավելին, հակադրվելով իրականության արժեքային համակարգին, դրանք առաջադիմական վերափոխումների խթանից կարող են վերաճել խոր սոցիալական հակասությունների խթանիչի կամ իշխանության ձեռքին պարտադրանքի գործիքի:

Առավել հաճախ սահմանադրական հիմնական սկզբունքներն ու դրույթները փոխառվում են աղճատված ձեռով՝ հարմարեցնելով որոշ պայմանների ու պատկերացումների: Առաջին պլանում պետք է լինի սահմանադրական հիմնական սկզբունքների ճանաչումն ու ընկալումը միջազգային իրավական չափանիշների համատեքստում, եւ ապա՝ շեշտը դրվի այն մոտեցումների խորությամբ ուսումնասիրման վրա, որոնց օգնությամբ տարբեր երկրներ կարողացել են լուծել իրենց առջեւ ծառայած կոնկրետ սահմանադրական խնդիրներն ու ապահովել երկրի կայուն ժողովրդավարական զարգացումը: Այս առումով չափազանց կարեւոր է տարբեր երկրների սահմանադրական փոփոխությունների միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը: Օրինակ, Ավստրիայի, ԱՄՆ-ի, Բելգիայի, Գերմանիայի, Դանիայի, Իսպանիայի, Իտալիայի, Հունաստանի, Պորտուգալիայի, Ֆրանսիայի, Ֆինլանդիայի, Սլովակիայի եւ մի շարք այլ երկրների վերջին տասնամյակների սահմանադրական փոփոխությունների ու սահմանադրական օրենքների, ինչպես նաեւ Արեւելյան Եվրոպայի ու նախկին ԽՍՀՄ մի շարք երկրների (Լեհաստան, Սլովենիա, Չեխիա, Բուլղարիա, Ռուսաստանի Դաշնություն, Լիտվա, Էստոնիա, Վրաստան, Գրոզստան եւ այլն) սահմանադրությունների ուսումնասիրությունից հետեւում է, որ սահմանադրական մշակույթի ձեւավորման ու զարգացման տեսանկյունից առկա են մի շարք կայուն ու ընդհանուր միտումներ.

1. հասարակական-պետական հարաբերությունների առանցքն է դառնում մարդը՝ իր անօտարելի արժանապատվությամբ եւ իրավունքներով: Վերջիններս սահմանադրո-

րեն ամրագրվում ու ճանաչվում են որպես անմիջական գործող իրավունքներ, դառնում են ժողովրդի ու պետության կողմից իշխանության իրականացման սահմանափակիչներ, ստանում ներպետական ու միջազգային պաշտպանության հուսալի երաշխիքներ, հանդես գալիս որպես տվյալ հասարակական համակարգի գնահատման հիմնական չափանիշներ: Մարդկային հանրության արժեքների համակարգում **տիրապետող է դառնում իրավունքի գերակայության սկզբունքը**: Քաղաքացիական հասարակության կայացման գլխավոր չափանիշ է դառնում ոչ թե իշխանությամբ՝ իրավունքի, այլ իրավունքով իշխանության սահմանափակումը,

2. ժողովրդավարական արժեքները հիմնավորապես դառնում են սահմանադրական կարգի հենքը եւ մարդկանց ազատությունների երաշխիքը, նկատվում է համընդհանուր միտում կենտրոնական իշխանության աստիճանական սահմանափակման, ուժի (քաղաքական, վարչական, տնտեսական) ապակենտրոնացման եւ ինքնակառավարման հնարավորությունների ընդլայնման ու երաշխիքների ամրապնդման հարցերում,
3. իշխանությունների տարանջատման սկզբունքի հետետողական իրացումը, դրանց գործառնական հավասարակշռումը, խելամիտ զսպումն ու հակակշռումը դառնում են համընդհանուր պահանջ: Ներկայացուցչական ժողովրդավարության զարգացումներն առանձնահատուկ կարեւորում են հասարակության քաղաքական կառուցակարգերի կատարելագործումն ու մարդկանց քաղաքական իրավունքների պաշտպանությունը: Հատուկ ուշադրության առարկա է դառնում դատական իշխանության անկախության, համակարգային լիարժեքության, ամբողջականության, կենսունակության ապահովման խնդիրը: Մեծապես կարեւորվում է տեղական ինքնակառավարումը՝ որպես հասարակության ժողովրդավարական ինքնավարության առանձնահատուկ ձեւ,

4. ամրապնդվում են ներսահմանադրական կայունության երաշխիքները, արմատավորվում է մարդու իրավունքների սահմանադրական երաշխիքների ու իշխանությունների լիազորությունների սահմանադրական հաշվեկշռի խախտումների բացահայտման, գնահատման եւ վերականգնման իրավական կուռ համակարգ, սահմանադրական կարգն օժտվում է առավել կենսունակ «**իմունային համակարգով**», մարդու իրավունքների մեջ առանձնահատուկ կարեւորություն է ստանում նրա սահմանադրական արդարադատության իրավունքը,
5. հասարակական օրգանիզմի «իմունային բավարարության» ապահովման խնդիրների լուծումները նկատելիորեն փնտրվում են սահմանադրական դաշտում եւ, իր հերթին, ազգային սահմանադրությունների յուրաքանչյուր փոփոխություն միջազգային լայն արձագանք է ստանում,
6. գնալով է՛լ ավելի են կարեւորվում միջազգային իրավունքի տեղն ու դերն ազգային իրավական համակարգերում: Նկատելի են սահմանադրական հիմնական հասկացությունների նույնականացման միտումներ: Ներդաշնակվում են մոտեցումներն իշխանությունների տարանջատման եւ մարդու իրավունքների սահմանափակումների չափանիշների ընտրության հարցերում: Միաժամանակ, փնտրվում են ազգային առանձնահատկությունների եւ վերազգային մոտեցումների «հաշտեցման» եզրեր:

Նշված ընդհանուր միտումների կողքին մեծապես կարեւորվում են նաեւ իշխանության թեւերի գործառույթներն իրականացնող ինստիտուտների զարգացման, դրանց գործառնական դերի հստակեցման եւ անհրաժեշտ ու բավարար լիազորություններով օժտելու հարցերը: Մյուս կողմից, իշխանությունների գործակցությունն առավել մեծ չափով է խարսխվում համագործակցության սկզբունքի եւ դիմամիկ հավասարակշռությունն ապահովող լուծումների վրա:

Հաշվի առնելով անցումային հասարակարգերում կայուն իշխանության բացառիկ դերը, կարելի է միարժեք ընդունել, որ նշ-

ված ընդհանուր միտումները չափազանց այժմեական են անցումային երկրների սահմանադրական բարեփոխումների հայեցակարգային մոտեցումների եւ Սահմանադրության գերակայության երաշխավորման նախադրյալների ստեղծման առումով: Խնդիրը, սակայն, կայանում է նրանում, որ այդ լուծումները պետք է ներդաշնակվեն տվյալ կոնկրետ հասարակության արժեքային համակարգին ու դառնան հասարակական համաձայնության, այլ ոչ թե հասարակության հանդեպ կիրառվող պարտադրանքի արգասիք:

Այդ խնդիրն արդյունավետ լուծում կարող է ստանալ միայն այն դեպքում, **եթե հասարակական համաձայնությամբ հստակեցված են երկրի զարգացման առաջնահերթությունները, դրանց հիմքում դրվող արժեքների համակարգը, երբ որոշակիացված են հայեցակարգային մոտեցումներն այդ առաջնահերթություններից բխող ծրագրերի հիման վրա հանրային կյանքի զարգացումն ապահովելու համար:** Սա առանձնապես անհրաժեշտ է անցումային հասարակական համակարգերին, որտեղ գերակայող են անորոշության գործոնը եւ արժեհամակարգային շփոթը: Նման պարագան առավել եւս պահանջում է չափազանց լուրջ մոտեցում Սահմանադրության նորմ-նպատակներին ու նորմ-սկզբունքներին: Դրանք սահմանադրականության միջազգային ձեռքբերումներին համահունչ լինելուց զատ **պետք է ծրագրանպատակային բնույթ հաղորդեն ողջ իրավական համակարգի ձեւավորմանն ու զարգացմանը, հետեւողականորեն իրացվեն նյութական իրավունքի նորմերում, դառնան իրավական պետության ու քաղաքացիական հասարակության կայացման հստակ ուղենիշներ:** Բոլորովին պատահական չէ, երբ շատ երկրներում Սահմանադրության առաջին գլուխը կամ բաժինն անվանվում է «Սահմանադրական կարգի հիմունքներ»: Այստեղ են ամրագրվում այն հիմնարար սկզբունքները, որոնք երկրի սահմանադրական կարգի հիմքն են կազմում եւ ելակետային են մնացած բոլոր բաժինների ու ցանկացած բնույթի իրավահարաբերությունների կանոնակարգման համար: Եթե անգամ ի հայտ են գալիս ներսահմանադրական բնույթի հակասություններ կամ ան-

համապատասխանություններ, անտարակույս, գերակայող են Սահմանադրության նորմ-սկզբունքները: Այս հանգամանքը հստակ ամրագրվում է նաև շատ երկրների սահմանադրություններում: Օրինակ, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 16 հոդվածը միանշանակ սահմանում է, որ Սահմանադրության որեւէ այլ դրույթ չի կարող հակասել Ռուսաստանի Դաշնության սահմանադրական կարգի հիմունքներին: Այս հանգամանքին հատուկ ուշադրություն է դարձվում նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 55 հոդվածում, որտեղ նախատեսվում է, որ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս սահմանադրական դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հաշվի առնի նաև մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց թույլատրելի սահմանափակումների շրջանակները եւ հիմքերը, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանությունների տարանջատման սկզբունքը, պետական մարմինների եւ պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները, Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը:

### 3.3. ԻՐԱՎԱԿԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՄԵՐՕՐՅԱ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Սահմանադրական զարգացումների եւ սահմանադրականության հաստատման առանցքային խնդիրներից է Հիմնական օրենքում ամրագրված հիմնարար սկզբունքների արժեհամակարգային ճիշտ ընկալումը, մեկնաբանումը եւ հետետղական իրացումը հասարակական պրակտիկայում: Առաջին հերթին խոսքը վերաբերում է պետության ժողովրդավարական, իրավական, սոցիալական բնույթին, ժողովրդաիշխանությանը, իրավունքի գերակայության ու իշխանությունների տարանջատման սկզբունքներին, որոնք ներկայումս ելակետային նշանակություն ունեն հասարակական հարաբերությունների սահմանադրորեն կանոնակարգման համար: Սկզբունքային նշանակություն է ստանում ամենից առաջ բերված հասկացությունների սահմանադրաիրավական այնպիսի ընկալումն ու մեկնաբանությունը, որոնք բխում են միջազգային սահմանադրական զարգացումների արդի տրամաբանությունից ու դրան համարժեք նյութականանում են Սահմանադրության ու օրենսդրության կոնկրետ նորմերում:

Առանձնահատուկ կարեւորություն տալով սահմանադրությունների հասկացութային ապարատին, ցանկանում ենք նախ ընդգծել, որ ամեն մի հասկացության փիլիսոփայական իմաստն այն է, որ արտացոլում է տվյալ երեւույթի (ուսումնասիրման առարկայի) այն հատկությունները, որոնցից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ միասին վերցրած՝ բավարար, որպեսզի տվյալ երեւույթը (առարկան)՝ որպես որակական որոշակի ամբողջականություն, տարբերակվի, ճանաչվի: Կատեգորիան հասկացության ամենաբարձր աստիճանի ընդհանրացումն է, տվյալ երեւույթի ամբողջական բնութագրման ամենալայն ու ծավալուն վերացարկումը: Մեր ուսումնասիրման առարկայի առումով այն արտահայտում է օբյեկտիվորեն գոյություն ունեցող հարաբերությունների ընդհանրական էությունը, որակը, բնույթը:



Անկախ մեր ճանաչողության աստիճանից, այդ հարաբերությունները, անհրաժեշտ նախադրյալների առկայության պարագաներում, կան կամ առաջանում ու գործում են: Որքանով ենք դրանք ճանաչում, մոդելավորում ու տալիս կանոնակարգված ձեւակերպում, պարունակում է այն հարցի պատասխանը, թե ինչպիսին է մեր ճանաչողությունը, գործելակերպի ազատությունը եւ օբյեկտիվ գործընթացների վրա ներազդելու հնարավորությունը: Դանաչողության եւ հարաբերությունների կարգավորման տվյալ աստիճանից ելնելով, այն կարող է հասարակության կողմից ընդունվել որպես վարքագծի պարտադիր կանոն:<sup>206</sup> Այլ կերպ, իրավանորմը հասարակական հարաբերությունների կարգավորված, որոշակիորեն սահմանված վիճակի բնորոշումն է: Բայց, քանի որ այդ հարաբերությունները գոյություն ունեն դինամիկայի մեջ, իրավանորմը չի կարող հանդես գալ միայն որպես փաստագրում, այն արտահայտում է ճանաչողության, մոտեցման կերպ կամ սկզբունք, արտահայտում է շարժում կամ նպատակ, արձանագրում է տարափոփոխ իրավիճակում վարքագծի բնույթ, որին համապատասխան դրսեւորվում են սահմանադրական մշակույթի որակները:

Արդի սահմանադրական մշակույթի համակարգային վերլուծության համար անկյունաքարային նշանակություն ունեն պատկերացումներն առաջին հերթին սահմանադրական առանցքային հասկացությունների մասին: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

**«Ժողովրդավարություն» սահմանադրական հասկացությունը՝** որպես հասարակական հարաբերությունների բնութագրիչ եւ որպես կառավարման կերպ, ընկալվում եւ մեկնաբանվում է միանգամայն տարբեր ձեւերով ու հաճախ՝ ընդհուպ փոխակերպվում է պարզ ամբոխավարության ու նաեւ՝ ամենաթողության (խնդիրը ոչ միայն էության ըմբռնումը, այլեւ չափի ընկալումն է):

Ժողովրդավարությունը քաղաքակրթության մեծագույն նվա-

<sup>206</sup> Այստեղ նկատի չունենք ավանդույթները կամ վարքագծի լարոյական նորմերը: Խոսքը վերաբերում է իրավահարավերությունների հարթությանը:

ճումներից է, վկայում է այնպիսի քաղաքացիական հասարակության ձեւավորման մասին, որտեղ ամեն մի անհատ՝ որպես բանական էակ, որպես սոցիալական սուբյեկտ, որպես հասարակության իրավահավասար անդամ, արժեք է ստանում,<sup>207</sup> որտեղ հարաբերությունները հստակեցված ու կանոնակարգված են՝ սահմանված են կարգն ու այն պահպանելու կանոնները, մարդու քաղաքացիական ազատության ու ինքնավարության շրջանակները:

Այդպիսին է դառնում այն պետությունը, որի պետական կառավարման ձեւը, կառուցվածքը եւ գործունեությունը համապատասխանում են ժողովրդի կամքին, ինչպես նաեւ մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների հանրաճանաչ նորմերին, որտեղ իշխանության կրողը, իրականացնողն ու վերահսկողը ժողովուրդն է՝ ի դեմս նրա հավաքական կամքի ու ինքնակառավարման իրավունքի, որն իրականացվում է հասարակության անդամների իրավահավասարության սկզբունքի հիման վրա: Դա պետք է ամրագրված լինի Սահմանադրությամբ եւ երաշխավորված օրենքներով ու անհրաժեշտ կառուցակարգային համակարգերով:

Առանցքային նշանակություն ունի այն, որ ժողովրդի կողմից իշխանությունն իրականացվում է անընդհատության սկզբունքի հիման վրա, անմիջական ժողովրդավարության հիման վրա ու ներկայացուցչական մարմինների գործունեության վերահսկողության ու հետադարձ կապի պայմաններում:

<sup>207</sup> Տեղին է հիշել, որ ներկայումս առաջադիմական ժողովրդավարական հասարակական հարավերություններ ունեցող ու քաղաքակրթության մեծագույն նվաճումների հասած առանձին երկրներում, մասնավորապես, Ճապոնիայում, մինչեւ 16-7-րդ. դարերը մարդկային իրավունքներից օգտվում կամ սոցիալական արժեք էին միայն որոշ ընտրյալներ: Մարդկանց զգալի մասը նույնիսկ անուն ունենալու իրավունք չունեին, այլ կոչվում, ճանաչվում էր իր գլխավորների ընտրյալով, իր մասնագիտությամբ: Չնայած դրան, դեռեւս Պլատոնը գտնում էր, որ պետությունը չպետք է կառուցվի այնպես, որպեսզի միայն ոմանք երջանիկ լինեն, այլ այնպես, որ յուրաքանչյուրը միասին երջանիկ լինեն (Πλατων. Γουδարπство /Содр. соч., т. 3, М. 1994, էջ 189): Բացառիկ կարեւորություն ունի այն հանգամանքը, որ Պլատոնի եւ, առավել եւս, հետագայում Արիստոտելի կողմից պետությունը չէր տարանջատվում հասարակությունից, այլ դիտարկվում էր անբաժանելի ամբողջության մեջ:

Այդպիսի պետության հիմնական բնութագրիչներն են. անմիջական ժողովրդավարության երաշխավորումը, իրական ներկայացուցչական ժողովրդավարությունը (ժողովրդի կողմից ընտրովի ինստիտուտների միջոցով իշխանության իրականացման օրինականությունը, վերահսկելիությունն ու հետադարձ կապի ապահովման իրական վիճակը), ժողովրդի կողմից իշխանության իրականացման անընդհատության երաշխավորվածությունը, ինչպես նաև մարդու (որպես սոցիալական արժեք) եւ քաղաքացու (որպես տվյալ հասարակական համակարգի իրավասուբյեկտ) իրավունքների երաշխավորված պաշտպանվածությունը: Ասվածից հետեւում է, որ ժողովրդավարական կարող է համարվել այն պետությունը, ուր հասարակությունը կառուցված է կամ կառուցվում է իրավական օրենքներով կարգավորված փոխհարաբերությունների վրա, որտեղ երաշխավորված են անհատի բնականոն ինքնաարտահայտման ու ինքնավարության շրջանակները եւ, առանց որեւէ ընտրանքի, յուրաքանչյուր անհատ՝ որպես սոցիալական սուբյեկտ, հասարակական արժեք է, ուր մարդկանց, նրանց խմբերի եւ ողջ հասարակության պետականորեն ներդաշնակված շահերն են ընկած հասարակական առաջընթացի հիմքում: Տվյալ հասարակության մեջ մարդու իրավունքներն ու ազատությունները ենթակա են սահմանափակման միայն այնտեղ ու այն չափով, որտեղ եւ որչափով դա անհրաժեշտ է այլոց իրավունքների ու ազատությունների երաշխավորման համար:

Նման հասարակական համակարգն անխուսափելիորեն պետք է լինի իրավական եւ ժողովրդավարական արժեքներն իրավական պաշտպանվածության երաշխիքներ պետք է ունենան:

Իրավական է բնորոշվում այն պետությունը, որի ամբողջ գործունեությունը խարսխված է իրավունքի վրա, եւ որի գլխավոր նպատակը մարդու եւ քաղաքացու իրավունքների ապահովումն ու երաշխավորված պաշտպանությունն է:

Ընդհանրապես **իրավական պետություն** հասկացությունը 18-րդ դարի վերջի եւ 19-րդ դարի սկզբի ծնունդ է: Սակայն գաղա-

փարը գոյություն է ունեցել շատ ավելի վաղ:<sup>208</sup>

Իրավական պետությունն ամենից առաջ ենթադրում է հասարակական հարաբերությունների որոշակի իրավական կարգավորվածություն եւ դրանց գործադրման համակարգերի հուսալի ու անխափան աշխատանք: Միայն այդ պարագայում իրավունքի սուբյեկտները կարող են լինել ազատ: Միայն օբյեկտիվ հասարակական հարաբերությունների ճանաչումը, իրավական կարգավորումը եւ դրա իմացությունն է մարդուն ազատ գործելու հնարավորություն ու նախադրյալներ ընձեռում: **Իրավական պետության հիմնական սկզբունքն էլ հենց մարդկանց սուբյեկտիվ իրավունքների ու դրանց պետականորեն իրացման օբյեկտիվ նախադրյալների ներդաշնակումն է՝ մարդկանց ազատությունների ու իշխանության սահմանների հստակեցումը:**

Իրավական պետության բնորոշ գծերից է նաև այն, որ պետությունը պատասխանատու պետք է լինի պաշտոնատար անձանց գործողությունների համար, պետք է ստեղծվի պատասխանատվության ու նաև իրավունքների իրականացման վերահսկման երաշխավորված համակարգ:

Պետության թե՛ ժողովրդավարական, թե՛ իրավական եւ թե՛ սոցիալական գործառույթի բնութագրումը չի կարող պարփակվել որեւէ նորմի շրջանակներում կամ դիտարկվել որպես ինքնուրույն, անջատ ձեւով արտահայտվող որակ: Այդ որակները, որպես հիմնարար ու սկզբունքային, պետք է ներծծված լինեն հասարակական հարաբերությունների կարգավորման յուրաքանչյուր բջջի մեջ, արտացոլվեն պետության կողմից ձեռնարկված ամեն մի քայլում, դառնան հասարակության յուրաքանչյուր անդամի ապրելակերպի անքակտելի բաղադրիչը: Դա պետք է դառնա ազգային-պետական մտածելակերպ ու գործելակերպ: Այլ կերպ՝ դրանք իրենց արտացոլումը պետք է գտնեն նաև Սահմանադրության յուրաքանչյուր նորմի եւ դրա գործադրման մեխանիզմների մեջ:

208 Սահմանադրորեն իշխանությունների տարանջատման սկզբունքը որդեգրած գրեթե Սուրբ երկրներում ուղղակի կամ անուղղակի ձեւով հիմնական օրենքը սահմանում է պետության իրավական ընդունելությունը:

Իրավական պետության համար որպես պարտադիր բնութագրիչներ են. իշխանությունների տարանջատումը, կառավարման օրինականությունն ու իրավունքի գերակայությունը, դատարանի անկախությունը, մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորվածությունը, սահմանադրական վերահսկողության ամբողջական եւ գործուն համակարգի առկայությունը եւ այլն:

Սահմանադրորեն իրավական պետության հռչակումն ամենից առաջ պետության բնույթի եւ հասարակական հարաբերությունների յուրահատկության վկայությունն է, դա պետության կազմակերպական առանձնահատկության արտահայտությունն է, հաստատումն այն բանի, որ տվյալ հասարակության մեջ փոխհարաբերությունների հիմքում դրվում են օրենքն ու իրավունքը: Նման պետության համար խնդիր է առաջադրվում՝ այդ սկզբունքին ծառայեցնել պետության ու հասարակության սոցիալական վարքագիծը, անհատի համար հստակեցնել քաղաքացիական հասարակության վարքի կանոններն ու իր ազատության շրջանակները, երաշխավորել այդ ազատությունը:

Անվիճելի է, որ ցանկացած երկրի Սահմանադրություն ամենից առաջ դիտվում է որպես համակեցության կանոնների շուրջ ձեռք բերված հասարակական համաձայնություն: Այն ցանկության, մոտեցման ձեւի ու եղանակի, նպատակների, սկզբունքների, որոշակի ընդհանրացումների հաստատագրման ամբողջություն է: Սահմանադրությունը յուրաքանչյուր երկրի համար դառնում է օրինաստեղծման աղբյուր, այնտեղ ամրագրված սկզբունքները սոսկ փաստի արձանագրում չեն, այլ՝ գործելակերպի հիմնական կանոններ: Այդ կանոնները վերաբերում են ոչ միայն իշխանություններին, այլ նաեւ պետությունը ներկայացնող յուրաքանչյուր իրավասուբյեկտի՝ կլինի անհատ, քաղաքացի, թե դրանց տարաբնույթ համակցություն, դառնալով նրանց հասարակական դիմագիծը, ինքնաարտահայտման կերպն ու բովանդակությունը:

Իրավական պետության մեջ սոցիալական հանրությունն ստանում է որոշակի կանոնակարգված դիմագիծ, որը բնորոշվում է որպես հասարակական կարգ, իսկ անհատը դառնում է ի-

րավունքի սուբյեկտ, նրա հարաբերությունները հասարակության մյուս անդամների հետ որոշակիորեն կարգավորված իրավահարաբերությունների բնույթ են ստանում: Նման հասարակությունն անխուսափելիորեն պետք է ունենա նաեւ սահմանադրորեն կարգավորված իրավահարաբերությունների վերահսկման անընդհատությունն ապահովող ինստիտուցիոնալ համակարգ, որը հասարակական օրգանիզմի յուրատեսակ իմունոհամակարգի դեր է կատարում:

«**Սոցիալական պետություն**» հասկացությունը XIX դարի վերջի և XX դարի սկզբի ծնունդ է: Այն վկայում է պետության նոր որակի առաջացման մասին, համաձայն որի պետությունը պարտավորություն է ստանձնում հոգ տանել իր քաղաքացիների սոցիալական պաշտպանվածության համար: Նման որակը տիպական չէ ծայրահեղ լիբերալ իրավական պետությանը, որում առաջնայնությունը տրվում է արտադրությանն ու շուկայական ազատությանը: Մակայն ասվածից չի բխում, որ լիբերալ իրավական պետության մեջ սոցիալական հարցեր չեն առաջադրվում ու պետականորեն լուծվում: Միայն է նման հակաթեզի առաջադրումը: Հարցն այն է, որ պետության սոցիալական բնույթի սահմանադրորեն ամրագրումը հասարակական ողջ համակարգին ծրագրավորված գործելակերպի այլ բովանդակություն է հաղորդում:<sup>209</sup>

Շատ կարեւոր է **սոցիալական** տերմինի բովանդակային հստակ մեկնաբանումը: Այն օգտագործվում է միանգամայն տարբեր հասկացությունների հետ զուգորդված (սոցիալական միջա-

209 Չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ երկրորդ աշխարհամարտից հետո ողջ մարդկությունն ապրեց խորքային սոցիալական վերափոխումների շրջան՝ պայմանավորված ոչ միայն ֆաշիզմի տապալումով, այլեւ գաղութատիրության փլուզմամբ՝ եւ մարդկային համակեցության մասին նոր արժեհամակարգերի ձեւավորմամբ: Նման պարագաներում «սոցիալական պետություն» հասկացությունը պետք է դիտարկել ոչ թե լուկ որպես որոշ սոցիալական խնդիրների լուծման պարզ պարտականությունների ստանձնում, այլ որպես հասարակական հարավերությունների էպպես նոր որակ, որի առանցքը մարդկային արժանապատվության ճանաչումն է՝ եւ դրա նկատմամբ սահմանադրորեն պետական նոր մոտեցման ապահովումը:

վայր, սոցիալական կառուցվածք, սոցիալական հոգեբանություն, սոցիալական խնդիր եւ այլն): Գործնական հարաբերություններում մի դեպքում այն ընկալվում է որպես մարդկանց սպասարկման հետ առնչվող որոշակի ոլորտ (կրթություն, առողջապահություն, գիտություն, սպորտ, մշակույթ եւ այլն), մյուս դեպքում նկատի է առնվում որպես հասարակական խումբ կամ շերտ, երրորդ դեպքում՝ ընդհանրացնելով հասարակականի հետ, նկատի է առնվում որպես մարդկային հանրություն՝ միավորված ընդհանուր շահերով, արժեհամակարգերով, կեցության կանոններով, ընդհանուր նպատակներով եւ այլն:

Բոլոր դեպքերում ընդհանուրն այն է, որ շեշտվում են անհատ-խումբ-հասարակություն փոխհարաբերությունների տարբեր կողմերն ու շահերի խաչաձեւման տարբեր հարթությունները, ընդգծվում է այն հանգամանքը, որ խոսքը վերաբերում է բանական սուբյեկտներից կազմված հասարակության ու նրա անդամների միջեւ եղած հարաբերություններին:<sup>210</sup>

Ելնելով **սոցիալական** տերմինի տարբեր մեկնաբանություններից, շատ հաճախ **սոցիալական պետություն** ասելով հասկացվում է այն պետությունը, որը պատասխանատվություն է ստանձնում հասարակության գոյության համար (տվյալ դեպքում սոցիալականը նկատի է առնվում որպես հասարակական):<sup>211</sup> Մակայն հիմնական մոտեցումն այն է, որ սոցիալական պետություն ասելով պետք է հասկանալ մարդկանց համակեցության մի այնպիսի համակարգ, որտեղ առկա են փոխհամաձայնեցված մարդկային հարաբերություններ, որտեղ փոխադարձ պարտավորություն է ստանձնվում օգնել կարիքավորին, ներազդել հասարակական տնտեսական բարիքների վերաբաշխման վրա՝ արդարության այնպիսի սկզբունքներից ելնելով, որպեսզի յուրաքանչյուրի համար արժանապատիվ ապրելու երաշխիքներ ստեղծվեն: Մեր կարծիքով, սահմանադրորեն իրեն սոցիալական կարող է հռչակել այն պետությունը, որը ոչ միայն ստանձնում է պարտավորություն ներդաշնակել անհատի, նրանց խմբերի ու ընդհանուր հասարակական շահերը, բացառել դրանց հակադրումն ու ենթակայումը մեկը մյուսին, այլեւ միջոցներ է ձեռնարկում հետետողականորեն այն իրականացնելու համար:

210 Ի դեպ, կա նաեւ կարծիք, որ հասարակություն կամ սոցիալական հանրություն կարելի է համարել նաեւ տերմինների ու մեղունների ընտանիքները, որտեղ կենսաբանական տարրը՝ միջատը, հանրությունից դուրս դադարում է վերարտադրական ֆունկցիա կատարելուց եւ գոյություն ունենալուց: Այսինքն, տեսակի պահպանության եւ լարելավված որակներով ներդաշնակ վերարտադրության ընդունման անքակտելի կանոնը գործում է հանրության համար:

211 Հրատարակիչներ Ի. Изензее, П. Кирххоф, Государственное право Германии., С.1, М.,1994, էջ 64:

րակական տնտեսական բարիքների վերաբաշխման վրա՝ արդարության այնպիսի սկզբունքներից ելնելով, որպեսզի յուրաքանչյուրի համար արժանապատիվ ապրելու երաշխիքներ ստեղծվեն: Մեր կարծիքով, սահմանադրորեն իրեն սոցիալական կարող է հռչակել այն պետությունը, որը ոչ միայն ստանձնում է պարտավորություն ներդաշնակել անհատի, նրանց խմբերի ու ընդհանուր հասարակական շահերը, բացառել դրանց հակադրումն ու ենթակայումը մեկը մյուսին, այլեւ միջոցներ է ձեռնարկում հետետողականորեն այն իրականացնելու համար:

Պետության սոցիալական ֆունկցիայի ճանաչումը եւ սահմանադրորեն ամրագրումն առավել բնորոշ է ազգակենտրոն պետական համակարգերին եւ, թերեւս, նրա ներդաշնակ զարգացման, անցյալի, ներկայի ու ապագայի օրգանական միասնությունն ապահովելու գլխավոր երաշխիքն է: Դա պայմանավորված է տեսակի, մարդկային ինքնության պահպանության ու ներդաշնակ զարգացման բնական օրինաչափությամբ:<sup>212</sup>

Հասարակական հումանիզմի դրսեւորման եւ քաղաքակրթության առաջընթացի մեծագույն ձեռքբերում է սոցիալական պետության կազմավորումը, ուր հասարակության անդամները, սահմանադրական համաձայնության հիման վրա, որոշում են իրենց առաջընթացի նպատակը, հստակեցնում **նպատակ - նախադրյալ-միջոց** հարաբերակցությունը: Սա հասարակական համակեցության ավելի բարձր որակ է: Սոցիալական կարող է լինել այն պետությունը, ուր մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամբողջական եւ գործուն համակարգ է ստեղծվել, ուր պետության կառավարման ամբողջ համակարգը խարսխված է հասարակական շահերի ներդաշնակման սկզբունքի վրա:

Սոցիալական պետությունն անհատի եւ հասարակության, անհատի եւ պետության փոխհարաբերությունների ներդաշնակ-

212 Հարկ է նշել, որ նույնիսկ միջնադարում հայ հասարակական մտքի կողմից էապես կարեւորվել է հասարակությանը վերաբերող նպատակների իրականացման գործում «Ազգային ավանդական կարգ ու կանոնով» առաջնորդվելու անհրաժեշտությունը (մասնավորապես տես. «ԿԱՆՈՆԱԳԻՐԸ ՀԱՅՈՑ», հ. Ա., Երեւան, 1964, էջ XV):

ման ավելի բարձր աստիճան է ենթադրում: Այն պետք է ճանաչվի, ընկալվի ու պաշտպանվի հասարակության յուրաքանչյուր բջջի կողմից, վարքագծի պարտադիր կանոն պետք է դառնա, որ այն ամենը, ինչ անօրինական է՝ արդար չէ ու անհարիր է սոցիալական պետությանը:

Միջազգային տարբեր քննարկումների ժամանակ հնչում են տեսակետներ, թե սոցիալական պետության սկզբունքը ներքին հակասության մեջ է գտնվում իրավական եւ ժողովրդավարական պետության սահմանադրական սկզբունքների հետ: Մենք՝ մեր-ժելով մման մեկնաբանությունները, գտնում ենք, որ խնդիրը «սոցիալական պետություն» հասկացության ընկալմանն ու մեկնաբանմանն է վերաբերում: Սահմանադրական տվյալ սկզբունքը ենթադրում է ոչ թե սոցիալիստական հավասարության երաշխավորում, այլ հասարակության արտադրական հարաբերությունների սոցիալական կողմնորոշվածություն, ոչ թե «արտադրություն՝ հանուն արտադրության», այլ «արտադրություն՝ հանուն հասարակական բարեկեցության» սկզբունքի արմատավորում: Դա ենթադրում է նաեւ, որ շուկայական տնտեսական հարաբերությունները ոչ թե նպատակ են, այլ միջոց՝ արդյունավետ տնտեսվարելու եւ ցանկալի սոցիալական հետեւանքներ երաշխավորելու համար: Ուստի մենք պատահական չենք համարում, որ Եվրոպական միության Սահմանադրության 3-րդ հոդվածում ամրագրելով Միության նպատակները, շեշտվում է նաեւ, որ «Միությունը պետք է հիմնվի Եվրոպայի հավասարակշռված տնտեսական աճի, կայուն զարգացման, **սոցիալական շուկայական տնտեսության**, բարձր մրցակցության և լրիվ աշխատանքային ու սոցիալական առաջընթացի և շրջակա միջավայրի պահպանության ու որակի բարձրացման բարձր մակարդակի վրա» (ընդգծումը մերն է - Գ.Հ.): **Սոցիալական շուկայական տնտեսությունն է սոցիալական պետության հիմքը: Սա է եվրոպական զարգացումների ներկայիս ընդհանրացումը:**

Իրավամբ քաղաքացիական է համարվում այն հասարակությունը, որտեղ անհատն իր շահերով ոչ թե հակադրվում է հասարակությանը, այլ ինքնադրստորման առավելագույն հնարավոր

ություն է ստանում՝ անհատի ու հասարակության շահերի ներդաշնակման պարագայում:<sup>213</sup>

Հաճախ պետության սոցիալական ֆունկցիան հակադրվում է հասարակության անդամների ազատության ապահովման ֆունկցիային, որը, մեր կարծիքով, արդարացված չէ: Ժողովրդավարական ազատությունը ենթադրում է նաեւ հասարակության անդամի երաշխավորված սոցիալական պաշտպանվածություն, որը մարդկային հասարակության հիմնական բնութագրիչներից է: Քաղաքացիական ազատությունը բնական ազատությունից տարբերվում է հենց նրանով, որ հասարակության մեջ անհատի գործունեությունը չպետք է հակադրվի հասարակության մյուս անդամների ազատության իրավունքին, եւ քաղաքացիական հասարակությունն իր անդամների ազատ ինքնադրստորման ներդաշնակ համակարգ պետք է ունենա: Իսկ վերջինս անհնարին է առանց պետության կողմից հասարակության անդամների երաշխավորված սոցիալական պաշտպանվածության ապահովման: Դա իր հերթին նշանակում է, որ հասարակության մեջ անհատը չի կարող իրեն մեկուսացված տեսնել, նրա գոյության բնականոն վիճակը փոխկապվածությունն է, փոխգործակցությունը ու նաեւ՝ պատասխանատվությունը հասարակության ներկայի ու ապագայի հանդեպ: Դրա հետ մեկտեղ, իրավացի է իրավագիտության դոկտոր Ե. Ա. Լուկաշովան, երբ շեշտում է, որ տեսական մակարդակով նույնպես այսօր վակուում է առաջացել՝ բացակայում են հետխորհրդային հասարակության մեջ քաղաքացու եւ պետության փոխհարաբերությունների հիմնադրույթները:<sup>214</sup> Նման իրավիճակը սովորաբար հանգեցնում է նրան, որ պետության համար չի հստակեցվում հասարակության անդամի նկատմամբ ոչ միայն վաղվա, այլև՝ այսօրվա պարտավորությունները, իսկ քաղաքացու համար, իր հերթին, պարզ չեն իր ակնկալիքների պետականորեն բավարարման հնարավորություններն ու պահանջմունքի կամ սպասելիքների հիմնավորվածությունն ու արդարացիությունը:

213 Семигин Г. Ю. Социальное партнерство в современном мире. М., Мысль, 1996, էջ 35:

214 Ст'ю Социальное государство и защита прав человека. М., 1994, էջ 9:

նը: Նման իրավիճակը սոցիալական անբավարարվածության մեծ ու վտանգավոր խթան է: Ուստի անցման շրջանի պետական քաղաքականության առաջնահերթությունների շարքում բացառիկ կարևոր տեղ պետք է հատկացվի քաղաքացի եւ պետություն փոխհարաբերությունների հստակ ու բոլորի համար մատչելի համակարգի մշակմանն ու գործադրմանը: Այս ամենի մեջ առանցքայինն այն է, որ սոցիալական պետության համար բոլոր լուծումների կենտրոնում մարդն է՝ պետականորեն ճանաչված, սահմանադրորեն ամրագրված, պաշտպանության անհրաժեշտ երաշխիքներ ունեցող իր իրավունքներով ու ազատություններով, ինչպես նաեւ հասարակության հանդեպ ունեցած իր պարտավորություններով:

Մեր կարծիքով, սոցիալական պետության հիմնական բնութագրիչներից անհրաժեշտ է առանձնացնել՝

ա) մարդկանց սոցիալական պաշտպանվածության եւ բարեկեցության բարձրացման օրենսդրական երաշխիքների ապահովումը,

բ) սոցիալական պաշտպանվածության պետական եւ ոչ պետական անհրաժեշտ ինստիտուցիոնալ համակարգերի ստեղծումն ու դրանց հստակ աշխատանքի ապահովումը (մասնավորապես, նկատի է առնվում նաեւ սոցիալական ապահովության համակարգը, որն առաջին հերթին առնչվում է խեղված ճակատագրերին՝ հաշմանդամություն, հիվանդություն, կերակրողի կորուստ, գործազրկություն, անապահով ծերություն եւ այլն, ինչպես նաեւ սոցիալական ապահովագրության գործուն համակարգի առկայությունը, որը կարգավորում է սոցիալական ռիսկը),

գ) կենսանվագագույնի երաշխավորումը,

դ) անհատի ազատ զարգացման, դավանանքի ու նախասիրությունների անկաշկանդ իրացման, ինչպես նաեւ բանական ինքնադրսետրման երաշխիքների ապահովումը,

ե) այդ սկզբունքի իրականացման անշրջելիության երաշխավորումը,

զ) մարդու իրավունքների եւ ազատությունների արդարադատական ապահովումը,

է) շուկայական տնտեսական հարաբերությունների սոցիալական բնույթի երաշխավորումը եւ այլն:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ անցման շրջանում բացառիկ կարևորություն է ստանում մարդկանց տնտեսական իրավունքների պաշտպանության խնդիրը՝ որպես սոցիալական պետության կարևոր գործառույթ: Բանն այն է, որ անցումը շուկայական հարաբերություններին, երբ լիարժեք ձեւավորված չեն շուկայական ենթակառուցվածքները, չկա սոցիալական պաշտպանվածության հստակ համակարգ, ապա շատ ուղրտներում շարունակվում է մենաշնորհային թելադրանքը, տեղի են ունենում լուրջ խորքային կառուցվածքային վերափոխումներ, զգալի է հոգեբանական ու սովորույթի իներցիան եւ այլն, ինչպես նաեւ ոչ լիարժեք շուկայական հարաբերություններում բազմապատկվում են մարդկանց սոցիալական եւ տնտեսական իրավունքների ոտնահարման հնարավորությունները: Ուստի պետությունը պարտավոր է իր ակտիվ մասնակցությունը բերել անցումային խնդիրների լուծմանը եւ ստեղծել երաշխիքների անհրաժեշտ համակարգ՝ ապահովելու համար մարդկանց իրավունքների պաշտպանությունը, հասնելու նրան, որ մարդիկ հավասար իրավունքներով դառնան նոր տնտեսական հարաբերությունների կրողը:

Անցման շրջանում ստեղծվում է նաեւ սոցիալ-հոգեբանական մի այնպիսի վիճակ, երբ պետության կողմից թույլատրված ցանկացած իրավասուբյեկտի գործունեություն նույնացվում է պետականին եւ նրանց նկատմամբ վերաբերմունքը դառնում է վերաբերմունք պետության նկատմամբ՝ իր բոլոր դրսետրումներով: Սա վկայությունն է նաեւ այն բանի, որ պետությունները բավարար ուշադրություն չեն դարձնում անցումային հարաբերությունների կառավարելիությանը եւ չի ստեղծվում մարդկանց իրավունքների պաշտպանության եւ իրավասուբյեկտների գործունեության վերահսկման անհրաժեշտ համակարգ: Դժբախտությունն այն է, որ մնան երեւոյթները ժամանակին չկանխելու դեպքում անխուսափելի են դառնում հասարակական մետաստազները: Պետության համար ավելի վտանգավոր են դառնում

ոչ այնքան անցյալից եկող բացերը, որոնք իներցիոն բնույթ ունեն եւ աստիճանաբար մարում են, որքան նոր իրականության մեջ առաջացած եւ պարարտ միջավայր գտած անօրինականությունները, որոնք շատ արագ իռացիոնալ վերարտադրության հուն են մտնում, ու եթե հնարավոր է բուժել, ապա միայն վիրահատական միջամտությամբ: Յավոք, այս հանգամանքը ժամանակին թերագնահատեցին շատ նորանկախ երկրներ, այդ թվում՝ Հայաստանը: Ելքն այն է, որ յուրաքանչյուր իրավիճակում պետությունն առաջին հերթին հոգ տանի հասարակության իմունդեֆիցիտը կանխելու մասին, որի գլխավոր նախապայմանը կառավարման մեխանիզմների կայացմանը համակարգային մոտեցում ցուցաբերելն է:

Սոցիալական պետության հիմնական բնութագրիչներին անդրադառնալիս անհրաժեշտ է, թերեւս, առանձնացնել նաեւ սոցիալական հավասարության բնութագրիչը, որը վերջին երկու դարերի հեղափոխական պայքարի առանցքն է հանդիսացել: Այս որակն ընկալվել ու մեկնաբանվել է տրամագծորեն տարբեր դիրքերից: Հաճախ սոցիալական հավասարության սկզբունքի պարզունակ ընկալումը եւ այն որպէս սոցիալական արդարության գերագույն չափանիշ ներկայացնելը հանգեցնում է հասարակական հարաբերությունների բնույթի եւ զարգացման օրինաչափությունների տարաբնույթ գռեհիկ ու աղճատված մեկնաբանությունների: Անառարկելի ճշմարտություն կա այն բանում, որ սոցիալական հավասարություն ապահովելու համար սոցիալիստական պետությունը պայքարում է հարստության դեմ (ըստ 70-ամյա փորձի), սոցիալական պետությունը՝ աղքատության: Սոցիալական պետությունը չի կարող բացառել իր անդամների հավասարության սկզբունքը, սակայն այն ոչ թե պետք է բացարձականացվի, այլ դիտվի որպէս հասարակության յուրաքանչյուր անդամի իրավունք, որի իրացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը պետության պարտավորությունն է: Այս սկզբունքը ենթադրում է նաեւ, որ պետության պարտքն է երաշխավորել, որպէսզի հասարակության առանձին անդամներ, սոցիալական կամ այլ խմբեր կողմնակալ վերաբերմունքի չարժա-

նանան: Փաստորեն, սոցիալական պետությունը, մի կողմից, ապահովելով սոցիալական պաշտպանվածության որոշակի միջավայր, դնելով, այսպէս կոչված, ներքին չափաձողը, մյուս կողմից՝ անհրաժեշտ միջավայր պետք է ստեղծի, որպէսզի հավասար իրավունքներ ունեցող ամեն մի անհատ իր բանական կարողություններին ու օրինական հնարավորություններին համապատասխան ինքնադրսետրման դաշտ ստանա: Հենց դա է ապահովում ազատության եւ հավասարության ներդաշնակումը:

Եռամիասնության մեջ ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետությունն ամբողջական ձեւով ներդաշնակում է անհատի կենսագոյի հիմնական սկզբունքները՝ ազատությունն ու հավասարությունը: Այս որակներից յուրաքանչյուրի առանձնացումը եւ միակողմանի բացարձականացումը կամ հակադրումը մեթոդաբանական կոպիտ սխալ է եւ կարող է հանգեցնել (վկան՝ պատմության դառը փորձը) ծայրահեղ, աղճատված եւ, որպէս կանոն, ոչ ճիշտ եզրահանգումների:

Սոցիալական պետությունը, ստանձնելով պատասխանատվություն անհատի սոցիալական պաշտպանվածության հարցում, առաջին հերթին պետք է մտահոգված լինի բանական էակի ինքնաճանաչման ու ինքնադրսետրման նախադրյալների ապահովմամբ: Սակայն ամենաբարդ խնդիրն այն է, թե որտեղ պետք է սահմանափակվի պետության միջամտությունը հասարակական-տնտեսական հարաբերություններին, որպէսզի, մի կողմից ապահովվի պետության սոցիալական ֆունկցիայի երաշխավորված իրականացումը, մյուս կողմից, այն չխոչընդոտի շուկայական հարաբերությունների բնականոն զարգացմանը: Այստեղ մեկընդմիջտ տրված լուծումներ փնտրելն անպտուղ է: Յուրաքանչյուր երկրում եւ յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակի համակողմանի գնահատման հիման վրա պետք է ապահովվի այդ հաշվեկշռվածությունը: Դրանում է հենց կառավարման արվեստը: Դա է կառավարության գործունեության գնահատման հիմնական չափանիշը: Սակայն ընդհանուրն այն է, որ սոցիալական պետությունը հասարակական վերարտադրության համակարգում իր ակտիվ ու ծրագրավորված մասնակցությունը պետք է ու-

նենա: Դա վերաբերում է թե՛ արտադրությանը եւ թե՛ շրջանառությանն ու բաշխմանը: Այս հանգամանքը հատուկ կարեւորվեց նաեւ Գերմանիայի համար, երբ այս երկիրն իրեն հռչակեց սոցիալական, իրավական պետություն: Ինչպես նշում է Հեսսե Կոնրադը՝ սոցիալական պետությունը ոչ միայն հատուկ ծրագրավորված քաղաքականություն է իրականացնում առանձին սոցիալական խնդիրների լուծման բնագավառում, այլեւ նման պետությունն ընդհանրապես կառավարող, արտադրող եւ բաշխող պետություն է:<sup>215</sup>

Պետության սոցիալական բնույթի ընդունումը միաժամանակ հանդես է գալիս թե՛ որպես սկզբունք, թե՛ որպես նպատակ եւ թե՛ որպես կոնկրետ հարաբերություններին վերաբերող համապարտադիր վարքագծի կանոն: Այն դառնում է հարափոփոխ հասարակական հարաբերությունների էության բնութագրիչ եւ դիմամիկ հարաբերություններում՝ հասարակական սուբյեկտների վարքագծի կողմնորոշիչ:

Սոցիալական պետության կայացումն անընդհատ եւ մշտական գործընթաց է եւ պահանջում է համարժեք մոտեցում յուրաքանչյուր նոր ու փոփոխվող իրավիճակում: Միսւլ է այն մոտեցումը, թե պետությունը կարող է սոցիալական համարվել միայն այն դեպքում, երբ արդեն ստեղծել է հզոր տնտեսական նախադրյալներ եւ կարող է ժամանակ գտնել մտածելու մարդկանց սոցիալական կարիքների մասին: Մարդկանց պահանջմունքների եւ դրանց բավարարման հնարավորությունների արդարացի ներդաշնակման խնդիրը գոյություն ունի յուրաքանչյուր պահ, եւ այն դիմամիկ երեսույթ է: Այլ բան է, որ տարբեր հնարավորությունների պարագայում սոցիալական բավարարման տարբեր խնդիրներ կարող են լուծվել: Բայց դա չի նշանակում, որ ժամանակի ու տարածության մեջ միջոցը կարող է կտրվել նպատակից, առավել եւս՝ հակադրվել դրան:

Ինչ վերաբերում է անցման շրջանին, հատկապես՝ ճգնաժա-

մային կառավարման իրավիճակներին, ապա սոցիալական պաշտպանվածության խնդիրը պետության համար ստանում է հատուկ առաջնահերթություն: Ավելին, եվրոպական երկրների փորձը վկայում է, որ պետության սոցիալական ֆունկցիան հատկապես ընդգծվեց եւ սահմանադրորեն ամրագրվեց համակարգային վերափոխումների ընթացքում, քանզի նման վերափոխումների գերագույն նպատակը մարդն է, նրա կարիքների բավարարումն ու, ինչպես պատկերավոր նշվում է՝ «...հասարակության մարդկայնացումը»: Հետեւաբար, անցման շրջանում պետության հիմնական խնդիրն է շուկայական հարաբերություններին անցնելու թափը հավասարակշռել սոցիալական պաշտպանվածության հուսալի համակարգով: Հակառակ պարագայում կաղճատվի, ընդհուպ՝ կվտանգվի տնտեսական ամեն մի բարեփոխում, առավել եւս, եթե վերջինիս նպատակն առողջ մրցակցային հիմքի վրա գործող շուկայական տնտեսության ստեղծումն է:

Այս առումով նույնպես հետաքրքիր է Գերմանիայի փորձի ուսումնասիրումը: Սահմանադրորեն առաջինն ամրագրելով, որ Գերմանիան ժողովրդավարական եւ **սոցիալական** դաշնային պետություն է (հոդվ. 20), որպես այդպիսին իր պետականության զարգացման առաջին փուլի խնդիրը համարեց յուրաքանչյուր քաղաքացու կենսանվագագույնի երաշխավորվածությունը: Ընդ որում, ենթադրվում է, որ յուրաքանչյուր չափահաս անձ պարտավոր է աշխատել եւ հոգալ իր կարիքները: Եթե դա հնարավոր չէ նրա անգործունակ լինելու պատճառով, ապա պետությունը պետք է հոգաժողովան իր բաժինն ստանձնի: Միաժամանակ պետությունը պետք է նախադրյալներ ապահովի անհատի ինքնադրստորման, միմյանց օգնելու, միավորվելու եւ համատեղ գործելու համար:

Աշխարհի դեռ ոչ մի պետություն չափ ու կշեռք չի դրել ասելու՝ թե ինքն այս կամ այն չափով սոցիալական է: Այդ ճանապարհով գնում են կամ չեն գնում, պետականորեն այդպիսի գործառույթ ստանձնում են կամ չեն ստանձնում: Եթե ստանձնում են, ապա պետության խնդիրն է դառնում պետականորեն ապահովել, մի

<sup>215</sup> Хессе Конрад. Основы конституционного права ФРГ. М., 1981. էջեր 111-112:



կողմից՝ սոցիալական պաշտպանվածության երաշխավորված համակարգի ստեղծումը, մյուս կողմից՝ բանական էակի, որպես սոցիալական սուբյեկտի, բնականոն ինքնադրսետորման միջավայրի ստեղծումը: Բնականաբար, դա պահանջում է յուրահատուկ մոտեցում թե՛ արտադրական եւ թե՛ բաշխման հարաբերությունների նկատմամբ:

Եթե պետությունն իրեն չի համարում սոցիալական, ապա նշված խնդիրները հասարակությունը փորձում է լուծել այլ ձեւերով ու ճանապարհներով: Հիմնականում դրանք դառնում են ինքնակարգավորվող հարաբերությունների հետեւանք:

Այլ կերպ, հիմնականը, գլխավորն այն է, որ հասարակական հարաբերությունների բնույթի որոշարկումը՝ որպես սահմանադրական նորմ, ամենից առաջ բնութագրում է այդ հարաբերությունների որակական առանձնահատկությունները, բացահայտում դրանց էությունը, զարգացման ներքին տրամաբանությունը: Եվ, գլխավորը՝ իրեն սոցիալական համարող պետությունը չի կարող ծրագրավորված մոտեցում չցուցաբերել հասարակական զարգացմանը, չի կարող ինքնակառավարվող հարաբերությունների հետեւանքները գրանցողի պասիվ դերն ստանձնել՝ ամեն ինչ թողնելով ամենագոր շուկայի տնօրինությանը:<sup>216</sup>

Սոցիալական պետության կայացումը ենթադրում է նաեւ խելամիտ սպասելիքների ու պահանջմունքների խնդրի առաջադրում: Հասարակության անդամների սպասելիքների իմացությունը, ռացիոնալ սպասելիքների ձեւավորումը, դրան համապատասխան՝ համակեցության նոր արժեհամակարգերի անհրաժեշտությունը ոչ միայն համակարգված ու ծրագրավորված տնտեսական, այլեւ քաղաքական ու, առավել եւս՝ բարոյական

նոր մոտեցումներ են պահանջում: Բանն այն է, որ անցման շրջանին բնորոշ այնպիսի վիճակներ, ինչպիսիք են խաթարված վերարտադրական համակարգը, արմատական վերակազմակերպման անհրաժեշտություն ունեցող եւ սեփական կառուցվածքային հիմք չունեցող տնտեսությունը, անորոշության գործոնը, աղճատված հասարակական գիտակցությունը, փլուզված արժեհամակարգերը եւ այլն, թելադրում են անհատի ու հասարակության փոխհարաբերությունների նոր սկզբունքների ակտիվ ու համակարգված ձեւավորում: Առանց դրա անհնարին է հաղթահարել մոտեցումների ծայրահեղ բեւեռացումն ու անհանդուրժողական հակադրությունը, մեղմել հասարակական լարվածությունը, ապահովել ներդաշնակ զարգացում: Ավելին, մեծանում են ամբողջ հասարակությանը ստրեսային վիճակի մեջ գցելու եւ տեւականորեն նման իրավիճակում պահելու քաղաքական եւ այլ շարժառիթները, որի բանիմաց հաղթահարման դեղատոմսը չգտնելու դեպքում անխուսափելի են ավերիչ հետեւանքները, մասնավորապես՝ հասարակական իմունոանբավարարության առաջացումը:

Բժշկագիտության կողմից վաղուց ապացուցվել է, որ մարդու գլխուղեղի նորմալ գործունեության համար հույզերի 60%-ը պետք է լինի չեզոք, 35-ը՝ դրական եւ միայն 5%-ը՝ բացասական: Եթե այս համամասնությունը խախտվում է ու հատկապես բացասական հույզերի բաժինն ավելանում է, ապա անխուսափելիորեն զարգանում են տարբեր հիվանդություններ: Իրեն սոցիալական համարող պետությունը նման խնդիրն անուշադրության մատնել չի կարող: Առավել եւս քաղաքացիական հասարակության մեջ իր անդամի սպասելիքների ու հույզերի կառավարման խնդիրը դառնում է պետության հիմնական գործառնություններից մեկը: Պատահական չէ, որ այս հիմնահարցը համարվում է հասարակագիտության առանցքային հարցերից մեկը, եւ 1995 թվականին ԱՄՆ ճանաչված տնտեսագետ Ռոբերտ Լուկասն արժանացավ Նոբելյան մրցանակի՝ հենց ռացիոնալ սպասելիքների տեսության մեջ կատարած իր ներդրման համար:

Պետության սոցիալական բնութագրի ամբողջականությունը

216 Հարկ է նշել, որ ազատական տնտեսական հարավերություններ ունեցող գրեթե ոչ մի երկրում այս պարագան այնքան չի լիարժեքացվել, որքան նորանկախ որոշ երկրներում: ԱՄՆ-ում, դեռեւս Նախագահ Ջեֆերսոնի ժամանակներից, այդ թվում նաեւ հետպատերազմյան շրջանի տնտեսագիտական միտքը, ոչ թե մերժել, այլ որոշակի կարգավորված չափի մեջ է տեսել պետության միջամտությունը տնտեսական հարավերություններին:

պայմանավորված է նրա յուրաքանչյուր անդամի, ամեն մի օղակի, ողջ հասարակության որդեգրած արժեքներով ու գործելակերպով:

Հատկապես անցումային փուլում պետության կարեւորագույն գործառույթներից մեկն է դառնում կառավարելի անցումը շուկայական տնտեսական հարաբերությունների: Այլ կերպ չի էլ լինում՝ ընդունում ենք այն, թե՛ ոչ, գիտակցում ենք դրա անհրաժեշտությունը, թե՛ ոչ, իրական կյանքը գնում է հենց այդ ճանապարհով, միայն, անհարկի հակադրվելով, ստիպված ենք լինում հաղթահարել մեր իսկ ստեղծած ավելորդ խոչընդոտները: Ընդհակառակը, պետության հոգածության խնդիրը պետք է դառնա հասարակական ստրեսների թուլացման ու հաղթահարման հարցը, իսկ դրա արհեստական հրահրումը, անկախ այն բանից, թե ում է ինչ ուժերի կողմից ու ինչ ձեւերով է արվում, պետք է հանգեցնի ընդհուպ որոշակի իրավական հետեւանքների:

Պետության իրավական, սոցիալական, ժողովրդավարական բնորոշիչներն առանձին-առանձին հասարակական հարաբերությունների բնույթի որոշակի որակական գծերն արտահայտելուց զատ իրենց միասնության մեջ տալիս են նաեւ նոր որակ: Այն ենթադրում է, որ տվյալ պետության համար տիպական է.

1. վերարտադրական համակարգը գործում է շուկայական օրենքներով, որտեղ ապահովված է ազատ գործարարություն ու մրցակցություն, հաղթահարված է մենաշնորհային ցանկացած թելադրանք եւ որի երաշխավորը պետությունն է,
2. բաշխման հարաբերությունների վրա անհրաժեշտ է դառնում պետության կարգավորված օրինական ներազդեցությունը ,
3. ենթադրվում է երկրի մասշտաբով տնտեսական լուծումների արդյունավետության գույգորդում սոցիալական հետեւանքների հետ (առաջնորդվելով հասարակական արտադրության սոցիալ-տնտեսական արդյունավետության չափանիշներով),
4. դրվում է տնտեսական, վարչական, քաղաքական ուժի օպ-

տիմալ ապակենտրոնացման խնդիր,

5. անհրաժեշտություն է առաջանում պետականորեն հստակեցնել զարգացման առաջնահերթությունները,
6. մշակվում է գործադրվում են Սահմանադրության գերակայությունը եւ կայունությունն ապահովող մեխանիզմներ եւ այլն:

Տարբեր երկրների փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության տնտեսական համակարգի հիմնական առաջնահերթություններն են՝ կենսամակարդակ (բարօրություն), ազատություն, անվտանգություն, հավասարություն եւ կարիքավորին օգնություն:

Բնականաբար, թե՛ նշված առաջնահերթությունները եւ թե՛ դրանց հաջորդականությունը յուրաքանչյուր երկրի համար ունեն իրենց դրսեւորման առանձնահատկությունները՝ պայմանավորված անցյալով, ներկայով ու ապագայով:

Եթե փորձենք հարցին մոտենալ ավելի լայն ընդգրկումով, ներառելով հասարակական-պետական ողջ համակարգը, ապա Հայաստանի Հանրապետության ներկա պարագայում պետականության ամրապնդման ու ազգային ինքնահաստատման ճանապարհով զարգանալու առաջնահերթությունների թվին, թերեւս, կղասվեն հետեւյալները. միասնություն,<sup>217</sup> ազգային անվտանգություն, ազատություն, հավասարություն, բարօրություն, օգնություն կարիքավորին:

Դրանց ամբողջությունը դառնում է ազգային-հասարակական-պետական գործելակերպի նպատակ, իսկ դրանց իրակա-

217 Միասնությունը գլխավոր առաջնահերթություն համարելու հարցում գուցե գտնվեն ընդդիմախոսներ, միամտորեն կարծելով նաեւ, որ դա Սարգսյանի ստանդարտ կարգախոս է: Ամենեւի՞ն՝ ոչ: Հարցին մոտեցումը շատ ավելի լուրջ ու խորքային է: Մեր համոզմունքն է, որ մեր ազգային գոյի Սախտը, մեր ինքնության ապագան, տեսակի Սնականոն վերարտադրության խնդիրը, զարգացում ապրելու համար անհրաժեշտ «կրիտիկական զանգված» ապահովելու անհրաժեշտությունը պայմանավորված են մեր ազգային միասնությամբ, առավել եւս՝ Հայաստան-Արցախ-Սփյուռք օրգանական կապով: Դա, նոր աշխարհաքաղաքական իրականության պայմաններում, թելադրված է Սազմաթիվ ներծին ու արտածին գործոնների ազ-

նացման ուղղությամբ կոնկրետ ծրագրերն ու քայլերը մարմնավորում են տվյալ ժամանակին համապատասխանող քաղաքականությունն ու սահմանադրափրավական լուծումները:

Հայաստանի պարագայում չափազանց կարելու է ներդաշնակության ու եռամիասնության, դեռ ավելին՝ մեկ ամբողջականության մեջ տեսնել ազգային, հասարակական, պետական նպատակներն ու շահերը: Դրանց տարանջատումը, առավել եւս՝ հակադրումը, ճակատագրական կարող է լինել:

Ընդհանրացնելով ասվածը, հանգում ենք այն եզրակացությանը, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ամրագրելով, որ «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է», կատարվել է առաջին վճռական ու, բարեբախտաբար, ճիշտ բնորոշումն այն հասարակական հարաբերությունների, որի նախադրյալները ցանկանում ենք ստեղծել, եւ որը մեր ազգային ու պետական առաջընթացի երաշխիքն է լինելու: Այս մոտեցումը մեր սահմանադրական մշակույթի լավագույն դրսեւորումներից է: Խնդիրն այն է, որ յուրաքանչյուր գործնական քայլ արվի այդ ուղղությամբ, բխի այդ հասկացությունների էությունից, ապահովի այդ ուղղությամբ հասարակության զարգացումը: Դրան պետք է ուղղված լինեն օրենսդրական աշխատանքը, համակարգային կառուցվածքային ու կազմակերպական վերափոխումները, գործնական մեխանիզմներն ու դրանց գործադրման եղանակները, ամբողջ հասարակության եւ յուրաքանչյուր առանձին իրավասուբյեկտի վարքագիծը: Այս հենքի վրա պետք է գծագրվի նաեւ սահմանադրական զարգացումների փիլիսոփայությունը:

Սահմանադրականության երաշխավորման կարելու նախապայմաններից է նաեւ սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրվող «**ժողովրդաիշխանություն**» եւ «**պետական իշխանություն**» հասկացությունների սահմանադրորեն հստակ սահմանումը՝ բացառելով դրանց նույնացումը: Այս հասկացություններից յուրաքանչյուրն ունի որոշակի իրավական բովանդակություն եւ իրավաբանական բնութագրիչներ, որոնց ընկալման,

սահմանադրորեն երաշխավորման ու գործնական ապահովման աստիճանով է մեծապես բնութագրվում սահմանադրական մշակույթի մակարդակը տվյալ երկրում:

Ժողովրդաիշխանությունը ենթադրում է, որ գործ ունենք իշխանության միակ տիրոջ, այդ իշխանության աղբյուրի ու ամբողջությամբ կրողի հետ: Սահմանադրական դասական ձեւակերպումը չի սահմանափակվում միայն նշելով, որ «իշխանությունը պատկանում է ժողովրդին ու դրա յուրացումը որեւէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է»: Բազմաթիվ ժողովրդավարական երկրների սահմանադրություններում հատկապես շեշտվում է, որ «իշխանության միակ աղբյուրը ժողովուրդն է», «ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է հանրաքվեների, անմիջական ժողովրդավարության այլ ձեւերի ու իր ներկայացուցիչների միջոցով»: Համեմատական սահմանադրական վերլուծությունը վկայում է, որ սահմանադրական նորմ-սկզբունքների մակարդակում ժողովրդաիշխանությունն ամենից առաջ ենթադրում է, որ.

- ժողովրդին է պատկանում **ամբողջ** իշխանությունը,
- իշխանության **միակ աղբյուրը** ժողովուրդն է,
- ժողովրդի ինքնիշխանությունն **անօտարելի է**,
- ժողովուրդը **կարող է** իր իշխանությունն իրականացնել ինչպես **անմիջականորեն**, այնպես էլ իր **ներկայացուցիչների** միջոցով,
- ոչ ոք ժողովրդից իր իշխանությունը **խլել կամ այն սահմանափակել** չի կարող, դա համարվում է ծանրագույն հանցագործություն,
- պետական իշխանությունը ժողովրդաիշխանության դրսեւորման **ձեւերից մեկն է**, որը նույնպես ժողովուրդն իրականացնում է անմիջականորեն կամ իր ներկայացուցիչների միջոցով:

Սահմանադրություններում հստակ սահմանազատելով «**ժողովրդի իշխանությունը**» «**պետական իշխանությունից**», հիմնական շեշտադրումն արվում է այն առնչությամբ, որ պետական իշխանությունն ածանցվում է ժողովրդաիշխանությունից եւ այն

իրականացվում է իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա:<sup>218</sup> Ժողովրդի իշխանությունը պետական իշխանությամբ չի կարող սահմանափակվել:<sup>219</sup> Պետական իշխանությունը նույնպես պատվիրակվում է ժողովրդի կողմից եւ իրացվում է հասարակական համաձայնության առարկա հանդիսացող սահմանադրական սկզբունքների ու նորմերի հիման վրա: Իր հերթին, անմիջական ժողովրդավարության հիմնական ձեւեր են դիտարկվում հանրաքվեն եւ ընտրությունները: Միաժամանակ, սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան վկայում է, որ հանրաքվեն եւ ընտրություններն անմիջական ժողովրդավարության երկու տարբեր ձեւեր են ու չեն կարող միմյանց հակադրվել: Դրանցից մեկը չի կարող խոչընդոտել մյուսին: **Ժողովուրդն է այդ ձեւերի միջեւ ընտրություն կատարում:** Մակայն, եթե այդ ընտրության արդյունքում խորացող անվստահությունն է գերակայում, այդ ձեւերը միմյանց փոխընդդրանում ու հիմնավորման հնարավորություն են ընձեռում՝ հատկապես հասարակական հարցումների ու ֆակտուալափոփոխումների միջոցով: Ընդ որում, հանրաքվեն ժողովրդաիշխանության արդյունավետ ձեւից կարող է վերածվել գործիքի, «մահակի», երբ իրականացվում է միայն իշխանության կողմից ու իր նպատակների իրականացման համար, երբ ժողովուրդը գրկվում է այն իրականացնող սուբյեկտի իրավունքից եւ դառնում է միայն հանրաքվեի օբյեկտ, երբ հանրաքվեի դրվող հարցերի շրջանակը որոշում է բացառապես իշխանությունը: Երկրում սահմանադրականության, հետեւապես նաեւ՝ սահմանադ-

218 Չափազանց կարեւոր ենք համարում իրավագիտության դոկտոր Լեոնիդ Մամուտի դիտարկումն այն մասին, որ հաճախ թյուր պատկերացում է ստեղծվում, թե առկա է երկու իշխանություն՝ ժողովրդի իշխանությունը եւ պետական իշխանությունը: Իրականում կա միայն մեկ իշխանություն, եւ դա պետականորեն կազմավորված ժողովրդի հանրային իշխանությունն է, որը նա իրականացնում է պետական մարմինների, այլ ոչ թե պետական իշխանության միջոցով (տե՛ս Լ. Մամուտ. Публичная власть, государство и разделение властей // Конституционный Суд как гарант разделения властей: Сборник докладов. М., 2004, էջ 262):

219 Чиркин В. Е. Конституционные проблемы власти народа // Государство и право, 2004, N 9, էջ 10.

րական մշակույթի մակարդակն ու առկայությունը մեծապես պայմանավորվում են նրանով, թե որքանով է ժողովուրդն իրեն իսկ պատկանող իշխանության իրական կրողը: Անմիջական ժողովրդավարության դերի կարեւորումը հատկապես բնորոշ է շվեյցարական սահմանադրական մշակույթին, որին գնալով ավելի մեծ ուշադրություն է հրավիրվում:<sup>220</sup>

Իրավական պետության համար ելակետային նշանակություն ունի Սահմանադրության՝ սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրված բոլոր նորմ-սկզբունքների հետեւողական իրացումն ու պաշտպանությունը: Դա անհրաժեշտ է երկրում սահմանադրականության երաշխավորման համար եւ այդ նպատակով մի շարք երկրներում ընդհուպ սահմանադրական փոփոխությունները դառնում են նախնական պարտադիր սահմանադրական վերահսկողության առարկա:<sup>221</sup> Այդ հիմնահարցերին ստորեկանդրադառնանք սահմանադրական զարգացումներին նետված նոր մարտահրավերների համատեքստում:

220 Մասնավորապես տե՛ս Saunders Ch. A. Constitutional Culture in Tradition // Constitutional Cultures. Ed. by M. Wyrzykowski. Warsaw, ISP, 2000. էջեր 41-42:

221 Մասնավորապես տե՛ս Бутусова Н.В. Основы конституционного строя Российской Федерации как правовой институт и предмет конституционно-правового регулирования // Вестник Московского университета. Серия право, 2003, N 6, էջ 17-29: Իսկ, օրինակ, 2003թ. դեկտեմբերի 23-ին ստորագրված՝ «Սահմանադրական դատարանի մասին» Ադր՛եջանի Հանրապետության օրենքի 61 հոդվածը սահմանում է, որ եթե Սահմանադրության 153 հոդվածի հիման վրա դրա տեքստի փոփոխությունների նախաձեռնությամբ՝ հանդես են եկել երկրի Նախագահը կամ խորհրդարանը, ապա նախապես պետք է ստանալ սահմանադրական դատարանի եզրակացությունը: Ընդ որում, տվյալ հարցով հանրաքվեի անցկացման ժամանակ քվեաթերթիկում պետք է համառոտ շարադրվի նաեւ սահմանադրական դատարանի եզրակացությունը:

### 3.4. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻՆ ՆԵՏՎԱԾ ՍԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Սահմանադրության նորմ-սկզբունքների հետետղական իրացման ճանապարհով երկրում սահմանադրականության երաշխավորումն առանձնահատուկ կարեւորություն ունի հատկապես նորանկախ երկրների համար: Ինչպես նշեցինք, առանցքային նշանակություն ունի ամենից առաջ «**իրավական պետություն**» սահմանադրական նորմ-սկզբունքի հստակեցումը եւ երաշխավորումը: Վերոշարադրյալից ակնհայտ էր, որ ամենաընդհանուր գծերով իրավական պետության հիմնական սկզբունքի պահանջն է, որ պետական իշխանությունը պետք է սահմանափակված լինի, **ճշգրտված լինի այն սահմանը, որից այն կողմ իշխանությունն անցնել չի կարող:**<sup>222</sup> Այդ սահմանը, որի պաշտպանությանն է կոչված սահմանադրական վերահսկողության ողջ համակարգը, մարդու անօտարելի իրավունքներն են: **Իրավունքով իշխանության սահմանափակումն իրավական պետության հիմնական բնութագրիչն է:** Սահմանադրությունը կարող է վերածվել գեղեցիկ բառերի ժողովածուի, եթե **սահմանադրական սկզբունք - իրավունք - իշխանություն** շղթայում չկա ներդաշնակ փոխալայնանավորվածություն ու փոխլրացում, որի շնորհիվ իշխանության գործունեության էությունն է դառնում իրավունքի երաշխավորումը: Վերջին հաշվով, սահմանադրությունները կյանքի կոչվեցին երեք հիմնական առաքելություն իրականացնելու համար.

- երաշխավորելու մարդկանց իրավունքներն ու ազատությունները,
- սահման դնելու իշխանությանն ու այն իրականացնողների գործողություններին,

222 St'u Сущинская С.И. Понятие и сущность правового государства и соответствие ФРГ критериям правового государства с точки зрения ее конституционных характеристик // Конституционное право зарубежных стран. 2001, N 1, էջեր 42-48:

- սահմանելու պետական կարգի հիմունքներն ու կանոնակարգելու իշխանական գործառնությունների իրականացումը: Ելնելով վերոշարադրյալ իրողություններից ու ընդհանրացումներից, հետհամայնավարական յուրաքանչյուր երկրում իրավական պետության կայացման պարտադիր ու հիմնական պայմաններ կարող են դիտվել.

- մարդու արժանապատվության ճանաչումը եւ հարգումը, նրա իրավունքների եւ հիմնարար ազատությունների ապահովումը, իրավունքի գերակայության երաշխավորումը,
- իշխանությունների տարանջատումը եւ հավասարակշռումը, քաղաքական, տնտեսական եւ վարչական ուժի օպտիմալ ապակենտրոնացումը,
- իշխանությունների ընտրովիությունն ու վերահսկելիությունը,
- անկախ դատական իշխանության առկայությունը,<sup>223</sup>
- Սահմանադրության գերակայության եւ կայունության երաշխավորումը:

Այս նախադրյալները փոխկապակցված են ու դրանցից յուրաքանչյուրի բացակայությունը, անտեսումը կամ տարաբնույթ աղճատումը կարող է ի չիք դարձնել մյուսների գոյությունը ու վկայել ոչ ժողովրդավարական քաղաքական ռեժիմի իրողության մասին: Սրանք, թերեւս, միջազգային առաջադիմական իրավական մտքի ու հասարակական պրակտիկայի այբբենական ճշմարտություններից են: Այսուհանդերձ, դրանց շարքում առանձնահատուկ կարեւորություն ունի իրավական պետության հատկապես այնպիսի առանցքային բնութագրիչների խոր մասնագիտական (դոկտրինալ) մեկնաբանությունը, ինչպիսիք են «իրավունքի գերակայություն» եւ «իշխանությունների տարանջատում» սահմանադրական սկզբունքները:

223 Ինչպես ժամանակին նշել է Թոմաս Ջեֆերսոնը, դատավորները պետք է անկախ լինեն գործադիր իշխանությունից, այլ ոչ թե ժողովրդի կամքից: Իսկ իրական ժողովրդավարական երկրում ժողովրդի կամքը մարմնանում է Սահմանադրության մեջ ու օրենքներում:

Նկատի ունենալով, որ իրավունքի գերակայության հարցին մենք որոշ չափով անդրադարձ կատարել ենք,<sup>224</sup> ստորեւ ուշադրություն կհրավիրենք միայն որոշ ելակետային հանգամանքների վրա, ինչպես նաեւ քննության կառուցման իշխանությունների տարանջատման **եւ գործառնական հավասարակշռության ապահովման հիմնահարցը**, որը սահմանադրական ներկա զարգացումների առումով առանցքային նշանակություն ունի:

Նախ՝ ինչ էն հուշում պատմության դասերը: Ինչպես դիպուկ բանաձեւված է Մարդու իրավունքների ու ազատությունների 1789թ. ֆրանսիական հռչակագրի հոդված 2-ում՝ «Յուրաքանչյուր քաղաքական միության նպատակը՝ մարդու բնական ու անօտարելի իրավունքների պաշտպանությունն է»: Վերջինս ցանկացած Սահմանադրության հիմնական բովանդակությունն ու պետական համակարգի գերխնդիրն է: Գործնական կյանքում դրա ապահովման համար անհրաժեշտ է, ամենից առաջ, մեթոդաբանական հստակ մոտեցում «իրավունք» հասկացության, ինչպես նաեւ մարդու բնական իրավունքների առաջնայնության ըմբռնման հարցերում:

Պատմական խոր արմատներ ունի տեսական բանավեճը բերված հարցադրումների առանցքը կազմող՝ «իրավունքի գերակայությունն», թե՞ «օրենքի գերակայություն» հասկացությունների շուրջ, որը, ինքնրատիքյան, ելակետային նշանակություն ունի մեր կողմից առաջադրված հիմնահարցին սպառնիչ պատասխան տալու համար:

Առաջին անգամ նախաքրիստոնեական շրջանի հասարակական մտքի խոշորագույն ընդհանրացումներից մեկը Դեմոկրիտի (470-366 մ.թ.ա.) բանաձեւումն էր այն մասին, որ **քաղաքականության, բարոյականության եւ օրենսդրության մեջ արդարության չափանիշը՝ համապատասխանությունն է բնությանը**:<sup>225</sup> Արդարությունն ու ճշմարտությունը նա տեսնում էր բնականի մեջ, օրենքը համարում էր արհեստական, տարբերակում էր «ճշ-

224 Մասնավորապես տես նաեւ Հարությունյան Գ., Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Երեւան, 2003:  
225 Материалисты Древней Греции. М., 1955, էջեր 53-178:

մարտությունը»՝ «հասարակական կարծիքից», **բնական ճշմարտությունը՝ օրենքից**:<sup>226</sup>

Եթե հետագայում Սոկրատը ճշմարտության արտացոլանքն օրենքի մեջ կապում էր գիտելիքների հետ, ապա Պլատոնի մոտ «իրերի աշխարհի» ու «գաղափարների աշխարհի» տարանջատմամբ եւ ճշմարտության՝ յուրաքանչյուրն իր գործն անելու առաքելության բնորոշմամբ, **օրենքը ներկայացվեց որպես բնականության ծնունդ**:<sup>227</sup> Ըստ Պլատոնի՝ այնտեղ, որտեղ օրենքն ուժ չունի եւ գտնվում է ինչ-որ մեկի իշխանության ներքո, **այդ պետությունը դատապարտված է կործանման**:

Արիստոտելյան շրջանի փիլիսոփայական միտքը բանաձեւեց, որ քաղաքական արդարությունը հնարավոր է միայն նույն հանրությանը պատկանող ազատ եւ իրավահավասար մարդկանց միջեւ: Զաղաքական արդարությունը բնորոշելով որպես քաղաքական իրավունք, Արիստոտելի մոտ քաղաքական իրավունքը տարանջատվեց բնական եւ պայմանական իրավունքի՝ ամրագրելով այն բացառիկ կարեւոր ընդհանրացումները, որ, նախ՝ **օրենքը չի կարող բռնությունը դարձնել իրավունք կամ ուժը ներկայացնել որպես իրավունքի աղբյուր, եւ ապա՝ պայմանական իրավունքը պետք է ներդաշնակ լինի բնական իրավունքին**: Օրենքի հիմքում պետք է ընկած լինի քաղաքական արդարությունը: Չպետք է մոռանանք, որ Արիստոտելի մոտ քաղաքական արդարությունը կամ քաղաքական իրավունքը հանդես էին գալիս որպես արդարություն կամ իրավունք՝ ընդհանրապես: Արիստոտելը շատ հստակ ու միանշանակ ձեւակերպեց, որ **յուրաքանչյուր օրենքի հիմքը պետք է լինի իրավունքը, եւ այդ իրավունքն օրենքի միջոցով պետք է պաշտպանված լինի**: Արիստոտելի մոտ այսօրվա պատկերացմամբ իրավական կարող էր կոչվել այն պետությունը, **որտեղ իշխում է իրավունքը պաշտպանող օրենքը**: Ժողովրդավարության հիմքերի հիմքն էր համարվում ոչ միայն այն, որ մարդիկ իրավահավասար են (ստրուկներն էլ հա-

226 Нерсесянц В.С. Философия права. М., 1997, էջ 404:  
227 Платон. Государство, Законы, Политик. М., 1998, էջ 171:

վասար են՝ իրենց իրավագրկությանը), այլև ու առավել եւս այն, որ նրանք **իրավունակ** են:<sup>228</sup>

Արիստոտելն օրենքի ժողովրդավարական բնույթը տեսնում էր հենց այն բանում, թե այն որքանով է համապատասխանում իր իրավական բովանդակությանը՝ դառնալով բոլորի համար պարտադիր վարքագծի կանոն:<sup>229</sup>

Հայտնի է, որ հին հռոմեական իրավունքը ոչ միայն հանդես եկավ որպես ինքնուրույն գիտություն՝ հստակեցնելով հանրային ու մասնավոր իրավունքի սահմանները, այլև **բնական իրավունքը** ներկայացվեց իր բնական նախասկզբի ամբողջականության մեջ:<sup>230</sup>

Չանդրադառնալով հին հունական ու հռոմեական փիլիսոփայական-իրավական մտքի մեծերի հանճարեղ ընդհանրացումների մանրամասներին, ավելացնենք, որ 17-18-րդ դարերի տեսաբաններից Ջոն Լոկի, Մոնտեսքյոյի, Ժան-ժակ Ռուսոյի, հետագայում նաեւ՝ Կանտի եւ այլոց մոտ ոչ միայն առավել հստակ գատորոշվեց իշխանությունների տարանջատման գաղափարը, այլև իրավունքի գերակայության, բնական իրավունքի սուբստանցի ըմբռնումն ստացավ նոր որակ՝ պահպանելով այն կարմիր թելը, որ **օրենքն իրավունքի մարմնացումը պետք է լինի:**

Հայ իրավական մտքի պատմության մեջ, ինչպես հիշատակել ենք, ուշադրության են արժանի Մխիթար Գոշի, ինչպես նաեւ Հակոբ եւ Շահամիր Շահամիրյանների որոշակի դիրքորոշումները բնական (Աստվածային) իրավունքների գերակայության հարցում եւ այդ մոտեցման սահմանադրական՝ ուշադրության արժանի ձեւակերպումը «Որոգայք փառացում»:

**Ինչպիսի իրավափիլիսոփայական բնութագրում էլ տանք իրավունքի հասկացությանը, այն, իրապես, սոցիալական երեւույթ է,<sup>231</sup> ունի բնական հիմք եւ բանական էակի սոցիալական**

228 Аристотель. Этика, Политика, Риторика, Поэтика, Категории. М., 1998, էջեր 616, 623, 624:

229 Արիստոտել, Աթենական հասարակարգը, Երեւան, 2003, էջեր 26-27:

230 Гарольд Дж. Берман. Западная традиция права: эпоха формирования. М., 1998, էջ 28-34:

231 Алексеев С.С. Философия права. М., 1999, էջ 2:

## **Լուրջան ինքնադրսեւորման պայմանն ու միջոցն է:**

Ի դեպ, քրիստոնեական մտածողության մեջ (Աստվածաշունչ, Հին կտակարան, Գիրք ծննդոց, 1-ին մաս) մարդն Աստծո պատկերով է ստեղծվել եւ արժանի է հարգանքի: «Ղեւտական» գրքի ներածականում ասվում է. «Սրբության Աստվածը, սիրո ու կյանքի Աստվածը ուզում է իր ժողովրդին մասնակից դարձնել իր սրբությանը, որպեսզի նա էլ իր հերթին դառնա կրողը կյանքի, սիրո եւ սրբության»:<sup>232</sup>

Հենց այդ նպատակով է, որ Աստվածաշունչը հուշում ու սովորեցնում է ճիշտ ապրելու, մարդակերպ ու արժանապատիվ ապրելու կանոնները: Դրա լավագույն դասերից է այն, որ **պետությունը պետք է գոյություն ունենա մարդու համար եւ ոչ թե մարդը՝ պետության:**

Իրավափիլիսոփայական միտքն օրենքի եւ իրավունքի հարաբերակցության հիմնահարցը քննության առարկա է դարձրել նաեւ բարոյագիտական առումով: Բանն այն է, որ իրավական օրենքը «... վեհացնում է իշխանության բարոյական նշանակությունը»,<sup>233</sup> ներդաշնակում եւ ընդհանուր հայտարարի է բերում անհատների փոխադարձորեն ճանաչելի եւ հասարակականորեն ընդունելի շահերը, դառնում է արդարության չափանիշ եւ արդարադատության իրականացման հիմք:

**Ինչպես դիպուկ բանաձեւել է Բ. Չիչերինը, իշխանության ողջ բարոյական նշանակությունը հիմնված է այն բանի վրա, որ նա իր ձեռքում ունի արդարադատության սուրը, իսկ արդարադատությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուրին վերապահվի այն, ինչ իրեն է պատկանում:**

Իսկ եթե այդ սուրը, կոչված լինելով պաշտպանել իրավունքը, դառնում է իրավունքի ոտնահարման զենք, դրանով իսկ ժողովրդի աչքում ոչնչանում է վերջինիս բարոյական ուժը, իսկ դա ունի կործանարար նշանակություն թե՛ իրավագրկվածների եւ թե՛ հենց իշխանության համար:<sup>234</sup>

232 Աստվածաշունչ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994, էջ 117:

233 Чичерин Б. Н. Курс государственной науки. Ч. 3. М., 1898, էջ 401:

234 Նույն տեղում, էջեր 133-134:

Պատմական այս համառոտ ակնարկն այն նպատակն ուներ, որպեսզի կարողանայինք հիմնական դասերը ճանաչելով՝ հստակ արձանագրել իրավափիլիսոփայական մտքի կողմից ընդհանրացված հետեյալ անառարկելի ճշմարտությունները.

- մարդը, որպես սոցիալական երեւոյթ, հասարակական հարաբերությունների մեջ է մտնում իր բնական ու անօտարելի իրավունքներով,
- պետությունը պարտավոր է մարդու իրավունքները ճանաչել որպես բարձրագույն եւ անօտարելի արժեք, որպես սահմանադրորեն ամրագրված անմիջական գործող իրավունք,
- ամեն մի օրենք բխում է այդ իրավունքներից, պաշտպանում է այդ իրավունքները, դրանք սահմանափակում է միայն ու միայն այն չափով, որչափով դա անհրաժեշտ է այլոց իրավունքների ճանաչման ու երաշխավորման, հասարակական ներդաշնակ համակեցության համար,
- մարդու բնական իրավունքներն են ընկած ժողովրդի եւ պետության կողմից իշխանության իրականացման հիմքում: Իրավունքով է իշխանությունը սահմանափակվում, եւ ոչ թե իշխանությամբ՝ իրավունքը,<sup>235</sup>
- մարդու սահմանադրական իրավունքների անմիջական գործողությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ, օրենքներով եւ իրավակիրառական պրակտիկայով,
- այդ իրավունքները համընդհանուր են, ունեն պաշտպանության ոչ միայն ներպետական, այլեւ միջազգային երաշխիքներ:

**Սահմանադրությունն ամրագրելով մարդու իրավունքների ճանաչման ու պաշտպանության նկատմամբ մեթոդաբանական որոշակի դիրքորոշում, կանխորոշում է օրենսդրորեն դրա նյութ-**

235 Ինչպես նշում է ակադեմիկոս Վ. Ներսեյանցը՝ «...օրենքը (այն, ինչը սահմանվում է որպես պոզիտիվ իրավունք) կարող է թե՛ համապատասխանել եւ թե՛ հակասել իրավունքին...: Միայն որպես իրավունքի արտահայտման ձեւ է օրենքը (պոզիտիվ իրավունքը) իրավական երեւոյթ: ... Ոչ թե իրավունքն է պաշտոնական-իշխանական համապարտադրականության հետեւանք, այլ հակառակը...» (Տե՛ս Ներսեյանց Վ. Ս., Իրավունքի եւ պետության տեսություն, Երեւան, «Նաիրի», 2001, էջեր 41-43):

**քականացման բնույթը, ինստիտուցիոնալ ապահովումը եւ համակարգային երաշխավորումը:** Սահմանադրությունն ինքը չպետք է իրավունքի գերակայության սկզբունքի ամբողջական ու լիարժեք գործադրման արգելակ դառնա: Ուստի, անհրաժեշտ ենք համարում քննության առարկա դարձնել բուն սահմանադրական դիրքորոշումը մարդու իրավունքների ու ազատությունների նկատմամբ:

Ինչպես նշեցինք, իրավահավասարության սկզբունքը միս ու արյուն է ստանում, երբ զուգորդվում է իրավունակության հետ (հավասար են նաեւ ստրուկները): Ժողովրդավարական ու իրավական համակարգերում խոսքն իրավունակ՝ իրավունքները ճանաչված, հարգված եւ երաշխավորված պաշտպանված, սուբյեկտների իրավահավասարության մասին է: Իսկ օրենքը ոչ միայն իրավունքի ճանաչումն է, այլեւ դրա բանական սահմանափակումը՝ այլոց իրավունքները չոտնահարելու համար: **Հարցերի հարցը մարդու բնական իրավունքների ճանաչումը, օրենսդրորեն ամրագրումը, գործնական ապահովումը եւ երաշխավորված պաշտպանումն է:**

Լավագույն, հիմնավոր ու ամբողջական սահմանադրական բանաձեւումը, մեր կարծիքով, կարող է լինել. «... **պետությունը ճանաչում եւ երաշխավորում է իրավունքի գերակայության ու օրենքի իշխանության սկզբունքը**»: Նման ձեւակերպումը երաշխավորում է մեթոդաբանական ճիշտ մոտեցում, բնական իրավունքների առաջնայնության ընդունում, օրենքի սուբստանցի՝ իրավունքի ճանաչում, դրա սահմանափակման հասարակական համաձայնության ընդգծում, իրավունքների ազատության եւ իշխանության սահմանափակման հստակ հայեցակարգի ամրագրում: Օրենքը դառնում է անհատի ազատության, անվտանգության եւ սեփականության պաշտպանը, **նրա իրավունքների իրացման երաշխավորը**.<sup>236</sup>

Սահմանադրական հիմնական պահանջն այդ իրավունքների գերակայության, առաջնայնության, ելակետային բնույթի, անօ-

236 Четвернин В.А. Понятия права и государства. Введение в курс теории права и государства. М., 1997, էջ 26:



տարելիության ճանաչումն ու ամրագրումն է: Եթե չկա այդ ճանաչումը, ապա անխուսափելիորեն առաջին պլան կարող է մղվել իշխանության իրավունքի թելադրող դերը, իսկ Սահմանադրությունը, տվյալ դեպքում, «սահման կղմի» ոչ թե իշխանության իրավունքի, այլ մարդկանց ազատությունների վրա, դրանով իսկ ամրագրելով բռնապետության սկզբունքներ:

Նման պարագայում պետությունը նույնպես ակամայից հանդես կգա ոչ թե որպես հասարակության ընդհանրական պահանջներից թելադրված կարգավորիչ միջոց, այլ որպես բնական ինքնավերարտադրվող անհրաժեշտություն, որն սկսում է գործել ինքնապահպանության ու ազդեցության անկաշկանդ ուժեղացման տրամաբանությամբ:<sup>237</sup> Դա կհանգեցնի նրան, որ օրենքը, պարզապես, կդառնա իրավունքի բռնադատման գործիք: Իսկ բերված պատմատրամաբանական վերլուծությունը վկայում է, որ **օրենքը պետք է ազատության, այլ ոչ թե դրա սահմանափակման ու բռնադատման երաշխավորը լինի:**

Այս հարցն ավելի հրատապ ու սուր է դրված մայրցամաքային իրավական համակարգերում: Անգլոսաքսոնական նախադեպային համակարգերում արդարադատական նախադեպն է ընկած իրավունքի նյութականացման հիմքում, մայրցամաքային համակարգերում՝ քաղաքական փոխհամաձայնությամբ ամրագրված պոզիտիվ իրավունքը: Նման պարագայում սահմանադրական սկզբունքների ու նորմերի հստակությունը, ամբողջականությունը, ներքին համակարգվածությունը ձեռք են բերում բացառիկ կարեւոր նշանակություն:

Իսկ ի՞նչ է հուշում միջազգային իրավական պրակտիկան: Հարյուրից ավելի երկրների սահմանադրությունների համեմատական վերլուծությունը վկայում է, որ գրեթե բոլոր երկրների սահմանադրություններում կամ սահմանադրական նորմերի բնույթ ունեցող՝ մարդու իրավունքների հռչակագրերում ամ-

րագրվում է հայեցակարգային մոտեցումը մարդու իրավունքների նկատմամբ, իսկ 65-ից ավելի երկրների սահմանադրություններում հստակ մոտեցում է դրսևտրված նաեւ անձի արժանապատվության սահմանադրական սկզբունքի նկատմամբ: Վերջինիս նվիրված է մեկ կամ ավելի հոդված, շեշտվում է անձի արժանապատվության անձեռնմխելիությունը՝ որպես անքակտելի իրավունք, անօտարելիությունը, հարգման եւ պաշտպանման՝ պետության պարտավորությունը, ինչպես նաեւ առնչությունները մարդու իրավունքների ու ազատությունների հետ:

Առաջին հերթին կցանկանայինք առանձնացնել այն երկրների օրինակները, որտեղ սահմանադրական հստակ դիրքորոշում գոյություն ունի իրավունքի առաջնայնության ու գերակայության, իրավունքի ու օրենքի ներդաշնակ կապի առումով:

Գերմանիայի Դաշնության Սահմանադրության առաջին հոդվածի 1-ին կետն ամրագրում է, որ մարդու արժանապատվությունն անձեռնմխելի է: Դրա պաշտպանումը եւ հարգումն ամեն մի պետական իշխանության պարտականությունն է: Նույն հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ գերմանական ժողովուրդն ընդունում է մարդու **անձեռնմխելի ու անօտարելի** իրավունքները՝ որպես ամեն մի մարդկային հանրության, խաղաղության եւ աշխարհում արդարության հիմք: 3-րդ կետն ամբողջականացնում է հայեցակարգային մոտեցումը՝ ամրագրելով, որ ներկայացվող հիմնական իրավունքները **պարտադիր են օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների համար**՝ որպես **անմիջականորեն գործող իրավունք:**

Նման մոտեցումը, մեր կարծիքով, դասական, ամբողջական, հետետողական ու օրինակելի մոտեցում է: Նմանօրինակ մոտեցում է արտացոլված նաեւ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 18 եւ 21, Իսպանիայի՝ 10, Չեխիայի՝ 1-3, Վրաստանի՝ 7, Ուկրաինայի՝ 8, Լեհաստանի՝ 30, Ռումինիայի՝ 1, Սլովենիայի՝ 15, Պորտուգալիայի՝ 1 հոդվածներում: Որպես հստակ ու ամբողջական ձեւակերպման օրինակ՝ կցանկանայինք ներկայացնել նաեւ Վրաստանի Սահմանադրության 7 հոդվածը, որում ասվում է. «Վրաստանը ճանաչում եւ հետեւում է մարդու հանրա-

237 Պետությունը չի կարող ստեղծվել մի քանի անհատի երջանիկ դարձնելու համար: Նրա նպատակը հասարակությանը երջանիկ դարձնելն է (Платон. Государство. Собр. соч. Т. 3. М., 1994. էջ 189):

ճանաչ իրավունքներին ու ազատություններին՝ որպես մարդկային բարձրագույն արժեք: Իշխանությունն իրականացնելիս ժողովուրդը եւ պետությունը սահմանափակված են այդ իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունքի»:

Կարծեք ամեն ինչ ասված է հստակ ու միանշանակ: Առանձնացնենք հետեւյալ պարագաները.

1. երկիրը ճանաչում է մարդու հանրաճանաչ իրավունքներն ու ազատությունները,
2. հետեւում է դրա պահպանմանը,
3. այն ընդունում է որպես բարձրագույն մարդկային արժեք,
4. այդ իրավունքներն ու ազատությունները ոչ միայն պետության, այլև ժողովրդի համար իշխանության իրականացման սահմանափակիչներն են:

Ինչպես տեսնում ենք, սահմանադրական նման մոտեցման հիմնական փիլիսոփայությունն այն է, որ, ինչպես արդեն նշվել է, **ոչ թե իշխանությամբ իրավունքն է սահմանափակվում, այլ իրավունքով՝ իշխանությունը:** Համոզված ենք, որ այն սահմանադրությունները, որոնք նման որոշակիությամբ մեթոդաբանական այս մոտեցումը չեն որդեգրել, թերի են ու էապես անկատար:

Հիմնական հետեւությունը նաեւ այն է, որ Սահմանադրության իրավական հիմքը հենց իրավունքի գերակայության ճանաչումն ու ամրագրումն է: Այս առումով է, որ նման Սահմանադրության գերակայության երաշխավորումը երաշխիք է իրավունքի գերակայության երաշխավորման համար: Իր հերթին, իրավակիրառական եւ օրինաստեղծ պրակտիկայի համար չափազանց կարեւոր է Սահմանադրության գերակայության չափանիշների հստակեցումը: Պրոֆեսոր Յու. Տիխոմիրովը, օրինակ, առանձնացնում է յոթ նման չափանիշներ. 1. սահմանադրական սկզբունքների ու գաղափարների արտացոլումն իրավական ակտում, 2. սահմանադրական հասկացությունների ու տերմինների ճիշտ օգտագործումը, 3. ակտի ընդունումն իրավասու սուբյեկտի կողմից, 4. իրավական համակարգում ակտի տեղի հաշվի առնելը եւ դրա ձեւին ներկայացվող պահանջները, 5. ակտի նախապատրաստման, ընդունման, ուժի մեջ մտնելու ընթացակարգերի

պաշտպանումը, 6. իրավական ակտի նորմի եւ Սահմանադրության համապատասխան նորմի բովանդակային համապատասխանությունը, 7. իրավական նորմերի բովանդակության իրավակիրառական մեկնաբանման ու պարզաբանման կայունությունը:<sup>238</sup> Թվարկված չափանիշներն իրենց բովանդակային ամբողջության մեջ, վերջին հաշվով, տալիս են մեկ հիմնահարցի պատասխան՝ որքանով է նորմատիվ ակտն իր ձեւի ու բովանդակության մեջ իրավական, իրավունքի էության ձեւականացում, իրավունքի արտահայտություն: Եթե այդպիսին է, ապա բխում է իրավունքի գերակայության երաշխավորման սկզբունքից եւ կարող է համարվել Սահմանադրությանը համապատասխանող: Փաստորեն, Սահմանադրության միջոցով, վերջինիս գերակայության ապահովման ճանապարհով է, որ իրավական ակտերում «միս ու արյուն է ստանում» իրավունքի գերակայության սկզբունքը:<sup>239</sup>

Փորձենք դիմել նաեւ միջազգային իրավական փաստաթղթերին: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանում ասվում է. «...մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվությունը եւ հավասար ու անօտարելի իրավունքները ազատության, արդարության ու աշխարհի խաղաղության հիմքն են»: Ավելացվում է նաեւ՝ «...անհրաժեշտ է օ-

238 Տե՛ս Тихомиров Ю.А. Коллизионное право. М., 2001, էջ 257:  
239 Ի դեպ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 55 հոդվածը սահմանում է, որ. «Սահմանադրական դատարանը դիմումում առաջադրված հարցի առնչությամբ պարզում է դրանում նշված իրավական ակտի կամ վերջինիս առանձին դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը, հիմք ընդունելով՝ 1) իրավական ակտի ձեւը. 2) իրավական ակտն ընդունելու ժամանակը, ստորագրելու, հրապարակելու եւ գործողության մեջ դնելու սահմանված կարգի պահպանումը. 3) իրավական ակտի նորմերի ընդհանրակառուցումը. 4) մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց թուլատրելի սահմանափակումների շրջանակները եւ հիմքերը. 5) Սահմանադրությամբ նախատեսված իշխանությունների տարանջատման սկզբունքը. 6) պետական մարմինների եւ պաշտոնատար անձանց լիազորությունների թուլատրելի սահմանները. 7) Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը:

**րենքի իշխանությամբ պաշտպանել մարդու իրավունքները»:** Նույն Հռչակագրի մասնավորապես 1, 6, 8, 29 հոդվածները ոչ միայն հստակ ամրագրում են մարդու բնական իրավունքների անօտարելիության, նրանց ազատության ու իրավահավասարության սկզբունքները, այլև՝ հասարակության հանդեպ ունեցած պարտականությունները եւ իրավասուբյեկտի կարգավիճակը: Իսկ հոդված 8-ը միանշանակ սահմանում է մարդու արդարատության իրավունքը՝ լիազոր դատարանների միջոցով վերականգնելու Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված՝ իր խախտված իրավունքները:

Մեթոդաբանական նույն մոտեցումն արտացոլված է նաեւ ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, որի նախաբանում նույնպես փաստվում է հավատարմությունը մարդու հիմնական իրավունքների, նրա արժանապատվության հանդեպ: Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրում (16.12.1966թ.) նույնպես ամրագրված է, որ **մարդու արժանապատվության ու հավասար եւ անօտարելի իրավունքների ճանաչումը ազատության, արդարության եւ համընդհանուր խաղաղության հիմքն է, որ այդ իրավունքները բխում են մարդկային անհատին բնորոշ արժանապատվությունից:** Նույն Դաշնագրի հոդված 16-ը սահմանում է մարդու իրավասուբյեկտության սկզբունքը: Դաշնագիրը, ելնելով այն հիմնադրույթից, որ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին համապատասխան, քաղաքացիական եւ քաղաքական ազատությունից օգտվող եւ վախից ու կարիքից ձերբազատված մարդկային ազատ անհատի իր դեպքը կարող է իրականանալ, եթե միայն ստեղծվեն այնպիսի պայմաններ, երբ յուրաքանչյուրը կարող է օգտվել ինչպես իր քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից, այնպես էլ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից», նախատեսում է նաեւ օրենքով այդ իրավունքների հնարավոր սահմանափակման թույլատրելի սահմանները:

Հայաստանն անդամակցելով Եվրախորհրդին, միացավ այս կազմակերպության՝ 1949թ. մայիսի 5-ին Լոնդոնում ստորագր-

ված կանոնադրությանը, որի հոդված 3-ը միանշանակ սահմանում է. «Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի **իրավունքի գերակայության** սկզբունքը եւ այն սկզբունքը, որի համաձայն յուրաքանչյուր անձ, ով գտնվում է այդ անդամի իրավագործության ներքո, պետք է օգտվի մարդու իրավունքներից եւ հիմնարար ազատություններից»:

Ցանկանում ենք հատուկ առանձնացնել նաեւ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան (4.11.1950թ.), որի նախաբանում ոչ միայն ամրագրված են վերոհիշյալ դրույթները, այլև շեշտադրված են այնպիսի հասկացություններ ու ձեւակերպումներ, ինչպիսիք են՝ «մարդու իրավունքների համընդհանուր եւ **արդյունավետ** ճանաչում», «մարդու իրավունքների պաշտպանությունը գլխավորապես պայմանավորված է... համակարգի **իրական ժողովրդավարական** բնույթով», «ազատությունների հարգում եւ **իրավունքի գերակայություն**»<sup>240</sup> եւ այլն: Հատկապես ուշադրության է արժանի վերջին ձեւակերպումը: Այն օգտագործվում է Կոնվենցիայի նախաբանում՝ որպես եվրոպական երկրների քաղաքական ավանդույթների ու իդեալների, **միասնական արժեքնկալման արտահայտություն:** Այս Կոնվենցիան առանձնահատուկ է նաեւ նրանով, որ վերջինիս նորմերն ուղղակի գործողության նորմեր են եւ պաշտպանվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից: Ամրագրելով մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները, Կոնվենցիան սահմանում է նաեւ դրանց սահմանափակման եւ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղման թույլատրելի սահմանները: Ընդ որում, այդ սահմանափակումները պետք է սահմանվեն օրենքով, լինեն համաչափ, չաղավաղեն իրավունքի էությունը: Կոնվենցիայի պահանջն է նաեւ սահմանազատել հիմնական իրավունքները սոցիալ-տնտեսական ու մշակութային իրավունք-

240 Сборник документов Совета Европы в области защиты прав человека и борьбы с преступностью. М., 1998, էջ 34:

ներից՝ յուրաքանչյուրի նկատմամբ դրսեւորելով միջազգային իրավունքի նորմերով ու սկզբունքներով սահմանված համապատասխան մոտեցում: Կոնվենցիան ու դրան կից արձանագրությունները բովանդակում են մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների վերաբերյալ այնպիսի նորմեր, որոնց ուղղակի գործողությունը պետք է երաշխավորված լինի Եվրախորհրդի անդամ յուրաքանչյուր երկրում: Հետեւաբար, այդ նորմերը պետք է լիարժեք խորությամբ ու հստակությամբ սահմանադրական ամրագրում ու պաշտպանվածություն ունենան:

Առանձնակի ուշադրության է արժանի նաեւ «Փարիզի խարտիան նոր Եվրոպայի համար» (21.11.1990թ.): Աշխարհում տեղի ունեցող ժողովրդավարական նոր գործընթացներն անհրաժեշտություն դարձրին Փարիզի խարտիայում միջազգային իրավունքների մակարդակով ամրագրել, որ «...Մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները ի ծնե պատկանում են բոլոր մարդկանց, դրանք անօտարելի են եւ **երաշխավորվում են օրենքով**», «Դրանք պաշտպանելը եւ դրանց աջակցումը **կառավարությունների առաջնային պարտականությունն է**», «**Դրանց հարգումը էական երաշխիք է՝ ի հակակշիռ մեծ իշխանություն ունեցող պետության**», «**Դրանց պահպանումը եւ լրիվությամբ իրականացումը ազատության, արդարության եւ խաղաղության հիմքն է**»:

Ավելացնենք նաեւ, որ Մարդու իրավունքների ու ազատությունների 1789թ. ֆրանսիական հռչակագրում շատ դիպուկ է բնորոշված՝ «...մարդու իրավունքները հաշվի չառնելը, դրանց անտեսումը կամ արհամարհումը միակ պատճառն է հասարակական դժբախտությունների եւ կառավարությունների այլասերման»:

Իրավունքի գերակայության սկզբունքը եվրոպական սահմանադրագիտության անկյունաքարային դրույթներից մեկը լինելով հանդերձ, նոր զարգացում ստացավ Եվրոպական միության վերոնշյալ Սահմանադրության նախագծում: Նախագծի 2-րդ հոդվածը պարզապես անվանվեց «Միության արժեքները»: Այն սահմանադրական մակարդակով ամրագրում է, որ «**Միությունը**

**հիմնված է այնպիսի արժեքների վրա, ինչպիսիք են մարդկային արժանապատվությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, իրավունքի գերակայությունը եւ մարդու իրավունքների հարգումը: Այս արժեքներն ընդհանուր են Անդամ պետությունների համար, որոնցում հասարակությանը բնորոշ են անխտրականությունը, բազմակարծությունը, հանդուրժողականությունը, արդարադատությունը եւ համերաշխությունը**»:

Սրանք լույս բառեր չեն, այլ քաղաքակրթական մի ամբողջ համակարգի հիմքը կազմող արժեքներ են, եւ եվրոպական ընտանիքին լիարժեք անդամակցելու մտադրություն ունեցող յուրաքանչյուր երկրում այս արժեքները պետք է դառնան կենսունակ ու հիմնաքարային նշանակության կողմնորոշիչներ:

Բերված բոլոր օրինակները միարժեքորեն վկայում են, որ Սահմանադրության գերակայության ապահովման հիմնահարցը, վերջին հաշվով, հանգում է մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորված պաշտպանությանը՝ տարանջատված իշխանությունների ներդաշնակ գործակցության ապահովման ճանապարհով: Եվ քանի որ այդ իրավունքները «... անմիջականորեն գործող իրավունքներ» են, դրանց պաշտպանության գլխավոր երաշխիքներն են սահմանադրորեն ամրագրումը եւ կենսունակ արդարադատական համակարգը:

Եվրոպական երկրների վերջին տասնամյակների փորձն անառակելիորեն վկայում է, որ մարդու իրավունքների պաշտպանությունն առավելապես երաշխավորված է, եթե մարդն իր խախտված իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունք ունի: Այսինքն՝ արդարադատության իրավունքը մարդու իրավունքների պաշտպանության կարեւոր երաշխիքն է դառնում:<sup>241</sup> Սակայն նման ձեւակերպումն անկատար ու թերի է, եթե խարսխվում է մարդու իրավունքների հայեցական ըմբռնման վրա: Բանն այն է, որ մարդու եւ քաղաքացու իրավունքները, նույնիսկ եթե դրանք ամբողջական արտացոլում չեն

241 Արդարադատությունը՝ իրավունքն է գործողության մեջ, իրականացման գործընթացում: Стен Алексей С.С. Право: азбука-теория- философия: Опыт комплексного исследования. М., 1999. էջ 50.

գտել Սահմանադրության մեջ (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 43), **չեն կարող, նրանից օտարվելով, դառնալ պետական կառավարման գործառույթ**: Եթե այդ իրավունքները ճանաչվում եւ ամրագրվում են Սահմանադրության մեջ, եթե Սահմանադրությամբ են որոշարկվում դրանց սահմանափակման շրջանակները, եւ եթե այդ իրավունքները կարող են նաեւ ոտնահարվել ոչ միայն տարաբնույթ գործողությունների ու անգործության, այլեւ «քաղաքական համաձայնության արդյունք հանդիսացող» օրենքների կամ այլ նորմատիվ ակտերի միջոցով, ապա այդ իրավունքների պաշտպանությունը երաշխավորված կլինի միայն ու միայն այն դեպքում, երբ մարդն օժտված է նաեւ սահմանադրական արդարադատության իրավունքով:

Իրավունքի գերակայության երաշխավորման եւ մարդու իրավունքների հնարավոր սահմանափակումների հիմնահարցերը ներկայումս միջազգային սահմանադրական զարգացումների առանցքային հիմնահարցերից են: 2003թ. հոկտեմբերի 3-ին եւ 4-ին Երեւանում հրավիրված միջազգային կոնֆերանսին ներկա գտնվող շուրջ երկու տասնյակ երկրներից ու մի շարք միջազգային կազմակերպություններից ժամանած մասնագետները քննության առարկա դարձրին մարդու իրավունքների սահմանափակման չափանիշների հիմնահարցը:<sup>242</sup> Այս թեման դարձավ նաեւ Եվրոպական սահմանադրական դատարանների 2005թ. մայիսին Նիկոսիայում հրավիրված կոնգրեսի քննարկման նյութը՝ որպես առավել հրատապ թեմա, եւ որի վերաբերյալ բոլոր երկրները ներկայացրել էին իրենց ազգային զեկույցները: Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի եւ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 2004թ. հոկտեմբերին Երեւանում հրավիրված միջազգային կոնֆերանսն անդրադարձավ իրավունքի գերակայության երաշխավորման հիմնահարցին՝ քննարկելով տարբեր երկրներից ներկայացված 20-ից ավելի զեկույցներ:<sup>243</sup> ՀՀ սահմա-

նադրական բարեփոխումների ուղղությամբ Վենետիկի հանձնաժողովի՝ 7 երկրների ներկայացուցիչներից կազմված փորձագետների խմբի հետ սկզբնական շրջանում շուրջ երկու տարի (2000-2001թթ.) ընթացող քննարկումների ժամանակ նույնպես այդ հարցերն էին առանցքայինն ու ելակետայինը՝ ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածում ամրագրված նորմ-սկզբունքների իրացումը երաշխավորելու համար:

Նշված քննարկումները, միջազգային սահմանադրական զարգացումների միտումներն անառարկելիորեն վկայում են, որ իրավական, ժողովրդավարական պետության կայացման համար առանցքային խնդիրն իրավունքի գերակայության երաշխավորումն է: Վերջինս հնարավոր է, եթե առկա է նաեւ հստակ հայեցակարգ իրավունքների հնարավոր սահմանափակումների խնդրի առնչությամբ: Ելակետային մոտեցումն այն է, մարդու բնական, աստվածային իրավունքները վերաբերում են սոցիալական հանրության օրգանական մաս կազմող ամեն մի անհատի եւ դրանք կարող են սահմանափակվել միայն այն չափով, որչափով անհրազորձելի են դարձնում այլոց իրավունքներն ու բնականոն համակեցությունը: Այլ խոսքով, **մարդու իրավունքների սահմանափակման գլխավոր եւ միակ չափանիշն այլոց իրավունքների ու բնականոն համակեցության երաշխավորումն է**: Այս մոտեցումն է դրված նաեւ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հիմքում, որի հոդված 29-ում սահմանված է, որ «Իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք ենթակա է միմիայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով՝ բացառապես ուրիշների իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգանքն ապահովելու և ժողովրդավարական հասարակությունում բարոյականության արդարացի պահանջները, հասարակական կարգը և ընդհանուր բարեկեցությունը բարելավելու նպատակով»:

Մենք կարծում ենք, որ տարբեր չափանիշների փնտրտուքը միայն հասկացութային լուրջ շփոթ է առաջացնում:

Սակայն տարբերակման անհրաժեշտություն ունեն իրավուն-

242 St'u Конституционное правосудие в новом тысячелетии. Международный Альманах - 2003, Ереван, 2003.

243 St'u Конституционное правосудие в новом тысячелетии. Международный Альманах - 2004, Ереван, 2004.

քի սահմանափակման «չափանիշ», «սկզբունք», «պայման», «հիմք» հասկացությունները:

Ելակետային համարելով նշված չափանիշը՝ տարաբնույթ «սկզբունքները», «պայմանները», «հիմքերը» կոչված են նրան, թե ինչպե՞ս ապահովել եւ երաշխավորել, որպեսզի այդ չափանիշից շեղում չլինի: Այս հարցի պատասխանը տալիս է միջազգային սահմանադրական պրակտիկան՝ ելնելով նշված չափանիշից սահմանելով իրավունքների սահմանափակման հետեւյալ սկզբունքները (այսպես կոչված՝ «ոսկյա կանոնները»): իրավունքի սահմանափակումը պետք է.

- իրականացվի օրենքի հիման վրա,
- պահպանվի համաչափության սկզբունքը,
- չաղավաղվի իրավունքի էությունը:

Դա նշանակում է, որ սահմանափակումները կարող են կատարվել միայն օրենքով, հանուն Սահմանադրությամբ նախատեսված եւ ժողովրդավարական հասարակության համար անհրաժեշտ իրավաչափ նպատակի, ինչպես նաեւ սահմանափակման հետեւանքով իրավունքը չպետք է գրկվի իր բովանդակությունից, չպետք է վտանգվի իրավունքի գոյությունը, աղավաղվի դրա էությունը:

Չափազանց կարեւոր է նաեւ, թե ինչպես են նշված չափանիշը եւ դրա կիրառումն ապահովող սկզբունքներն ընկալվում, մեկնաբանվում եւ գործադրվում սահմանադրական արդարադատության պրակտիկայում:

Ըստ սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկայի՝ **պետությունը կարող է սահմանափակել իրավունքը, եթե սահմանափակումն արդարացված է այլ իրավունքների պաշտպանությամբ կամ որեւէ այլ սահմանադրական արժեքի պաշտպանությամբ, կամ սահմանադրական նպատակով, եթե պաշտպանությունը կամ նպատակի ձեռքբերումը չի կարող իրականացվել որեւէ այլ միջոցով՝ ելնելով իրավունքի գերակայության սկզբունքից:**

Սահմանադրական լուծումների մակարդակում սահմանա-

փակման ենթակա իրավունքների համակարգն ունի հետեւյալ կառուցվածքը.

ա/ իրավունքներ, որոնք կարող են սահմանափակվել օրենքով՝ առանց որեւէ այլ պայմանի: Այս դեպքում օրենսդիրն ունի հայեցողության լայն շրջանակ,

բ/ իրավունքներ, որոնք կարող են սահմանափակվել օրենքով՝ միայն որոշակի պայմաններով, որոշակի նպատակներով կամ որոշակի միջոցներով,

գ/ իրավունքներ, որոնց սահմանափակումը չի կարող կատարվել օրենքով: Հաշվի առնելով այս իրավունքների իրականացման եւ երրորդ անձանց իրավունքների միջեւ բախման վտանգը, այս իրավունքները, այնուամենայնիվ, բացարձակ չեն եւ կարող են սահմանափակվել: Քանի որ այս իրավունքները չեն կարող սահմանափակվել օրենքով, դրանց իրականացման սահմանափակումներն ամրագրվում են սահմանադրական մակարդակով,

դ/ մարդկային արժանապատվության պաշտպանությունը եւ մի շարք իրավունքներ դուրս են սահմանափակումների տարբերակված համակարգից, քանի որ այդ հիմնարար իրավունքները ոչ մի սահմանափակման ենթակա չեն:

Չնայած նրան, որ յուրաքանչյուր կոնկրետ իրավունքի սահմանափակման պայմանները սահմանվում են միայն տվյալ իրավունքի կապակցությամբ, Սահմանադրությամբ գծվում են բոլոր իրավունքների սահմանափակման արտաքին սահմանները: Այն է՝ իրավունքը սահմանափակող օրենքը պետք է վերաբերի ընդհանուրին եւ ոչ թե կոնկրետ դեպքի: Ոչ մի դեպքում չի կարող աղճատվել իրավունքի էությունը:

Տարբեր երկրներում տարբեր են, այսպես կոչված, բացարձակ, չսահմանափակվող իրավունքների շրջանակները: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրությամբ սահմանվում է նախ. օրենքով սահմանափակման ենթակա իրավունքների շրջանակը (Հոդված 44. Սահմանադրության 23-27 հոդվածներում ամրագրված մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե

դա անհրաժեշտ է պետական եւ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար):

Սահմանվում է նաեւ չսահմանափակվող իրավունքների շրջանակը (Հոդված 45. Մարդու եւ քաղաքացու առանձին իրավունքներ եւ ազատություններ, **բացառությամբ Սահմանադրության 17, 19, 20, 39, 41-43 հոդվածներում նշվածների - (ընդգծումը մերն է - Գ.Հ.),** կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական դրության ժամանակ կամ Սահմանադրության 55 հոդվածի 14 կետով նախատեսված դեպքերում): Այսինքն, նույնիսկ ռազմական կամ արտակարգ դրության պայմաններում չեն կարող թեկուզ ժամանակավորապես սահմանափակվել կյանքի իրավունքը, խոշտանգումների արգելումը, անձնական եւ ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը, արդար դատաքննության իրավունքը, անմեղության կանխավարկածի իրավունքը, պատժի համաչափության սկզբունքը:

Սահմանադրական լուծումների մակարդակում եւ իրավակիրառական պրակտիկայում չափազանց հրատապ է իրավունքների սահմանափակման համամասնականության սկզբունքի ճիշտ կիրառման խնդիրը: Արեւմտյան Եվրոպայի երկրների սահմանադրական արդարադատության պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ համամասնության սկզբունքը կիրառելիս՝ սահմանադրական դատարաններն առաջին հերթին պետք է պարզեն, թե արդյո՞ք իրավաչափ նպատակը համապատասխանում է իրավաչափ միջոցին: Ընտրված միջոցը պետք է բավարար լինի տվյալ նպատակին հասնելու համար, այն է՝ տվյալ նպատակը պետք է ձեռք բերվի ընտրված սահմանափակող միջոցի օգնությամբ: Անհրաժեշտությունն առկա է, եթե բոլոր հնարավոր միջոցներից ընտրված է այն միջոցը, որը նվազագույնն է սահմանափակում տվյալ իրավունքը: Այնուհետեւ, դատարանը պարտավոր է պարզել, թե արդյո՞ք անհատի իրավունքների սահմանափակումը համաչափ է հանրության համար հետապնդվող շահին:

Չափազանց կարեւոր է նաեւ այն հանգամանքը, որ իրավունքներն ու ազատությունները սահմանափակելիս օրենսդիրը չի կարող նախատեսել այնպիսի կարգավորում, որը ոտնձգություն լինի իրավունքի էության դեմ կամ հանգեցնի իրավունքի էության կորստին: Հանրային շահերը կարող են արդարացնել իրավունքի սահմանափակումները, եթե սահմանափակումները համապատասխանում են արդարության պահանջին, համաչափ եւ համամասն են սահմանադրորեն կարեւորվող արժեքներին եւ չունեն հետադարձ ուժ:

Համամասնության սկզբունքն ունի երեք տարր.

- սահմանափակումը պետք է հանդիսանա իրավաչափ նպատակի հասնելու միջոց,
- սահմանափակումն անհրաժեշտ է նպատակին հասնելու համար, քանի որ բացակայում են տվյալ իրավաչափ նպատակին հասնելու սահմանափակող այլ միջոցներ,
- ընտրված սահմանափակող միջոցը պետք է լինի արդարացի միջոց:

Համամասնության սկզբունքի ապահովումը գնահատելիս՝ սահմանադրական դատարանը պարտավոր է պատասխանել հետեւյալ հարցերին.

- եղե՞լ են, արդյոք, իրական պատճառներ իրավունքի սահմանափակման համար,
- առկա՞ է, արդյոք, սահմանափակման որեւէ այլ միջոց, որը կունենար նույն ազդեցությունը,
- արդյո՞ք սահմանափակման ընտրված միջոցն արդյունավետ է տվյալ իրավաչափ նպատակին հասնելու համար,
- արդյո՞ք սահմանափակումներն այն ծավալի են, որ անընդունելի են տվյալ իրավաչափ նպատակի համար:

Անհամաչափ սահմանափակումներից խուսափելու համար սահմանափակող նորմը պետք է լինի իրավական տեխնիկայի պահանջներին համապատասխան ձեւակերպված, կոնկրետ եւ հստակ, լայն մեկնաբանություն եւ կամայական կիրառում թույլ չտվող:

Իրավունքների սահմանափակումն ունի նաեւ մի շարք

վտանգներ: Այն առաջին հերթին վերաբերում է «... եթե դա անհրաժեշտ է պետական եւ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար» դրույթի, ինչպես նաեւ «...սահմանափակումները կարող են կատարվել հանուն Սահմանադրությամբ նախատեսված եւ ժողովրդավարական հասարակության համար անհրաժեշտ իրավաչափ նպատակի» դրույթի մեկնաբանմանը:

Երկու դեպքում էլ վտանգից խուսափելու հիմնական ճանապարհը համամասնության սկզբունքի հետեւողական իրացումն է՝ թե՛ օրենսդրի եւ թե՛ արդարադատություն իրականացնող մարմնի կողմից:

Առանձնահատուկ խնդիր է արտակարգ իրավիճակներում իրավունքների սահմանափակման հարցը: Այստեղ որոշակի հստակություն մտցրեց Եվրախորհրդի նախարարների կոմիտեն՝ 2002թ. հուլիսի 11-ին հաստատելով «Ղեկավար սկզբունքները» մարդու իրավունքների պաշտպանության եւ ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում:<sup>244</sup> Այդ փաստաթղթի 15 կետի 2-րդ ենթակետով հստակ սահմանված է, որ պետությունը ոչ մի դեպքում ու պարագայում, անկախ նրանից, թե ինչ բնույթ են ունեցել ահաբեկչություն կատարած կամ դրանում մեղադրվող անձի գործողությունները, չի կարող նահանջ կատարել կյանքի իրավունքից, խոշտանգումների ու մարդու արժանապատվությունը վիրավորող վերաբերմունքի կամ պատժի արգելումից, պատժի օրինականության ու քրեական օրենքի հետադարձ ուժի բացառման սկզբունքներից:

Երկրի ողջ իրավակարգի համար չափազանց կարեւոր է, որ պետական Սահմանադրության մեջ հստակ ամրագրվեն.

- այն իրավունքները, որոնք որեւէ սահմանափակման ենթակա չեն,

244 Руководящие принципы Комитета Министров Совета Европы в области прав человека и борьбы с терроризмом (утверждены на 804-м заседании Комитета Министров 11 июля 2002 г).

- այն իրավունքները, որոնց սահմանափակման շրջանակն ու կարգը սահմանվում են Սահմանադրությամբ,
- օրենքով սահմանափակվող իրավունքները եւ սահմանափակման պայմանները,
- արտակարգ իրավիճակներում իրավունքների սահմանափակման սահմաններն ու կարգը:

Առանձնապես վերջին պարագայում Սահմանադրության մեջ հատուկ ուշադրություն պետք է դարձվի իրավունքների սահմանափակման գործառնական, հակակշռող եւ զսպող լիազորությունների արդյունավետ գործող հաշվեկշռի երաշխավորմանը: Վերջինիս բացակայության եւ սահմանադրական անհստակությունների պայմաններում չափազանց ծանր կացության առջեւ կարող է հայտնվել սահմանադրական արդարադատության համակարգը՝ բախվելով իրավական սկզբունքների ու քաղաքական իրողությունների խոր հակամարտությանը:

**Ինչպիսի՞ն պետք է լինի մոտեցումը իշխանությունների տարանջատման հիմնահարցին:** Իշխանությունների տարանջատումը յուրաքանչյուր երկրի սահմանադրական լուծումների համար, անտարակույս, ունի հիմնաքարային նշանակություն:<sup>245</sup> Սահմանադրորեն այս սկզբունքի առաջին ամրագրումից անցել է 200 տարուց ավելի, սակայն կյանքը վկայում է, որ, անկախ տարաբնույթ մեկնաբանություններից, իշխանությունների տարանջատումն իրավական պետության համար եղել ու շարունակում է մնալ որպես անկյունաքարային արժեք, ձեռք է բերում նոր հիմաստ ու նշանակություն: Խորհրդային իրավունքը 20-25 տարի առաջ իշխանությունների տարանջատումը դիտարկում էր որպես «բուրժուական սկզբունք»՝ բնորոշ արտասահմանյան սահմանադրական մոդելներին: Սա է անցյալի իրավամտածողության ժառանգությունը, որի հաղթահարումը դյուրին գործ չէ: Մինչդեռ, ինչպես իրավագիտորեն նշում է Բեռլինի համալսարանի պրոֆեսոր Ա. Բլանկենագելը, իշխանությունների տարանջատումը

245 Այդ մասին մասնավորապես տե՛ս Алебастрова И.А. Основы американского конституционализма. М., 2001, էջեր 83-85:



մը նոր ու նորագույն ժամանակներում սահմանադրական պետության զարգացման հիմնական ձեռքբերումներից է:<sup>246</sup> Այդ սկզբունքի էությունը, վերջին հաշվով, կայանում է նրանում, որ առաջադրվում է պետական իշխանության սահմանափակման գաղափարը՝ դրա տարանջատված ճյուղերի փոխադարձ զսպման ու հակակշռման միջոցով:<sup>247</sup> **Գրա շնորհիվ հաղթահարվում է իշխանության կենտրոնացման վտանգը եւ անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծվում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների իրացման ու պաշտպանության համար:**

ԱՄՆ Սահմանադրության հայրերի մեծագույն ներդրումներից է համարվում այն, որ նրանք իշխանությունների տարանջատման տեսությունը լրացրին «հակակշիռների ու զսպումների համակարգի» դոկտրինայով, որը 1787թ. Սահմանադրության համար դարձավ անկյունաքարային արժեք:<sup>248</sup> Սկզբունքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ «հակակշիռների ու զսպումների համակարգի» միջոցով իշխանությունների «ստատիկ» տարանջատմանը «դինամիկ» բնույթ է հաղորդվում: Ինչպես ժամանակին իր մտահոգությունն է արտահայտել Հեգելը, եթե հաշվի չի առնվում իշխանությունների «կենդանի միասնությունը», ապա դրանց ստատիկ հավասարակշռումը միշտ վտանգված կլինի: Իր հերթին պրոֆեսոր Օ. Վ. Մարտիշինն իրավացիորեն գտնում է, որ «հակակշիռների ու զսպումների համակարգի» ոչ արդյունավետ գործադրումն ու տարանջատված իշխանությունների միայն ստատիկ հավասարակշռության հաստատումն անխուսափելիորեն բերելու է իշխանության կաթվածահարման ու ճգնաժամի:<sup>249</sup>

246 St'u Конституционный Суд как гарант разделения властей: Сборник докладов. М., 2004, էջ 5:

247 St'u Конституционный Суд как гарант разделения властей: Сборник докладов. М., 2004, էջ 256:

248 St'u Алебастрова И.А. Основы американского конституционализма, М., 2001, էջ 9:

249 St'u Мартышин О.В. Конституция Российской Федерации 1993 г. как памятник эпохи // Государство и право, 2004, N 4, էջեր 13-16:

Իշխանությունների տարանջատումը եւ քաղաքական, վարչական, տնտեսական ուժի օպտիմալ ապակենտրոնացումն օրգանապես կապված են եւ ներկայացնում են նույն երեւույթի տարբեր դրսեւորումները: Ընդ որում, խնդրին ձեւական մոտեցում դրսեւորելու դեպքում եւ տնտեսական, քաղաքական ու վարչական ուժի սերտաճած կենտրոնացման պայմաններում անխուսափելի են անհանդուրժողականությունը, կոռուպցիան, մաֆիան, կլանայնությունը, կրիմինալ անձնիշխանությունը, մի կողմից, մյուս կողմից՝ ոտնահարված մարդկային իրավունքներն ու արժանապատվությունը, սոցիալական բացասական էներգիայի գերկուտակումներն ու պայթյունի վտանգները:

Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի նախագահ, պրոֆ. Վ. Ջորկինը գտնում է, որ անկախ բազմաբնույթ դրսեւորումներից, իշխանությունների տարանջատումն առկա է միայն այնտեղ, ուր.

- օրենքն ունի բարձրագույն իրավաբանական ուժ եւ ընդունվում է օրենսդրի (ներկայացուցչական մարմնի) կողմից,
- գործադիր իշխանությունը հիմնականում զբաղված է օրենքների կատարմամբ, սահմանափակված է ենթաօրենսդրական նորմաստեղծմամբ ու ենթակա է խորհրդարանին կամ Նախագահին,
- օրենսդիր ու գործադիր իշխանության թեւերի միջեւ ապահովված է լիազորությունների հաշվեկշիռ,
- դատական մարմիններն անկախ են եւ իրենց իրավասությունների շրջանակում՝ ինքնուրույն,
- նախատեսված են իրավական միջոցներ իշխանության բոլոր թեւերի փոխադարձ հակակշռման համար:<sup>250</sup>

Իշխանությունների տարանջատման եւ հակակշռման խնդիրն առաջին հերթին բնորոշում է երկրում սահմանադրական ժողովրդավարության եւ պառլամենտարիզմի զարգացման աստիճանը: Ներպառլամենտական հարաբերություններում այդ

250 Зоркин В. Реализация конституционного принципа разделения властей в практике Конституционного Суда России. Конституционный Суд как гарант разделения властей: Сборник докладов. М., 2004, էջ 17:

սկզբունքն ստանում է յուրահատուկ դրսեւորում: Խնդիրն այն է, որ լայն իմաստով իշխանությունների հավասարակշռման համար գործառնական որոշակի դեր է վերապահվում նաեւ խորհրդարանական փոքրամասնությանը: Վերջինս պետք է կարողունակ լինի ու հնարավորություն ունենա քաղաքական մեծամասնությանը պահել սահմանադրական դաշտում՝ հակակշռելով նրա օրինաստեղծ գործունեությանը, հանդես գալ որպէս իրավական ակտերի սահմանադրականության հարցը նաեւ դատական քննության առարկա դարձնող լիիրավ սուբյեկտ: Հակառակ պարագայում գործ կունենանք «դե ֆակտո» միակուսակցական խորհրդարանի հետ՝ դրանից բխող բոլոր բացասական հետեւանքներով:

Միջազգային պրակտիկան վկայում է, որ իշխանությունների տարանջատման խնդիրն առավել դժվար է լուծել կառավարման, այսպէս կոչված, կիսանախագահական համակարգերում, ուր սահմանադրական լիազորությունների հարցերով վեճերն առավել հաճախ ու սուր են դրսեւորվում: Կիսանախագահական համակարգը գործնականում դուալիստական բնույթ ունի, այն խորհրդարանական համակարգ է երկու գործադիրով՝ Նախագահ եւ կառավարություն (Ֆրանսիա, Իռլանդիա, Լեհաստան, Լիտվա, Ռուսաստան, Ուկրաինա, Հայաստան եւ այլն):<sup>251</sup> Այս համակարգի հիմնական բնութագրիչն այն է, որ կառավարության եւ խորհրդարանի միջեւ սկզբունքային վեճի դեպքում ոչ միայն խորհրդարանը կարող է անվստահություն հայտնել կառավարությանը, այլեւ Նախագահը կարող է լուծարել խորհրդարանը: Որպէս կանոն, կիսանախագահական համակարգերում Նախագահն ընտրվում է ժողովրդի կողմից, ունի հիմնականում հակակշռող լիազորություններ, ինչպէս նաեւ որոշ գործառնական լիազորություններ գործադիր իշխանության ոլորտում:

251 Հայաստանը շատ ընտրաօրինակներով կիսանախագահական կառավարման համակարգ ունենալով հանդերձ, ունի նաեւ էական տարբերություններ նման համակարգին պատկանող այլ երկրների համեմատ: Դա առաջին հերթին վերաբերում է երկրի Նախագահի անորոշ ու չհավասարակշռված տեղին ու դերին սահմանադրական համակարգում, որը լուրջ եւ ինքնուրույն քննարկման նյութ է:

Միջազգային սահմանադրական զարգացումների փորձը վկայում է նաեւ, որ նման համակարգերում, անկախ դրանց բարդության աստիճանից, նույնպէս գտնվել են արդյունավետ ու հասարակական պրակտիկայի քննությունը բռնած լուծումներ: Սակայն դրա համար ելակետայինն այն է, որպէսզի նախ **լուծվի գործառույթ - ինստիտուտ - իրավասություն համակարգի ներդաշնակության խնդիրը**: Երկրորդ՝ **ճշգրտվեն ու ներդաշնակվեն իշխանության յուրաքանչյուր թեւի գործառնական, հակակշռող եւ զսպող լիազորությունների շրջանակներն** այն հաշվով, որպէսզի, մի կողմից, ապահովվի իշխանության յուրաքանչյուր թեւի հարաբերականորեն անկախ ու լիարժեք գործունեությունը՝ չխաթարելով «գործառույթ - ինստիտուտ - իրավասություն» համակարգի հավասարակշռությունը, մյուս կողմից՝ անհրաժեշտ ու բավարար հակակշիռների ու զսպումների շնորհիվ պահպանվի այդ ներդաշնակությունը դինամիկայում:

Անկախ կառավարման ձեւից ու իշխանությունների տարանջատման սկզբունքի ընկալման մակարդակից, **ժողովրդավարական կարգերի ու իրավական պետության համար անխուսափելի անհրաժեշտություն է ոչ միայն տարանջատման, այլեւ իշխանությունների հավասարակշռման պարագան**: Ինչպէս արդարացիորեն նշում է Լիտվայի սահմանադրական դատարանի նախագահ Էգիդիյուս Կուրիսը՝ «Իշխանությունների տարանջատումը ենթադրում է դրանց հավասարակշռում, իսկ հավասարակշռությունը, հասկանալի է, չի կարող լինել այնպիսի իշխանությունների միջեւ, որոնք տարբեր կշիռ ունեն»:<sup>252</sup> Իսկ Սլովակիայի ՍԳ նախագահ Յան Մազակի կարծիքով՝ իշխանության թեւերի միջեւ անհրաժեշտ է այնպիսի հաշվեկշիռ, որն ապահովի դրանց հավասարակշռվածությունը:<sup>253</sup>

252 Эгидиус Курис. Доктрина разделения властей в практике Конституционного Суда Литвы. Конституционный Суд как гарант разделения властей: Сборник докладов. М., 2004, էջ 106:

253 Ян Мазак. Разделение властей в решениях Конституционного Суда Словакии. Конституционный Суд как гарант разделения властей: Сборник докладов. М., 2004, էջ 167:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սահմանադրական իրավունքի տեսության մեջ ներկայումս առավել ընդունելի են համարվում իշխանությունների տարանջատման՝ մեր կողմից ձեռնարկված հետեւյալ հիմնական չափանիշները.<sup>254</sup> ա) **իշխանության թեւերի հարաբերական անկախությունը**, բ) **անհրաժեշտ սահմանադրական ինստիտուտների առկայությունը**, դրանց **լիազորությունների ամբողջականությունն ու համարժեքությունը գործառույթներին**, գ) **պետական իշխանության հավասարակշռված գործունեության անընդհատության երաշխավորվածությունը**, որն իր հերթին ենթադրում է ներսահմանադրական այնպիսի երաշխիքների ամրագրում, որոնց օգնությամբ հնարավոր կլինի բացահայտել, գնահատել ու վերականգնել գործառնական խախտված հավասարակշռությունը: Միայն այս պարագայում է հնարավոր ապահովել դիմամիկ ու ներդաշնակ զարգացում, խուսափել քաղաքական ու հասարակական «պայթյունային» լուծումներից:

ՀՀ գործող Սահմանադրությունը քննարկվող հիմնախնդրի լուծման առումով ունի, այսպես կոչված, **երեք հիմնական «թույլ օղակ»:** Նախ. բավարար հստակեցված չէ նախագահական ինստիտուտի տեղը պետական իշխանության համակարգում, երկրորդ՝ օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունները՝ բերված բոլոր չափանիշների տեսանկյունից, անհրաժեշտ գործառնական անկախություն ու դիմամիկ հավասարակշռված վիճակ չունեն, երրորդ՝ խախտված հավասարակշռության բացահայտման, գնահատման ու վերականգնման մեխանիզմներն անկատար են:

Կիսանախագահական կառավարման համակարգերում հաճախ է առաջանում հակասություն Նախագահի ու կառավարության միջեւ, երբ նրանք քաղաքական նույն ուժը չեն ներկայացնում (տիպական է ոչ միայն Հայաստանի, այլև Ֆրանսիայի օրինակը): Նման համակարգերում հաճախ դժվար է ստույգ պատասխան տալ այն հարցին, թե գործադիր իշխանության գործու-

նության որ հարադրության համար է պատասխանատվություն կրում Հանրապետության Նախագահը, եւ որի համար՝ կառավարությունն ու վարչապետը:

Այն պարագայում, երբ Նախագահն ունի խորհրդարանական հստակ մեծամասնություն, բնականաբար, նման խնդիր չի առաջանում, քանի որ քաղաքական պատասխանատվությունը միատեղվում է: Միաժամանակ, համակարգը ենթադրում է, որ Նախագահը կարող է ստիպված լինել Ազգային ժողովի համար ընդունելի վարչապետ նշանակել կամ իրականում նախաձեռնությունը զիջել խորհրդարանին՝ հարմարվելով նրան: Նման իրավիճակը ենթադրում է ուժեղ եւ կենսունակ խորհրդարանի առկայություն, որն ի գործ է ստանձնելու քաղաքական պատասխանատվություն կառավարության գործունեության համար, ինչպես նաեւ այնպիսի հակակշիռների առկայություն, որոնք, Ազգային ժողովի ու կառավարության կողմից անհրաժեշտ ու բավարար կարողունակություն չդրսետրելու դեպքում, կօգնեն վերականգնել խախտված հավասարակշռությունը: Տվյալ պարագայում էական հանգամանքն այն է, որ կիսանախագահական կառավարման համակարգում երկրի Նախագահն առաջին հերթին ունի իշխանության թեւերի բնականոն ու հավասարակշռված աշխատանքն ապահովելու գործառույթ, որը բնորոշում է նրա տեղն ու դերը՝ որպես պետության գլխի: Սակայն այդ գործառույթը չի կարող փոխակերպվել համակարգողի դերով, որն ի չիք կոարձնի իշխանությունների տարանջատման ամեն մի սկզբունք: Երկրի Նախագահը՝ որպես պետության գլուխ, սահմանադրորեն հստակ ներկայացված է բազմաթիվ երկրների սահմանադրություններում (Իտալիա, հոդվ. 87, Ռուսաստան-80, Էստոնիա-77, Վրաստան-69, Ադրբեջան-8, Բուլղարիա-92, Գրդգստան-40, Բելառուս-79, Ուկրաինա-102, Նիկարագուա-184, Չեխիա-54, Սլովակիա-101 եւ այլն): Բոլոր այդ երկրներում միաժամանակ գերազույն խնդիրն այն է, որ պետության գլխին «պոլիտբյուրոյի» գլխավոր քարտուղարի դեր չվերապահվի, ինչը բնորոշ է հետհամայնավարական որոշ երկրների, եւ դա մեծ վտանգ է երկրի ժողովրդավարական զարգացման ապագայի համար:

254 Տե՛ս G.Harutyunyan, A.Mavcic THE CONSTITUTIONAL REVIEW AND ITS DEVELOPMENT IN THE MODERN WORLD (A COMPARATIVE CONSTITUTIONAL ANALYSIS), Yerevan - Ljubljana, 1999, էջ 382:

Իշխանությունների տարանջատման սկզբունքը համարվում է նաեւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության սահմանադրական կարգի հիմունքների՝ սահմանադրորեն ամրագրված հիմնարար սկզբունքներից մեկը: Դա արտահայտվում է ՀՀ Սահմանադրության 5 հոդվածում, որի համաձայն պետական իշխանությունն իրականացվում է օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա: Սակայն իշխանությունների տարանջատման՝ որպես ՀՀ Սահմանադրության սկզբունքի, ըմբռնումը պահանջում է հրաժարվել այն հայեցողական պատկերացումից, ըստ որի՝ իշխանությունների տարանջատումը դիտվում է որպես միասնական պետական իշխանության բաժանում տարբեր ինստիտուտների միջեւ: Այդ սկզբունքը պետք է մեկնաբանել որպես պետական իշխանության իրական գործոնների սահմանափակում, հավասարակշռում, դրանց համագործակցություն եւ փոխկապվածություն: Պատահական չէ, որ երկրների մեծ մասը Սահմանադրությամբ ոչ թե շեշտադրումը կատարում է սկզբունքի, այլ իշխանությունների իրական տարանջատումն ու գործակցությունն ապահովելու եւ այդ հայեցակարգային մոտեցումը Հիմնական օրենքում ամրագրելու վրա: Օրինակ, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության հոդված 10-ում սահմանված է. «Ռուսաստանի Դաշնությունում պետական իշխանությունն իրականացվում է այն օրենսդիրի, գործադիրի եւ դատականի տարանջատելու հիման վրա: Օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների մարմիններն ինքնուրույն են»: Ավելին, շատ երկրների սահմանադրություններում շեշտադրումը կատարվում է նաեւ իշխանությունների փոխկախվածության (Պորտուգալիա, հոդվ. 111), փոխգործակցության (Մոլդովա-6), համագործակցության (Բրիտանիա -3), հավասարակշռության (Լեհաստան-10), հաշվեկշռվածության (Էստոնիա-4) վրա եւ այլն: Տարաբնույթ մեծ մոտեցումները պայմանավորված են նաեւ իշխանությունների տարանջատման չափանիշների եւ սահմանադրական այդ կարեւոր սկզբունքի տեսական մեկնաբանման ու գործնական իրացման տարբեր հայեցակարգերով: Առանձնահատուկ կարեւորվում է

սահմանադրական հակակշիռների ու զսպումների հստակ սահմանումը եւ իշխանությունների սահմանադրական գործառնական, հակակշռող եւ զսպող լիազորությունների դինամիկ հաշվեկշռի երաշխավորումը: Յավոք, այս հարցերը տեսական գրականության մեջ խիստ թերի են պարզաբանված: Մեր կարծիքով, **սահմանադրական հակակշիռը պետական իշխանության ինստիտուտի սահմանադրական, ոչ գործառնական բնույթի լիազորություն է կոչված դինամիկայում պահպանելու իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշիռը:** Իր հերթին, **սահմանադրական զսպումը պետական իշխանության ինստիտուտի սահմանադրական, ոչ գործառնական եւ ոչ հակակշռային բնույթի լիազորություն է կոչված կանխելու իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշռի հնարավոր խախտումը՝ հակակշիռների համակարգի կողմից այն չապահովելու դեպքում:** Սահմանադրական ճարտարապետության առանցքային խնդիրն էլ հենց այն է, որպեսզի երաշխավորվի իշխանության թեւերի գործառնական հավասարակշռությունը դինամիկայում: Դրա համար սահմանադրական ամեն մի գործառնական լիազորություն պետք է հակակշռված ու զսպված լինի իշխանության այլ թեւերի համապատասխան լիազորություններով:

Ժամանակակից սահմանադրական իրավունքի շատ տեսաբանների (մասնավորապես, գերմանացի պետականագետ Կ. Հեսսեի) կողմից իշխանությունների տարանջատման սկզբունքի հիմնական բնորոշիչները համարվում են մարդկանց համատեղ գործունեության կարգավորումը եւ կարգապահությունը, իշխանության առանձին ճյուղերի սահմանումը, դրանց իրավագործության որոշումը եւ սահմանափակումը, ընդհանուր աշխատանքի կարգավորումը, պետական մարմինների իրավագործության հավասարակշռումը եւ, արդյունքում, սահմանափակ պետական իշխանության միասնականությունը:<sup>255</sup> Բանը նրանում է, որ չի բացարձականացվում իշխանությունների տարանջատման պարագան: Տվյալ սկզբունքը ենթադրում է նաեւ գործառնական հստա-

255 St u Хессе К. Основы Конституционного права ФРГ. М., 1981, էջ 237:

կեցված ու անկախաբար իրականացվող իրավասություններով օժտված միասնական իշխանության տարբեր թելերի փոխգործակցություն ու հավասարակշռվածություն: Այդ առումով միջազգային պրակտիկայում փորձ է արվում սահմանադրորեն սահմանել իշխանության սահմանափակումները, ստեղծել իշխանությունների փոխկապվածության, գործողությունների «պարտադրված» համաձայնեցման համակարգ (խորհրդարանի կողմից կառավարության ծրագրի հաստատում, Նախագահի արգելանքի (վետոյի) իրավունքը, խորհրդարանի կողմից Նախագահի արգելանքի հաղթահարման իրավունքը, խորհրդարանն արձակելու Նախագահի իրավունքը, կառավարությանն անվստահություն հայտնելու խորհրդարանի իրավունքը եւ այլն): Իր հերթին, իշխանության հավասարակշռվածության պահպանման կարեւորագույն պայման է սահմանադրական ընդդատության եղանակով պետական իշխանությունների սահմանադրական լիազորությունների հաշվեկշռի խախտման բացահայտման, գնահատման ու վերականգնման գործուն համակարգի առկայությունը: Իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ երեք իշխանություններից յուրաքանչյուրը պետք է առնվազն ունենա այնքան լիազորություններ, որ ապահովի նրա էության դրսեւորումը:<sup>256</sup>

Առավել վտանգավորն իշխանության երեք թելերից դուրս իշխանության նոր ճյուղի, այսպես կոչված, փնտրտուքներն են, որոնք ոչ այլ ինչ են, քան նման հավասարակշռության բացառում, տարաբնույթ գերիշխանության կարոտախտ ու քաղաքական, վարչական եւ տնտեսական ուժի կենտրոնացման միջոցով կորպորատիվ կառավարման համակարգի համար կանաչ ճանապարհ: Նման մոտեցումները չափազանց վտանգավոր են եւ ընդհանուր ոչինչ չունեն իրավական ժողովրդավարության հաստատման սկզբունքների ու քաղաքացիական հասարակության արժեհամակարգային մոտեցումների հետ: Իշխանությունների տարանջատման սկզբունքի տեսափիլիսոփայական ընդհանրա-

ցումները խարսխվում են ոչ թե առանձին մտածողների (այդ թվում Ջ. Լոկի, Շ. Մոնտեսքյոյի եւ այլոց) սուբյեկտիվ ընկալումների, այլ հասարակական հարաբերությունների հիմքում ընկած օբյեկտիվ օրենքների վրա: Եթե կասկածից վեր է, օրինակ, Օհմի այն ընդհանրացումը, որ նյութի տրամաչափերի ու դիմադրության միջեւ գոյություն ունի որոշակի կախվածություն, ապա նույնքան կասկածից վեր է նաեւ հասարակական գիտությունների կողմից բացահայտված, մշտապես ու անհրաժեշտաբար գործող այն օրինաչափությունը, որ առանց իշխանությունների իրական տարանջատման ու հավասարակշռման անհնարին է իրավական պետության եւ քաղաքացիական հասարակության կայացումը:

Մեկ այլ մոտեցմամբ (օրինակ, ըստ անգլիացի քաղաքագետ Մ. Վայլի)<sup>257</sup> խնդիրը չի սահմանափակվում օրենսդիր, գործադիր եւ դատական մարմինների փոխհարաբերությունների ֆորմալ-իրավաբանական հետազոտությամբ, այլ այն դիտարկվում է նաեւ իրավական, սոցիալական եւ քաղաքական ողջ համակարգի փոխգործակցության, պետության եւ հասարակության միջեւ «հավասարակշռության» հաստատման առումով:<sup>257</sup>

Ամենաընդհանուր գծերով կարելի է փաստել, որ միջազգային սահմանադրական պրակտիկայում ներկայումս ձեւավորվել է դիտարկվող սկզբունքի կիրառման երկու մոդել. իշխանությունների «ճկուն» եւ «կոշտ» տարանջատում՝ կախված պետական իշխանության համակարգի բնույթից: Գրանցից առաջինը հիմնվում է օրենսդիր իշխանության գերակայությամբ իշխանությունների գործակցության վերաբերյալ Ջոն Լոկի գաղափարների վրա, իսկ երկրորդը՝ սկիզբ է առնում իշխանությունների հավասարակշռության եւ առավել հստակ տարանջատման մասին Շ-Լ. Մոնտեսքյոյի մեկնություններից: Եվրոպական սահմանադրական եւ քաղաքական պրակտիկան հենվում է թե՛ մեկ, թե՛ մյուս մոդելի վրա, իսկ երկրորդ մոդելի առավել դասական օրինակը կարելի է տեսնել ԱՄՆ-ում:

<sup>256</sup> Մասնավորապես տե՛ս Լեհաստանի սահմանադրական տրիբունալի 1994թ. նոյեմբերի 21-ի՝ Խ 6/94 գործով որոշումը:

<sup>257</sup> St' u Vile M. G. Constitutionalism and Separation of Powers. Oxford, 1967, էջեր 1-10:

Նշված մոդելներից յուրաքանչյուրը գործում է որոշակի պայմաններում: Այդ պայմաններն են. հասարակության քաղաքական մշակույթը, քաղաքական ինստիտուտների կայացման աստիճանը, իրավական ավանդույթներն ու մտածելակերպը, հոգեբանությունը, իրավագիտակցության մակարդակը եւ իշխանության տարբեր ճյուղերի զարգացման միտվածությունը, դրանց գործառնությանն եւ կառուցվածքային զարգացումների դիալեկտիկան եւ այլն:

Առանձին երկրներում վերջին տասնամյակների նկատելի միտումներից է գործադիր իշխանության հարաբերական ուժեղացումը: Այդ գործընթացը Բրիտանիայում բնութագրվում է որպես անցում «կաբինետի կառավարման համակարգից» դեպի «վարչապետի կառավարման համակարգ», մի հանգամանք, որը հատկապես բնորոշ է ժամանակակից Մեծ Բրիտանիայի համար:<sup>258</sup>

Մեծ Բրիտանիայում օրենսդիր եւ գործադիր իշխանությունների միջեւ հավասարակշռության խախտումը նշվում է շատ ուսումնասիրություններում:<sup>259</sup> Միաժամանակ, խորհրդարանի նկատմամբ կառավարության գերակշիռ դերակատարությունը չի վկայում պառլամենտարիզմից հրաժարվելու մասին: Խորհրդարանը պահպանում է կառավարության քաղաքականությունը վերահսկելու, ճշգրտելու եւ վավերացնելու գործառնությունները: Պահպանվում է կառավարության քաղաքական պատասխանատվությունը խորհրդարանի առջեւ:

Գործադիր ուղղահայացի ուժեղացման նմանօրինակ գործընթացներ նկատելի են նաեւ ոչ խորհրդարանական կամ միապետական երկրների սահմանադրական պրակտիկայում: ԱՄՆ-ում նախագահական լիազորությունների բնույթի եւ ծավալի աստիճանական ընդարձակումն ամերիկյան սահմանադրական իրավունքի եւ քաղաքական գիտության կողմից դիտվում է որպես

ամերիկյան սահմանադրական պրակտիկայի ու բուն Սահմանադրության հիմնական բնորոշիչներից մեկը, երբ առանց սահմանադրական փոփոխությունների կենսագործվում է Նախագահի լիազորությունների ընդլայնման գործընթաց: Մի շարք ամերիկյան գիտնականներ հավաստում են, որ այդ իշխանության ընդարձակումը կարող է վտանգել ազատությունն ու ժողովրդավարությունը:<sup>260</sup> ԱՄՆ իրավունքի տեսաբաններից շատերը լուրջ քննարկման առարկա են համարում իշխանությունների տարանջատման հարցում իրավական ու քաղաքական մոտեցումների փոխառնչությունների խնդիրը՝ հաճախ ընդհուպ Գերագույն դատարանը համարելով քաղաքական ինստիտուտ:<sup>261</sup> Խնդիրն այստեղ հանգում է նրան, թե իշխանության թեւերի գործառնական դերին առնչվող հարցերը քննության առարկա դարձնելիս որքանով են փոխհամաձայնեցվում քաղաքական նպատակահարմարությունն ու սահմանադրական սկզբունքը: Բոլոր պարագաներում, անհնարին է երաշխավորել Սահմանադրության գերակայությունը՝ առանց նպատակահարմարությունն սկզբունքին ենթադասելու: Նույնիսկ փոխհամաձայնեցված նպատակահարմարությունը պետք է բխի սահմանադրական սկզբունքից:

Ուշագրավ են նաեւ այլ միտումներ արեւմտաեվրոպական երկրներում: Օրինակ, Ֆինլանդիան 1992-1995 թվականների սահմանադրական բարեփոխումների արդյունքում կիսանախագահական համակարգից անցավ հանրապետական կառավարման խորհրդարանական ձեւին: Սիեւույն ժամանակ Իտալիայում երեսան են եկել լուրջ մոտեցումներ հակառակ գործընթացի նկատմամբ՝ խորհրդարանականից անցում կիսանախագահական հանրապետության: Նույնաբնույթ փոփոխություն կատարվեց Սլովակիայում 2000 թվականին: Իսկ Վրաստանը 2004 թվա-

258 St'u Rush M. Parliamentary government in Britain. N. Y., 1981. Политическая система Великобритании, էջեր 111, 147-153:

259 St'u Beloff M., Peel G. The Government of the United Kingdom. Political authority in a changing society. L., 1980, 1981; Сэммпсон А. Новая анатомия Британии. М., 1975.

260 St'u Cass Sunstein. Changing Constitutional Powers of the American President. EECR, Vd 2, N4. Fall 1993, Vol 3. N1 Winter, 1994, էջ 99:

261 Սասնավորապես տե՛ս Zoller E. Splendeurs et mise`res du constitutionalisme. Les enseignements de l'experience americain // Revue du droit public. 1994. P. 177; Peretti T.J. In Defense of a Political Court. Princeton, N.J.: Princeton Universiti Press, 1997. P. 73.

կանին գերապատվություն տվեց կիսանախագահական կառավարման համակարգին՝ ի հակակշիռ նախագահականի:

Ակնհայտ է, որ նման միտումները պայմանավորված են ոչ միայն իշխանությունների տարանջատման սկզբունքի տարաբնույթ մեկնաբանությամբ, այլև, ու առավել էս, տվյալ երկրի պետական իշխանության համակարգի առջև ծառայած խնդիրներով: Սակայն, անկախ նրանից, թե պետական համակարգի ինչ մոդել է ընտրվել՝ նախագահական, կիսանախագահական, պառլամենտական կամ մեկ այլ ձև, միեւնույն է՝ ընդհանուր հիմնադրույթն այն է, որ իշխանությունների տարանջատումը եւ դրանց ներդաշնակ գործակցության ապահովումն անխուսափելի անհրաժեշտություն են, եւ այն պետք է իրականացվի «**գործառույթ - ինստիտուտ - լիազորություն**» եռամիասնության համակարգային ներդաշնակության ապահովման, յուրաքանչյուր սահմանադրական ինստիտուտի համար **գործառնական, հակակշռող եւ զսպող** լիազորությունների օպտիմալ հաշվեկշռի ամրագրման, վերջինիս միջոցով՝ դինամիկայում սահմանադրական հավասարակշռության երաշխավորված պաշտպանման, ժողովրդավարության ու իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքների անվերապահորեն պահպանման ու սահմանադրորեն ապահովման շրջանակներում: Իրենց հերթին, իշխանությունների սահմանադրորեն հստակ տարանջատումը, դինամիկ հավասարակշռումը եւ վերջինիս երաշխավորված պաշտպանությունը ժողովրդավարության զարգացման ու խորացման կարեւորագույն նախադրյալ են: Յուրաքանչյուր երկրի համար այս լուծումներն անկյունաքարային նշանակություն ունեն նաեւ սահմանադրական օրինականության հաստատման, սահմանադրական լիազորությունների հարցերով վեճերի լուծման ժամանակ:

Բնականաբար, տվյալ հարցում հայեցակարգային մոտեցումները ճշտելու համար չափազանց կարեւորվում է նաեւ տարբեր երկրների սահմանադրական փոփոխությունների միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը: Վերջինս վկայում է, որ քննության առարկա հարցի առնչությամբ առկա են մի շարք կայուն միտումներ.

- առավել հստակեցվում են իշխանության թեւերի գործառնական լիազորությունները, դրանք ներդաշնակվում են իշխանության տվյալ ճյուղի գործառույթներին ու ամրապնդվում են այդ լիազորությունների ինքնուրույն տնօրինման երաշխիքները,
- հստակեցվում եւ ուժեղացվում են հակակշռող ու զսպող լիազորությունները,
- ամրապնդվում են ներսահմանադրական կայունության երաշխիքները,
- իշխանությունների գործակցությունն առավել մեծ չափով է խարսխվում համագործակցության սկզբունքի եւ դինամիկ հավասարակշռություն ապահովող լուծումների վրա,
- ամրապնդվում է մարդու իրավունքների սահմանադրական երաշխիքների ու իշխանությունների լիազորությունների սահմանադրական հաշվեկշռի խախտումների բացահայտման, գնահատման եւ վերականգնման իրավական համակարգը,
- ակնհայտ է իշխանության թեւերի նորմատիվ-իրավարար գործունեության ոլորտում իրավունքի գերակայության սկզբունքի հիման վրա գործակցության ակտիվացումը:

Այս ընդհանուր միտումների հետ մեկտեղ, ինչպես նշել ենք, կարեւորվում են նաեւ իշխանության թեւերի գործառույթներն իրականացնող ինստիտուտների զարգացման, դրանց գործառնական դերի հստակեցման եւ անհրաժեշտ ու բավարար լիազորություններով օժտելու հարցերը:

Ժողովրդավարական զարգացման ուղի բռնած ցանկացած երկրում մերժելին եւ առավել վտանգավորն այն է, երբ իշխանության տարանջատված թեւերը դիտարկվում են ոչ թե որպես իրենց գործառնական լիազորություններն անկախաբար իրականացնող իշխանություն կրող ինստիտուտներ, այլ որպես «գործիքներ» իշխանության «իրական» կրողի ձեռքին, որպիսին, որպես կանոն, ներկայացվում է պետության գլուխը: Տարածված է նաեւ այն թյուր ըմբռնումը, թե իրական իշխանությունն իրականացնում է գործադիր բուրգը, իսկ պետական մյուս մարմիններն

անհրաժեշտ են որպես միջոց: Անտարակույս է, որ մարդկային հասարակության մեջ նման մոդելներ նույնպես գոյություն են ունեցել եւ ունեն: Սակայն իրավունքի տեսությունը նման քաղաքական ռեժիմները վաղուց բնութագրել է որպես ոչ իրավական: Որքան էլ ժողովրդավարացման ցանկությունը մեծ լինի, միեւնույն է, այնտեղ, ուր երաշխավորված չէ իշխանությունների իրական տարանջատում, դրանց լիազորությունների իրականացման անկախության երաշխավորում եւ հակակշիռների ու զսպումների օգնությամբ հավասարակշռում, անխուսափելի են անձնիշխանության տարաբնույթ դրսևորումները՝ իրենց բացասական լուրջ հետեւանքներով:

Սահմանադրականության երաշխավորման կարելուր նախապայմանն է, որ Սահմանադրության ընդունումից հետո նրա նորմերը պետք է.

- ա) անարգել ու արդյունավետ կյանքի կոչվեն,
- բ) հուսալիորեն պաշտպանված լինեն:

Սահմանադրությունը չպետք է մնա ցանկությունների արձանագրման մակարդակում, այլ պետք է երաշխավորի ու ապահովի դրանում ամրագրված նպատակների ու սկզբունքների իրացումը: Գլխավոր հարցն այն է, թե ինչպե՞ս հասնել դրան, ինչպե՞ս երաշխավորել, որպեսզի Սահմանադրությունը դառնա ապրող իրողություն՝ արտացոլելով նաեւ հասարակական զարգացումների հիմնական միտումները: Այս հարցերի պատասխանը մեծապես պայմանավորված է սահմանադրական հիմնական սկզբունքների ու կոնկրետ նորմերի պաշտոնական մեկնաբանման եւ Սահմանադրության գերակայության հուսալի պաշտպանության մեխանիզմների առկայությամբ: Միջազգային պրակտիկայում ներկայումս հատուկ կարեւորվում են Սահմանադրության **անմիջական վերացական ուղղակի պաշտոնական մեկնաբանման եւ էվոլյուցիոն կոնկրետ մեկնաբանման** սկզբունքները: Դոկտրինալ (գիտական) կամ հայեցական մեկնաբանությունների խնդիրը կարեւորելով հանդերձ, չենք ցանկանում տվյալ պարագայում այն քննարկման առարկա դարձնել՝ նկատի ունենա-

լով, որ այս ոլորտում խորքային տարակարծություններ գրեթե չկան: Ինչ վերաբերում է պաշտոնական մեկնաբանությանը, դրա սկզբունքներին ու ձեւերին, ապա վերջիններիս առնչությամբ դեռեւս առկա են տարաբնույթ մոտեցումներ եւ պարզաբանման կարոտ մի շարք հիմնահարցեր:

Ամերիկյան սահմանադրական մշակույթի բնորոշ գծերից է այն, որ մեծ դեր է վերապահվում դատական իշխանությանը Սահմանադրության մեկնաբանման հարցում: Օրինակ, Ռոբերտ Ֆ. Նագելի կարծիքով՝ «Իրավաբանների մենաշնորհն է դատարաններին ներկայացնել փաստարկներ եւ մատուցել հեղինակավոր մեկնաբանություններ: Այդպիսով նրանք հավակնում են ոչ միայն ասելու, թե ի՞նչ է Սահմանադրությունը գործնականում, այլեւ ինչպե՞ս պետք է այն ընկալվի...»:<sup>262</sup> Նույն հեղինակը՝ տարանջատելով մեկնաբանվող եւ չմեկնաբանվող սահմանադրությունները, շեշտում է, որ «Արդյունավետ իրավական փաստարկը կարող է ներգործուն լինել, այն բացահայտում է երկիմաստություններ, որովհետեւ [Սահմանադրության] ուշադիր ընթերցմամբ պարզվում է, որ տեքստը նվազ պարզորոշ է, քան թվում է առաջին հայացքից, եւ այն բովանդակում է անորոշություններ պատմական առումով, որովհետեւ պատմությունը բարդ եւ բովանդակալից է: Իրականում իմաստաբանությունը գլխավոր դաշնակիցն է նրանց համար, ովքեր Սահմանադրությունը դիտարկում են որպես «կենդանի փաստաթուղթ», ժամանակակից պայմաններում՝ բավարար ճկուն եւ օգտակար [...]: Զանի որ Սահմանադրության էության մասին մեր հիմնադրույթը կառուցված է դրա իմաստի փաստարկման վրա, ուստի դրա մեկնաբանությունը թվում է պարտադիր: Սահմանադրության առավել քաջածանոթ բովանդակությունը՝ պարզապես դատական մեկնաբանությունների շարք է»:<sup>263</sup>

Սահմանադրական սկզբունքները կարող են նաեւ երեւան գալ իրավակիրառման բնագավառում, երբ դատական մեկնաբանու-

262 Robert F. Nagel, Constitutional Cultures, The Mentality and Consequences of Judicial Review, University of California Press, Berkeley 1993, էջ 7:

263 Նույն տեղում, էջ 7-8:



թյունները՝ չսպահովելով դրանց առանձնահատուկ նշանակությունը, այնուհանդերձ, պարզապես վավերացնում են կիրառական նախկին պրակտիկայի օրինականությունը: Միաժամանակ, շատ սահմանադրություններ իրենց իմաստը ստանում են կիրառման, այլ ոչ թե՝ մեկնաբանման արդյունքում: Սահմանադրական համակարգում առավել կարեւոր սահմանադրական դրույթները բովանդակություն են ձեռք բերում առավելապես երկարաժամկետ կիրառման ընթացքում՝ դառնալով սահմանադրական մշակույթի կայուն բնութագրիչներ:

Ցանկանում ենք հատուկ շեշտել, որ սահմանադրական մշակույթը՝ թե՛ հայ իրականության մեջ եւ թե՛ միջազգային պրակտիկայում տրամաբանական զարգացում ապրելով հանդերձ, իր հիմքում ունեցել է մի շարք կայուն բնութագրիչներ՝ հասարակական համաձայնություն ու համերաշխություն, իրավունքով իշխանության սահմանափակում, «մարդու բնությանը ներդաշն, ըստ մեր բանական հոգու հաճության» օրենքների առկայություն, դրանց «անշեղ հավատարմություն», տարանջատված ու հակակշռված իշխանությունների առկայություն, մեր կյանքը «օրենքով ու ազատությամբ զսպելու» կարողություն: Այս արժեքներն են դուրս բերում առաջադիմության ու զարգացման մայրուղի: Անհասկացությունները, «հակառակությունները», «շնաբարո» վարքը, «անբարշտությունը», «իշխանավորի կամքը օրենքից վեր դասելը», «տգիտությամբ չարափառության հաստատումը», «միաբանության մեջ ճեղքվածքը» եւ չարի ու «մարդու բնությանը» անհարիր բազում այլ դրսեւորումներ ուղիղ ճանապարհ են դեպի անխուսափելի կորուստ ու հետադիմություն: Ցավոք, մեր պատմությունը դրա բազում վկայություններ նույնպես թողել է:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաեւ, որ սահմանադրությունները հաճախ գրվում եւ փոփոխվում են այնպիսի իրավիճակներում, երբ հասարակության առջեւ ծառայել են բարդ ու հրատապ լուծում պահանջող խնդիրներ: Նման իրավիճակները թելադրում են առավել զգուշավոր ու պատասխանատու մոտեցում սահմանադրական մշակույթի հիմնական որակներին: Ընթացիկ խնդիրներին գերապատվություն տալը, դրանց շուրջ ձե-

ւավորվող քաղաքական փոխհամաձայնությունները հաճախ լուրջ վտանգներ են ստեղծում ապագայի եւ ընդհանրապես երկրի սահմանադրական կարգի կայունության համար: Միանգամայն արդարացի է հայտնի սահմանադրագետ Հերման Շվարցի մտահոգությունն առ այն, որ ընթացիկ խնդիրներին սահմանադրական փոփոխություններով արագ լուծում տալը համարժեք լուծում կարող է չլինել մեծ հեռանկարի համար:<sup>264</sup> Քաղաքական իրողություններն իրենց կնիքն են դնում իրավական սկզբունքների բովանդակության ընկալման ու դրսեւորման ձեւերի վրա: Հիմնականում քաղաքական իրողություններով են պայմանավորված երկրում կառավարման ձեւի ընտրությունը, իշխանությունների սահմանադրական հաշվեկշիռը, հակակշիռների ու զսպումների գործադրման պրակտիկան, իրավական հարթությունում կոնֆլիկտների հաղթահարման ներսահմանադրական երաշխիքները, քաղաքական եւ իրավական իրողությունների դինամիկ ներդաշնակման հնարավորությունները եւ այլն: Հետհամայնավարական երկրներին բնորոշ էր այն, որ նոր սահմանադրությունների ընդունման փուլերում առկա էին թե՛ ռեւանշի ձգտող ձախ ընդդիմությունը եւ թե՛ հեղափոխական լիբերալիզմը: Գրանց փոխազդեցությունը ձեւավորեց իրավական լուծումների քաղաքական փոխհամաձայնության որոշ միջավայր: Գրեթե բոլոր այդ երկրներում աստիճանաբար ոչ միայն թուլացավ ձախ ծայրահեղականությունը, այլեւ լիբերալ շոսանտիզմն իր տեղը զիջեց չափավոր իրատեսությանը: Էապես խախտվեց քաղաքական ներազդեցությունների հաշվեկշիռը: Սահմանադրական լուծումների, նոր փոփոխությունների վրա աստիճանաբար գերակայեց գործող իշխանության վարչաքաղաքական ներազդեցությունը, որը վտանգավոր է այն չափով, որչափով սահմանադրական լուծումները հարմարեցնում է ընթացիկ քաղաքական խնդիրների լուծմանը՝ այն չդարձնելով ընդհանուր մոտեցումների շուրջ հասարակական համաձայնության արդյունք:

264 Герман Шварц - Основные элементы конституции. ВОПРОСЫ ДЕМОКРАТИИ. Электронный журнал Государственного департамента США. Том 9, номер 1, март 2004 г. <http://usinfo.state.gov/journals/journalr.htm>

Սահմանադրական բարեփոխումները պետք է դառնան հասարակական համաձայնության կայացման, քաղաքական ճգնաժամերի հաղթահարման միջոց, այլ ոչ թե՝ «հակառակությունների» գոհը: Բազմաթիվ երկրների փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ նման ճգնաժամերի հիմնական բնութագրիչներն են՝ քաղաքական իշխանության նկատմամբ ժողովրդի վստահության անկումը, կոռուպցիայի ծավալումն ու համակարգային ընդգրկումը (այդ թվում՝ քաղաքական կոռուպցիայի առկայությունը), քաղաքական, վարչական ու տնտեսական ուժի կենտրոնացումն ու միատեղումը, կորպորատիվ-կլանային կառավարման արմատավորումը պետական իշխանության համակարգում, հասարակական հարաբերությունների ոլորտում սովորականության բարձր մակարդակը եւ այլն: Այս երեւոյթների բացասական միտվածության խորացումն է չիք է դարձնում սահմանադրական ժողովրդավարության հաստատման անընդհատության երաշխավորումը, որն ամենամեծ վտանգն է անցումային երկրների համար:

Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության կողմից կազմակերպված վերջին տարիների քննարկումները վկայում են, որ գնալով ավելի մեծ կարեւորություն է տրվում սահմանադրությունների ընդունման ու փոփոխության կարգին: Հիմնական միտումն այն է, որ այդ գործընթացը հեռու պահվի ընթացիկ քաղաքական ներազդեցություններից ու քաղաքական շահարկումներից: Այդ նպատակով գերապատվությունը տրվում է Սահմանադիր ժողովի ինստիտուտի հիմնադրմանը, որը երկրի կայունության երաշխավորման հարցում կարեւոր գրավական է: Այդ մասին են վկայում բազմաթիվ երկրների փորձը, ինչպես նաեւ սահմանադրական մշակույթի ձեւավորման մեր պատմությունը: Նման ինստիտուտն ավելի է կարեւորվում երկրում քաղաքական համակարգի անկատարության, իրավամտաժողովրդի ու իրավական մշակույթի ցածր մակարդակի, քաղաքական ու հասարակական փոխհամաձայնությամբ ազգային ու պետական առաջնահերթությունների հստակեցման ու ապահովման անհրաժեշտության պայմաններում: Կարծում ենք, որ Հայաս-

տանի Հանրապետությունում նույնպես Սահմանադիր ժողովի հիմնումը բազում խնդիրների արդյունավետ լուծում կերաշխավորի ու մեծապես կնպաստի երկրի կայուն զարգացմանը:

Սահմանադրական ճարտարապետությունն ունի իր տրամաբանությունը, սկզբունքներն ու սահմանները: Սահմանադրությունների ընդունման կամ դրանցում փոփոխություններ կատարելու **հիմնական խնդիրն** իրավունքի գերակայության երաշխավորումն է: Իր հերթին, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ապահովման սահմանադրական հստակ երաշխիքների առկայությունն է Սահմանադրության կենսունակության գնահատման թիվ մեկ չափանիշը: Այս չափանիշը ելակետային է ու մնալուն: Յուրաքանչյուր քայլ, որն ուղղված է սահմանադրական փոփոխությունների ճանապարհով ինչ-ինչ քաղաքական խնդիրների լուծմանը, սակայն չի բխում իրավունքի գերակայության երաշխավորման սկզբունքից, չի կարող սահմանադրական լինել եւ կհակասի իրավական ժողովրդավարության արժեքներին: **Միջազգային հանրային իրավունքի կարեւորագույն սկզբունքներից է այն, որ անթույլատրելի է սահմանադրական ցանկացած փոփոխություն, որը թուլացնում է մարդու իրավունքների պաշտպանությունը կամ այդ իրավունքների ու ազատությունների իրացման երաշխիքները:** Ինչպես պատկերավոր ընդգծեց Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի նախագահը՝ Հանձնաժողովի 2004թ. դեկտեմբերի 61-րդ լիագումար նիստում, «առաջադիմության ճանապարհն ընտրողի դրոշին պետք է գրված լինի. **իրավունքի գերակայություն եւ ժողովրդավարություն**»:

Սահմանադրական փոփոխությունների **երկրորդ խնդիրն** իշխանությունների գործունակության ու արդյունավետ աշխատանքի երաշխավորումն է: Դա հնարավոր է բացառապես իշխանությունների տարանջատման սկզբունքի հետեւողական իրացման, դրանց լիազորությունների հավասարակշռման, հակակշիռների ու զսպումների գործուն համակարգի արմատավորման ճանապարհով միայն: Այս ուղղությամբ կատարվող յուրաքանչյուր փոփոխություն պետք է տա հետեւյալ հարցերի հստակ պատասխանը.

1. Ի՞նչ փոփոխություն է կատարվում իշխանության թեւերի գործառնական լիազորություններում եւ դրանք որքանով կարող են խախտել դինամիկ հավասարակշռությունն ու վնասել իշխանության այս կամ այն թեւի գործառնական անկախությանը,
2. Ինչպե՞ս ապահովել **գործառույթ - ինստիտուտ - լիազորություն** շղթայի համակարգային ներդաշնակությունը,
3. որքանով են գործառնական լիազորությունների փոփոխությունները հավասարակշռված հակակշռող լիազորություններով,
4. որքանով են զսպող լիազորություններն ամբողջական ու հուսալի՝ գործառնական ու հակակշռող լիազորությունների նոր հաշվեկշռի պայմաններում:

Այս պատասխաններով են որոշվում իշխանության համակարգի բարեփոխումներին ուղղված սահմանադրական յուրաքանչյուր փոփոխության հիմնավորվածությունն ու արդյունավետությունը: Իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքի բուն էությունը դրանց զսպումն ու սահմանափակումն է՝ հօգուտ իրավունքի: Հետեւաբար, նշված հարցերի պատասխանով է որոշվում նաեւ, թե որքանով է երաշխավորվում իրավունքի գերակայությունը: Իր հերթին, առանց սահմանադրական սկզբունքների ու նորմերի հուսալի պաշտպանության սահմանադրական կարգը գրկված կլինի ներքին ինքնապաշտպանության հուսալի համակարգից:

Սահմանադրական բարեփոխումների **երրորդ կարեւոր խնդիրն** այն է, որ երաշխավորվի հասարակական հնարավոր լայն համաձայնություն սահմանադրական լուծումների շուրջ, միաժամանակ նվազագույնի հասցվեն ու բացառվեն ներսահմանադրական բացերն ու անհամապատասխանությունները, հաղթահարվեն փակուղային վիճակները, ամրապնդվի ներսահմանադրական կայունությունը, ստեղծվեն Սահմանադրության գերակայության երաշխավորման ու սահմանադրական ժողովրդավարության հաստատման հիմնարար նախադրյալներ: Մասնագետների կողմից հաճախ է վկայակոչվում ամերիկյան սահ-

մանադրականության հիմնական առանձնահատկությունը, համաձայն որի դրան բնորոշ են կայունությունը՝ սկզբունքային հիմունքների առումով, եւ ճկունությունը՝ դրանց գործնական դրսեւորումների մեջ ու ժամանակի պահանջներին համապատասխան:<sup>265</sup> Սա ոչ միայն բնորոշ է ամերիկյան սահմանադրական պրակտիկային, այլեւ համարվում է սահմանադրական մշակույթի կարեւորագույն որակ միջազգային առումով: Ուստի **սահմանադրական փոփոխությունները պետք է ներսահմանադրական կայունության այնպիսի երաշխիքներ ստեղծեն, երբ սահմանադրական հիմնական սկզբունքների կայուն ու անշեղ պահպանումը զուգորդվում է սահմանադրական ժողովրդավարության դինամիկ զարգացման ու Սահմանադրության գերակայության շարունակական ապահովման հետ**: Այս որակներն արդի սահմանադրական մշակույթի հիմնական բնութագրիչներն են եւ անկյունաքարային նշանակություն ունեն իրավական պետության համար:

Այդ որակների ապահովմանն ուղղված մոտեցումներով են գնահատվում նաեւ երկրում սահմանադրական մշակույթի իմաստավորված ընկալման բնույթն ու աստիճանը, սահմանադրականության հաստատման գործում դրսեւորվող սկզբունքայնությունը, հասարակական համաձայնության միջավայրի կարեւորումը, պետության ու ժողովրդի ապագայի հանդեպ ունեցած պատասխանատվությունը:

Սահմանադրական յուրաքանչյուր փոփոխության հիմքում հստակ հայեցակարգ պետք է դրված լինի: Առաջին հերթին պատճառաբանված պետք է լինի փոփոխությունը՝ ինչու՞, դրանով ի՞նչ խնդիր է լուծվում: Պատասխան պետք է տրվի այն հարցին, թե որով են արժեհամակարգային մոտեցումները, որքանով է փոփոխությունը երաշխավորում Սահմանադրության հիմնարար սկզբունքների առավել ամբողջական ու հետեւողական իրացումը: Ամեն մի լրացում ու փոփոխություն կատարելուց ա-

<sup>265</sup> Մամավորապես տե՛ս Алебастрова И.А. Основы американского конституционализма. М., 2001, էջ 4:

ռաջ պետք է պարզել, թե տվյալ խնդիրն ինչպես է լուծվել միջազգային սահմանադրական պրակտիկայում, ինչպիսի՞ն են միջազգային իրավական մոտեցումները, ինչպիսի՞ն է միջազգային արդարադատական նախադեպը, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումը: Ամեն մի կոնկրետ փոփոխություն, որն առնչվում է իշխանության մարմինների լիազորություններին ու դրանց գործառնական դինամիկ հավասարակշռմանը, պետք է գնահատվի հնարավոր հետեւանքների տեսանկյունից, պարզվեն սահմանադրական երեք կարեւոր սկզբունքների՝ իրավունքի գերակայության, ժողովրդաիշխանության եւ իշխանությունների տարանջատման, հետեւողական իրացումն ապահովելու նոր հնարավորությունները:

Սահմանադրությունը պետք է ներառի քաղաքացիական հասարակության խորքային, մնալուն արժեքների ողջ համակարգը եւ երաշխավորի դրանց կայուն ու հուսալի պաշտպանությունը:<sup>266</sup> Սահմանադրական փոփոխությունները պետք է լինեն դժվարին ու խստիվ հիմնավորված: Սահմանադրական կայունությունը երկրի կայունության գլխավոր երաշխիքն է: Մյուս կողմից, Սահմանադրությունը չի կարող լինել քարացած, չարձագանքել հասարակական առաջընթացին, դրա խթանից վերածվելով այն արգելակողի: Միջազգային պրակտիկան այս խնդրի արդյունավետ լուծումների մեծ գինանոց է առաջադրել: Դրանց շարքում, հատկապես անցյալ դարի ընթացքում, առավել կարեւորվեց սահմանադրական մեկնաբանության ինստիտուտը: Հայեցական եւ գիտական (դոկտրինայ) մեկնաբանությունների կողքին առավել կարեւորվում է Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման ինստիտուտը: Վերջինս հնարավորություն է տալիս Հիմնական օրենքին հաղորդել առավել մեծ ճկունություն, հասա-

266 Տեղին է հիշատակել Վ.Ա. Չետվերնինի այն շեշտադրումը, որ «...հարավերությունների համակարգը, որը ընդգրկվում է «քաղաքացիական հասարակություն», ենթադրում է պատմականորեն զարգացած պետաիրավական այնպիսի իրավիճակ, որում ընդունվում է մարդու իրավունքների գերակայությունը» (տես Բեռնարդ Գ. Բեռնարդ. Բեռնարդ. Ֆենոմենոլոգիա հասարակական գիտության համար. Մ. 2. Մ., 2003, էջ 20):

րակական դինամիզմ, էապես նվազեցնել դրանում փոփոխություններ կատարելու գալթակողությունը: ԱՄՆ սահմանադրագետների կարծիքով՝ այս երկրի Սահմանադրության կենսունակությունը մեծապես պայմանավորված է նրանով, որ Գերագույն դատարանը մոտ 215 տարիների ընթացքում շուրջ 540 հատոր կազմող իր որոշումներում ներկայացված իրավական դիրքորոշումների ու մեկնաբանությունների միջոցով շարունակաբար թարմ լիցք է հաղորդել Հիմնական օրենքին: Կցանկանայինք ամբողջությամբ մեջբերել պրոֆ. Դիկ Հովարդի եզրահանգումն այն մասին, որ «Տարբեր մեթոդներ են կիրառվել, որպեսզի ապահովվի սահմանադրական դրույթների կատարումը: Դրանց թվում են թե՛ ժողովրդի կամքը, թե՛ իշխանությունների տարանջատումը, թե՛ օրենսդրությունը: Սակայն ներկա աշխարհում սահմանադրություններն ավելի շատ են անդրադառնում դատական հսկողությանը՝ որպես սահմանադրական նորմերի պաշտպանության բացառիկ միջոցի: Գաղափարները՝ շարադրված ԱՄՆ Գերագույն դատարանի նախագահ Ջոն Մարշալի կողմից «Մերբերին ընդդեմ Մեդիսոնի» դատական գործի առնչությամբ, դարձան սահմանադրականության տարրեր աշխարհի տարբեր մասերում: **Լիովին կարելի է հաստատել, որ դա հանդիսացավ ամերիկյան ամենամեծ ներդրումը սահմանադրականության մեջ**»<sup>267</sup> (ընդգծումը մերն է - Գ.Հ.):

Ամերիկյան սահմանադրական միտքը միարժեքորեն հավատում է, որ Սահմանադրության արդարադատական մեկնաբանման հնարավորությունն է Հիմնական օրենքին հաղորդում դինամիկ կայունություն ու չթուլացող գործունակություն: Այս հանգամանքի թերագնահատումը վկայում է սահմանադրական ժողովրդավարության սկզբունքների անտեսման կամ սահմանադրական ոչ բավարար գրագիտության մասին: Տեղին է ընդգծել Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի 2004թ. դեկտեմբերի 3-4-

267 Дик Ховард - К конституционной демократии во всем мире: американский взгляд. ВОПРОСЫ ДЕМОКРАТИИ. Электронный журнал Государственного департамента США. Том 9, N1, 2004 г., <http://usinfo.state.gov/journals/jour>

ի 61-րդ լիազումար նիստում Ճապոնիայի եւ Մեքսիկայի ներկայացուցիչների ելույթներից այն ընդհանրականը, որ երկու երկրներն էլ սահմանադրական բարեփոխումների լուրջ գործընթաց են ձեռնարկել՝ գլխավոր նպատակներից մեկը համարելով սահմանադրական դատարանների ստեղծումը (ի դեպ, նման քայլեր են ձեռնարկվում նաեւ Էստոնիայում): Գլխավոր հիմնավորումներից են լիազորությունների հարցերով սահմանադրական վեճերի լուծման եւ Սահմանադրության մեկնաբանման խնդիրների կարեւորությունը եւ դրանց համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը:

Վերջին տասնամյակների եվրոպական զարգացումները նույնպես վկայում են, որ սահմանադրությունների մեկնաբանման հարցում բացառիկ կարեւորվում է սահմանադրական դատարանների դերը, որոնց իրավական դիրքորոշումները մայրցամաքային իրավական համակարգում սահմանադրական իրավունքի կարեւորագույն աղբյուր են դառնում: Այս թեմային նվիրված բազմաթիվ միջազգային քննարկումների մեջ կցանկանայինք առանձնացնել 2004թ. փետրվարին Մոսկվայում հրավիրված միջազգային խորհրդածողովը:<sup>268</sup> Նպատակ ունենալով բացահայտել սահմանադրական դատարանների դերը Սահմանադրության կայունության ու զարգացման գործում, խորհրդածողովի մասնակիցները հատուկ կարեւորեցին Սահմանադրության վերացական ու կոնկրետ-անուղակի մեկնաբանությունների բացառիկ դերն իրավական պետության կայացման ու զարգացման գործում: Շեշտվեց նաեւ, որ աշխարհում գործող շուրջ 110 սահմանադրական դատարաններից առավել արդյունավետ սահմանադրական վերահսկողություն են իրականացնում այն ինստիտուտները, որոնք լայն իրավասություններ ունեն Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման ճանապարհով երաշխավորելու սահմանադրականության կայունությունը: Ի դեպ, եթե Սահմանադրության անուղակի մեկնաբանության իրավասու-

268 Խորհրդածողովի նյութերը հրապարակվել են «Конституционное правосудие» միջազգային հանդեսում ( 2004թ., N 2):

թյուն ունեն, առանց բացառության, բոլոր սահմանադրական դատարանները, ապա վերացական մեկնաբանության իրավասություն է վերապահված շուրջ 30 երկրների սահմանադրական դատարանների:

Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման հարցը մի շարք նորանկախ երկրներում այնքան է կարեւորվում, որ ընդհուպ ամեն մի առանձին պատգամավորի իրավունք է վերապահվում այդ հարցով դիմել սահմանադրական դատարան: Տիպական է հատկապես Մոլդովայի փորձը: Օրինակ, թեկուզ այս երկրի սահմանադրական դատարանի 2004թ. ապրիլի 2-ի որոշման ուսումնասիրությունը վկայում է, թե ինչպես մեկ պատգամավորի դիմումի հիման վրա քննության է առնվում Սահմանադրության 116 հոդվածի 3-րդ մասի մեկնաբանման հարցը եւ լուծում է տրվում մի խնդրի, որը կարող էր բազմապիսի շահարկումների առարկա դառնալ: Մենք այստեղ կարեւորում ենք ոչ այնքան կոնկրետ խնդիրը, որքան նման խնդիրների իրավական լուծման հնարավորությունը: Տվյալ պարագայում էական է նաեւ խորհրդարանի հեղինակությունը եւ վերահսկիչ դերը, հասարակության մեջ բացասական հասարակական էներգիայի կուտակումներ թույլ չտալը, սահմանադրական արդարադատության գործունակությունը եւ այլն: Միանգամայն իրավացի է Բ. Ա. Օսիպյանը, նշելով, որ «...նույնիսկ «ամենակոշտ» սահմանադրությունը պետք է ներառի գործնական հնարավորություն պարբերաբար իրականացնելու օրենսդրական բարեփոխումներ՝ խուսափելու համար տարաբնույթ սոցիալական ցնցումներից»:<sup>269</sup>

Իրավական պետության գնահատման կարեւոր չափանիշներից մեկն սովերային կառավարման աստիճանն է: Խնդիրն այն է, թե իրական իշխանությունը որքանով է գտնվում սահմանադրական ինստիտուտների ձեռքին եւ որքանով է դա կրում ձեռական բնույթ, իսկ իրական իշխանությունը հայտնվում է սովերային ինստիտուտների ու անհատների ձեռքին: Այս իրողության

269 Осипян Б. А. Идея саморазвивающейся правовой системы // Журнал российского права. 2004, N 4, էջ 73:

ծավալումը կարող է ուղիղ համեմատական կապի մեջ գտնվել դատական իշխանության անկախության ու գործունակության աստիճանի հետ, եւ որի երաշխավորմամբ է միայն հնարավոր դրանք կանխել:

Ամփոփելով ասվածը՝ կարող ենք անել այն հետետությունը, որ Հայաստանում սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը պայմանավորված է հետեւյալ հիմնահարցերի առկայությամբ.

1. Անկախ պետականության կայացման եւ անցումային իրավիճակի հաղթահարման կարեւոր նախապայման է պետական կարգի հիմունքների համակարգային հստակեցումը՝ հասարակական պրակտիկայի խորքային օրինաչափությունների համակողմանի գնահատման, միջազգային փորձի ուսումնասիրման եւ ազգային-պետական հիմնախնդիրների առաջնահերթությունները զարգացման յուրաքանչյուր փուլի համար բազմագործոն վերլուծությամբ ճշգրտելու ճանապարհով: Հայաստանի Երրորդ Հանրապետությունն իր անկախության առաջին քայլերը կատարեց համակարգային փլուզման, պատերազմական, հասարակական-տնտեսական ծայրահեղ դժվարին պայմաններում, ի գործու գտնվեց լուծելու ազգային-պետական բարդագույն խնդիրներ, կուտակելով նաեւ պետականության կայացմանը խոչընդոտող բազում հիմնահարցեր, որոնց լուծումը հնարավոր է միայն որոշակի համակարգային բարեփոխումների պայմաններում:
2. Հայաստանի միջազգային ինտեգրման ներկա գործընթացները վկայում են, որ անհրաժեշտ է առավել խորությամբ հաշվի առնել թե՛ պատմական իրողությունները եւ թե՛ այն հիմնարար արժեքները, որոնք, հատկապես ժողովրդավարական զարգացումների եւ մարդու իրավունքների պաշտպանության բնագավառներում, ներկայումս դրվում են եվրոպական երկրների ներպետական, միջպետական ու վերապետական իրավահարաբերությունների հիմքում, եւ որոնք

հաշվի առնելով՝ դասական ժողովրդավարության ու նաեւ Արեւելյան Եվրոպայի շատ երկրներ նույնպես վերջին տարիներին զգալի փոփոխություններ են կատարել իրենց սահմանադրություններում:

3. ՀՀ Սահմանադրության մեջ բացակայում է մեթոդաբանական նշանակություն ունեցող հստակ վերաբերմունքը մարդու իրավունքների՝ որպես բարձրագույն եւ անօտարելի արժեք, որպես անմիջական գործող իրավունք ճանաչելու եւ երաշխավորելու նկատմամբ: Սահմանադրական բարեփոխումների գլխավոր ուղղություններից մեկը մարդու իրավունքների ապահովման ու պաշտպանության սահմանադրական երաշխիքների ամրապնդումն է, այդ իրավունքների հնարավոր սահմանափակման շրջանակների հստակեցումը՝ միջազգային իրավունքի, մասնավորապես, «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի դրույթներից ու սահմանադրականության զարգացման միջազգային միտումներից ելնելով:
4. ՀՀ Սահմանադրությամբ հետետողականորեն իրացված չէ իշխանությունների տարանջատման սկզբունքը, թերի է ապահովված տարանջատ, միմյանց հակակշիռ եւ հավասարակշռված օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների գոյությունը: Անհրաժեշտ է, վերոնշյալ սկզբունքներից ելնելով՝ հստակեցնել իշխանության տարբեր ինստիտուտների գործառնական լիազորությունները, ամրապնդել հակակշիռների ու զսպումների հաշվեկշիռը:
5. Թերի են ՀՀ Ազգային ժողովի օրինաստեղծ աշխատանքի արդյունավետության եւ գործուն վերահսկիչ դերի ապահովման սահմանադրական երաշխիքները: Անհրաժեշտ է Ազգային ժողովին վերապահել առավել մեծ ինքնուրույնություն ստանձնած քաղաքական պատասխանատվությունն իրականացնելու գործում՝ ամրապնդելով նրա օրինաստեղծ դերը, ստեղծելով երկրում պառլամենտարիզմի հաստատման իրական նախադրյալներ:

6. Նոր սկզբունքային մոտեցումներ են պահանջում դատական իշխանության անկախության եւ համակարգային ամբողջականության սահմանադրական երաշխիքներ ապահովելու հիմնահարցերը: Սահմանադրորեն պետք է երաշխավորվի դատական իշխանության իրական անկախությունը, լուծվի վարչական արդարադատության արմատավորման հիմնահարցը, գործառնական հատակ փոխհարաբերություններ ապահովվեն դատական իշխանություն իրականացնող ինստիտուտների միջև:

Առավել գործուն ու արդյունավետ պետք է դառնա սահմանադրական արդարադատության համակարգը՝ լրացնելով ու ամբողջականացնելով սահմանադրական վերահսկողության օբյեկտների ու սուբյեկտների ցանկը, արմատավորելով Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման, սահմանադրական փոփոխությունների նախնական սահմանադրական վերահսկողության ու սահմանադրական լիազորությունների հարցով առաջացած վեճերի լուծման համակարգ, ամրապնդելով մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքները՝ անհատական դիմումների համակարգի ներդրման ճանապարհով:

7. Սկզբունքորեն պետք է վերանայվեն Սահմանադրության «Տարածքային կառավարում եւ տեղական ինքնակառավարում» բաժնի մեթոդաբանական մոտեցումները՝ հաղթահարելու համար շփոթը, եւ տեղական ինքնակառավարումը դիտարկելու որպես հասարակության ժողովրդավարական ինքնուրույն ինստիտուցիոնալ համակարգ՝ ամրագրելով տեղական ինքնակառավարման ինքնուրույնության ապահովման անհրաժեշտ ու բավարար սահմանադրական երաշխիքներ:

8. Առաջացել է նաեւ առանձին ներքին հակասությունների հաղթահարման, ներսահմանադրական կայունության երաշխիքների ապահովման անհրաժեշտություն:

9. Սահմանադրությունն ապրող իրողություն դարձնելու, սահմանադրականության, սահմանադրական ժողովրդավարության հաստատման համար անհրաժեշտ է հասարակական հարաբերությունների հետեւողական սահմանադրականացում, «քաղաքացի-Սահմանադրություն» շղթան բաժանող բոլոր արգելանքների վերացում, ժողովրդաիշխանության իրական նախադրյալների ստեղծում:

10. Սահմանադրորեն պետք է երաշխավորվի անմիջական ժողովրդավարության ամբողջական, ժողովրդի կամքով պայմանավորված, առանց արգելափակման ու լիարժեք իրականացումը:

### 3.5. ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆԸ

Ժողովրդավարական հասարակության եւ իրավական պետության գոյության եւ գործառնության բարձրագույն սկզբունքը Սահմանադրության գերակայությունն է: Սահմանադրական մշակույթի մասին բոլոր դատողությունները կարժեգրկվեն, եթե գործնական կյանքում երաշխավորված չէ Սահմանադրության գերակայությունը:

**Գերակայությունը Սահմանադրության մեջ ամրագրված՝ նրա համապարտադրության հատկանիշն է, որը հաստատում է իրավական ակտերի աստիճանակարգություն, Սահմանադրությանը վերապահում է իրավունքի կարեւորագույն աղբյուրի դեր եւ պարտավորեցնում է նորմաստեղծին ու իրավակիրառողին որպես բարձրագույն չափանիշ ընդունել Հիմնական օրենքը:** Սրա համար հիմք է հանդիսանում Սահմանադրության բնույթը՝ որպես հիմնադիր ուժ ունեցող իրավական ակտի, որի համապարտադրության աստիճանը բարձր է հանրային իշխանության ցանկացած այլ որոշման իրավաբանական ուժից: Իրավական պետության բարձրագույն օրենքը հանդիսանում է հանրային իշխանության պետական կամքի ձեւավորման եւ իրականացման իրավական հիմքը եւ ենթադրում է պահպանման հատուկ գործառույթ՝ որպես իրավական պետության մեջ հսկողական բնույթ ունեցող բարձրագույն գործառույթ: XX դարի հիմնական ձեռքբերումներից մեկն այն է, որ ձեւավորվեցին հատուկ մասնագիտացված արդարադատական կառույցներ՝ այդ առաքելությունն իրականացնելու համար: Դատական սահմանադրական վերահսկողության մարմինների նման դերն առաջին հերթին կայանում է նրանում, որ դրանք **ապահովում են Սահմանադրության գերակայությունը՝ երաշխավորելով իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը, լուծելով պետական մարմինների համակարգում սահմանադրական իրավասությունների վերաբերյալ վեճերը, ստեղծելով հասարակության մեջ ծագող քաղաքական տարաձայնությունների իրավական կարգա-**

**վորման երաշխիքներ, ապահովելով մարդու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները:** Այլ կերպ՝ դատական սահմանադրական վերահսկողությունը հանդիսանում է հասարակության մեջ կայունության ապահովման միջոց եւ հնարավորություն: Այդ դերն առաջին հերթին իրականացվում է Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտերի ստուգման, անհամապատասխանության բացահայտման, գնահատման եւ վերացման միջոցով:

Դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված ինստիտուտների կոչումը կայանում է հենց նրանում, որ սահմանադրական դատարաններն ստեղծվեն եւ գործեն սահմանադրական կարգի հիմքերի, մարդու եւ քաղաքացու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության, Սահմանադրության գերակայության եւ ուղղակի գործողության ապահովման, Սահմանադրության մեջ հռչակված ու երաշխավորվող հիմնական քաղաքական եւ իրավական արժեքների պահպանման նպատակով:

Ներկայումս աշխարհում գործում են շուրջ 110 սահմանադրական դատարաններ: Բավականին տարբեր են դրանց լիազորությունները, ձեւավորման եւ գործունեության մեխանիզմները: Ամեն դեպքում, նույնն է նրանց գործառնական դերը, այն է՝ **դատական սահմանադրական վերահսկողության միջոցով Սահմանադրության գերակայության ապահովումը:**

Սահմանադրական արդարադատության որոշ տարրեր սկիզբ են առնում 1180 թվականից՝ հին գերմանական պետությունում: Այդ ժամանակներում նույնպես համապատասխան իրավական ինստիտուտները կարգավորել են նաեւ իշխանությանը օժտված մարմինների միջեւ ծագած վեճերը: Պորտուգալիան սահմանադրական վերահսկողությունը ներդրել է 12-րդ դարում՝ Ֆիլիպի օրենսգրքում: Սահմանադրական վերահսկողության նախնական ձեւերը գոյություն են ունեցել Ֆրանսիայում՝ 13-րդ դարի կեսերին: Դատական սահմանադրական վերահսկողության ավելի լուրջ նախագծեր հայտնվել են Նորվեգիայում, Գանիայում եւ Հունաստանում՝ 19-րդ դարում:



Սահմանադրականության պատմության եւ հատկապես սահմանադրական արդարադատության պատմական զարգացման տեսանկյունից բացառիկ են Հակոբ եւ Շահամիր Շահամիրյանների մոտեցումները «Որոգայթ փառացում»: Բնական իրավունքի տեսության սկզբունքներին համապատասխան շարադրված այս աշխատությունը, ինչպես նշել ենք, ըստ էության հանդիսանում է առաջին Սահմանադրությունը, որը ներառում է հատուկ մասնագիտացված դատարանի՝ «Բարձր դատարանի» գաղափարը, որի առաքելությունը՝ ներկայիս ընկալվամբ, կայանում է դատական սահմանադրական վերահսկողության իրականացման մեջ: Նշված աշխատության լոկ անվանումն արդեն սահմանադրական վերահսկողության մի ամբողջ տեսություն է: Դրա էությունը հանգում է նրան, որ հեղինակներն ստեղծում են սահմանադրական «թակարդ» իշխանություն կողոնների համար, որպեսզի նրանք մնան եւ գործեն իրենց սահմանադրական իրավասությունների շրջանակում: Այդ յուրօրինակ փաստաթղթում զարմանալի ներդաշնակության մեջ ներկայացվում են զպումները, հակակշիռներն ու գործառնական բնույթի իրավասությունները: 1867թ. Ավստրիայի Դաշնային դատարանն ստացավ իրավասությունների վերաբերյալ վեճեր լուծելու իրավունք՝ ի պաշտպանություն անհատի քաղաքական իրավունքների՝ ընդդեմ վարչակազմի: Թեեւ սահմանադրական վերահսկողության որոշ նախնական տարրեր ներդրված են եղել Շվեյցարիայի 1848թ. Դաշնային Սահմանադրությունում, այսուհանդերձ, Շվեյցարիայի Դաշնային դատարանը լայն լիազորություններ ստացել է միայն 1874թ. փոփոխված Սահմանադրությամբ: Նորվեգիայում դատական սահմանադրական վերահսկողությունն իրավագիտության մեջ ծնվել է 1890թ.: Ռումինիան սահմանադրական արդարադատություն ներդրել է Առաջին համաշխարհային պատերազմից առաջ՝ ամերիկյան մոդելով:

Ամերիկյան ժամանակակից իրավաբանական համակարգում բացակայում են դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված ինստիտուտները, այնուամենայնիվ, Անգլիայի իրավական պատմությունը ներառում է մի քանի տար-

րեր, մասնավորապես, սահմանադրության գերակայության սկզբունքը, որն սկիզբ է առնում 1610 թվականից եւ կարելի է նշանակություն ունի Անգլիայի սահմանադրական իրավունքի զարգացման պատմության մեջ: Սահմանադրության գերակայության եւ դատական հսկողության իրավունքի գաղափարներն Անգլիայից տարածվեցին դեպի ԱՄՆ: Այնտեղ արդեն 18-րդ դարում դատարանն առանձին անգլիական օրենքներ ճանաչել էր անվավեր (Հյուսիսային Ամերիկյան Նահանգներում): Սակայն 1787թ. Սահմանադրությամբ Գերագույն դատարանը՝ որպես բարձրագույն դաշնային դատարան, չունի արտահայտված սահմանադրական վերահսկողության իրավասություններ:

Սահմանադրական արդարադատության զարգացման վրա վճռորոշ ազդեցություն է ունեցել «Մերբերին ընդդեմ Մեդիսոնի» գործը (1803թ.), երբ ԱՄՆ Գերագույն դատարանն իրեն վերապահեց օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը լուծելու գործում սահմանադրական վերահսկողության իրավասություն: Դա հնարավորություն տվեց ամերիկյան Գերագույն դատարանի իշխանությունն օգտագործել օրենքի դատական վերանայման համար: Այս որոշմամբ փաստորեն հակասահմանադրական ճանաչվեց 1789թ. Կոնգրեսի կողմից ընդունված դատավարական օրենքի այն հատվածը, որը վերաբերում էր Գերագույն դատարանի իրավասություններին (կետ 13): Դասական ձեւակերպում է դարձել 1803թ. փետրվարի 24-ի որոշման վերաբերյալ ԱՄՆ-ի Գերագույն դատարանի նախագահ Ջոն Մարշալի հետեւյալ միտքը. «Միայն եւ միայն դատական իշխանության պարտականությունն է ասել, թե ինչ է իրենից ներկայացնում օրենքը... Օրենքը, որն անհամատեղելի է Սահմանադրության հետ, անվավեր է»:

Հաշվի առնելով ԱՄՆ-ի Գերագույն դատարանի կողմից իրավական ակտի սահմանադրականության կապակցությամբ առաջին որոշման ընդունումը եւ այդ հարյուրամյակի ընթացքում նոր մոտեցումները, կարելի է պայմանականորեն առանձնացնել սահմանադրական արդարադատության համակարգերի ձեւավորման եւ զարգացման հետեւյալ փուլերը:

1. 1803-1920թթ.,
2. 1920-1940թթ.,
3. 1945-1990թթ.,
4. 1990 թվականից հետո:

Երկրորդ փուլը համընկնում է դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված առաջին ինստիտուտի ստեղծման հետ: Ավստրիայի 1920թ. Սահմանադրությունը նշանավորվում է Ավստրիայի սահմանադրական դատարանի ստեղծմամբ՝ օրենքի նկատմամբ սահմանադրական վերահսկողության բացառիկ իրավունքով (սկզբում, ճիշտ է, նախնական բնույթի): Դա տեղի ունեցավ հիմնականում ավստրիացի իրավաբան-տեսաբաններ Ադոլֆ Մերկլի եւ Հանս Բելզենի շնորհիվ: Դրա արդյունքում երկու պատերազմների միջեւ ընկած ժամանակահատվածն անվանվեց «Ավստրիական ժամանակահատված»:

Ավստրիայի օրինակով մինչեւ Երկրորդ համաշխարհային պատերազմը դատական սահմանադրական վերահսկողությունները կեց Զեխտսլովակիայում (1920թ.), Լիխտենշտեյնում (1925թ.), Հունաստանում (1927թ.), Իսպանիայում (1931թ.), Իռլանդիայում (1937թ.), Եգիպտոսում (1941թ.): Սահմանադրական վերահսկողության ավելի լայնորեն ներդրման միտումն ընդհատվեց Երկրորդ համաշխարհային պատերազմով, եւ արդեն ձեւավորված ինստիտուտները չկարողացան գործունեություն ծավալել (օրինակ, Ավստրիան սահմանադրական վերահսկողություն չի ունեցել 1933-1945թթ., Չեխոսլովակիան՝ 1938 թվականից):

Երրորդ փուլը հետպատերազմյան (1945-1990թթ.) փուլն է, երբ եվրոպական պետություններում գրեթե միաժամանակ ձեւավորվեցին սահմանադրական դատարաններ, որոնց հիմնական խնդիրն օրենքների եւ այլ նորմատիվ ակտերի՝ Հիմնական օրենքին համապատասխանության ապահովումն էր:

Շատ այլ պետություններ նույնպես սահմանադրական վերահսկողության հատուկ համակարգ ներդրեցին անմիջապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո. Բրազիլիան

(երկրորդ անգամ՝ 1946թ.), Ճապոնիան (1947թ.), Բիրման (1947թ.), Իտալիան (1948թ.), Թաիլանդը (1949թ.), Գերմանիան (1949թ.), Հնդկաստանը (1949թ.), Լյուքսեմբուրգը (1950թ.), Սիրիան (1950թ.), Ուրուգվայը (1952թ.), Ֆրանսիան (1958թ.) եւ այլն:

Այս ժամանակահատվածում կոմունիստական վարչակարգ եւ միակուսակցական համակարգ ունեցող պետություններում դատական սահմանադրական վերահսկողության ինստիտուտների ձեւավորումը համարվում էր բուրժուական շքեղություն: Ի հակադրություն դրա, շատ եվրոպական պետություններ (Ավստրիան, Գերմանիան, Իսպանիան, Իտալիան եւ այլն) առաջադրեցին այն հարցը, որ մարդու սահմանադրական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը պետք է դառնա սահմանադրական արդարադատության առանցքային խնդիրը: Բնականաբար, հետպատերազմյան շրջանում ոչ միայն այդ երկրների սահմանադրական դատարաններն ստացան նման լիազորություններ, այլ նաեւ քաղաքացիներն ստացան իրենց իրավունքներն ընդհուպ մինչեւ սահմանադրական դատարանում պաշտպանելու իրավունք:

Սահմանադրական արդարադատության չորրորդ փուլը համընկնում է ժողովրդավարացման որակապես նոր գործընթացների, մեծաթիվ նորանկախ պետությունների ձեւավորման ժամանակահատվածի հետ: Հաշվի առնելով եվրոպական պետությունների կուտակած փորձը, երիտասարդ նորանկախ պետություններն իրենց պետական շինարարության եւ ժողովրդավարական ինստիտուտների զարգացման գործում առաջին եւ հիմնական քայլերից մեկը համարեցին նաեւ իշխանությունների տարանջատման սկզբունքի գործնական իրացումը եւ սահմանադրական վերահսկողության ամբողջական համակարգի ստեղծումը: Դա նաեւ պայմանավորված էր Սահմանադրության պաշտպանության անհրաժեշտությամբ, որը գրեթե բոլոր պետություններում մշակվեց եւ ընդունվեց որոշակի դժվարություններով, ինչպես նաեւ այն խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, որոնք պայմանավորված էին հասարակական զարգացումը ճգնաժամային կառավարման հարթությունից հասարակական եւ պե-

տական կայունության ու դինամիկ զարգացման հարթություն փոխադրելու հետ:

Վերջին փուլերը նշանավորվում են նաև Եվրոպայի որոշ երկրներում քաղաքական փոփոխություններով, որոնք սահմանադրական վերահսկողություն ներդրել են դիկտատուրայի անկումից հետո. Հունաստան (1968թ.), Իսպանիա (1978թ.), Պորտուգալիա (1976թ.): Այդ ժամանակահատվածում սահմանադրական վերահսկողություն ներդրվում է նաև այլ պետություններում. Կիպրոսում (1960թ.), Թուրքիայում (1961թ.), Ալժիրում (1963թ.), նախկին Հարավսլավիայի Գաշնության հանրապետություններում (1963թ.) եւ այլուր:

Միեւնույն ժամանակ, սահմանադրական վերահսկողության գոյություն ունեցող ինստիտուտների շրջանակներում ներդրվել է համակարգային վերահսկողություն (Ավստրիա, Գերմանիա, Շվեդիա, Ֆրանսիա, Բելգիա): 80-ական թվականների քաղաքական եւ սոցիալական փոփոխությունների արդյունքում սահմանադրական վերահսկողությունը սկսել է ներդրվել նաև Կենտրոնական եւ Հարավային Ամերիկայի մի շարք երկրներում: Աշխարհի այդ հատվածում հատուկ տեղ է զբաղեցնում Արգենտինան, որտեղ դաշնային պետությունում ժողովրդավարական ձեւափոխումների գործընթացը ծավալվեց սուբյեկտներում եւ առանձնաձևում էր սահմանադրական վերահսկողության տարրերի՝ տարբեր տարածքներում տարբեր ակտիվությամբ աստիճանաբար ընդլայնմամբ:

Ըստ էության տարբերակվում է սահմանադրական արդարադատության երկու մոդել՝ ամերիկյան եւ եվրոպական: Վերջին տասնամյակներում ավելի մեծ թվով պետություններ ընդունում են սահմանադրական արդարադատության եվրոպական մոդելը, ինչը պայմանավորված է հասարակական զարգացման կայունության երաշխիքների հուսալի համակարգի ձեւավորման անհրաժեշտությամբ:

Սահմանադրական արդարադատության ամերիկյան մոդելին բնորոշ են հետեւյալ հատկանիշները.

- համընդգրկուն բնույթ, որը ներառում է ոչ միայն օրենքները,

այլ նաև բոլոր մակարդակների ցանկացած նորմատիվ ակտ,

- վերահսկողությունն իրականացվում է ապակենտրոնացած կերպով՝ ցանկացած դատարանի կողմից, ցանկացած կոնկրետ գործ քննության առնելիս, եթե օրենքը կամ նորմատիվ ակտն առնչվում է հայցվորի կոնկրետ շահերին,
- կրում է հարաբերական բնույթ, քանի որ դատարանի որոշումը պարտադիր է միայն կողմերի համար եւ չի տարածվում իրավակիրառման ողջ դաշտի վրա,
- այն ունի կոնկրետ հետագա վերահսկողության բնույթ:

Ինչու՞ Եվրոպան 20-րդ դարում չընդունեց ամերիկյան մոդելը: Այս հարցին շատերն են փորձել պատասխանել: Մի դեպքում փորձել են պատասխանը փնտրել «օրենք» եւ «Սահմանադրություն» հասկացությունների բազմաբնույթ ընկալման հարթության վրա: Մեկ այլ դեպքում շեշտադրումը կատարվում է դատական համակարգի եւ դատավորների գործունեության առանձնահատկության վրա (հատուկ առանձնացնելով դատարանի անկախության աստիճանը եւ օրենքի սահմանադրականության հարցի վերաբերյալ որոշում ընդունելու՝ դատավորների կարողությունը): Երրորդ դեպքում առաջին պլան են մղվում տվյալ հասարակության առջեւ դրված խնդիրները եւ դրանց լուծմանը բնորոշ առանձնահատկությունները: Այսպես, թե այնպես, ավելի քան մեկ դար ողջ աշխարհում դատական սահմանադրական վերահսկողության գործառույթն իրականացրել են ընդհանուր իրավասության դատարանները: Սակայն 20-րդ դարի սկզբներին հասարակական կյանքում տեղի ունեցած բուռն փոփոխությունները, ընդ որում՝ իշխանությունների տարանջատման պայմաններում, մասնագետների առջեւ դրեցին մի շարք հիմնախնդիրներ.

1. հնարավոր դարձավ օրենքի միջոցով հասնել իշխանության մեծ կենտրոնացման, ընդհուպ՝ դրա ուզուրպացման,<sup>270</sup>

270 Կարելու է նաև այն հանգամանքը, որ մայրցամաքային իրավական համակարգում օրենքը լիցքառապես քաղաքական փոխհամաձայնության արդյունք է եւ արդարադատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր վճռական դերակատարություն չունի:

2. հասարակական իրավիճակի եւ դրան համապատասխան օրենսդրական դաշտի արագ փոփոխության պայմաններում կոնկրետ գործերով իրականացվող վերահսկողությունն ակնհայտորեն անբավարար էր սահմանադրության գերակայությունն արդյունավետորեն ապահովելու համար,
3. իշխանությունների տարանջատման պայմաններում հասարակության ապակայունացման գլխավոր դետոնատորը դարձավ իշխանության տարբեր ճյուղերի պայքարը լիազորությունների համար:

Նշվածներից բացի, այլ էր նաեւ մոտեցման մեթոդաբանությունը: Առաջին պլան մղվեց ոչ միայն կոնկրետ անձի շահերին առնչվող հարցի լուծումը, այլ նաեւ ողջ օրենսդրական համակարգի սահմանադրականության ապահովման միջոցով հասարակական կայունության եւ դինամիկ զարգացման հիմնախնդիրը:

Եվրոպական մայրցամաքային իրավական համակարգում առաջնահերթ են համարվում հետեւյալ երեք խնդիրները.

ա/ նորմատիվ ակտերի սահմանադրականության ապահովումը եւ դրա միջոցով իշխանության տարբեր ճյուղերի միջեւ սահմանադրականորեն ամրագրված գործառնական հավասարակշռության պահպանումը,

բ/ իշխանության տարբեր մարմինների միջեւ իրավասությունների կապակցությամբ վիճելի հարցերի լուծման հստակ կանոնակարգումը,

գ/ մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության առավել ամբողջական եւ հուսալի համակարգի ստեղծումը:

Եվրոպական համակարգի բնորոշ առանձնահատկությունը կայանում է ոչ միայն նրանում, որ վերահսկողությունն իրականացվում է մասնագիտացված մարմինների միջոցով եւ ներդրված են դատական սահմանադրական վերահսկողության վերացական, կոնկրետ, ֆակուլտատիվ, պարտադիր, նախնական, հետագա, ըստ ձեւի ու ըստ բովանդակության վերահսկողության համակարգեր: Հատուկ նշանակություն ունի եւ այն հանգամանքը, որ էականորեն փոխվում է նաեւ սահմանադրական արդարա-

դատության դերը պետական իշխանության համակարգում:

Գատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված համակարգի գործունեության միջազգային փորձը ցույց է տալիս, որ սահմանադրական արդարադատության գլխավոր խնդիրն է պետական իշխանության այնպիսի համակարգի ձևավորմանն աջակցելը, որում երաշխավորված են Սահմանադրության գերակայությունը, մարդու անօտարելի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ստեղծված են անհրաժեշտ նախադրյալներ՝ իրավունքի գերակայության, իշխանությունների տարանջատման, ընտրովիության և հաշվետվության սկզբունքների հիման վրա հասարակության կայուն և դինամիկ զարգացման համար, **որտեղ հաղթահարված է բացասական հասարակական էներգիայի առաջանցիկ կուտակման գործընթացը:**

Այս խնդիրը ներկայումս ձեռք է բերում հսկայական արդիականություն, հաշվի առնելով, որ մարդկությունը թևակոխել է զարգացման նոր փուլ, երբ գերակայող է դառնում, մի կողմից՝ արժեքային համակարգի վերաիմաստավորման անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ նոր որակ են ձեռք բերում փոխադարձ կապերը և փոխազդեցությունները: Մասնավորապես, իրավական գլոբալացման պայմաններում յուրաքանչյուր երկրի սահմանադրական վերահսկողության համակարգը պետք է դառնա սահմանադրական կայունության ամուր երաշխիք և համապատասխանի որոշակի ընդհանուր չափանիշների և պահանջների: Վերջիններիս հստակ բնորոշումը, գիտական վերլուծությունը եւ **անընդհատ գործառնությամբ սահմանադրական վերահսկողության ամբողջական համակարգի ձևավորումը** դարձել են անհետաձգելի անհրաժեշտություն:

Սահմանադրական ժողովրդավարության և կայունության հաստատման գործում սահմանադրական դատարանի դերի ու նշանակության վերհանման համար, մեր կարծիքով, սկզբունքային նշանակություն ունի սահմանադրական վերահսկողության գործառնության համակարգային բնույթի բացահայտման խնդրի նկատմամբ մեթոդաբանական ճիշտ մոտեցումը: Գտնում ենք,

որ գիտական գրականության մեջ այս հարցին պատշաճ ուշադրություն չի դարձվում: Անհրաժեշտ է առանձնացնել երկու սկզբունքային հանգամանք:

Առաջին՝ սահմանադրական վերահսկողությունը՝ որպես ամբողջական համակարգ, կարող է լինել գործունակ միայն անհրաժեշտ և բավարար գործառնական հավասարակշռվածության պայմաններում: Նկատի է առնվում ոչ միայն դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված հաստատությունների տեղն ու դերը, այլ նաև օրենսդիր և գործադիր իշխանությունների, ինչպես նաև այլ սահմանադրական սուբյեկտների գործառնական դերը սահմանադրական վերահսկողության ոլորտում, բարոյական, ազգային և հոգևոր արժեքների պահպանության կարգը և ավանդույթները: Վերջիններս բազում դարերի ընթացքում ունեցել են բացառիկ կարևոր նշանակություն բանական արժեքների հիման վրա հասարակական զարգացման համակարգային կայունության ապահովման գործում, բայց, ցավոք, նոր իրականության մեջ էականորեն կորցնում են նախկին ազդեցության թափը:

Երկրորդ դրսևորումը կայանում է նրանում, որ սահմանադրական վերահսկողությունը, որպես համակարգ, որպես տարբեր իրավագործություններ ունեցող բարդ և ներդաշնակ գործառնություն պահանջող մարմինների ամբողջություն,<sup>271</sup> կարող է գոյություն ունենալ և արդյունավետ գործել միայն որոշակի նախադրյալների առկայության դեպքում: Դրանցից անհրաժեշտ է առանձնացնել հետևյալները՝ հասարակական հարաբերությունների սահմանադրական կանոնակարգման խորությունը և համակարգային բնույթը, հասարակության զարգացման ժողովրդա-

վարական սկզբունքներին հավատարմությունը, սահմանադրական ժողովրդավարության որոշակի միջավայրի առկայությունը, սահմանադրական վերահսկողության անկախությունը, դրա համընդգրկուն բնույթը, մատչելիությունը հասարակության անդամների համար և այլն:

Անկյունաքարային նշանակություն ունի համակարգի ամբողջականության, դրա հիմնական օղակների միջև հստակ գործառնական փոխկապվածության ապահովումը, դինամիկայում համակարգի հավասարակշռվածության ապահովման ընթացքում ռացիոնալ փոխգործակցությունը, ինչպես նաև սահմանադրական վերահսկողության համակարգի կառուցակարգային ներդաշնակությունը:

XX դարում սահմանադրական վերահսկողության համակարգի ձևավորման և գործառնության միջազգային փորձի, ինչպես նաև երիտասարդ ժողովրդավարության երկրներում ստեղծված իրավիճակի ուսումնասիրությունն ակնհայտորեն ցույց է տալիս, որ, ցավոք, սահմանադրական վերահսկողության շատ խնդիրներ դիտարկվում և լուծվում են մակերեսայնորեն, իշխանությունների տարանջատման սկզբունքի իրացման ժամանակ չի ապահովվում հետևողականությունը, ինչը չի հանգեցնում ցանկալի արդյունքների՝ հասարակական օրգանիզմի ինքնապաշտպանության գործունակ համակարգի հաստատման համար: Դա առավել եւս խնդրահարույց է դառնում, երբ սահմանադրական վերահսկողության համակարգում թերագնահատվում է դատական սահմանադրական վերահսկողության տեղն ու դերը:

Հաճախ է անհրաժեշտություն առաջանում շեշտել Ավստրիայի սահմանադրական դատարանի նախկին նախագահ՝ պրոֆեսոր Լ. Ադամովիչի խոսքերն այն մասին, որ «սահմանադրական ժողովրդավարությունը հանդիսանում է անհրաժեշտ և հիմնական միջավայր սահմանադրական դատարանների նորմալ գործառնության համար»: Կարելի է ավելացնել նաև, որ առանց սահմանադրական արդարադատության գործունակ համակարգի ներդրման հնարավոր չէ երաշխավորել սահմանադրական ժողովրդավարությունը և հասարակական համակարգի կայու-

271 Հարկ ենք համարում շեշտել, որ սահմանադրական վերահսկողության մարմինների շարքում հատկապես նկատի պետք է ունենալ, մի կողմից, երկրի Նախագահին, պառլամենտին, կառավարությանը, սահմանադրական այլ ինստիտուտներին (որպես ոչ մասնագիտացված մարմիններ), մյուս կողմից՝ դատական իշխանության մարմիններին եւ, հատկապես, սահմանադրական դատարաններին (որպես մասնագիտացված մարմիններ):

նությունը: Այս մոտեցումը փորձենք զարգացնել հետևյալ անսովոր, բայց, մեր կարծիքով, մտորումների համար բավարար նյութ տվող համեմատության օգնությամբ:

Վերջին տասնամյակներում գիտական միտքը մանրակենսաբանության և բժշկագիտության ոլորտում կատարել է մի շարք լուրջ ընդհանրացումներ, որոնք բացառիկորեն կարևոր են նաև հասարակական օրգանիզմի ներքին ինքնապաշտպանության հիմնական սկզբունքների և մեխանիզմների համակարգային ուսումնասիրության, սահմանադրորեն ամրագրված գործառնական հավասարակշռվածության կայունության ապահովման տեսանկյունից: Գրեթե աքսիոմատիկ սկզբունքների թվին են դասվում, որ.

- մարդու իմունային համակարգի, ինչպես նաև այլ բարդ կենսաբանական համակարգերի գործառնությունն ընդգրկում է ամբողջ օրգանիզմը, ունի հիերարխիկ և ինքնակառավարվող բնույթ,
- օրգանիզմի յուրաքանչյուր բջիջ օժտված է ինքնապաշտպանության որոշակի ռեսուրսներով, որոնց սպառման դեպքում միանում են՝ օրգանիզմի այլ փոխկապակցված կառուցվածքային տարրերի պաշտպանիչ համակարգերը,
- իմունային համակարգի գլխավոր առաքելությունն է բնական հավասարակշռվածության և կայունության պահպանումն ամբողջ օրգանիզմում, քանի որ խախտված հավասարակշռության չվերականգնումը բացասական ներուժի կուտակման և իռացիոնալ վերարտադրության պատճառ են դառնում,
- ֆիզիոլոգիական հավասարակշռվածությունը, օրգանիզմի իմունային և նյարդային համակարգը գտնվում են կայուն ներդաշնակության վիճակում,
- ցանկացած պաթոլոգիա ակտիվացնում և գործողության մեջ է դնում ինքնապաշտպանության ողջ համակարգը,
- միշտ որոշակի քանակությամբ գոյություն ունեցող իմունոհորմոնների թիվը պաշտպանական ռեակցիայի դեպքում աճում է մինչև պաշտպանիչ գործառնության լիարժեք իրա-

կանացման համար անհրաժեշտ քանակի: Սակայն, եթե պաշտպանիչ ունակությունն անբավարար է գործառնական հավասարակշռվածության վերականգնման համար, առաջանում է էկզոգեն միջամտություն պահանջող ախտորոշիչ իրավիճակ,

- զարգացած իմունային համակարգերին բնորոշ են՝ ինքնապաշտպանության հստակ տարբերակումը և ռացիոնալությունը, բջջային համակարգի և օրգանիզմի գործառնական հավասարակշռության ամբողջականության և ներդաշնակության ապահովման համար նպատակասլաց, ծրագրավորված գործողությունների հստակ հերթականությունը,
- ցանկացած դինամիկորեն զարգացող համակարգ պետք է ունենա ներքին գործառնական հավասարակշռության և ինքնապաշտպանության ապահովման համարժեք ենթահամակարգ,
- իմունային համակարգի գործառնության տրամաբանությունը կայանում է հետևյալում՝

ա/ խախտված հավասարակշռության բացահայտում,  
բ/ խախտման բնույթի որոշում և դիսբալանսի հաղթահարման համար մարտավարության և «գործիքների» ընտրություն,  
գ/ հավասարակշռության վերականգնման ժամանակ նոր խախտում թույլ չտալու երաշխավորում:

Այս սկզբունքները, որոնք մենք երկար ամիսներ ուսումնասիրել ենք բժիշկների, կենսաբանների, համակարգային կառավարման մասնագետների հետ, ձևավորվել են միլիոնավոր տարիների ընթացքում՝ կենդանի օրգանիզմի զարգացմանը զուգահեռ: Մարդկային հասարակությունը գոյություն ունի ընդամենը մի քանի հազար տարի, և որպես միասնական օրգանիզմ, որպես բարդ համակարգ դեռ չի հասել համակարգային կատարելության և ներդաշնակության մակարդակի: Միայն XX դարի օրինակը, որը տարել է ավելի քան 130 միլիոն մարդկային կյանք՝ հասարակական համադեմոստրիկ հետևանքով, միջազգային ահաբեկչության այսօրվա ալիքը, հանդիսանում են հասարակական իմունային անբավարարության առկայության վառ վկայություն: Պատահա-

կան չէ նաև, որ դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված ինստիտուտների ձևավորման գաղափարի առաջացումը համընկնում է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի հետ, իսկ նրա համակարգային զարգացումը դարձավ իրականություն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

Մենք գտնում ենք, որ որոշ չափով «ենթագիտակցորեն» մարդկությունը մոտենում է **հասարակական օրգանիզմի որակապես նոր իմունային համակարգի** ձևավորմանը: Ողջ 20-րդ դարը համոզիչ կերպով ապացուցել է, որ **կրոնը, ավանդույթները, բարոյական նորմերը, հասարակական վարքագծի ողջ արժեքային համակարգը, համակարգային ինքնապաշտպանության այլ մեխանիզմները ոչ լիարժեք են ապահովել հասարակության զարգացման դինամիկ հավասարակշռությունն ու կայունությունը նոր իրողությունների պայմաններում:**

Փաստորեն, սահմանադրական վերահսկողությունը դառնում է քաղաքացիական հասարակության և իրավական պետության առանցքային տարրերից մեկը: Սահմանադրական վերահսկողությունը հանդես է գալիս «զսպումների և հակակշիռների» ոլորտում, իսկ դրա գլխավոր խնդիրը հանդիսանում է խախտված սահմանադրական հավասարակշռության մշտական, անընդհատ և համակարգային հայտնաբերումը, գնահատումը և վերականգնումը: **Սահմանադրական վերահսկողությունը չի թույլատրում գործառնական խախտումների իռացիոնալ վերարտադրություն կամ բացասական հասարակական էներգիայի կուտակում,** որը կրիտիկական զանգվածին հասնելուն պես կարող է պայթյունի միջոցով հանգեցնել նոր որակի: Գործնականում սա ընտրություն է դինամիկ, էվոլյուցիոն կամ հեղափոխական զարգացման միջև:

Սահմանադրական վերահսկողության ամբողջական համակարգի գործողությունը կոչված է երաշխավորելու սահմանադրական կայունությունը և բացառել հասարակական համադետները՝ հենվելով, առաջին հերթին, այնպիսի սահմանադրական սկզբունքների վրա, ինչպիսիք են ժողովրդաիշխանությունը, իրա-

վունքի գերակայությունը, իշխանությունների տարանջատումը, պետական ինքնիշխանությունը, Սահմանադրության գերակայությունը և այլն:

Ժողովրդավարական պետության սահմանադրական համակարգն անխուսափելիորեն պետք է լինի բաց ու ինքնազարգացման ներքին կարողունակությամբ օժտված: Դրա կարելու նախապայմաններն են, որ սահմանադրական օրինականության ու սահմանադրական հավասարակշռության ամեն խախտում անմիջական արձագանք ստանա, մասնագիտորեն գնահատվի ու հաղթահարվի:

**Սահմանադրության գերակայությունն ապահովելով՝ սահմանադրական վերահսկողությունը դառնում է պլյուրալիստական հասարակության կայունության ապահովման միջոց, որը հիմնարար սահմանադրական արժեքների հիման վրա ապահովում է դրա դինամիկ գործառնության հետեւողականությունն ու անընդհատությունը:** Դա էլ հենց հանդիսանում է ընդհանրապես սահմանադրական վերահսկողության և մասնավորապես սահմանադրական արդարադատության գործունեության հիմնական չափանիշը, որն ունի բացառիկ կարևոր նշանակություն ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած ժողովրդավարական համակարգերի համար:

Նորանկախ երկրներում իրավագիտակցության աղճատումները հաճախ հասնում են զավեշտական այնպիսի դրսևորումների, որ սահմանադրական վերահսկողության, եւ, մասնավորապես, սահմանադրական դատարանի գործառնական դերի իրականացման տարաբնույթ կաշկանդումները կամ պարզապես սահմանադրական գործընթացներից «հեռու պահելը» համարվում է իշխանության ուժի դրսևորման ձեւ: Օրենսդիր ու գործադիր իշխանություններում նման հոգեբանության ու մտածելակերպի առկայությունը ոչ միայն ցավալի է ու անհարիր ժողովրդավարության, իրավական պետության հիմնարար սկզբունքներին, այլև խիստ վտանգավոր, քանի որ կես քայլ է դեպի անձնիշխանության հաստատումը: Նման իրավիճակների հիմնական պատճառներից մեկն այն է, որ դատաիրավական մարմինների համա-

կարգում միայն սահմանադրական դատարաններն են նոր իրականության ծնունդ եւ չեն կրում տոտալիտար համակարգերի կնիքն ու ինտերցիոն գործընթացների ազդեցությունը: Սահմանադրական դատարանների ծնունդն անքակտելիորեն կապված է իրավական ժողովրդավարության ճանապարհի ընտրության հետ: Դրանց ինքնահաստատումն ընթանում է հնի ու նորի պայքարի ճանապարհով: Որքան հասարակությունը հակված է հին մտայնությանն ու արժեքներին, այնքան դժվարին է կենսունակ սահմանադրական արդարադատության կայացման ու հասարակական ընկալման ուղին: Դա առավել եւս դժվարին է այն համակարգերում, ուր ժողովրդավարությունը հասարակական անհրաժեշտությունից վերածվում է միջոցի՝ իրավունքն իշխանության կամքին ծառայեցնելու համար:

Դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված հաստատությունների նշանակությունը կայանում է հենց նրանում, որ դատարանն ստեղծվում և գործում է սահմանադրական կարգի հիմունքների, մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության, Սահմանադրության գերակայության և ուղղակի գործողության ապահովման, այսինքն՝ քաղաքացիական հասարակության Հիմնական օրենքով ամրագրված և երաշխավորվող հիմնարար քաղաքական և իրավական արժեքների պահպանման և ապահովման համար: Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, սահմանադրական նորմերի և դրույթների ուղղակի կամ անուղղակի մեկնաբանությունը, որը հենվում է բազային սահմանադրական սկզբունքների իրավական բովանդակության բացահայտման վրա, ոչ միայն ապահովում է սահմանադրական հավասարակշռության ամրությունը, այլ նաև որոշում է երկրում սահմանադրական զարգացման բնույթն ու ուղղվածությունը: **Ժողովրդավարական զարգացման ճանապարհ ընտրած երկրի բոլոր ինստիտուտների, ինչպես նաև քաղաքացիների համար այս իրողությունը պետք է ընկալվի որպես կենսական անհրաժեշտություն:** Հատկապես եվրոպական իրավական զարգացումների ներկա միտումներն ակնհայտորեն վկայում են, որ այդ ըն-

կալման աստիճանով է նաեւ չափվում երկրում սահմանադրական մշակույթի զարգացման աստիճանը:

Կարելի է սահմանել, որ սահմանադրական դատարանը հանդիսանում է պետական իշխանության հիմնական մարմինը, որը բազային սահմանադրական արժեքների և սկզբունքների հիման վրա ապահովում է հենց պետական իշխանության սահմանափակումը հոգուտ իրավունքի սկզբունքների, և դրանով իսկ ապահովելով հաջորդականություն և կայունություն՝ սահմանադրական նորմերը և սկզբունքներն իրագործելիս: **Այս դերի գիտակցումն ու բանական իրագործումը՝ հաշվի առնելով միջազգային սահմանադրականության զարգացման միտումները, նոր հազարամյակում հանդիսանում է իրավական զարգացումների հիմնական ուղղություններից մեկը:**

Ընդամին, ինչպես նշվեց, սահմանադրական արդարադատության համակարգը կարող է լիարժեքորեն, արդյունավետ և անկախ գործել որոշակի **անհրաժեշտ եւ բավարար նախադրյալների** առկայության դեպքում: Դրանց թվին կարելի է դասել.

- դատական սահմանադրական վերահսկողության գործառնական, ինստիտուցիոնալ, կազմակերպչական, նյութական և սոցիալական անկախությունը,<sup>272</sup>
- հետևողականությունն իշխանությունների տարանջատման սկզբունքի սահմանադրական իրագործման ընթացքում,
- հիմնարար սահմանադրական սկզբունքների և պետական իշխանության իրականացման համապատասխան սահմանադրական մեխանիզմների համարժեքությունը և համադր-

272 Խոսելով դատական իշխանության անկախության նախադրյալների մասին՝ ԱՄՆ Պերագույն դատարանի անդամ Սանդրի Օ' Կոննորն առանձնապես կարեւորում է այն հանգամանքը, որ անկախությունն ունի ինչպես անհատական, այնպես էլ կառուցակարգային լիարժեքներ: Անհատականներից, լացի ցմահ նշանակումից, առանձնապես կարեւոր է համարվում, որպեսզի դատավորը պաշտպանված լինի ցանկացած ընտրության ռեպրեսիաներից, լացառվի նրա վրա լարողական ու այլ ընտրության ցանկացած ճնշում ու դրա սպառնալիք, որպեսզի դատավորը որոշում կայացնելիս վախի, ահաբեկման զգացողություն չունենա (տե՛ս Сандры О' Коннор - Важное значение принципа независимости судебной власти. ВОПРОСЫ ДЕМОКРАТИИ. Электронный журнал Государственного департамента США. Том 9, номер 1, март 2004 г.):



րելիությունը,

- սահմանադրական վերահսկողության օբյեկտների ճիշտ և հիմնավորված ընտրությունը,
- սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների օպտիմալ շրջանակի որոշումը,
- համակարգային մոտեցումը դատական իշխանության գործառնական լիարժեքության ապահովման ընթացքում,
- հստակ օրենսդրական քաղաքականության առկայությունը և իրականացումը երկրում,
- ժողովրդավարական արժեքների ընկալման մակարդակը հասարակության մեջ:

Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան վկայում է, որ այս նախադրյալների առկայությունը կամ բացակայությունը ակնհայտ նկատելի է դատարանների կողմից քննության առնված գործերի եւ ներկայացված դիմումների բնույթը վերլուծելիս: Շուրջ 40 երկրների սահմանադրական արդարադատության պրակտիկան վկայում է, որ օրենքի սահմանադրականության հարցերով քննված գործերը կազմում են ընդհանուր գործերի ավելի քան 80 տոկոսը: Այն երկրներում, որտեղ ներդրված է անհատական դիմումների ինստիտուտը, ընդունված որոշումների շուրջ 2/3-ը վերաբերում է նման գործերին: Օրինակ, եթե Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը 1996թ. վերացական վերահսկողության կարգով ընդունել է 22 որոշում նորմատիվ ակտերի սահմանադրականության վերաբերյալ, իսկ անհատական դիմումների հիման վրա քննվել է 9 գործ, ապա 2000թ. այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմում են 17 եւ 129, 2003 թվականին՝ 20 եւ 121, 2004թ.՝ 19 եւ 152: Սլովենիայի սահմանադրական դատարանը եթե 1996թ. 351 որոշում է ընդունել անհատական դիմումների հիման վրա, ապա 2003թ. այն հասնում է 798-ի: Ավստրիայի սահմանադրական դատարանի կողմից քննված գործերի 2/3-ից ավելին վերաբերում է օրենքների սահմանադրականությանը, իսկ դիմող սուբյեկտների մեջ բացառիկ մեծ թիվ են կազմում քաղաքացիները: Գերմանիայի Դաշնության ՄԳ կողմից քննված գործերի 90 տոկոսից ավելին

վերաբերում է մարդու սահմանադրական իրավունքների անմիջական պաշտպանությանը: Լեհաստանում բացարձակ գերակշռում են օրենքների սահմանադրականության հարցերով քննված գործերը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 1996-2003թթ. ընթացքում քննության է ընդունել 464 գործ, որից միջազգային պայմանագրերով ստանձնված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով՝ 426 գործ (91.8%), ընտրությունների հետ կապված վեճերով՝ 31 գործ (6.7%), օրենքների եւ այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հետ կապված՝ 7 գործ (1.5%): Ընդ որում, 464 գործից 431-ը (92.9%) քննության է առնվել ՀՀ Նախագահի դիմումի հիման վրա: Իսկ 2004թ. միայն ՀՀ Նախագահն է դիմել ՄԳ՝ միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցերով: 1996-2004թթ. ընթացքում ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների 1/3-ը (որպես ՄԳ դիմող սուբյեկտ) ՀՀ սահմանադրական դատարան է դիմել ընդամենը երկու անգամ (0.4%): Նման պայմաններում միայն մեծ վերապահումով կարելի է խոսել երկրում իրական սահմանադրական արդարադատության եւ պառլամենտարիզմի գոյության մասին:

Բնականաբար, տարբեր երկրներում մեծ առանձնահատկություններ կան ոչ միայն դատարանների իրավասությունների առումով, այլեւ դրանց իրացման կարգում: Նման պայմաններում ոչ միշտ են հիմնավոր թվային ուղղակի համեմատությունները: Սակայն գլխավորը որոշակի միտումների բացահայտումն է: Տվյալ պարագայում գործ ունենք այնպիսի երեւոյթի հետ, երբ միջազգային պրակտիկայում սահմանադրականության խնդիրն առավելապես մոտենում է Սահմանադրության հիմնական սուբյեկտին՝ մարդուն, որի ահազանգը՝ Հիմնական օրենքի գերակայության պահպանման հարցում, գնալով դառնում է վճռորոշ: Սա ժողովրդավարական զարգացումների եւ իրավական պետության կայացման կարեւոր հատկանիշն է ու պահանջը: Այնինչ Հայաստանում քաղաքացիներն ընդհանրապես օտարված են այդ գործընթացից:

Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան վկայում է, որ Սահմանադրության գերակայության հուսալի երաշխավորման համար անհրաժեշտ է, որպեսզի սահմանադրական դատարանն օժտված լինի իրավասությամբ.

**ա) որոշելու սահմանադրականությունը՝**

- սահմանադրական փոփոխությունների,
- միջազգային պայմանագրերի,
- օրենքների,
- այլ նորմատիվ ակտերի.

**բ) իրականացնելու կոնկրետ վերահսկողություն՝**

- անհատական դիմումների հիման վրա,
- դատարանների դիմումների հիման վրա.

**գ) պաշտոնապես մեկնաբանելու՝**

- Սահմանադրությունը,
- օրենքները.

**դ) լուծելու իրավական վեճերը՝**

- իշխանության կենտրոնական մարմինների միջեւ,
- կենտրոնական եւ ռեզիդնալ ինստիտուցիաների միջեւ,
- ռեզիդնալ ինստիտուցիաների միջեւ,
- դատարանների ու այլ մարմինների միջեւ.

**ե) ապահովելու ժողովրդավարական գործընթացների սահմանադրականությունը՝**

- կուսակցությունների գործունեության սահմանադրականության վերահսկում,
- հանրաքվեների սահմանադրականության վերահսկում,
- ընտրությունների սահմանադրականության եւ օրինականության վերահսկում,
- պաշտոնակության սահմանադրականության որոշում (Նախագահ, այլ պաշտոնատար անձինք),
- դատարանների, տեղական ինքնակառավարման մարմինների անկախության երաշխիքների ապահովում:

Բերված «հավելված 1»-ից ակնհայտ երեւում է, որ ոչ միայն եվրոպական երկրներից շատերում սահմանադրական դատարաններն օժտված են նման լիազորություններով, այլեւ միտումն

այն է, որ լիազորությունների ամբողջականացումը հետետղական բնույթ ունի **եւ համահունչ է երկրի ժողովրդավարացման ուղղվածությանն ու աստիճանին**: Սահմանադրական արդարադատությունը ձեւական բնույթ ունի եւ ոչ լիարժեք է այն իրավական համակարգերում, որտեղ ձեւական ու անհետետղական վերաբերմունք կա ժողովրդավարության հանդեպ ընդհանրապես:

Զննված գործերի ու դատարան ներկայացված դիմումների կառուցվածքային վերլուծությունը վկայում է նաեւ, որ երկրների գերակշիռ մեծամասնությունում սահմանադրական կամ օրենսդրական փակուղիներ չկան սահմանադրական դատարանի գործառույթների իրականացման համար: Դրա վկայությունն է այն, որ ապահովվում է թե՛ օրենքների ու այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության գնահատման անընդհատությունը, թե՛ իրավասությունների հարցերով վեճերի լուծման հնարավորությունը եւ թե՛ մարդու իրավունքների երաշխավորված պաշտպանությունը: Մեր երկրում ստեղծված իրավիճակն իր նախադեպը չունի, երբ սահմանադրական դատարանի թեկուզ սահմանափակ լիազորությունները չեն իրացվում սահմանադրական ու օրենսդրական անկատար լուծումների պատճառով: Սա նաեւ այն բանի ակնհայտ վկայությունն է, որ Սահմանադրության գոյության փաստը դեռեւս չի վկայում երկրում սահմանադրականության գոյության մասին:

Միջազգային միտումների մեջ էական է եւ այն, որ դիմող սուբյեկտների ցանկը գործառույթների իրականացման համար կաշկանդող հանգամանք չի հանդիսանում: Մեզանում ճիշտ հակառակ պատկերը գոյություն ունի:

Հարկ է մեկ անգամ ևս ընդգծել այն հանգամանքի սկզբունքային նշանակությունը, որ սահմանադրական վերահսկողության համակարգի կենսունակությունն ուղղակի կախվածության մեջ է հենց սահմանադրական լուծումներից: Բերենք միայն մեկ օրինակ: Յանկացած սահմանադրական դատարանի համար սկզբունքային նշանակություն ունի, նախ և առաջ, իրավունքի գերակայության սկզբունքի հետետղական իրացումը սահմանադրական արդարադատության պրակտիկայում: Գերմանիայի 1949թ.

Հիմնական օրենքում առաջին անգամ հստակորեն ձևակերպվեց (հոդված 1, կետ 3), որ «ներքոհիշյալ հիմնական իրավունքները պարտադիր են օրենսդիր, գործադիր և դատական իշխանության համար որպես անմիջական գործող իրավունք»: Այդ սկզբունքային հարցադրումն իր հետագա զարգացումը և համակարգային կիրառումը գտավ միջազգային իրավունքի բազմաթիվ փաստաթղթերում: Սակայն, մեր կարծիքով, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 2 և 18 հոդվածների ձևակերպումներին: 2-րդ հոդվածում սահմանված է. «Մարդը, նրա իրավունքները և ազատությունները հանդիսանում են բարձրագույն արժեքներ: Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ճանաչումը, պահպանումը և պաշտպանությունը պետության պարտականությունն է»: Իսկ հոդված 18-ն այս սկզբունքային մոտեցումը զարգացնում է հետևյալ կերպ. «Մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները հանդիսանում են անմիջականորեն գործող: Նրանք որոշում են օրենքների իմաստը, բովանդակությունը և կիրառումը, օրենսդիր և գործադիր իշխանությունների, տեղական ինքնակառավարման գործունեությունը և ապահովվում են արդարադատությամբ»: Մենք կարծում ենք, որ հենց այսպիսի հարցադրումը հանդիսանում է սահմանադրականության զարգացման կարևոր արդյունք, որտեղ ոչ միայն հստակորեն որոշված է իրավունքի գերակայության ապահովման իրավական բովանդակությունը, այլ նաև ճշգրտված է այդ սկզբունքի իրացման մեջ սահմանադրական ինստիտուտների գործառնական դերը: Իսկ դա սահմանադրական արդարադատության պրակտիկայի համար ունի կարևոր նշանակություն:

Մյուս կողմից, սահմանադրական սկզբունքների և մեթոդաբանական հիմքերի ձևախեղումները, սահմանադրությունների ներքին հակասությունները, դրանում առկա «նեղ տեղերը» և բացերը համապատասխանաբար ազդում են սահմանադրական արդարադատության գործունակության վրա:

Մենք համամիտ ենք պրոֆեսոր Գեորգի Բոյչեի հետ, երբ նա շեշտում է, որ սահմանադրական դատարանի գործունակությունը

նր եւ աշխատանքի որակը մեծապես պայմանավորված են Սահմանադրության որակով: Հիմնական խնդիրն այն է, որ հաճախ Սահմանադրությունը ներկայացվում է որպես պետական-քաղաքական համակարգի, այլ ոչ թե քաղաքացիական հասարակության Հիմնական օրենք:<sup>273</sup> Նման հարցադրումն ունի սկզբունքային նշանակություն եւ բնորոշում է սահմանադրականության զարգացման հիմնական ուղղվածությունը նոր հազարամյակում:

Սահմանադրականության ներկա զարգացումների առանցքային հարցերից է Սահմանադրության սոցիալական բնույթի ամրապնդումը, **շեշտադրումը պետության Հիմնական օրենքից քաղաքացիական հասարակության Հիմնական օրենքի վրա տեղափոխելը**: Միջազգային ներկա զարգացումները, իրավական գլոբալացման միտումները, պետության տեղի ու դերի վերանայումը փորձերը հանգեցնում են այն հետեւությանը, որ աստիճանաբար միջազգային հարաբերությունների առանցքային սուբյեկտ է դառնում մարդը: Պետությունը՝ որպես այդպիսին, մղվում է երկրորդ պլան՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Իսկ այդ հետեւանքներից գլխավորն այն է, որ պետության դերը քաղաքացիական հասարակության մեջ անխուսափելիորեն վերարժեվորվում է:<sup>274</sup> Նման պարագաներում «սահմանադրություն» հասկացությունն իրական կյանքում ավելի ամբողջական է դրսևորվում որպես կենսագոյի հիմնարար վարքագծի կանոնների շուրջ հասարակական համաձայնություն, ինչին մենք հանդիպում ենք մեր ողջ պատմության քառուղիներում: Հետեւաբար, յուրաքանչյուր երկրում **Սահմանադրությունն առաջին հերթին պետք է հասարակական կայուն համաձայնության հաստատման հնարավորություններ երաշխավորի ու ցանկացած բնույթի հասարակական դիմակայության հաղթահարման լուծումներ բովանդակի**: Սահմանադրությունը չի կարող սահմանադրական

273 Дайджест - Конституционное правосудие в странах СНГ и Балтии. 2004, N 12, էջ 103:

274 Սահմանադրաբանության տեսն Գավրիլով В.В. Развитие концепции правовой системы в зарубежной правовой доктрине второй половины XX - начала XXI века // Московский журнал международного права, 2004, N4, էջեր 19-35:

փակուղիների հանգեցնել, այն քաղաքացիական հասարակության զարգացման ամենագործուն խթանը պետք է լինի: Ձեռախեղված քաղաքացիական հասարակության առկայությունը պայմանավորվում է նաև նրանով, որ սահմանադրական ոչ լիարժեք լուծումները դրա համար պարարտ հող են ստեղծում:

Սահմանադրության գերակայության երաշխավորումն առաջին հերթին անհրաժեշտ է ապահովել հենց Սահմանադրությամբ: **Սահմանադրությունը պետք է ունենա ներսահմանադրական ինքնապաշտպանության անհրաժեշտ ու բավարար համակարգ:** Յավոք, հետհամայնավարական տարածաշրջանի բազմաթիվ երկրների սահմանադրություններն այդպիսի անհրաժեշտ ներուժ չունեն:

Այդ հարցադրման բովանդակության բացահայտման համար անհրաժեշտ է նաև պատասխանել այն հարցին, թե ինչպիսի՞ն են տվյալ սկզբունքի իրացման գնահատման չափանիշները: Դրանք պետք է տեսնել **իրավունքի գերակայության երաշխավորվածության, տարանջատված իշխանության իրականացման լիարժեքության եւ անկախության, իրավասությունների ու գործառույթների ներդաշնակ համակարգվածության ապահովման, ինչպես նաև պետական իշխանության անընդհատության ու հավասարակշռվածության մեջ:**

Եթե բերված չափանիշները կիրառվեն Հայաստանի Հանրապետության գործող Սահմանադրության նկատմամբ, ապա հետազոտվող հիմնախնդիրների տեսակետից, մասնավորապես, կարելի է հավաստել, որ.

1. Իրավունքի գերակայության ապահովման սահմանադրական երաշխիքները բավարար չեն: Մարդը, նրա արժանապատվությունը, իրավունքները և ազատությունները սահմանադրորեն չեն ճանաչվում որպես բարձրագույն և անօտարելի արժեքներ: Բացակայում է սահմանադրական առանցքային դրույթն այն մասին, որ մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները հանդիսանում են անմիջականորեն գործող և որոշում են օրենքների իմաստը, բովանդակությունը և կիրառումը, օրենսդիր և գործադիր

իշխանությունների գործունեությունը և ապահովվում են արդարադատությամբ: Սույն մեթոդաբանական մոտեցումը համակարգված չի իրացվում նաև Սահմանադրության մյուս դրույթներում:

2. Հիմնական սահմանադրական սկզբունքների և դրանց իրացման սահմանադրական կոնկրետ մեխանիզմների միջև գոյություն ունեն որոշակի անհամապատասխանություններ:
3. Իշխանությունների տարանջատման սկզբունքն անհետևողականորեն է իրացված, ապահովված չէ պետական իշխանության ինստիտուտների անհրաժեշտ և բավարար գործառնական հաշվեկշիռը: Մասնավորապես, ապահովված չեն օրենսդիր և դատական իշխանությունների գործառնական անկախության անհրաժեշտ նախադրյալները, հակակշիռների ու զսպումների համակարգն անկատար է: Պետական իշխանության գրեթե բոլոր սահմանադրական ինստիտուտների նկատմամբ «ինստիտուտ-լիազորություն-գործառույթ» համակարգում գոյություն ունի որոշակի անհաշվեկշռվածություն: Նույնը վերաբերում է նաև «գործառնական-հակակշռող-զսպող» լիազորությունների համակարգին: Առանց չափազանցման կարելի է ասել, որ պետական իշխանության համակարգված հաշվեկշռվածության հիմնախնդիրը ՀՀ Սահմանադրությունում արդյունավետ լուծված չէ:
4. Հայաստանի գործող Սահմանադրությունը չի նախատեսել սահմանադրական վերահսկողության ամբողջական և գործունակ համակարգ: Սահմանադրական լուծումներն այդ առումով թերի են, չեն արտացոլում ներսահմանադրական ինքնապաշտպանության համակարգի արմատավորման առաջատար միտումներն աշխարհում: Չի ճանաչվում ու երաշխավորվում նաև մարդու և քաղաքացու սահմանադրական արդարադատության իրավունքը:
5. Սահմանադրական դատարանի և ընդհանուր իրավասության դատարանների միջև գործառնական փոխհարաբե-

րություններ ընդհանրապես չկան: Սահմանադրական վերահսկողության համակարգում տեղական ինքնակառավարումն ընդգրկված չէ, սահմանադրական դատավարության կարգի և սկզբունքների սահմանման մեջ թույլ են տրված որոշակի բացթողումներ և այլն:

Այդ բոլոր դրսևորումները, ինչպես նաև սահմանադրական պրակտիկան, այն հանգամանքը, որ սահմանադրական դատարանի գործունեության օրվանից ի վեր Նախագահի հրամանագրերի կամ կառավարության որոշումների սահմանադրականության վերաբերյալ ոչ մի դիմում չի ստացվել, իսկ 8 տարում քննության է առնվել ընդամենը 6 դիմում օրենքի սահմանադրականության վերաբերյալ, սահմանադրական լիազորությունների հարցով վեճերը չեն դառնում սահմանադրական արդարադատության առարկա, մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների երաշխավորման հարցից գործնականում սահմանադրական դատարանն օտարված է, չկա սահմանադրական նորմերի պաշտոնական մեկնաբանման հատակ համակարգ, **վկայում են Հայաստանում սահմանադրական համակարգի էական խնուսային անբավարարության մասին:**

Ժամանակին ընդօրինակելով ֆրանսիական սահմանադրաիրավական համակարգը, գիտակցորեն, թե անգիտակցաբար դրանից դուրս են թողնվել թեկուզ այդ համակարգին բնորոշ հատկապես այն մեխանիզմները՝ ի դեմս Պետական խորհրդի, Արդարադատության բարձրագույն պալատի, օրենքների նախնական պարտադիր սահմանադրական վերահսկողության, մարդու իրավունքների ազգային հանձնաժողովի ինստիտուտի, Հանրապետության դատարանի, Սահմանադրության 10-րդ գլխում նախատեսված դատական վերահսկողության մեխանիզմների եւ այլն, որոնք համակարգի կայունության ու կենսունակության գլխավոր երաշխիքներից են: Ներկայումս նույն Ֆրանսիան, հաշվի առնելով միջազգային զարգացումների փորձն ու միտումները, ինչպես նաև նոր հազարամյակի մարտահրավերները, լուրջ քայլեր է նախաձեռնում հանրային կառավարման համակարգային բարեփոխումների ուղղությամբ: Հայաստանի համար հա-

պաղելը ճակատագրական նշանակություն կարող է ունենալ, քանի որ ոչ միայն խիստ սահմանափակ են երկրի զարգացման ներքին հնարավորությունները, այլև իռացիոնալ զարգացումներն արդեն իսկ առաջանցիկ բնույթ են ստացել:

Հետագա սահմանադրական զարգացման տրամաբանությունը, մեր կողմից քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից, պետք է կայանա հենց սահմանադրական արդարադատության **ամբողջականության, համակարգվածության, անկախության, գործունակության ապահովման մեջ:**

Ներկայիս իրավիճակը սահմանադրական դատարանին պարտադրում է հիմնական սահմանադրական արժեքների պաշտպանության և սահմանադրական կայունության ապահովման նպատակով դիմել **սահմանադրական դրույթների ավելի լայն մեկնաբանման պրակտիկային**՝ հիմք ընդունելով հիմնական սահմանադրական սկզբունքները և ՀՀ Սահմանադրության 4 հոդվածի դրույթները (որում, մասնավորապես, սահմանված է, որ պետությունն ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ **միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան**): Բնորոշ օրինակ կարող է ծառայել Հայաստանի սահմանադրական դատարանում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի սահմանադրականության մասին գործի քննությունը՝ մինչ դրա վավերացումը, որի վերաբերյալ մեր դատարանի իրավական դիրքորոշումները բացահայտում են նաև մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների ամրապնդման հետագա սահմանադրական զարգացման հիմնական ուղղությունները երկրում: Սահմանադրական դատարանը, ի մասնավորի, ընդգծեց, որ չնայած պետությունները միջազգային հանրային իրավունքի նորմերով միմյանց հանդեպ կրում են պարտավորություններ, սակայն միջազգային հանրային իրավունքի համակարգում մարդու իրավունքների պաշտպանության նկատմամբ այսօր ձևավորված մոտեցումը թույլ է տալիս եզրակացնել, որ բազմակողմ կոնվենցիանե-

րի համակարգի վրա հիմնված մարդու իրավունքները և հիմնական ազատություններն ավելի շուտ պետությունների վարքագծի օբյեկտիվ չափանիշներ են հանդիսանում, քան նրանց փոխադարձ իրավունքներ և պարտավորություններ: Այդ կոնվենցիաներով նախատեսվող՝ պետությունների պարտավորություններն ավելի շուտ ուղղված են իրենց իրավագործության ներքո գտնվող անձանց, քան մյուս մասնակից պետություններին: Այդ տեսակետից 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիան կոչված է պաշտպանելու անձանց և հասարակական կազմակերպություններին պետական իշխանության մարմիններից, որը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության առաջին հոդվածով ամրապնդված իրավական պետության կարևոր հատկանիշներից մեկն է: Ընդամենի, Կոնվենցիան և դրա արձանագրությունները հիմնված են այնպիսի իրավունքների և չափորոշիչների վրա, որոնք համահունչ են ՀՀ Սահմանադրությանը և ՀՀ միջազգային պայմանագրերով երաշխավորված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոգուն և տառին:

Ասվածն ամփոփելով, ցանկանում ենք նաև ընդգծել, որ սահմանադրական արդարադատության գործունյա և անկախ համակարգի ձևավորման համար հիմք են հանդիսանում. սահմանադրական վերահսկողության համակարգվածությունը, համակարգի ռացիոնալությունը և դրա գործողության անընդհատությունը, վերահսկողության կանխարգելիչ բնույթը, համակարգի գործունեության ինքնասահմանափակումը, սահմանադրական դատարանների գործունեության լիարժեքությունը, սահմանադրական արդարադատության իրականացման ժամանակ գործառնական, կառուցակարգային, կազմակերպչական և դատավարական սկզբունքների օրգանական գույակցումը, հասարակական պրակտիկայի հետ բազմապլանային հետադարձ կապի ապահովումը և խախտված հաշվեկշռի վերականգնման ժամանակ սահմանադրական հավասարակշռության նոր խախտման բացառումը:

Այդ հարցերի համակարգված լուծումն ունի անմիջական նշանակություն դատական սահմանադրական վերահսկողության

**ամբողջական, արդյունավետ և անկախ** մեխանիզմի ձևավորման համար: Այդ երեք դրսեւորումներն օրգանապես կապված են և հենց դրանց եռամիասնության մեջ կարելի է դատել սահմանադրական արդարադատության լիարժեքության և գործունակության, ինչպես նաև երկրում սահմանադրական կայունության երաշխավորվածության մասին: Ամփոփելով, կարող ենք ասել, որ սահմանադրական արդարադատությունը ոչ միայն քաղաքացիական հասարակության ինունային համակարգի կարեւորագույն ու անքակտելի բաղադրատարր է, այլև սահմանադրական արդարադատության իրական վիճակը երկրում սահմանադրականության գնահատման, սահմանադրական մշակույթի զարգացման հիմնական չափանիշներից մեկն է:

Սահմանադրությունից մինչև իրական սահմանադրականություն հաստատելու ճանապարհը խելամիտ անցնելու համար բավարար չեն միայն արժեհամակարգային նոր կողմնորոշումները և հին մտայնության հաղթահարումը: Որպես պարտադիր նախադրյալներ անհրաժեշտ են, որպեսզի.

1. երաշխավորված լինի իրավունքի գերակայությունը,
2. ապահովվի իշխանությունների հստակ տարանջատումն ու հավասարակշռումը,
3. ժողովրդաիշխանությունը սահմանադրական սկզբունքից դառնա գործուն իրողություն, ապահովվի իշխանության ինստիտուտների լեգիտիմությունը,<sup>275</sup>
4. Սահմանադրության գերակայության երաշխավորման համակարգը լինի ամբողջական ու կենսունակ,
5. երաշխավորվի դատական համակարգի գործունակությունն ու անկախությունը:

<sup>275</sup> Իշխանությունների լեգիտիմության հասկացությունը հաճախ գրականության մեջ թերի ու ոչ լիարժեք է մեկնալու: Այն ենթադրում է ոչ միայն իշխանության մարմնի ձեւավորման օրինականությունը, այլև հասարակական անհրաժեշտ ու լավարար վստահությունն այդ գործընթացի ու տվյալ իշխանության նկատմամբ (Конституционное право: Словарь / Отв. ред. В.В. Маклаков. М., 2001, էջ 248):

Այս նախադրյալներից յուրաքանչյուրի բացակայության պարագայում անլիարժեք են դառնում նաև մյուս նախադրյալները, եւ Սահմանադրությունն ապրող իրողություն լինելուց վեր է անվում ձեւական երեւոյթի ու դրա գոյությունը չի փաստում երկրում սահմանադրականության առկայության մասին:

Անհրաժեշտ ենք համարում կրկին ընդգծել միջազգային սահմանադրաիրավական փորձի այն կարեւոր ընդհանրացումը, որ սահմանադրականության ապահովման, սահմանադրական մշակույթի անհրաժեշտ մակարդակի երաշխավորման վճռորոշ պայման է, որպէսզի սահմանադրորեն անհրաժեշտ ու բավարար նախադրյալներ ստեղծվեն կենսունակ դատական համակարգի ձեւավորման համար: Ելակետային պահանջն այն է, որ.

1. Սահմանադրությամբ պետք է հստակ ներկայացվի դատական իշխանությունը՝ որպէս ամբողջական համակարգ: Ի տարբերություն իշխանության այլ թելերի, դատական իշխանությունը ոչ թե բուրգային ենթակայական կառույց է, այլ գործառնական մի ամբողջ համակարգ, որի յուրաքանչյուր օղակ օժտված է անկախության անհրաժեշտ ու բավարար երաշխիքներով, առանց որի իր գործառնութենն արդյունավետ իրականացնել չի կարող: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ բազմաթիվ երկրների սահմանադրություններում դատական իշխանության համակարգը ներկայացվում է դրանում ներառված դատարանների գործառնական դերով: Օրինակ, Ռուսաստանի Սահմանադրության 118 հոդվածով սահմանված է, որ.

- արդարադատությունը Ռուսաստանի Դաշնությունում իրականացնում են միայն դատարանները,
- դատական իշխանությունն իրականացվում է սահմանադրական, քաղաքացիական, վարչական եւ քրեական դատավարությունների միջոցով,
- Ռուսաստանի Դաշնության դատական համակարգը ձեւավորվում է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությամբ եւ դաշնային սահմանադրական օրենքով: Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

Ինչպէս տեսնում ենք, համակարգի հիմքում դրված է ոչ թե

վարչակազմակերպչական, այլ գործառնական սկզբունքը: Նման մոտեցումն առկա է բազմաթիվ այլ երկրների սահմանադրություններում, մասնավորապէս, Գերմանիայի՝ հոդվ. 92, Լեհաստանի՝ 173-175, Իսպանիայի՝ 117, Բելգիայի՝ 30, 92-107, Չեխիայի՝ 81-83, Վրաստանի՝ 82, Ադրբեջանի՝ 125, Բուլղարիայի՝ 117 եւ այլն:

2. Դատավորի կարգավիճակի մասին եվրոպական խարտիան որպէս կարեւոր սկզբունք է դիտում այն (կետ 1.2.), որ «Եվրոպական յուրաքանչյուր երկրում դատավորի կարգավիճակի հիմնարար սկզբունքներն արտահայտվում են ամենաբարձր մակարդակների ներքին նորմերով, իսկ դրա կանոնները՝ նվազագույնն օրենսդրական մակարդակով»: ՄԱԿ-ի յոթերորդ կոնգրեսի կողմից 1985թ. Միլանում ընդունված դատական մարմինների անկախության հիմնական սկզբունքները նույնպէս նախատեսում են, որ դատական իշխանության անկախության երաշխիքները պետք է ապահովված լինեն Սահմանադրությամբ ու օրենքներով:

Բնականաբար, Սահմանադրությունն այդ խնդիրը կարող է լուծել դատական համակարգի անկախության երաշխիք հանդիսացող հիմնական սկզբունքները հստակ ամրագրելով: ՀՀ գործող Սահմանադրությամբ այդ խնդիրը թերի է լուծված: Խորապէս հաշվի չառնելով Հայաստանի եւ Ֆրանսիայի սահմանադրությունների մի շարք էական առանձնահատկությունները, ՀՀ Սահմանադրությունը փոխառել է ֆրանսիական Սահմանադրության 64 հոդվածի այն դրույթը, ըստ որի՝ երկրի Նախագահը դատական իշխանության անկախության երաշխավորն է: Միջազգային իրավական պրակտիկայում եզակի համարվող նման դրույթն ու դրա հիմքում ընկած ամբողջ փիլիսոփայությունն իրենց մեջ լուրջ վտանգներ են պարունակում: Խնդիրը միայն այն չէ, որ Հայաստանի եւ Ֆրանսիայի նախագահների սահմանադրական կարգավիճակները որոշ նմանություն ունենալով հանդերձ, նաև լուրջ տարբերություններ ունեն: Էականն այն է, որ թուլանում են դատական իշխանության անկախության երաշխիքները, եթե այդ դերը չի վերապահվում հենց Սահմանադրու-

թյանն ու օրենքներին, ինչպես վարվել է աշխարհի երկրների գերակշիռ մեծամասնությունը:

Միջազգային պրակտիկայում հաճախ է մատնանշվում, որ ֆրանսիական Սահմանադրությամբ իշխանությունների տարանջատումը ոչ միայն հստակ չէ, այլև բացակայում է ընդունված օրենքների դատական վերանայման ինստիտուտը (վերջինս Հայաստանի Սահմանադրությամբ առկա է): Բացի այդ, Ֆրանսիայի Նախագահն օժտված չէ վարչապետին ազատելու եւ կառավարության գործունեությունը վերահսկելու այնպիսի իշխանությամբ, ինչ Հայաստանի Սահմանադրությամբ է նախատեսված: Հայաստանի Սահմանադրությամբ Նախագահն ունի գործադիր լուրջ գործառնություններ եւ ակտիվ դեր՝ իշխանության այս թելի ձեւավորման գործում: Նման պարագաներում դատական իշխանության անկախության երաշխավորումը ոչ թե ինստիտուցիոնալ բնույթ պետք է կրի, այլ երաշխավորվի Սահմանադրությամբ՝ ամրագրելով իշխանության բոլոր թելերի գործառնական հավասարակշռությունը: Հակառակ դեպքում ռոնահարվում է նաեւ իշխանությունների տարանջատման սկզբունքը:

ՀՀ Սահմանադրության գաղափարախոսությունն այս հարցում պետք է լինի այն, որ Սահմանադրությունը երաշխավորում է դատական իշխանության անկախությունը, իսկ Հանրապետության Նախագահը, 49 հոդվածի հիմքով իրականացնելով Սահմանադրության պահպանմանը հետետելու իր իրավասությունը, պետք է կարողանա ապահովել այդ երաշխիքների իրականացումը:

3. «Դատավորի կարգավիճակի մասին» 1998թ. ընդունված եվրոպական խարտիան, նկատի ունենալով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1985թ. նոյեմբերին ընդունված մագիստրատուրաների անկախության ապահովման հիմնարար սկզբունքները, ինչպես նաեւ հաշվի առնելով, որ դատավորի կարգավիճակն ամենից առաջ ենթադրում է գործիմացության, անկախության եւ անշահախնդրության ապահովում, այսինքն՝ այն, ինչ օրինականորեն ակնկալում է ցանկացած մարդ դատական մարմիններից ու յուրաքանչյուր դատավորից, որոնց վստահում է իր

իրավունքների պաշտպանությունը, սահմանում է դատական համակարգի ձեւավորման ու գործունեության հիմնարար պահանջները: Դրանց թվում բացառիկ կարեւոր դեր է վերապահվում դատավորների ընտրության, նշանակման ու գործունեության դադարեցման կարգին: Խարտիայի 1.3. կետով սահմանվում է, որ դատավորների ընտրությանը, նշանակմանը, ծառայության կատարմանը կամ դադարեցմանը վնասող ցանկացած որոշման կապակցությամբ կարգավիճակը նախատեսում է գործադիր ու օրենսդիր իշխանությունների անկախ օղակի մասնակցություն, որի շրջանակներում նիստերի մասնակիցների առնվազն կեսը մրցակցությամբ ընտրված դատավորներ են: Բացի դրանից, նույն խարտիայի 1.4. կետով սահմանվում է, որ ցանկացած դատավորի, որը կգտնի, որ ռոնահարվել են իր կանոնակարգային իրավունքները կամ իր անկախությունը, կամ ընդհանրապես դատական իշխանության անկախությունը վտանգված է, կամ այն որեւէ կերպ չի ընդունվում, նա, իր իսկ կարգավիճակի համար սահմանված սկզբունքներից ելնելով, իրավունք ունի դիմելու նման կամ մեկ այլ անկախ օղակի, որը տիրապետում է նման իրադրությունն ուղղելու կամ վիճակը շտկելու առաջարկ ներկայացնելու արդյունավետ միջոցների:

Հիշատակված անկախ օղակին բացառիկ կարեւոր դեր է հատկացվում ինչպես դատավորների ընտրության (հոդված 2), այնպես էլ նշանակման (հոդված 3), ծառայության իրականացման ու ծառայողական առաջընթացման (հոդված 4), պատասխանատվությանն առնչվող հարցերում (հոդված 5): Մասնավորապես, վերջին դեպքում նախատեսվում է, որ. «Կարգավիճակով հստակորեն սահմանված որեւէ պաշտոնական պարտականություն դատավորի կողմից չկատարվելու դեպքում կարող է կարգապահական տույժի հանգեցնել միայն ընտրյալ դատավորների կեսից ոչ պակաս կազմ ունեցող մարմնի առաջարկությամբ, միջնորդությամբ կամ համաձայնությամբ: Նման դեպքերում գործը քննվում է մրցակցային սկզբունքով, որի ժամանակ պատասխանատվության կանչված դատավորին տրվում է պաշտպանի ծառայությունից օգտվելու հնարավորություն: Կիրառելի տույժերի



աստիճանակարգը սահմանված է կարգավիճակով, այն պետք է բխի համապատասխանության սկզբունքից»։ Նախատեսվում է նաև տույժին վերաբերող որոշման դատական բողոքարկման հնարավորություն։

Պետք է ավելացնել, որ հիշյալ խարտիան դատավորի եւ դատական համակարգի անկախությունն անմիջականորեն կապի մեջ է դնում խարտիայի սկզբունքների հետեւողական կիրառման հետ։

ՀՀ Սահմանադրության 94 եւ 95 հոդվածները պետք է փոփոխվեն հենց այդ տրամաբանությամբ՝ ապահովելով, որպեսզի դատարանները հանդես գան որպես դատական իշխանության լիիրավ կրող՝ բացառելով այդ իշխանության վրա գործադիրի որեւէ ներագդեցություն։ Դատական իշխանությունը պետք է լինի անկախ ու արդյունավետ։ Անկախությունը պետք է առաջին հերթին գործառնական ու կառուցակարգային բնույթ ունենա։ Արդյունավետությունը պետք է բնութագրվի հետեւյալ չափանիշներով. ժամկետը՝ ողջամիտ, միջոցների օգտագործումը՝ խելամիտ։

4. ՀՀ Սահմանադրությունը չի կարող դրույթ չպարունակել դատավորի անձեռնմխելիության վերաբերյալ՝ որպես դատական իշխանության անկախության կարեւորագույն երաշխիքներից մեկի։ Այս պարագան այնքան ակնհայտ է, որ անտեղի է նաև օրինակներ բերել, որովհետև այդ դրույթն ամրագրված է գրեթե բոլոր երկրների սահմանադրություններում։ ՀՀ Սահմանադրության մեջ այս նորմի ամրագրումը պետք է համարժեք լինի պատգամավորի համար իմունիտետի վերաբերյալ երաշխիքներին։ Բացի դրանից, անուղղակիորեն այդ նորմն արտացոլված է Սահմանադրության 55 հոդվածի՝ 11-րդ, 95 հոդվածի՝ 10-րդ, 100 հոդվածի 8-րդ կետերում։ Պարզապես անհրաժեշտ է հոդված 97-ում այդ նորմին տալ հստակ բնույթ եւ ներկայացնել դատական իշխանության գլխում՝ որպես սկզբունքային կարեւորագույն դիրքորոշում, ինչպես արվում է միջազգային պրակտիկայում (մասնավորապես տես. Լեհաստանի Սահմանադրություն, հոդվ. 181, Ռուսաստանի Դաշնություն՝ 122, Լիտվա՝ 104, Գրեգուտան՝ 79, Ուկրաինա՝ 126, Ադրբեջան՝ 128, Վրաստան՝ 87 եւ այլն)։

5. ՀՀ սահմանադրական դատարանն Ավստրիայի, Գանիայի, ԱՄՆ-ի, Արգենտինայի, Բելգիայի, Ֆինլանդիայի, Իռլանդիայի, Շվեդիայի, Ռուսաստանի Դաշնության, Նորվեգիայի, Մալթայի, Թուրքիայի եւ մի շարք այլ երկրների՝ սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների օրինակով օժտված է անկախության այնպիսի կարեւոր երաշխիքով, ինչպիսին անդամների մինչեւ յոթանասուն տարին լրանալը անփոփոխելիության սկզբունքով նշանակումն է։<sup>276</sup> Նման դրույթը գնալով ավելի ու ավելի է կարեւորվում սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկայում։ Այդ համակարգին են կրկին վերադառնում Ռուսաստանի Դաշնությունում, եւ Պետական դոմայի կողմից 2004թ. դեկտեմբերին առաջին ընթերցմամբ փոփոխություններ կատարվեց ՄԳ մասին դաշնային օրենքում՝ նախատեսելով ՄԳ դատավորների անժամկետ պաշտոնավարում՝ մինչեւ 70 տարին լրանալը։

Անհրաժեշտ է, որպեսզի բավարար կենսունակությամբ օժտված լինեն նաև դատարանի անկախության մյուս բաղադրիչները։ Միջազգային փորձի համակողմանի ուսումնասիրման հիման վրա մեր կողմից արվել են այս ոլորտին վերաբերող հիմնավոր առաջարկություններ, որոնք բարձր են գնահատվել նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից։ Սահմանադրական դատարանների իրավասությունների եւ դրանց իրացման կարգին առնչվող հարցերը վերջին շրջանում ակտիվ քննության առարկա են եղել Վենետիկի հանձնաժողովում՝ կապված հատկապես Լատվիայի, Ադրբեջանի, Մոլդովայի, Ռումինիայի, Խորվաթիայի եւ մի շարք այլ երկրների սահմանադրական դատարանների վերաբերյալ սահմանադրական օրենքների քննարկման հետ։ Հաշվի առնելով այս ոլորտում միջազգային զարգացումների հիմնական միտումները, կարելի է եզրակացնել, որ արդյունավետ սահմանադրական արդարադատություն կարող է իրականացվել, երբ բոլոր սահմանադրական սուբյեկտներն իրավասու են դիմելու սահմանադրական դատարան եւ սահմանադրական բոլոր սուբյեկտներ-

276 Առանձին երկրներում, օր., ԱՄՆ-ում, նշանակումը կատարվում է ցմահ։

**րի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը կարող են դառնալ սահմանադրական արդարադատության օբյեկտ:** Բացի դրանից, քանի որ սահմանադրական արդարադատության հիմնական բովանդակությունը Սահմանադրության Երակայության ապահովումն է, ապա այդ խնդիրը կմնա անլուծելի, եթե սահմանադրական դատարանը չերաշխավորի **մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի** արդյունավետ իրականացման ճանապարհով նրա սահմանադրական իրավունքների երաշխավորված պաշտպանությունը, ինչպես նաև չլուծի սահմանադրական լիազորությունների հարցով իշխանության մարմինների միջև առաջացած վեճերը:

Պետական իշխանության մարմինների սահմանադրական լիազորությունների հետ կապված վեճերի լուծման իրավասություն ունեն սահմանադրական վերահսկողության եվրոպական համակարգ ունեցող ավելի քան հիսուն երկրների սահմանադրական դատարաններ: Մասնավորապես, տես. Ադրբեջանի Սահմանադրություն, հոդվ. 130, Բուլղարիա՝ 149, Վրաստան՝ 89, Գերմանիա՝ 93, Իտալիա՝ 134, Լեհաստան՝ 189, Ռուսաստան՝ 125, Սլովակիա՝ 126, Սլովենիա՝ 160, Իսպանիա՝ 161, Տաջիկստան՝ 89 եւ այլն: Բացի դրանից, Սահմանադրության վերացական կամ, այսպես կոչված, բացարձակ մեկնաբանման իրավասություն ունեն 29 երկրների սահմանադրական դատարաններ, այդ թվում՝ Ադրբեջանում, Բուլղարիայում, Գաբոնում, Գերմանիայում, Հուն արիայում, Ղազախստանում, Ղրղզստանում, Մոլդովայում, Ռուսաստանում, Նամիբիայում, Սլովակիայում, Ուզբեկստանում եւ այլն: Բազմաթիվ երկրներում (Լեհաստան, Սլովակիա, Բուլղարիա, Խորվաթիա, Չեխիա, Լիտվա, Սլովենիա, Ադրբեջան եւ այլն) այլ նորմատիվ ակտերի ոչ միայն Սահմանադրությանը, այլև օրենքներին (հաճախ նաև միջազգային պայմանա թերին) համապատասխանության հարցը նույնպես լուծում է սահմանադրական դատարանը եւ արդյունավետ չի համարվում այդ նպատակով նոր մարմիններ ստեղծելը (նման տեսակետը պաշտպանվում է նաև Վենետիկի հանձնաժողովի փորձա Կոմիտեի կողմից):

Քաղաքացիների անհատական դիմումների հիման վրա նորմատիվ ակտի սահմանադրական վերահսկողություն է իրականացվում 52 երկրում, այդ թվում սահմանադրական դատարաններ ունեցող Արեւմտյան ու Արեւելյան Եվրոպայի բոլոր երկրներում: Նախկին խորհրդային երկրներից միայն Հայաստանն է, որ այդ հարցը դեռեւս չի լուծել, եւ դրա լուծումը դիտարկվում է Եվրախորհրդին անդամակցելու պարտավորությունների շրջանակներում:

ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի լրացումներն ու փոփոխությունները միայն կարող են ստեղծել անհրաժեշտ ու բավարար լիազորությունների համակարգ՝ արդյունավետ սահմանադրական արդարադատություն իրականացնելու համար:

6. Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների հարցում միջազգային պրակտիկայում ընդունված է այն սկզբունքային մոտեցումը, որ դրանք պետք է ապահովեն դատարանի սահմանադրական վերահսկողության լիազորությունների ամբողջական եւ արդյունավետ կատարումը: Հայաստանը եզակի բացառություն է, որտեղ սահմանադրական դատարանն աշխարհում որժող 100-ից ավելի սահմանադրական դատարանների համեմատությամբ ամենասեղմ դիմող սուբյեկտների շրջանակն ունի եւ դրանց թվով ու ընդ ըկումով **տնվում է վերջին տեղում:** Այս ցավալի իրողությունը լրջորեն ազդում է սահմանադրական արդարադատության արդյունավետության վրա:

Հաշվի առնելով, որ դատարան դիմող սուբյեկտների համակարգը պետք է ներդաշնակ լինի իրավասությունների համակարգին, ինչպես նաև նկատի ունենալով այս հարցում Գերմանիայի, Ավստրիայի, Լեհաստանի, Ռուսաստանի, Պորտու ալիայի, Իսպանիայի, Հուն արիայի եւ մի շարք այլ երկրների փորձը, ինչպես նաև հատուկ այս նպատակով 1998թ. Հայաստանում Վենետիկի հանձնաժողովի փորձա Կոմիտեի մասնակցությամբ իրավիքով միջազգային սեմինարի ու հետա Կ մի շարք այլ քննարկումների արդյունքները, ՀՀ Սահմանադրության 101 հոդվածն արմատական վերանայման անհրաժեշտություն ունի: Ինչ վերաբերում է քաղաքացիների անհատական դիմումների հմարավո-

րությանը, ապա այդ հարցը կարող է լուծվել նաև ՀՀ Սահմանադրության 38 հոդվածի հիմքով (Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները եւ ազատությունները օրենքով չար ելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրա թված իր իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության իրավունք)՝ սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքում համապատասխան լրացումներ կատարելու ճանապարհով:

Այսուհանդերձ, բացառիկ կարեւոր է նաև ազային ժողովի պատ ամավորների սահմանադրական դատարան դիմելու հնարավորության խնդիրը: Միջազային փորձը վկայում է, որ հիմնականում դիմող սուբյեկտի կար ավիճակ է ստանում պառլամենտի անդամների 1/5-ը: Ինչու՞ է հատկապես նման թիվ ընդունվում: Մոտեցման տրամաբանությունը շատ պարզ է՝ նկատի է առնվում, որ ժողովրդավարական երկրում խորհրդարանական փոքրամասնությունն առնվազն այդքան քվե պետք է ունենա: Հաճախ նաև երկրի կոնկրետ առանձնահատկություններից ելնելով սահմանվում է կոնկրետ թիվ (օր. Ֆրանսիայում), որը նույնպես մեծ չի լինում փոքրամասնության մանդատների թվից: Որոշ երկրներում (օր. Մոլդովայում) դիմող սուբյեկտի իրավասությամբ օժտել են ամեն մի պատ ամավորի: Խնդիրն այն է, որ պառլամենտի առկայությունը դեռևս երկրում պառլամենտարիզմի ուղիղության վկայություն չէ: Պառլամենտարիզմն առկա է այնտեղ եւ այն չափով, որտեղ եւ որ չափով խորհրդարանական փոքրամասնությունը կարողունակ է օրենսդրական քաղաքականության մեջ դերակատարություն ունենալ եւ մեծամասնությանը պահել սահմանադրական դաշտում: Իսկ այս հարցում, ինչպես վկայում է միջազային փորձը, սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը էական որժոններից մեկն է:

7. ՀՀ որժոն Սահմանադրությամբ սահմանվել են սահմանադրական դատավարության այնպիսի նորմեր, որոնք բացակայում են աշխարհի մնացած բոլոր սահմանադրական դատարաններում: Մասնավորապես, ամրա թված է, որ սահմանադրական դատարանն ընդունում է որոշումներ ու եզրակացություններ՝ դի-

մումն ստանալուց ոչ ոչ, քան երեսուն օր հետո: Նման նորմ ուղիղություն ունի միայն նախնական նորմատիվ վերահսկողություն իրականացնող ֆրանսիական սահմանադրական խորհրդի որժոնների առնչությամբ: Որեւէ սահմանադրական դատարան, որն իրականացնում է նորմատիվ իրավական ակտերի հետա ավերացական վերահսկողություն, կաշկանդված չէ նման սահմանադրական սահմանափակմամբ:

8. Ներկայումս միջազային տարբեր առյաններում լուրջ քննարկման առարկա են դարձել նաև սահմանադրական դատարանների որոշումների բնույթին, դրանց կենսա որժման հիմնախնդիրներին, որոշումների սահմանադրական հետեւանքներին առնչվող հարցերը: Նկատի ունենալով, որ դատական սահմանադրական վերահսկողության լուրջ փորձ ունեն Լեհաստանը, որտեղ դեռևս 1972 թվականից բանավեճեր էին մում այս համակար ի բարեփոխումների ուղղությամբ, ինչպես նաև այն համամանքը, որ Լեհաստանը Արեւելյան Եվրոպայի երկրներից համեմատաբար ավելի ուշ ընդունեց նոր Սահմանադրությունը՝ հաշվի առնելով սահմանադրական զար ացումների հարուստ փորձը, ուշադրության են արժանի հենց այս երկրում տնված լուժումները՝ նաև հիշյալ հարցի առումով, մասնավորապես, սահմանադրական դատարանին վերապահված իրավասության առնչությամբ՝ ժամանակ սահմանելու իր որոշման ուժի մեջ մտնելու համար:

Սահմանադրական դատարանի կողմից իր որոշումներն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանելու քայլին մաց նաև Ռուսաստանի սահմանադրական դատարանը, քանի որ մի շարք որժերով որոշումների անմիջական ուժի մեջ մտնելը կարող էր առաջ բերել աժանցյալ լուրջ ոչ սահմանադրական հետեւանքներ: Դա, մասնավորապես, վերաբերում է կառավարության թիվ 197 որոշման առնչությամբ Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի ընդունած 18.02.1997թ. որոշմանը:

Նման իրավասություն ունի նաև Գերմանիայի սահմանադրական դատարանը, որը կոնկրետացված է դատարանի մասին սահմանադրական օրենքի 31 եւ 79 պարա թաֆներում:

Այսուհանդերձ, առավել կարելու է սահմանադրական դատարանի որոշումների իրավական բնույթի, բովանդակության եւ կատարման ապահովման խնդիրը: Սահմանադրական արդարադատության միջազային պրակտիկայի եւ սահմանադրափտության կողմից վավերացված իրողություն է, որ սահմանադրական դատարանի որոշումները **նախադեպային բնույթ ունեն եւ հանդիսանում են իրավունքի կարելու աղբյուր:**<sup>277</sup> Միջազային պրակտիկան վկայում է նաեւ, որ սահմանադրական դատարանի որոշումները չեն կարող դառնալ **պետական պաշտոնյաների** քննարկման ու մեկնաբանությունների առարկա: Նման փաստերը վկայում են սահմանադրական մշակույթի ցածր մակարդակի, իշխանությունների տարանջատման սկզբունքի անհետեւողական իրացման փաստի մասին:

Բացառիկ կարելու է նաեւ սահմանադրական դատարանի եզրակացությունների իրավական բնույթի հարցը: Դա ոչ թե օրենքի, այն էլ ոչ սահմանադրական կամ օրանական, այլ սահմանադրական մակարդակում լուծվելիք խնդիր է: Եթե սահմանադրական դատարանում նրա անդամների կետով ընդունված որոշումները վերջնական են եւ վերանայման ենթակա չեն, ապա երկու երրորդով ընդունված եզրակացությունները չեն կարող պարտադիր իրավական հետեւանքներ չունենալ: Հակառակ պարայում իրավական ործընթացը ոչ թե ծառայում է քաղաքական վեճերն իրավական դաշտում լուծելուն, այլ ճիշտ հակառակը՝ իրավական խնդիրը տեղափոխվում է քաղաքական դաշտ, որն անհարիր է իրավական պետության եւ իրավունքի՝ երակայության սկզբունքներին: Հայաստանի Հանրապետության իրավական պրակտիկայում ճիշտ մոտեցում է ձեւավորվել, մասնավորապես, Ազային ժողովի կանոնակարի 81 հոդվածի հիմքով, ըստ որի՝ եթե սահմանադրական դատարանի եզրակացությամբ Հանրապետության Նախաահին պաշտոնանկ անելու հիմքերը բացակայում են, ապա հարցը հանվում է քննարկումից: Նույն մո-

տեցումն ամրա ղված է նաեւ 83 հոդվածում: Սակայն սովորական օրենքներով նման սկզբունքային հարցի լուծումը ոչ միայն կարող է թուլացնել քաղաքական վեճերի իրավական հաղթահարման սկզբունքների հետեւողական ործադրումը, այլեւ կարող է քաղաքական շահարկումների պատճառ դառնալ՝ դրանում ներքաշելով նաեւ դատական համակար ղ:

Միջազային փորձը միանշանակ վկայում է, որ սահմանադրական դատարանի ակտերի իրավական բնույթը պետք է հստակ ամրա ղվի Սահմանադրության մեջ:

9. Նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանի լիազորություններն սպառիչ ամրա ղվում են Սահմանադրությամբ, վերջինս պետք է ամրա ղի նաեւ դատարանի անկախության չորս հիմնական խումբ երաշխիքները: Ինչպես նշվեց, դրանք են. ործառնական, կառուցակարային (ինստիտուցիոնալ), նյութական եւ սոցիալական երաշխիքները: Միայն դրանց առկայության ու համակարային ներդաշնակության պայմաններում է հնարավոր լիարժեք ու անկախաբար երաշխավորել Սահմանադրության՝ երակայությունը, նպաստել, որպեսզի երկրի Հիմնական օրենքը դառնա ապրող իրողություն եւ անջրպետ չառաջանա Սահմանադրության ու սահմանադրականության իրական վիճակի միջու:

10. Ինչպես նշվեց, Սահմանադրության՝ երակայության երաշխավորումն ամենաընդհանուր ձեւով ենթադրում է իրավական ակտերի սահմանադրականության ապահովում, մարդու սահմանադրական իրավունքների ու ազատությունների երաշխավորում, սահմանադրական լիազորությունների հարցերով պետական իշխանության մարմինների միջու առաջացած վեճերի լուծում: Առանց այդ ործառույթների ամբողջական իրականացման երկրում անհնարին է լիարժեք սահմանադրական արդարադատության երաշխավորումը: Ի դեպ, եթե նախորդ դարասկզբին ու 50-ական թվականներից հետո Արեւմտյան Եվրոպայի երկրների համար առավել կարելու էր հատկապես նորմատիվ ակտերի սահմանադրականության խնդիրը, ապա նոր հազարամյակում առաջին պլան են մղվել սահմանադրական դատարանների կող-

277 St'u Зоркин В.Д. Прецедентный характер решений Конституционного Суда Российской Федерации // Журнал российского права, 2004, N 12, էջեր 3-9:

մից սահմանադրական իրավունքների անմիջական երաշխավորման եւ լիազորությունների հարցով վեճերի լուծման խնդիրները: Արեւելյան Եվրոպայի շատ երկրներ որդե րեցին Գերմանիայի, Ավստրիայի, Իսպանիայի ու մի շարք այլ երկրների նման փորձը ու անհրաժեշտ փոփոխություններ կատարեցին իրենց իրավական համակարգերում, նպատակ ունենալով, հիշյալ միտումների հաշվառմամբ, հուսալի նախադրյալներ ստեղծել Սահմանադրության երակայության երաշխավորման համար: Վերջին շրջանում այդ օրինակին հետեւեցին նաեւ Լատվիան, Ադրբեջանը, Մոլդովան՝ սահմանադրական արդարադատության պրակտիկայում լայնորեն ներդնելով անհատական ղիմումների համակարգը, ստեղծելով Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման եւ իրավասությունների հարցերով վեճերի լուծման հստակ մեխանիզմներ: Մեր երկրում այս ուղղությամբ քաղաքական ուժերի մտածումները, սահմանադրական ու օրենսդրական բարեփոխումների նախաձեռնությունները ներդաշնակ չեն իրավական մտքի ընդհանրացումներին ու տնվում են նախորդ դարի 60-ական թվականների մակարդակի վրա:

## **Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ճ - 1**

**ՄԻ ՇԱՐՔ ԵՐԿՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ  
ԳԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳԻՄՈՒՄՆԵՐԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ՈՒ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ  
1996-2004 թթ.<sup>278</sup>**

<sup>278</sup> աղյուսակները կազմվել են համապատասխան երկրների սահմանադրական արդարադատության մարմիններից էլեկտրոնային փոստի միջոցով ստացված տվյալների հիման վրա:

# ԱԼԲԱՆԻԱ

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>1. ՍԴ կողմից քննության առնված գործերի թիվը, այդ թվում՝</b>	42	39	31	24	31	100	45	39	20
ա) օրենքի սահմանադրականության հարցով	5	11	1	8	5	6	5	8	6
բ) միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	1	-	1
գ) Նախագահի ընդունած ակտերի սահմանադրականության հարցով	7	-	-	1	-	-	-	-	-
դ) կառավարության որոշումների սահմանադրականության հարցով	4	1	3	2	4	3	-	1	-
ե) այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով	1	-	-	-	1	-	-	-	1
զ) Սահմանադրության վերացական մեկնաբանության հարցով	-	-	2	-	5	1	3	1	-
է) իրավասությունների վերաբերյալ վեճերի լուծում	-	1	-	-	-	-	-	-	-
ը) ընտրական վեճերի լուծում. - նախագահական ընտրություններ - խորհրդարանական ընտրություններ	- 18	- 17	- -	- -	- -	- 59	- 2	- -	- 1
թ) այլ իրավական ակտերի՝ օրենքների համապատասխանության հարցի լուծում									

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>2. Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ՍԴ որոշումների քանակը՝ անհատական գանգատների հիման վրա</b>	5	7	25	13	15	30	32	27	12
<b>3. ՍԴ -ին ուղղված դիմումների քանակը.</b>	47	62	79	67	95	213	243	278	210
ա) խորհրդարանի պատգամավորների կողմից	4	1	2	-	4	-	2	2	2
բ) Նախագահի կողմից	1	1	1	-	1	-	1	-	-
գ) կառավարության կողմից	-	2	-	1	-	2	3	3	-
դ) քաղաքացիների անհատական գանգատներ	19	25	63	54	72	164	217	236	174
ե) օմբուդսմենի կողմից	-	-	-	-	1	2	-	1	1
զ) ընդհանուր իրավասության դատարանների կողմից	2	-	3	5	2	2	3	7	4
է) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից	3	1	-	3	3	7	1	3	3
ը) այլ սուբյեկտների կողմից	18	32	10	4	12	34	16	26	26

# ԱՎԱՏՐԻԱ

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>1. ՍԳ կողմից քննության առնված գործերի թիվը, այդ թվում՝</b>									
<b>ա) օրենքի սահմանադրականության հարցով</b>	410	388	388	202	249	351	339	329	207
<b>բ) միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցով</b>	-	-	-	-	-	-	3	-	-
<b>գ) Նախագահի ընդունած ակտերի սահմանադրականության հարցով-նման լիազորություն Դատարանը չունի</b>	-	-	-	-	-	-	-	-	-
<b>դ) կառավարության որոշումների սահմանադրականության հարցով-նման լիազորություն Դատարանը չունի</b>	-	-	-	-	-	-	-	-	-
<b>ե) այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով-նման լիազորություն Դատարանը չունի</b>	-	-	-	-	-	-	-	-	-
<b>զ) Սահմանադրության վերացական մեկնաբանության հարցով<sup>279</sup></b>	-	-	-	1	0	0	0	0	0
<b>է) իրավասությունների վերաբերյալ վեճերի լուծում</b>	18	23	8	13	7	16	6	5	2
<b>ը) ընտրական վեճերի լուծում<sup>280</sup></b>									
- նախագահական ընտրություններ	11	6	16	12	10	12	8	4	9
- խորհրդարանական ընտրություններ									
<b>թ) այլ իրավական ակտերի՝ օրենքների համապատասխանության հարցի լուծում<sup>281</sup></b>	173	165	162	127	124	163	85	153	80

279 Դատարանն իրավասու է մեկնաբանելու Սահմանադրության այն հոդվածները, որոնք բաշխում են լիազորությունները Դաշնության եւ նրա սուբյեկտների միջև:

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>2. Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ՍԳ որոշումների քանակը՝ անհատական գանգատների հիման վրա<sup>282</sup></b>	4076	14.243 <sup>283</sup>	2670	2373	2473	2141	2006	1606	1945
<b>3. ՍԳ -ին ուղղված դիմումների քանակը.</b>									
<b>ա) խորհրդարանի պատգամավորների կողմից<sup>284</sup></b>	-	-	-	0	4	5	25	4	0
<b>բ) Նախագահի կողմից<sup>285</sup></b>	-	-	-	-	-	-	-	-	-
<b>գ) կառավարության կողմից<sup>286</sup></b>	1	1	0	4	3	4	7	6	8
<b>դ) քաղաքացիների անհատական գանգատներ<sup>287</sup></b>	a)15272 b)172	a)3230 b)297	a)2463 b)124	a)2100 b)122	a)2405 b)118	a)1746 b)159	a)1925 b)100	a)1814 b)97	a)1620 b)80
<b>ե) օմբուդսմենի կողմից<sup>288</sup></b>	a)1 b)1	a)0 b)3	a)0 b)1	a)0 b)0	a)0 b)0	a)0 b)1	a)0 b)0	a)0 b)2	a)1 b)0
<b>զ) ընդհանուր իրավասության դատարանների կողմից նաև այլ դատարաններ և տրիբունալներ</b>	228	195	140	79	75	180	277	163	122
<b>է) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից</b>	-	-	-	-	-	-	-	-	-
<b>ը) այլ սուբյեկտների կողմից՝ Սուդիտի խորհուրդը և կարող է խնդրել Դատարանին՝ լուծելու իրենց իրավասությունների վերաբերյալ վեճերը</b>	0	0	0	0	8	0	4	2	0

280 Այս տվյալները վերաբերում են եւ՝ նախագահական, եւ՝ պառլամենտական ընտրություններին (Դաշնային պառլամենտ, Զողերի 9 պառլամենտներ, Զողի կառավարության եւ մունիցիպալ մարմինների ընտրություններ) -ինչպես նաեւ Եվրոպական խորհրդարանի ընտրություններ:

281 Համաձայն Ավստրիայի Սահմանադրության՝ դա կարող է նշանակել ենթաօրենսդրական ակտերի նկատմամբ վերահսկողություն:

282 Տվյալները ներառում են միայն անհատական գանգատներն ընդդեմ վերջին ատյանի վարչական որոշումների:

283 Սրանք կազմում են գանգատների մեծ շարք, որոնք վերաբերում են կորպորատիվ հարկերին:

284 Դաշնային պառլամենտի 9 կամ Զողերի պառլամենտների պալատներից մեկի 1/3-ի կողմից:

285 Այդպիսի դիմումներ չկան:

286 Ինչպես Դաշնային, այնպես էլ 9 Զողերի կառավարությունների կողմից:

287 Քաղաքացիներն ունեն սահմանադրական դատարան դիմելու երկու հնարավորություն. **ա)** գանգատներ ընդդեմ վերջին ատյանի վարչական մարմինների որոշումների եւ **բ)** օրենքի սահմանադրականության չմիջնորդավորված վիճարկում: Ուստի ներկայացված են երկու տարբեր տվյալներ:

288 Օմբուդսմենի խորհուրդ. գործում է Դաշնային խորհուրդը եւ առեմնին օմբուդսմեններ են գործում Զո-ղերում:

Սրանք կարող են Դատարան դիմել՝ **ա)** ենթաօրենսդրական ակտերի նկատմամբ վերահսկողության խնդրանքով, **բ)** իրենց լիազորությունների կապակցությամբ վեճերի լուծման խնդրանքով:

**ԲԵԼԱՌՈՒՄ**

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>1. ՍԴ կողմից քննության առնված գործերի թիվը, այդ թվում՝</b>	19	4	17	8	3	3	4	1	4
ա) օրենքի սահմանադրականության հարցով	5	1	8	4	-	3	1	1	2
բ) միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	-	-	-
գ) Նախագահի ընդունած ակտերի սահմանադրականության հարցով	5	-	-	-	1	-	-	-	-
դ) կառավարության որոշումների սահմանադրականության հարցով	2	-	1	-	-	-	-	2	1
ե) այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով	-	3	5	3	1	-	3	-	2
զ) Սահմանադրության վերացական մեկնաբանության հարցով	-	-	-	-	-	-	-	-	-
է) իրավասությունների վերաբերյալ վեճերի լուծում	1	-	-	-	-	-	-	-	-
ը) ընտրական վեճերի լուծում.									
- նախագահական ընտրություններ	-	-	-	-	-	-	-	-	-
- խորհրդարանական ընտրություններ	-	-	-	-	-	-	-	-	-
թ) այլ իրավական ակտերի՝ օրենքների համապատասխանության հարցի լուծում	6	-	-	1	1	-	-	-	-

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>2. Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ՍԴ որոշումների քանակը՝ անհատական գանգատների հիման վրա</b>	-	-	-	-	1	3	6	13	12
<b>3. ՍԴ -ին ուղղված դիմումների քանակը.</b>	12	5	10	18	30	68	38	41	63
ա) խորհրդարանի պատգամավորների կողմից	2	-	-	-	1	3	1	-	1
բ) Նախագահի կողմից	-	1	9	3	-	-	-	-	-
գ) կառավարության կողմից	-	-	-	-	-	23	-	1	-
դ) քաղաքացիների անհատական գանգատներ	-	-	-	5	10	-	20	24	39
ե) օմբուդսմենի կողմից									-
զ) ընդհանուր իրավասության դատարանների կողմից	-	-	-	-	-	-	-	-	-
է) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից	-	-	-	-	1	-	-	-	2
ը) այլ սուբյեկտների կողմից	10	4	1	10	18	40	17	16	21

**Ծանոթագրություն.**  
 ՍԴ դիմումների քանակը նշված է ընդունված որոշումների քանակին համապատասխան:



# ՔՈՒԼՂԱՐԻԱ

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
1. ՍԴ կողմից քննության առնված գործերի թիվը, այդ թվում՝	22	19	33	17	14	18	13	3	7
ա) օրենքի սահմանադրականության հարցով	17	14	26	11	8	12	11	11	5
բ) միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցով	-	3	5	4	3	5	1	3	-
գ) Նախագահի ընդունած ակտերի սահմանադրականության հարցով	-	-	-	1	-	-	-	-	-
դ) կառավարության որոշումների սահմանադրականության հարցով*	-	-	-	-	-	-	-	-	-
ե) այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով	1	3	3	1	1	-	1	-	-
զ) Սահմանադրության վերացական մեկնաբանության հարցով	6	2	4	2	3	5	2	3	2
է) իրավասությունների վերաբերյալ վեճերի լուծում	-	-	-	-	-	-	-	-	-
ը) ընտրական վեճերի լուծում.									
- նախագահական ընտրություններ	-	-	-	-	-	-	-	-	-
- խորհրդարանական ընտրություններ									
թ) այլ իրավական ակտերի՝ օրենքների համապատասխանության հարցի լուծում	-	-	-	-	-	-	-	-	-

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
2. Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ՍԴ որոշումների քանակը՝ անհատական գանգատների հիման վրա**									
3. ՍԴ-ին ուղղված դիմումների քանակը.									
ա) խորհրդարանի պատգամավորների կողմից	13	11	18	12	12	15	5	7	3
բ) Նախագահի կողմից	4	1	-	-	-	-	1	2	1
գ) կառավարության կողմից	-	1	2	1	-	-	-	-	-
դ) քաղաքացիների անհատական գանգատներ**	-	-	-	-	-	-	-	-	-
ե) օմբուդսմենի կողմից	-	-	-	-	-	-	-	-	-
զ) ընդհանուր իրավասության դատարանների կողմից	-	-	-	-	-	3	4	3	4
է) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից	-	-	-	-	-	-	-	-	-
ը) այլ սուբյեկտների կողմից***	7	6	14	4	-	1	2	1	3

\* Դա Գերագույն վարչական դատարանի իրավասությունն է:  
 \*\* Սահմանադրական դատարանն անհատական գանգատներ քննության չի առնում:  
 \*\*\* Գլխավոր դատախազ:

# ԳԵՐՄԱՆԻԱ

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>1. ՄԴ կողմից քննության առնված գործերի թիվը, այդ թվում՝</b>	4755	4575	4588	4891	4883	4595	4477	4549	5364
ա) օրենքի սահմանադրականության հարցով	2	2	34	27	12	8	11	22	22
բ) միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցով		1	1	1				9	5
գ) Նախագահի ընդունած ակտերի սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	-	-	-
դ) կառավարության որոշումների սահմանադրականության հարցով	1	2	2	2	1	7	4	-	4
ե) այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով	?	?	?	?	?	?	?	?	?
զ) Սահմանադրության վերացական մեկնաբանության հարցով	-	-	-	-	-	-	-	-	-
է) իրավասությունների վերաբերյալ վեճերի լուծում	2	3	-	3	2	8	7	1	4
ը) ընտրական վեճերի լուծում.									
- նախագահական ընտրություններ	-	-	-	-	-	-	-	-	-
- խորհրդարանական ընտրություններ	-	12	8	-	17	10	-	-	12
թ) այլ իրավական ակտերի՝ օրենքների համապատասխանության հարցի լուծում	-	-	-	-	-	-	-	-	-

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>2. Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ՄԴ որոշումների քանակը՝ անհատական զանգառների հիման վրա</b>	4704	4486	4509	4789	4765	4471	4348	4434	5240
<b>3. ՄԴ-ին ուղղված դիմումների քանակը.</b>									
ա) խորհրդարանի պատգամավորների կողմից	4 (2)	4 (2)	6 (2)	2 (1)	2 (7)	3 (4)	1 (-)	-	3(4)
բ) Նախագահի կողմից	-	-	-	-	-	-	-	-	-
գ) կառավարության կողմից	4 (5)	7 (4)	10 (6)	9 (1)	3 (9)	6 (10)	6 (2)	5 (2)	4 (6)
դ) քաղաքացիների անհատական զանգառներ	5117	4962	4676	4729	4705	4483	4523	5055	5434
ե) օմբուդսմենի կողմից	-	-	-	-	-	-	-	-	-
զ) ընդհանուր իրավասության դատարանների կողմից	43 (20)	45 (18)	38 (24)	40 (24)	26 (29)	27 (12)	36 (19)	15 (16)	25 (14)
է) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից	} Տվյալներ չկան								
ը) այլ սուբյեկտների կողմից									

**1. Դատարանի կողմից քննության առնված գործերի քանակը ներառում է նաև այն գործերը, որոնք ցանկում ներառված չեն:**

- ա) Օրենքի սահմանադրականությանը վերաբերող գործեր  
Սահմանադրական գանգատների գերակշիռ մեծամասնությունն ըստ էության քննության չի արժանանում եւ ճանաչվում է անընդունելի: Եթե օրենքի սահմանադրականության վերաբերյալ գանգատներն անընդունելի են ճանաչվում, օրենքի սահմանադրականության հարցը Դատարանում քննության առարկա չի դառնում, եւ, հետեւաբար, օրենքի սահմանադրականության հարցի վերաբերյալ գործը չի ներառվում նշված տվյալներում: Դատարանի որոշումը ներառվում է վիճակագրական տվյալներում, եթե դատարանն ըստ էության քննության է առել օրենքի սահմանադրականության հարցի վերաբերյալ գործը:
- բ) Պայմանագրերի սահմանադրականության վերաբերյալ գործեր  
Այս կապակցությամբ կա միայն մի քանի գործ:
- գ) Նախագահի ակտերի սահմանադրականության վերաբերյալ գործեր  
Հիմնական օրենքը կարգավորում է միայն Նախագահի ինսիտիտուցիայի գործընթացը: Սահմանադրական դատարանի ստեղծումից ի վեր ինսիտիտուցիայի գործընթաց չի նախաձեռնվել:
- դ) Կառավարության որոշումների սահմանադրականությանը վերաբերող գործեր  
Կառավարության որոշումները կարող են լինել սահմանադրական վերահսկողության օբյեկտ, սակայն այդ կապակցությամբ ներկայացված սահմանադրական գանգատն անընդունելի է, եթե չեն սպառվել պաշտպանության միջոցները: Ուստի այդ կապակցությամբ Դատարանը գործեր չի ունեցել: Կառավարության որոշումները կարող են լինել սահմանադրական մարմինների միջև վեճի առարկա: Նման վեճերի առարկա կարող է լինել նաև Բուժնդեստագի կամ Բուժնեսրատի որոշումը: Վիճակագրական տվյալներում այս մարմինների որոշումների միջև տարբերակում չի կատարվել: Ուստի վիճակագրական տվյալներում ներառված են սահմանադրական մարմինների միջև վեճերին առնչվող բոլոր գործերը:
- ե) Սահմանադրության մեկնաբանության վերաբերյալ գործեր  
Գերմանիայում գործում է միայն օրենքի նկատմամբ ընդհանուր վերահսկողություն, սակայն դա չի վերաբերում Սահմանադրության վերացական մեկնաբանությանը:

զ) Իրավասությունների վերաբերյալ վեճեր  
Այստեղ ներառված են սահմանադրական մարմինների միջև վեճերը, ինչպես նաև Դաշնության եւ Հողերի միջև վեճերը:

**2. Մարդու իրավունքների վերաբերյալ անհատական գանգատների հիման վրա քննության առնված գործեր**

Տրված է քննության առնված գործերի քանակը:

**3. Սահմանադրական դատարան ներկայացված դիմումների քանակը**

- ա) Խորհրդարանի անդամների կողմից  
Սահմանադրական մարմինների միջև վեճերի կապակցությամբ դատարան կարող են դիմել ոչ միայն պատգամավորները, այլ նաև Բուժնդեստագը, Բուժնեսրատը եւ Դաշնային կառավարությունը: Վիճակագրական տվյալներում այդ դիմումների միջև տարբերակում կատարված չէ:
- բ) Նախագահի կողմից  
Թեև Նախագահն իրավասու է դիմել սահմանադրական մարմինների միջև վեճի կապակցությամբ, սակայն երբեք է նման դիմում չի եղել:
- գ) Կառավարության կողմից  
Կառավարությունն իրավասու է դիմել Դատարան՝ սահմանադրական մարմինների միջև վեճերի լուծման կապակցությամբ, ինչպես նաև վիճարկել օրենքի սահմանադրականությունը: Ուստի այս տվյալներում ներառված են կառավարության դիմումները երկու հարցի կապակցությամբ:
- դ) Քաղաքացիների անհատական գանգատներ  
Ներկայացված է միայն քաղաքացիների անհատական գանգատների քանակը:
- ե) Օմբուդսմենի կողմից  
Օմբուդսմենը Դատարան դիմելու իրավունք չունի:
- զ) Ընդհանուր իրավասության դատարանների կողմից  
Ներկայացված է ընդհանուր իրավասության դատարանների կողմից կոնկրետ գործերով ներկայացված դիմումների եւ ըստ էության քննության առնված գործերի քանակը:
- է) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից  
Տվյալներ չկան:

# ԷՍՏՈՆԻԱ

Գերագույն դատարանի սահմանադրականության հարցերով քննված գործերը և դիմումները	Տարեթիվ							
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
1. ԳԴ <sup>288</sup> -ի կողմից քննության առնված գործերի թիվը, այդ թվում՝	4	3	11	3	12	9	21	23
ա) օրենքի սահմանադրականության հարցով	2	-	6	2	5	5	9	7
բ) միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	-	-
գ) Նախագահի ընդունած ակտերի սահմանադրականության հարցով <sup>290</sup>	-	-	-	-	-	-	-	-
դ) կառավարության որոշումների սահմանադրականության հարցով <sup>291</sup>	-	-	-	-	-	-	1	1
ե) այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով <sup>292</sup>	2	3	5	1	6	4	2	2
զ) Սահմանադրության վերացական մեկնաբանության հարցով <sup>293</sup>	2	-	6	-	4	-	1	-
է) իրավասությունների վերաբերյալ վեժերի լուծում <sup>294</sup>	-	-	-	-	1	-	-	-
ը) ընտրական վեժերի լուծում <sup>295</sup>	-	-	-	-	-	-	-	-
- նախագահական ընտրություններ	-	-	-	-	-	-	7	14
- խորհրդարանական ընտրություններ	-	-	-	-	-	-	-	-
թ) այլ իրավական ակտերի՝ օրենքներին համապատասխանության հարցի լուծում	-	-	-	-	2	1	-	-

Գերագույն դատարանի սահմանադրականության հարցերով քննված գործերը և դիմումները	Տարեթիվ							
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
2. Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ԳԴ որոշումների քանակը՝ անհատական զանգատների հիման վրա <sup>286</sup>	-	-	-	-	-	-	2	2
3. ԳԴ-ին ուղղված դիմումների քանակը.								
ա) խորհրդարանի պատգամավորների կողմից <sup>297</sup>	-	-	-	-	-	-	1	-
բ) Նախագահի կողմից	1	-	2	-	-	-	-	-
գ) կառավարության կողմից <sup>298</sup>	-	-	-	-	-	-	-	-
դ) քաղաքացիների անհատական զանգատներ	-	-	-	-	-	-	2	3
ե) օմբուդսմենի կողմից	1	-	4	-	4	-	1	-
զ) ընդհանուր իրավասության դատարանների կողմից <sup>299</sup>	2	3	5	3	8	8	10	5
է) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից <sup>300</sup>	-	-	-	-	-	-	-	1
ը) այլ սուբյեկտների կողմից	-	-	-	-	-	-	-	-

<sup>289</sup> Նկատի ունենք սահմանադրական վերահսկողության պալատը եւ Գերագույն դատարանը՝ en banc:

<sup>290</sup> Տե՛ս սահմանադրական վերահսկողության դատավարության մասին օրենքի 18 հոդվածը:

<sup>291</sup> Օրենքը չի նախատեսում կառավարության որոշումների նկատմամբ սահմանադրական վերահսկողություն իրականացնելու հնարավորություն: Այդ որոշումներն ընդդատյա են վարչական դատարաններին:

<sup>292</sup> Կառավարության եւ տեղական ինքնակառավարման մարմինների *Id est* հրամանները:

<sup>293</sup> Նկատի ունենք վերացական սահմանադրական վերահսկողությունը, երբ գործը Գերագույն դատարան է հանձնվել ոչ իր իրավունքների պաշտպանությանը հետանուտ քաղաքացու կողմից:

<sup>294</sup> Ներառում է այն գործերը, որոնք վերաբերում են այս կամ այն գործի դատական ընդդատությանը:

<sup>295</sup> Տե՛ս Օրենքի 37 հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերը:

<sup>296</sup> Օրենքը չի թույլատրում անհատական զանգատների ներկայացում Գերագույն դատարան: Միայն շատ սահմանափակ դեպքերում Գերագույն դատարանը կատարում է բացառություններ եւ նման զանգատները քննության է առնում ըստ էության:

<sup>297</sup> Տե՛ս Օրենքի հոդված 17, հոդված 25, կետ 2, հոդված 26, կետ 1 եւ հոդված 27, կետ 1:

<sup>298</sup> Տե՛ս Օրենքի հոդված 32, կետ 1:

<sup>299</sup> Ներառում է ընդհանուր իրավասության եւ վարչական դատարանները:

<sup>300</sup> Տե՛ս հոդված 7, որը նախատեսում է տեղական կառավարման խորհուրդների՝ սահմանադրական վերահսկողության վարույթ նախաձեռնելու հնարավորություն:

# ԼԵՀԱՍՏԱՆ

Սահմանադրական տրիբունալի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>1. ՄՍ կողմից քննության առնված գործերի թիվը, այդ թվում՝</b>	26	32	33	52	52	64	61	70	79
ա) օրենքի սահմանադրականության հարցով	23	24	23	36	49	54	70	65	67
բ) միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	-	-	-
գ) Նախագահի ընդունած ակտերի սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	1	-	1
դ) կառավարության որոշումների սահմանադրականության հարցով	3	7	8	9	7	8	13	10	14
ե) այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով	3	0	1	2	3	2	1	-	-
զ) Սահմանադրության վերացական մեկնաբանության հարցով	11	5	-	-	-	-	-	-	-
է) իրավասությունների վերաբերյալ վեճերի լուծում	-	-	-	-	-	-	-	-	-
ը) ընտրական վեճերի լուծում.									
- նախագահական ընտրություններ	-	-	-	-	-	-	-	-	-
- խորհրդարանական ընտրություններ									
թ) այլ իրավական ակտերի՝ օրենքներին համապատասխանության հարցի լուծում	4	7	5	7	6	7	6	5	6

Սահմանադրական տրիբունալի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>2. Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ՄՍ որոշումների քանակը՝ անհատական գանգատների հիման վրա</b>	-	-	1	10	10	17	17	20	31
<b>3. ՄՍ -ին ուղղված դիմումների քանակը.</b>	56	72	89	97	112	137	177	131	134
ա) խորհրդարանի պատգամավորների կողմից	4	13	4	3	2	6	14	10	12
բ) Նախագահի կողմից	-	2	4	4	2	3	4	1	2
գ) կառավարության կողմից	-	-	-	-	-	-	-	-	-
դ) քաղաքացիների անհատական գանգատներ	-	-	23	31	22	44	44	69	57
ե) օմբուդսմենի կողմից	9	23	20	18	12	21	23	14	20
զ) ընդհանուր իրավասության դատարանների կողմից	-	1	8	10	9	19	20	18	20
է) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից	16	14	18	10	35	21	33	5	12
ը) այլ սուբյեկտների կողմից	27	19	2	21	29	23	29	14	11

Ծանոթագրություն:

- Լեհաստանի սահմանադրական տրիբունալն ընդունում է 2 տեսակի որոշումներ՝ վճիռներ (ըստ էության քննության արդյունքում) և ընթացակարգային որոշումներ: 1-ին և 2-րդ կետերը վերաբերում են միայն վճիռներին:
- Վճիռների քանակը չի համընկնում այն նորմատիվ ակտերի քանակի հետ, որոնք վերահսկողության օբյեկտ են եղել, քանի որ սահմանադրական տրիբունալի միեւնոյն վճիռը կարող է վերաբերել մի քանի նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցին:
- Լեհական իրավական համակարգում նախատեսված չէ սահմանադրական տրիբունալում դատարանների կամ վարչական մարմինների ակտերը վիճարկելու հնարավորություն: Լեհաստանի Սահմանադրության 79-1 հոդվածին համապատասխան՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ում գործի կապակցությամբ դատարանը կամ վարչական մարմինը վերջնական որոշում է կայացրել, սահմանադրական տրիբունալում կարող է վիճարկել այն նորմերի սահմանադրականությունը, որոնք հանդիսանում են իրենց սահմանադրական իրավունքներին եւ ազատություններին առնչվող որոշման հիմքը: Արդյունքում, սահմանադրական գանգատի առարկան ոչ թե անհատական որոշումն է, այլ նորմատիվ ակտը: Բավարարված անհատական գանգատի հետեւանքը նույնն է, ինչ նորմատիվ ակտն այլ ընթացակարգով հակասահմանադրական ճանաչելու վերաբերյալ վճիռի իրավական հետեւանքը, այն է՝ նորմատիվ ակտը կորցնում է իր պարտադիր ուժը: Այս պատճառներից ելնելով՝ 1-ին և 2-րդ կետերը միմյանց չեն բացառում, եւ որոշ վճիռներ կրկնվում են երկու անգամ:

# ԼԻՏՎԱ

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>1. ՄԴ կողմից քննության առնված գործերի թիվը, այդ թվում՝</b>	17	16	19	21	21	23	24	24	23
ա) օրենքի սահմանադրականության հարցով	7	9	10	15	12	13	15	15	11
բ) միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցով	0	0	0	0	0	0	0	0	0
գ) Նախագահի ընդունած ակտերի սահմանադրականության հարցով	1	0	0	0	0	0	0	1	1
դ) կառավարության որոշումների սահմանադրականության հարցով	8	6	5	5	5	9	8	7	7
ե) Սեյմի կողմից ընդունված նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով	0	1	3	1	2	1	1	1	3
զ) Սահմանադրության վերացական մեկնաբանության հարցով	-	-	-	-	-	-	-	-	-
է) իրավասությունների վերաբերյալ վեժների լուծում	-	-	-	-	-	-	-	-	-
ը) ընտրական վեժների լուծում									
- նախագահական ընտրություններ	1	0	0	0	0	0	0	0	1
- խորհրդարանական ընտրություններ									
թ) Սեյմի կողմից ընդունված իրավական ակտերի՝ օրենքների համապատասխանության հարցի լուծում	0	0	1	0	2	0	0	0	0

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>2. Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ՄԴ որոշումների քանակը՝ անհատական զանգատների հիման վրա</b>	-	-	-	-	-	-	-	-	-
<b>3. ՄԴ -ին ուղղված դիմումների քանակը.</b>	19	20	32	36	52	54	33	49	49
ա) խորհրդարանի պատգամավորների կողմից	5	10	15	8	11	3	6	13	9
բ) Նախագահի կողմից	3	0	0	0	0	0	0	0	0
գ) կառավարության կողմից	0	1	0	0	0	1	0	0	0
դ) քաղաքացիների անհատական զանգատներ	-	-	-	-	-	-	-	-	-
ե) օմբուդսմենի կողմից	-	-	-	-	-	-	-	-	-
զ) ընդհանուր իրավասության դատարանների վարչական դատարանների կողմից	11	9	17	28	41	50	27	36	40
է) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից	-	-	-	-	-	-	-	-	-
ը) այլ սուբյեկտների կողմից	-	-	-	-	-	-	-	-	-

# ԽՈՐՎԱԹԻԱ

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>1. ՄԴ կողմից քննության առնված գործերի թիվը, այդ թվում՝</b>	959	1343	1114	1204	1954	2567	3310	4524	5170
ա) օրենքի սահմանադրականության հարցով	243	523	176	157	167	358	148	145	423
բ) միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցով	0	0	0	0	0	0	0	0	0
գ) Նախագահի ընդունած ակտերի սահմանադրականության հարցով	3	0	0	1	0	1	2	0	2
դ) կառավարության որոշումների սահմանադրականության հարցով	9	9	2	12	14	5	21	26	16
ե) այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով	59	55	100	76	98	201	66	84	94
զ) Սահմանադրության վերացական մեկնաբանության հարցով	-	-	-	-	-	-	-	-	-
է) իրավասությունների վերաբերյալ վեժների լուծում	6	3	-	3	2	4	7	5	2
ը) ընտրական վեժների լուծում.	0	183	9	28	26	77	6	27	11
թ) այլ իրավական ակտերի՝ օրենքներին համապատասխանության հարցի լուծում									

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>2. Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ՄԴ որոշումների քանակը՝ անհատական զանգատների հիման վրա</b>	602	550	803	925	1578	1867	2573	3372	4546
<b>3. ՄԴ-ին ուղղված դիմումների քանակը.</b>									
ա) խորհրդարանի պատգամավորների կողմից	1			1	1	2		1	1
բ) Նախագահի կողմից									
գ) կառավարության կողմից	1			1	2	7	10	12	6
դ) քաղաքացիների անհատական զանգատներ	550	492	693	818	1407	1684	2755	3572	4546
ե) օմբուդսմենի կողմից	-	2	-	-	-	-	-	-	1
զ) ընդհանուր իրավասության դատարանների կողմից	1	4			1	1	6	3	3
է) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից	12	14	15	9	9	12	4	26	26
ը) այլ սուբյեկտների կողմից	1	14	23	33	18	65	7	12	7
թ) այլ սուբյեկտների կողմից (իրավաբանական անձիք, քաղաքացիական միավորումներ, առևտրային միություններ)	394	817	383	342	516	796	528	898	580

# ԿԻՊՐՈՍ

Գերագույն դատարանի սահմանադրականության հարցերով քննված գործերը և դիմումները	Տարեթիվ							
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
<b>1. ԳՌ-ի կողմից քննության առնված գործերի թիվը, այդ թվում՝</b>								
ա) օրենքի սահմանադրականության հարցով	13	8	7	14	7	12	13	7
բ) միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	-	-
գ) Նախագահի ընդունած ակտերի սահմանադրականության հարցով	-	-	-	1	-	-	-	-
դ) կառավարության որոշումների սահմանադրականության հարցով	22	8	15	12	5	14	7	6
ե) այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով	6	4	2	2	2	2	1	1
զ) Սահմանադրության վերացական մեկնաբանության հարցով	46	20	21	22	10	17	19	9
է) իրավասությունների վերաբերյալ վեճերի լուծում	10	9	6	10	6	7	5	11
ը) ընտրական վեճերի լուծում.								
- նախագահական ընտրություններ	-	1	1	-	-	1	-	-
- խորհրդարանական ընտրություններ	1	2	-	1	-	1	3	1
թ) այլ իրավական ակտերի՝ օրենքների համապատասխանության հարցի լուծում	8	2	5	4	3	7	6	6

Գերագույն դատարանի սահմանադրականության հարցերով քննված գործերը և դիմումները	Տարեթիվ							
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
<b>2. Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ԳՌ որոշումների քանակը՝ անհատական զանգառների հիման վրա</b>	28	22	15	13	6	15	15	10
<b>3. ԳՌ-ին ուղղված դիմումների քանակը.</b>								
ա) խորհրդարանի պատգամավորների կողմից	1	-	-	-	-	-	-	-
բ) Նախագահի կողմից	3	-	1	2	2	2	-	-
գ) կառավարության կողմից	8	10	16	12	11	23	24	13
դ) քաղաքացիների անհատական զանգառներ	518	538	599	632	652	627	673	508
ե) օմբուդսմենի կողմից	-	-	-	-	-	-	-	-
զ) ընդհանուր իրավասության դատարանների կողմից	-	-	-	-	-	-	-	-
է) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից	6	3	1	2	2	5	5	5
ը) այլ սուբյեկտների կողմից	3	4	3	9	9	10	17	9



# ՀԱՅԱՍՏԱՆ

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>1. ՍԴ կողմից քննության առնված գործերի թիվը, այդ թվում՝</b>	33	42	74	55	69	71	61	59	83
ա) օրենքի սահմանադրականության հարցով	-	1	2	1	-	1	1	-	-
բ) միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցով	32	42	72	46	65	70	59	41	-
գ) Նախագահի ընդունած ակտերի սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	-	-	-
դ) կառավարության որոշումների սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	-	-	-
ե) այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով	-	-	-	-	1	-	-	-	-
զ) Սահմանադրության վերացական մեկնաբանության հարցով (Դատարանը նման իրավասություն չունի)	-	-	-	-	-	-	-	-	-
է) իրավասությունների վերաբերյալ վեճերի լուծում (Դատարանը նման իրավասություն չունի)	-	-	-	-	-	-	-	-	-
ը) ընտրական վեճերի լուծում.									
- նախագահական ընտրություններ	1	-	-	-	-	-	-	2	-
- խորհրդարանական ընտրություններ	-	-	-	8	3	-	1	16	-
թ) այլ իրավական ակտերի՝ օրենքներին համապատասխանության հարցի լուծում (Դատարանը նման իրավասություն չունի)	-	-	-	-	-	-	-	-	-

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>2. Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ՍԴ որոշումների քանակը՝ անհատական զանգատների հիման վրա (օրենքով նախատեսված չէ անհատական դիմումներ ՍԴ)</b>	-	-	-	-	-	-	-	-	-
<b>3. ՍԴ-ին ուղղված դիմումների քանակը.<sup>301</sup></b>	33	42	74	55	69	71	61	59	83
ա) խորհրդարանի պատգամավորների կողմից	-	1	-	1	-	-	-	-	-
բ) Նախագահի կողմից	32	41	74	46	66	71	60	41	83
գ) կառավարության կողմից	-	-	-	-	-	-	-	-	-
դ) ՀՀ Նախագահի և ԱԺ պատգամավորության թեկնածուների դիմումներ - քաղաքացիների անհատական զանգատներ (ՍԴ դիմել չեն կարող)	1	-	-	8	3	-	1	18	-
ե) օմբուդսմենի կողմից (ՍԴ դիմել չեն կարող)	-	-	-	-	-	-	-	-	-
զ) ընդհանուր իրավասության դատարանների կողմից (ՍԴ դիմել չեն կարող)	-	-	-	-	-	-	-	-	-
է) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից (ՍԴ դիմել չեն կարող)	-	-	-	-	-	-	-	-	-
ը) այլ սուբյեկտների կողմից (ՍԴ դիմել չեն կարող)	-	-	-	-	-	-	-	-	-

301 Այստեղ բերված է միայն օրենքով նախատեսված ՍԴ դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների կողմից ներկայացված դիմումների քանակը: (խորհրդարանի ցրումն արդարացնող իրավիճակների հաստատագրման մեկ եզրակացություն: Խորհրդարանական ընտրություններին վերաբերող մեկ եզրակացություն):

# ՄԱԿԵՂՈՆԻԱ

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ							
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
<b>1. ՍԴ կողմից քննության առնված գործերի թիվը, այդ թվում՝</b>								
ա) օրենքի սահմանադրականության հարցով	99	90	93	116	103	127	103	89
բ) միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	-	-
գ) Նախագահի ընդունած ակտերի սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	-	1
դ) կառավարության որոշումների սահմանադրականության հարցով	33	24	24	22	35	29	27	28
ե) այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով	122	89	99	83	78	72	37	68
զ) Սահմանադրության վերացական մեկնաբանության հարցով	-	-	-	-	-	-	-	-
է) իրավասությունների վերաբերյալ վեճերի լուծում	-	-	-	-	-	-	-	-
ը) ընտրական վեճերի լուծում.								
- նախագահական ընտրություններ	-	-	-	-	-	-	-	-
- խորհրդարանական ընտրություններ								
թ) այլ իրավական ակտերի՝ օրենքների համապատասխանության հարցի լուծում	-	8	2	2	3	13	25	12

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ							
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
<b>2. Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ՍԴ որոշումների քանակը՝ անհատական զանգատների հիման վրա</b>	2	7	13	16	9	6	14	10
<b>3. ՍԴ -ին ուղղված դիմումների քանակը.</b>								
ա) խորհրդարանի պատգամավորների կողմից	-	-	-	-	-	-	-	-
բ) Նախագահի կողմից	-	-	-	-	-	-	-	-
գ) կառավարության կողմից	-	3	5	1	1	5	1	3
դ) քաղաքացիների անհատական զանգատներ	162	164	159	204	181	189	154	167
ե) օմբուդսմենի կողմից	-	-	1	1	-	3	2	-
զ) ընդհանուր իրավասության դատարանների կողմից	-	-	-	-	-	-	-	-
է) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից	7	7	11	7	4	11	10	12
ը) այլ սուբյեկտների կողմից	91	54	61	29	44	49	40	28

# ՄՈԼԴՈՎԱ

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
1. Ներկայացված դիմումներ	28	64	71	139	90	72	51	40	27
2. Ընդունված որոշումներ, այդ թվում նաև այն որոշումները, որոնք վերաբերում են Դատարանի գործառնական իրավասություններին	20/0	40/8	42/6	72/5	45/10	50/24	51/36	30/18	30/17
3. Ըստ էության լուծված գործեր	20	33	37	73	39	29	19	12	14
4. Սահմանադրության մեկնաբանման վերաբերյալ գործերը, հողվածների քանակը, որոնց տրվել է մեկնաբանություն	6/6	4/6	6/6	7/10	5/13	1/1	0/0	0/0	1/1
5. Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ սահմանադրական օրենքի նախագծերի կապակցությամբ եզրակացություններ	-	1	1	6	4*	3**	4	-	1
6. Դատարանի որոշումներով մասամբ կամ ամբողջությամբ հակասահմանադրական ճանաչված նորմատիվ ակտեր	5	24	17	53	21	13	15	2	4

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
7. Դատարանի որոշումներով սահմանադրական ճանաչված նորմատիվ ակտեր	11	13	23	18	17	9	9	11	9
8. Հատուկ կարծիքներ	3	4	4	4	5	1	11	5	4
9. Ուղերձներ	-	1	-	1	-	1	3	6	2
10. Վերանայված վճիռներ	1	-	2	1	1	1	2	-	-
11. Մերժված դիմումներ՝ Դատարանի որոշմամբ կամ Դատարանի նախագահի ստորագրությամբ	2/4 =6	1/2 =3	13/2 =15	35/6 =41	18/19 =38	17/18 =35	4/17 =21	8/8 =16	7/6 =13
12. Կարճված վարույթներ, այդ թվում գործեր, որոնք ըստ էության լուծված են	3/2 =5	10/2 =12	5/4 =9	15/4 =19	6/2 =8	13/0 =13	6/1 =7	6/2 =8	4/1 =5

\* Խորհրդարանի ցրումն արդարացնող իրավիճակների հաստատագրման մեկ եզրակացություն:

\*\* Խորհրդարանական ընտրություններին վերաբերող մեկ եզրակացություն:

## ՉԵԽԻԱ

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>1. ՄԴ կողմից քննության առնված գործերի թիվը, այդ թվում՝</b>	447	552	528	1065	1725	2280	2778	3101	3362
ա) օրենքի սահմանադրականության հարցով	28	23	18	24	36	43	33	35	43
բ) միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	-	-	1
գ) Նախագահի ընդունած ակտերի սահմանադրականության հարցով	-	-	1	-	1	1	-	-	-
դ) կառավարության որոշումների սահմանադրականության հարցով	4	3	4	4	7	2	0	3	5
ե) այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով	3	3	6	0	5	3	3	6	5
զ) Սահմանադրության վերացական մեկնաբանության հարցով	-	-	-	-	-	-	-	-	-
է) իրավասությունների վերաբերյալ վեճերի լուծում	1	2	1	2	5	4	3	3	2
ը) ընտրական վեճերի լուծում	6	0	11	1	5	1	20	7	14
- նախագահական ընտրություններ	-	-	-	-	-	-	-	2	-
- խորհրդարանական ընտրություններ	6	0	11	1	5	4	20	5	14
թ) այլ իրավական ակտերի՝ օրենքների համապատասխանության հարցի լուծում	6	2	1	3	0	2	1	2	6

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>2. Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ՄԴ որոշումների քանակը՝ անհատական զանգատների հիման վրա</b>	441	546	514	1024	1713	2012	2439	2808	3272
<b>3. ՄԴ-ին ուղղված դիմումների քանակը.</b>	1503	2021	2200	2567	3136	3045	3184	2548	2788
ա) խորհրդարանի պատգամավորների կողմից	8	10	10	8	18	18	28	22	16
բ) Նախագահի կողմից	0	1	0	0	3	0	2	0	0
գ) կառավարության կողմից	0	0	1	0	1	2	1	0	0
դ) քաղաքացիների անհատական զանգատներ	1483	1993	1168	2531	3080	2985	3116	2500	2713
ե) օմբուդսմենի կողմից	-	-	-	-	-	1	1	2	1
զ) ընդհանուր իրավասության դատարանների կողմից	7	7	13	10	21	11	25	14	25
է) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից	3	10	8	15	12	28	11	10	2
ը) այլ սուբյեկտների կողմից	2	0	0	3	1	0	0	0	-

# ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>1. ՍԴ կողմից քննության առնված գործերի թիվը, այդ թվում՝</b>	1257	741	750	694	601	605	511	638	725
ա) օրենքի սահմանադրականության հարցով(*)	-	-	-	-	-	-	-	-	-
բ) միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցով	-	-	-	1	-	1	-	6	1
գ) Նախագահի ընդունած ակտերի սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	-	-	-
դ) կառավարության որոշումների սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	-	-	-
ե) այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	-	-	-
զ) Սահմանադրության վերացական մեկնաբանության հարցով	26	17	11	17	23	22	32	25	22
է) իրավասությունների վերաբերյալ վեճերի լուծում	-	-	-	-	-	-	-	-	-
ը) ընտրական վեճերի լուծում.									
- նախագահական ընտրություններ	10	65	31	5	6	44	32	1	4
- խորհրդարանական ընտրություններ									
թ) այլ իրավական ակտերի՝ օրենքներին համապատասխանության հարցի լուծում	-	-	-	-	-	-	-	-	-

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>2. Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ՍԴ որոշումների քանակը՝ անհատական զանգատների հիման վրա</b>	-	-	-	-	-	-	-	-	-
<b>3. ՍԴ-ին ուղղված դիմումների քանակը.</b>									
ա) խորհրդարանի պատգամավորների կողմից	4	2	1	1	2	1	1	2	1
բ) Նախագահի կողմից	0	3	3	1	0	0	3	4	2
գ) կառավարության կողմից	0	0	0	0	0	0	0	0	0
դ) քաղաքացիների անհատական զանգատներ	-	-	-	-	-	-	-	-	-
ե) օմբուդսմենի կողմից	12	2	0	1	9	11	9	8	7
զ) ընդհանուր իրավասության դատարանների կողմից	1145	560	573	555	483	462	364	470	558
է) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից	-	-	-	-	-	-	-	-	-
ը) այլ սուբյեկտների կողմից	10	11	5	5	12	10	13	11	13

(\*) Տվյալներ չկան

# ՌՌԻՍԱՍՏԱՆ

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>1. ՄԴ-ին ուղղված դիմումների քանակը, այդ թվում՝</b>	38	47	117	2761	36	141	339	119	203
ա) ՌԴ Նախագահի կողմից	3	5	-	1	-	-	-	-	-
բ) ՌԴ Դաշնության ժողովի Դաշնության խորհրդի կողմից	1	-	2	1	-	-	-	-	-
գ) ՌԴ Պետական դումայի կողմից	2	2	5	3	2	-	-	-	-
դ) ՌԴ խորհրդարանի պատգամավորների կողմից (Դաշնության խորհրդի 1/5 և Պետդումայի պատգամավորների 1/5)	-	1	-	1	1	1	2	2	5
ե) ՌԴ կառավարություն	-	-	-	-	-	-	-	-	1
զ) քաղաքացիների կողմից	17	15	82	2715 <sup>302</sup>	16	111	315	96	154
է) ընդհանուր իրավասության դատարանների կողմից	3	5	10	9	3	2	10	9	13
ը) արքիտրաժային դատարանների կողմից	1	-	1	1	1	6	-	2	2
թ) այլ սուբյեկտների կողմից (քաղաքացիների միավորում, ՌԴ օրենսդիր և գործադիր իշխանությունների սուբյեկտներ)	11	19	17	30	13	21	12	10	28
<b>2. Սահմանադրական դատարանի կողմից քննության առնված գործերը և դիմումները այդ թվում՝<sup>303</sup></b>	22	25	34	26	17	20	19	20	19

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
ա) Դաշնային օրենքի սահմանադրականության հարցով	14	12	23	18	12	16	17	16	16
բ) ուժի մեջ չմտած՝ ՌԴ միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	-	-	-
գ) ՌԴ Նախագահի հրամանագրերի սահմանադրականության հարցով	1	3	1	1	-	1	-	-	-
դ) ՌԴ կառավարության որոշումների սահմանադրականության հարցով	-	2	2	-	-	-	-	-	-
ե) այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով (ՌԴ Պետական դումայի որոշումներ, հանրապետությունների սահմանադրություններ, կանոնադրություններ, օրենքներ և այլն)	6	7	4	3	4	3	2	4	3
զ) իրավասությունների վերաբերյալ վեճերի լուծում	-	-	1	1	-	-	-	-	-
է) Սահմանադրության մեկնաբանության հարցով	1	1	3	3	1	-	-	-	-
<b>3. Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ՄԴ որոշումների քանակը՝ անհատական զանգասների հիման վրա</b>	9	27	67	94	129	159	143	121	152

302 Քաղաքացիների զանգասների նշված քանակից 2687-ը վերաբերել են կենսաթոշակային և այլ սոցիալական հիմնադրամների վճարների սակագներին:

303 Քննված գործերի քանակը չի համապատասխանում քննության առնված դիմումների քանակին, քանի որ շատ դիմումատուների մի շարք գործեր, որոնք առնչվում են միեւնույն խնդրին, միավորվել և քննության են առնվել նույն վարույթում:

# ՍԼՈՎԵՆԻԱ

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>1. ՍԴ կողմից քննության առնված գործերի թիվը, այդ թվում՝</b>									
ա) օրենքի սահմանադրականության հարցով	374	222	337	346	334	246	383	322	394
բ) միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցով	0	1	0	0	0	1	1	1	0
գ) Նախագահի ընդունած ակտերի սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	-	-	-
դ) կառավարության որոշումների սահմանադրականության հարցով	11	4	10	26	17	13	29	4	3
ե) այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	-	-	-
զ) Սահմանադրության վերացական մեկնաբանության հարցով	1	1	2	1	0	1	0	2	1
է) իրավասությունների վերաբերյալ վեճերի լուծում	8	8	11	14	24	8	12	15	11
ը) ընտրական վեճերի լուծում									
- նախագահական ընտրություններ	0	0	0	0	0	0	0	0	0
- խորհրդարանական ընտրություններ	1	0	0	0	1	0	0	0	0
թ) այլ իրավական ակտերի՝ օրենքների համապատասխանության հարցի լուծում	50	51	47	101	128	72	76	34	99

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>2. Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ՍԴ որոշումների քանակը՝ անհատական զանգատների հիման վրա</b>	232	329	298	319	458	390	603	719	952
<b>3. ՍԴ -ին ուղղված դիմումների քանակը.</b>									
ա) խորհրդարանի պատգամավորների կողմից	2	2	0	0	0	0	0	3	1
բ) Նախագահի կողմից	-	-	-	-	-	-	-	-	-
գ) կառավարության կողմից	1	3	1	1	4	2	7	2	2
դ) քաղաքացիների անհատական զանգատներ	351	376	355	348	450	550	767	798	355
ե) օմբուդսմենի կողմից	1	1	0	1	1	0	1	1	1
զ) ընդհանուր իրավասության դատարանների կողմից	6	6	6	12	22	11	12	11	2
է) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից	18	9	14	16	13	12	11	7	6
ը) այլ սուբյեկտների կողմից	3	5	8	4	6	7	2	10	6

# ՎՐԱՄՏԱՆ

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ							
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
<b>1. ՍԴ կողմից քննության առնված գործերի թիվը, այդ թվում՝</b>								
ա) օրենքի սահմանադրականության հարցով	6	10	8	6	6	13	25	28
բ) միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	1	-
գ) Նախագահի ընդունած ակտերի սահմանադրականության հարցով	1	2	1	6	1	3	2	16
դ) կառավարության որոշումների սահմանադրականության հարցով	3	5	9	2		3	2	
ե) այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով	3	9	13	2	1	2	6	8
զ) Սահմանադրության վերացական մեկնաբանության հարցով	-	-	-	-	-	-	-	-
է) իրավասությունների վերաբերյալ վեճերի լուծում	-	-	-	-	-	-	-	-
ը) ընտրական վեճերի լուծում.	-	-	-	-	-	-	-	-
- նախագահական ընտրություններ	-	-	-	-	-	-	-	-
- խորհրդարանական ընտրություններ				1	3	6	6	4
թ) այլ իրավական ակտերի՝ օրենքներին համապատասխանության հարցի լուծում	-	-	-	-	-	-	-	-

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ							
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
<b>2. Սարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ՍԴ որոշումների քանակը՝ անհատական զանգատների հիման վրա</b>	13	26	28	9	8	20	34	47
<b>3. ՍԴ -ին ուղղված դիմումների քանակը.</b>								
ա) խորհրդարանի պատգամավորների կողմից		4	1	3	5	3	1	1
բ) Նախագահի կողմից	-	-	-	-	-	-	-	-
գ) կառավարության կողմից	-	-	-	-	-	-	-	-
դ) քաղաքացիների անհատական զանգատներ	30	36	19	18	21	18	27	43
ե) օմբուդսմենի կողմից	-	-	2	-	-	-	4	-
զ) ընդհանուր իրավասության դատարանների կողմից	-	3	3	3	-	-	5	1
է) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից	-	-	-	-	-	-	-	-
ը) այլ սուբյեկտների կողմից	-	-	1	-	-	-	9	9



# ՖԱՆՏԱԿ

Սահմանադրական խորհուրդի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>1. Սև կողմից քննության առնված գործերի թիվը, այդ թվում՝</b>	66	153	324	32	43	45	173	149	45
ա) օրենքի սահմանադրականության հարցով*	9	7	8	10	13	11	7	20	15
բ) միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցով	0	1	0	2	0	0	0	0	1
գ) Նախագահի ընդունած ակտերի սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	-	-	-
դ) կառավարության որոշումների սահմանադրականության հարցով	-	-	-	-	-	-	-	-	-
ե) այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով	6	1	3	6	3	5	2	5	4
զ) Սահմանադրության վերացական մեկնաբանության հարցով	-	-	-	-	-	-	-	-	-
է) իրավասությունների վերաբերյալ վեճերի լուծում	-	-	-	-	-	-	-	-	-
ը) ընտրական վեճերի լուծում. - նախագահական ընտրություններ - խորհրդարանական ընտրություններ (երկու պալատ)	0 36	0 131	0 304	0 6	0 8	2 14	28 124	0 120	0 15
թ) այլ իրավական ակտերի՝ օրենքներին համապատասխանության հարցի լուծում	-	-	-	-	-	-	-	-	-

Սահմանադրական խորհուրդի կողմից քննված գործերը և դիմումները	Տարեթիվ								
	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>2. Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող Սև որոշումների քանակը՝ անհատական զանգատների հիման վրա</b>	-	-	-	-	-	-	-	-	-
<b>3. Սև -ին ուղղված դիմումների քանակը.</b>	66	153	324	32	43	45	173	149	41
ա) խորհրդարանի պատգամավորների կողմից	11	7	9	12	13	11	8	21	19
բ) Նախագահի կողմից**	-	-	-	2	-	-	-	-	1
գ) կառավարության կողմից (վարչապետ)***	5	2	2	5	2	5	1	4	2
դ) քաղաքացիների անհատական զանգատներ	-	-	-	-	-	-	-	-	-
ե) օմբուդսմենի կողմից	-	-	-	-	-	-	-	-	-
զ) ընդհանուր իրավասության դատարանների կողմից	-	-	-	-	-	-	-	-	-
է) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից	-	-	-	-	1	-	-	-	-
ը) այլ սուբյեկտների կողմից	-	-	-	-	-	-	-	-	-

\* Սահմանադրական խորհրդի կողմից օրգանական օրենքների և պաշտպանության պալատների կանոնակարգերի քննությունը պարտադիր է (Սահմանադրության 61-րդ հոդված):  
 \*\* Դիմումները եղել են և Նախագահի և վարչապետի կողմից:  
 \*\*\* Կառավարություն իրավասու չէ դիմելու, դիմել կարող է միայն վարչապետը:

**Հ Ա Վ Ե Լ Վ Ա Տ - 2**

**«ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՈՒ ԻՐԱՎԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ  
ՄՏՔԻ ԷՉԵՐՈՒՄ**

Հավելվածը կազմվել է «Հայ դասական մատենագրություն» [www.digilib.am](http://www.digilib.am), version 1.0 նյութերի հիման վրա: Այն ներառում է ոչ թե ամբողջական ու ավարտուն մատենագրություն, այլ նպատակ ենք ունեցել վերոշարադրյալ վերլուծությունից զատ ներկայացնել նաև հիշատակությունների առանձին բնորոշ օրինակներ՝ ընդգծելու համար, որ այդ հասկացությունը ժամանակին օգտագործվել է ոչ թե որպես փոխառված արժեք, այլ, տարաբնույթ իմաստներ ներառելով հանդերձ, հայ իրականության մեջ այն ընկալվել է «սահմանելու», եզրագծային «սահման դնելու», «սահմանադրելու» ենթատեքստում: Բնականաբար, առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն հիշատակումները, որոնք առնչվում են իրավական կանոնակարգմանը եւ հարաբերությունների «սահմանադրմանը»: Այս առումով կցանկանայինք հատկապես առանձնացնել Մովսես Խորենացու հիշատակությունը, որում նա «Արշակի թագավորության երրորդ տարում Հայոց եպիսկոպոսապետ դարձած...»Ներսես Մեծին (Սուրբ Ներսես, Հայոց կաթողիկոս, 353-373թթ.) է վերագրում «կանոնական սահմանադրությամբ» երկրում «ողորմածության հաստատումը» եւ «անգթության արմատախիլ անելը»: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է 365 թ. հրավիրված Աշտիշատի ժողովին: Այս ժողովի արդյունքները լավագույնս է բնորոշել Փավստոս Բուզանդը՝ «Կարգեցին, կազմեցին, կանոնեցին, օրհնեցին» («Ի ժողով հա-

ւանութիւնս եկեալ ամենեցուն, եւ խորհուրդ բարեաց ի մէջ արկանէին, կատարել անդ զաշխարհական կարգս եկեղեցւոյն եւ ժողովն հաւատոցն հաւասարութեան: Յայնմ ժամանակի կարգեցին կազմեցին կանոնեցին յարինեցին, եւ արարին զամենայն ժողովուրդս երկրին Հայոց իբրեւ կարգ միաբանութեան վանականաց համաշխարհի...» - Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, գլ. Դ): Նշված բոլոր հասկացությունները հայ միջնադարյան հուշամատյաններում բնորոշել են իրավաստեղծ գործունեության տեսակներ, հարաբերությունների կանոնակարգում, վարքագծի կանոնների սահմանում: Սակայն առանձնահատուկ դեր են ունեցել ազգային-եկեղեցական ժողովները, որոնց կողմից ընդունված կանոնները համընդգրկուն բնույթ ու գերակայող իրավական ուժ են ունեցել: Ուստի պատահական չէ, որ «Հայկազյան լեզվի նոր բառագրքում» (Վենետիկ, 1837թ.) «սահմանադրություն» հասկացությունը բնորոշելիս հղումներ են արվում կանոնական սահմանադրություններին:

### **ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ - «Հայոց պատմություն» - V դար**

«Յաղագս սրբոյն Ներսիսի եւ բարեկարգութեանն որ ի նմանէ:

Յերրորդ ամի թագաւորութեանն Արշակայ եկաց եպիսկոպոսապետ Հայոց մեծն Ներսէս, որդի Աթանազիւնեայ, որդւոյ Յուկան, որդւոյ Վրթանայ, որդւոյ սրբոյն Գրիգորի: Եւ ի Բիւզանդիոյ դարձեալ ի Կեսարիայ, եւ եկեալ ի Հայս՝ զամենայն կարգս ուղղութեան հարցն իւրոց նորոգեաց, այլ եւ առաւել եւս. քանզի զբարեկարգութիւնն գոր ետես ի Յունաց աշխարհին, մանաւանդ ի թագաւորեալ քաղաքին, ի սմա նկարագրէ: Ժողով արարեալ եպիսկոպոսաց եւ համարէն աշխարհականաւք, **կանոնական սահմանադրութեամբ** հաստատեաց զողորմածութիւն, իլելով եւ զանգթութեանն արմատ, որ բնաբար սովորութեամբ էր յերկրիս մերում»:

### **ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ - «Վարք եւ պատմութիւն սրբոյն Գրիգորի» - V դար**

«Եւ յետ այսորիկ քրիստոսագունդ առաքելոցն, շնորհակարգութեամբ Հոգւոյն սրբոյ գումարելոցն ընդ ամենայն կողմանս որ ի ներքոյ երկնից՝ ամենայն նշանաւք եւ արուեստիւք եւ շնորհագործ զարութեամբ ազդ արարեալ ըստ իւրաքանչիւր մասին, եւ զբանն կենաց հնչեցուցեալ, եւ միանգամայն քրիստոսածանաւթս եւ յարութիւնական յուսովն ծաղկեցուցեալ. քանզի ի նոցուն իսկ ի շնորհագարդ բանիցն եւ ի գործոց յայտնի է իւրաքանչիւր **սահմանադրութիւն** հրամանաւ Հոգւոյն սրբոյ վիճակեալ»:

«Չի արար ի միոջէ արեւնէ զամենայն ազգս մարդկան՝ բնակել ի վերայ երեսաց երկրի. եւ հաստատեաց կարգեալ ժամանակս եւ **սահմանադրութիւնս** բնակութեան նոցա՝ խնդրել զԱստուած, զի թերեւս զննիցեն զնա եւ գտանիցեն. զի աներեւոյթք նորա ի սկզբանէ աշխարհի՝ յարարածոցս իմացեալ տեսանին. զի Տէր արժանաւորաց իւրոց մերձաւոր է»:

### **ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ - «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԴԵՎՈՎՆ ՄԵԾ» - VII դար**

«...Չորոյ ձախողակի յորդորումն զիտեցեալ Բնդիոյս հայրապետն Հռովմայ, հրամայէ նմայ առնել ժողով, հաստատել զհայհոյութիւն Քաղկեդովնի ժողովոյն, եւ զուրացութիւն տումարին Դետնի: Իսկ նորա հրամայեալ լինել ժողով ի Կոստանդնուպա[ւ]ղիս, որ ասի հինգերորդ ժողով. եւ ետ հրաման, թե եպիսկոպոս կամ հայրապետ՝ որ ոչ քարոզիցէ զժողովն Քաղկեդովնի՝ ընդ սուրբ ժողովս, ելցէ ի պատուոյ իւրմէ: Յայնժամ տէրն Անթիմոս՝ Կոստանդնուպալուսի եպիսկոպոս՝ բազում եպիսկոպոսաւք յանձն առնոյր լինել հալածական վասն ճշմարտութեանն. ընդ որս էր եւ Յուդիանէ եպիսկոպոս Ադիկառնասու Կիւպրացոց քաղաքի, որ ոչ հնազանդեցաւ պիղծ **սահմանադրութեան** ժողովոյն Քաղկեդովնի, [...] Եւ որք ոչն հնազանդեցան հրամանի թագաւո-

րին՝ ընդունել զաղմկեալ ժողովոյն **սահմանադրութիւնս**, եւ հաւանեալ նորոգածեութեանն տաւնից եկեղեցական կարգաց, զոր հաստատեաց անաւրէնն Յուստիանոս՝ ժողովեցելովքն ի Կոստանդնուպաւոյիս, ի հինգերորդ ժողովին. զար առաքեալ՝ հեղձունս արեանց արար ի տեղիս տեղիս»:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԻՉՆԵՑԻ** - «Ատենաբանութիւն» (ԵՐԱՆԵԼ-ԻՈՅ ՏԵԱՌՆ ՅՈՎԱՆԻՍԻ ՓԻՂՈՍՈՓԱՅԻ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԱՌԱՋԻՆ ԿԵՆՑԱՂՆ ԻԻՐ ԵՒ Ի ԳԱԼՆ ՅԱԹՈՌ-ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՍՏԱՏԵԼ ԲԱԶՍԱՊԱՏԻԿ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԿԱՐԳՍ ԵՒ ԿՐՕՆՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ) - **VIII դար**

«Վասն զի եւ չէ իսկ առաջիկայս մեզ գտեղծեալն հակաճանութեամբ տարօրէն սովորութիւն, այլ կանոնական **սահմանադրութեամբ** ըստ իւրաքանչիւր գլխոց՝ զիմնացեալ զանկարգութիւնն քակել եւ՝ ի բաց հանել յեկեղեցոյ Աստուծոյ, եւ փոխանակնոցա զբարեվայելոյսն եւ զօգտակարագոյնսն՝ ի տեղուջն արձանացուցանել»:

**ՄՈՎՍԷՍ ԳԱՍԽՈՒՐԱՆՑԻ** - «ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ՍԱՆՆ ԱՐԾՐՈՒՆԵԱՅ» - **IX դար**

«Արդ՝ որք երկիւղիւն Աստուծոյ մերոյ **սահմանադրութեանս** կատարիչք լինին, ի Սրբոյ երրորդութենէ օրհնեալք լիցին եւ յամենայն ծառայից Աստուծոյ ուղղափառաց. իսկ եթէ ոք ընդդիմացեալ թիրեացի ի ճշմարտութենէ աստի, ինքն տացէ Աստուծոյ պատասխանի՝ ոյք եւ իցեն»:

«Որոյ գայն ահա տեսեալ Սրբոյն՝ հմտաւորեալ թէ ի վերուստ է ազդեցութիւնն, յայտնէ նմա զխորհուրդն, եւ գնոյն ինքն զկենսատու խաչն ցուցանէ եւ երդմնապատիժ **սահմանադրութեամբ** պատուէր տայր նմա մի՛ ումեք պատմել»:

**ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ** - «ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ՍԱՆՆ ԱՐԾՐՈՒՆԵԱՅ» - **X դար**

«Բայց Աշոտ գնացեալ տալ պատերազմ ընդ ծովեզրեցիսն որք Ութմանիկ կոչին, որք ամրանային ի յԱմիւկ անկասկածելի քարանձաւին. վասն զի ըստ Պտղոմեայ եւ Աղէքսանդրի **սահմանադրութեանն**, կամ թէ մեր Արտաշէսի որդոյ Սանատրկոյ՝ ի Վասպուրական գաւառացն համար թուեալ է գաւառն այն, զոր ճամոյ յառաջ հանեալ էր բռնակալութեանն Տաճկաց ի Վասպուրական պետութենէ»:

«Բայց զի՞նչ աստանօր ինձ ասելի է, զի թէպէտ դառնալով դարձան յայտնապէս յերկրպագութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ այլ զկանոնական **սահմանադրութիւնսն** ոչ բերելով ուղղակի, ոչ միայն Աշոտ, այլ եւ ամենայն իշխանքն Հայոց, որք գերադարձքն եղեն. զուրացութեանն ի բաց դնելով զվատթարութիւն, սակայն **կանոնական սահմանադրութեանն** արտաքոյ մնացեալ, գայթ ի գայթս զքրիստոնէութեանն վարս բերելով անառակութեամբք եւ արբեցութեամբք, խառն անկողնօք եւ պղծութեամբք, աղտապիղծ սարսափելի եւ գարշելի խառնակութեամբ արուսպղծութեամբք, որ անցուցանէ զանցանէ զանասնական խառնակութեամբքն երիբովեան եւ սողոմական լրբութեամբք, անամօթաբար այր զարամբք բորբոքեալ, դեզաղէզ զիրացանն բերելով յերկնուստ զանգրաւ կիզումնն, անցուցեալ զանցուցեալ զաստակչական կործանմանն ջրհեղեղին»:

**ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ** - «ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ԱՐԻՍՏԱԿԻՍԻ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՎԱՍՆ ԱՆՑԻՑՆ ԱՆՑԵԼՈՅ Ի ՅԱՅԼԱՍԵՌՆ ԱԶԳԱՅ ՈՐՔ ՇՈՒՐՋ ԶՍԵԻՔ ԵՆ» - **XI դար**

«...Քանզի յոյժ հաւանեալ էր քաղկեդոնական **սահմանադրութեանն**՝ աստի գոլով ամենայն ուղղափառ հաւատոց»:

**ՈՒԽՏԱՆԷՍ** - «Պատմություն Հայոց» (ՈՒԽՏԱՆԷՍ ԵՊԻՍ-ԿՈՊՈՍ, ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱՅ ԵՒ ԹԱԳԱԻՌՐԱՅ ՀԱՅՈՑ) - **XI դար**

«...Յետ Տակիտոսի թագաորէ Յռորոս. եւ բաժանեն զաշխարհս ընդ միմեանս Յռորոս եւ Արտաշիւր **սահմանադրութեամբ** խաղաղութիւն ընդ միմեանս առնելով»:

«...Վասնզի զայս այսպէս ասեն յաւանդութենէ ծերոց, եթէ ի ժամանակս Արրահամո Հայոց Կաթողիկոսի իբրեւ եկաց նա յաթոռ Հայրապետութեան իւրոյ, եկին առ նա Կաթողիկոսն Վրաց եւ Աղուանից. քանզի յայնժամ էին ի պատիւ Արք Եպիսկոպոսութեան աթոռոյ սրբոյն Գրիգորի, եւ ըստ առաջնոց Հարցն **սահմանադրութեան** եւ սովորութեան եկին առ Արրահամ յառաջին ամին Հայրապետութեան իւրոյ ի սէր եւ ի հնազանդութիւն»:

**ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ** - ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ, ԲԱՆԼԴ, **XI դար**

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՅ ԽԱԽՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա

«Արդ, առ այսոքիկ թշուառացեալ շնչոյս իմոյ իղձք եւ առ քեզ դաւանութիւնք յարմարականք, որ բովանդակես բանիւ զամենայն, Աստուած, զոր ի նախնին ճառեալ՝ եւ յերկրորդումս ցուցից:

Իսկ յանդիմանութիւնս գրաբանականս՝ ի կոյտս բազմութեան ազգաց եւ թարգմանութիւնս ժողովրդոց, զայս արգահատութիւնս մաղթողականս նուիրեցի, զոր ներքնաշարեալքդ **սահմանադրեն** գոհաբանութիւնք»:

**ՄԽԻԹԱՐ ԳՈՇ** - «ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ» - **XII դար**

«Ապա եթէ գիտ դիպի, որ իրիցուն ի ժառանգութիւն բարձեալ իցէ, ժառանգութիւն սրբոյ աթոռոյն է, զոր վարդապետն կամի՝ ժառանգեցուցէ, իշխանութիւն է նմա: Եւ այս **սահմանադրութիւն** Հերակղայ եւ Խոսրովայ ժամանակաւք եւ այսր լիցի: Բայց յառաջ քան զնոցա ժամանակն որ ինչ լեալ է, մի՛ շարժեսցի, զի չգիտէ ինչ հաստատութեամբ, որպէս կալեալ է՝ կալցին: Բայց նոցա ժամանակացն եւ յայսմ հետէ եւ յալիտեան այս գիր հաստատուն կացցէ եւ մի՛ որ անցցէ ըստ այսմ սահմանաւ» (Մխիթար Գոշ. Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի, Երեւան, 1975, էջ 119):

«Չի թէ աստուածային բերանն անիծանէ զմարդիկ, որ փոխեն զընկերի եղեալ սահմանս, իսկ զԱրարչին բոլորեցուն **զսահմանադրութիւն** եւ զպատուէր առ ոտն հարու եւ արհամարհողք լեալք, մեծի բարկութեան ճանաչելի է, այլ վասն նոցա եւ այլք» (նույն տեղում, էջ 122):

**ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՅԻ** - «ՀԱԽԱԲՈՒՄՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» - **XIII դար** - (ՎԱՐԴԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԱԽԱԲՈՒՄՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ)

«...Գիտեա դու կանխագոյն, զի եկեալ եմ յօրհնել զեկեղեցիդ ըստ իմում օրինացս՝ Քաղկեդոնի ժողովոյն **սահմանադրութեամբ**...»:

**ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՅԻ** - «Ճառք, ներբողեանք» - **XIII դար**. «...Նոյնպէս եւ զսոսկալի խորհուրդ պատարագին անխմոր եւ անջուր հաստատեր ըստ **առաքելական սահմանադրութեան**, եւ պաշտելոյն սրբոյն Գրիգորի եւ որդւոց իւրոց, մինչեւ ի պղտորումն Եզրայ անմտութեան...»:

**ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉ - ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ /123ա/- XIII դար**

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽՐՈՆԻԿՈՆԻՆ ԶՈՐ ՆԸԲԱՍՏ ԾԱՌԱՅՍ ԶՐԻՍՏՈՍԻ ՀԵԹՈՒՄՍ ՏԷՐ ԿՈՒՌԻԿԱԿՄՈՅ ՓՈԽԵՅԻ Ի ՓՈԱՆԳ ԳՐՈՅ Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՉԽԵ (=1296)

«ՌՃԻԹ (1129) Եղեւ պապ ի Հռոմ Ինասանք Երկրորդ: Սա աւար ընթիանրական ժողով յեկեղեցի սուրբ փրկչին եւ պատժեաց զՓէռ Լէաւնն եւ զիր սահմանադրութիւնն, կացեալ ամս ԺԳ (13), ամիսս Ը (8) եւ ատուս Ը (8)»:

**ՍՄՔԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ - ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ, ԻԳ- XIII դար**

«Եւ տեսէք՝ թէ քանի՞ պնդանք կայ հայրապետացն եւ այլ դատաւորաց եկեղեցոյն, որ վասն կաշառոյ չփոխեն զԱստուծոյ իրավունքն ի ծուռն: Եւ ոչ ամենեւին ի սահմանադրութեանց եկեղեցոյ՝ եւ ոչ ի սահմանաց թեմերոց իշխէ՛ք փոփոխել բնաւ առանց կաթողիկոսի՝ որ մեծ ժողովի տեսով այնէ»:

**ՆԵՐՍԷՍ ՊԱԼԻԱՆԵՆՅ - ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ /131ա/ ԻԾ-ԽԱՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԹԱԳԱԿՈՐՔ ՀԱՅՈՑ- XIV դար**

«Վաղարշակս այս էր այր քաչ եւ խոհեմ. եւ սահմանեաց կարգս եւ դասապետութիւնս կենցաղականս որ եւ նախարարս եւ նահապետութիւնս ի պալատն արքունի. այլ եւ յաշխարհին Հայոց կարգեաց նայել այլ բազում իրս բարեձեւութիւնս յօրինուածս տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաս[տ]ակերտաց, զօրաց, կողմնակալաց եւ այլոց այսպիսի պիտոյից յօրինուածոց եւ սահմանադրութեանց, ընդ որս սակաւութ անցցուք բացայ յայտմամբ»:

**ՅԱԿՈՔ ՂՐԻՄԵՅԻ - ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՒՍԱՐԻ - XV դար**

«...Նախ գիտել պարտ է, զի ի չորրորդ ատուր ընդ արշալույսն ստեղծագործեցաւ Արեգակն եւ եղաւ յառաջին շաւիղն ստեղծման՝ ի նոյն կէտն եւ ի նոյն բուլէն, որ մինչեւ ցայսօր ծագէ ըստ սահմանադրութեան արարչին»:

**ՅԱԿՈՔ ՂՐԻՄԵՅԻ - ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՒՍԱՐԻ, ԵԹԷ ԿԱՄԻՅԻՍ ԳԻՏԵԼ, ԹԷ ԱՐԵԳԱԿՆ ՅՈՐՈՒՄ ԿԻՏԻ Է- XV դար**

«Գիտելի է, զի կէտ՝ ձայնս հոմանուն է, քանզի ի վերայ բազմաց բերի: Նախ առաջին՝ կէտ ամենայն արարածոցս Աստուած է, որ ի մնանէ առին զսկիզբն լինելութեան, զի ոչ որ յառաջ քան զնա: Ըստ այնմ՝ «ես եմ առաջին եւ ես եմ վերջին»: Երկրորդ՝ կէտ առնու եւ ի վերայ յաւիտենից, զի յիրաքանչիւր յաւիտեան ունի կէտ զսկիզբն եւ զվախճանն իւր: Երրորդ՝ ասի կէտ եւ վախճան մարդոյն, որպէս ասենք եթէ ժամանեաց ի կէտ կոչմանն իւրոյ: Չորրորդ՝ կոչի կէտ վայրկեան եւ սուղ ժամանակն, որպէս ասէ Յոր վասն հեշտասիրացն՝ «կատարեն ի բարութեան» զկեանս իրեանց եւ ի նոյն կէտն իջանեն ի դժոխս: Հինգերորդ՝ կէտ է եւ դրութիւն օրինացն, որպէս Ադամայ հրամայեաց չուտել ի պտոյն մինչեւ ի կէտ սահմանադրութեան իւրոյ, որչափ որ ինքն կամենայր [...]

**ԱՌԱՔԵԼ ԳԱԻՐԻԺԵՅԻ - ԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ - XVII դար**

**ԳԼՈՒԽ ԻԵ**

«Եւ ի վաղնջուց խափանեալ վանօրայք լցան արեղայիւք, եւ գիւղք, եւ քաղաքք երիցամբք, եւ դեռ եւս օր յաւուր աճէ նորին սահմանադրութեամբն»:

«Եւ այնուհետեւ ջերմագոյն սիրելիք եւ վշտակից եղբարք լեալ՝ կան ի սահմանադրութիւնս հայրապետին Փիլիպպոսի, գեղեցիկ սիրով եւ միաբանութեամբ, շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ օրինելոյն»:

**ԳԼՈՒԽ ԻԳ**

«Իսկ վարդապետն բնաւ ոչինչ առնէր փոյթ զայնմանէ, վասն զի յոյս նորա հաստատուն էր ի Տէր, այլ հանապազ շրջէր, եւ քարոզէր, եւ շինէր զեկեղեցիս, եւ յարդարէր զամենեսեան ուղիղ կարգօք եւ **սահմանադրութեամբք**»:

**ԳԼՈՒԽ ԻԴ**

«Իսկ քրիստոնեայք վերին աշխարհիս տեսնելով զճշմարիտ քարոզութիւն նոցա, զի վկայէին բանից եւ քարոզութեան նոցա եւ գործք նոցա, ամենեքեան դարձան ի թիւր ճանապարհաց իւրեանց՝ եւ հնազանդեցան կարգաց եւ **սահմանադրութեան** նոցա, իշխանք եւ եպիսկոպոսունք, եւ երիցունք, եւ արք նշանաւորք ռամկօք ամենիւք»:

**ԳՐԻԳՈՐ ԴԱՐԱՆԱՂՅԻ - «ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ» (ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿԱՍՏԻԱՅ-ԻՈՅ ԿԱՍ ԴԱՐԱՆԱՂՅԻՈՅ) - XVII դար**

«Յետ ժամանակի գնացեալ ապա Մօսէս վարդապետն, որ յետ ժամանակի կաթողիկոս եղեւ, եւ կացին ի միասին բազում ամս եւ եղեն լուսաւորիչք Վերին Աշխարհացն Հայոց եւ զարդք եւ զարդարիչք անապատաւորաց՝ արանց եւ կանանց եւ ուղղիչք ամենայն **սահմանադրութեանց**»:

«Եւ յետ այս ջանիցս վերայ, սատանայ առեալ զիւր արքանեակսն՝ զսուտ անուն կաթողիկոսն՝ զՄելքիսն եւ ոչ Սեդեկն յարոյց ի վերայ սրբոցն Աստուծոյ, որ բազում փորձութիւնս անցոյց ընդ նոսա, որպէս զուղիսաջուրս՝ վասն չար թուելոյ նոցա վարուցն եւ առաքինութեանցն եւ **սահմանադրութեանցն**, զի խեթիւ հայէին ընդ արդարքն՝ սպանանել զնոսա. այլ Տէր ոչ ետ թոյլ ի ձեռս նոցա, որ ոչ իսպառ դատապարտեցին զնոսա»:

«Սա էր յերկրէն Բաղիշոյ ... եւ էր յոյժ հեղ եւ խոնարհ սրտիւք եւ զծուծ զգեստիւ, եւ սա հետիոտս շրջելով որպէս զՆերսէս Հետե-

ւակն եւ գործովն բարի եւ վարունք սուրբ եւ առաքինասէր, ողորմած, գթած եւ խնամատար եւ մխիթարիչ ամենայն վշտացելոց: Եւ եղեւ օր մի, զի ուղի անկեալ գնաց յԻտալիա ի մեծն Հռովմ՝ ի տեսութիւն եւ յողջոյն տալ եւ համբոյր սուրբ մարմնոց առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի, եւ հանդիպեալ մեծ փափին հայրապետին Հռովմայ եւ զառաջինն յոյժ ընկալեալ եղեւ ի նոցանէն եւ յետոյ անարգեալ եղեւ՝ հալածեալ ի նոցանէ: Այսպիսի չար հանճարօք, որ հարցաքնին առնելով վասն հաւատոց եւ կարգաց **սահմանադրութեանցն**, նա՛ զճշմարտութեանց բուռն հարկանելով՝ զառաքելական քարոզութեանցն ի վերայ վիմի հաւատոյն եւ երից ժողովոց սուրբ հարցն կանոնացն զեղեալ սահման հաւատոցն եւ մերոյ Սուրբ Լուսաւորչին **սահմանադրութեանցն** առնելով պատասխանիս: Եւ ոչ հաւանեալ բնաւին անօրէն ժողովոյն Քաղկեդոնի, եւ ընդ իսաւել նորա բերին մեծ տուժարագիր մի հաւատոց **սահմանադրութեանց** քաղկեդոնական կանոնաց, զրեալ եւ կնքեալ ձեռամբ յանուն Ազարիա կաթողիկոսին՝ հաճեալ եւ հաւանեալ ապականչի տուժարին Լեւոնի եւ Մարկիանոսի եւ Պոխկերի պղծոյն եւ եօթն ժողովոց նոցին, եւ ետուն ի ձեռս վարդապետին»:

**ԵՐԵՄԻԱ ՔԵՕՍԻԻՐՃԵԱՆ - ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻ ՔԵՕՍԻԻՐՃԵԱՆԻ - XVII դար**

«Անէծք էր ի վերայ նոցա առաքելոց եւ հայրապետաց եւ Սուրբ Լուսաւորչին մերոյ, որք երեսփոխան գոլով Քրիստոսի՝ **սահմանադրեցին** կարգս ուղիղս կաթողիկէ եկեղեցոյ»:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԱՆՆԱ - ԳԻՐՔ Պատմութեան Սրբոյ եւ մեծի քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս. եւ սրբոց Տնօրինականաց Տեղեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի - XVIII դար**

«Եւ յետոյ կրկին զիրամայեցեալ կանոնադրութիւնն իւր՝ գրով եւ իւր կնքովն **սահմանադրեաց**. որք են այսոքիկ»:



**ՄԻՔԱՅԷԼ ՉԱՄՉԵԱՆՑ** - ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Ի ՍԿՁ-  
ԲԱՆԷ ԱՇԵԱՐՀԻ ՄԻՆՉԵԻ ՑԱՄ ՏԵԱՈՆ 1784. ԸՍՏ ԱԲԱՆ-  
ԳԵԼՈՅ ԱՅԼԵԲԱՅԼ ՄԱՏԵՆԱԳՐԱՅ - Յօրինեալ ՚ի Հայր Մի-  
քայէլ Վարդապետէ Չամչեանց Կոստանդինուպօլսեցոյ, յաշա-  
կերտէ ամենապատիւ Տեառն Մխիթարայ Մեծի աբբայի, Յամի  
Տեառն. 1786. յապրիլի 16 - **XVIII դար**

«...Առաջի սոցա ամենեցուն ընթերցեալ եղել ՚ի ժողովի անդ  
**սահմանադրութիւն** ժողովոյն Սոյ. եւ հարք ժողովոյն վերստին  
քննեալ զամենայն բանս այնր **սահմանադրութեան** եւ զնամակ  
Գրիգորի Անաւարգեցոյ, ընկալան եւ նորոգ հաստատեցին  
զայնս. եւ բացայայտագոյն եւս գրեցին զամենայն ՚ի մագաղաթի.  
որում եւ ստորագրեցին ամենեքեան՝ եւս եւ նոքին իշխանքն. որ-  
պէս դնի ՚ի հարազատ պատմութեան այսր ժողովոյ»:

«...Ապա զկնի բազմօրեայ քննութեան եւ խօսակից լինելոյ  
ընդ միմեանս, եւ յետ ոչ սակաւ տեսութեան վկայութեանց աս-  
տուածային Գրոց՝ եւ սրբոց հարց եւ վարդապետաց եկեղեցոյ,  
հարկաւոր համարեցաք կարճ ՚ի կարճոյ աւանդել ՚ի ձեռն այսր  
**սահմանադրութեան** զճշմարտութիւն ուղղափառ հաւատոյ՝ միա-  
ձայնութեամբ սրբոյ ժողովոյս Փլորենտիոյ, եւ հաւանութեամբ  
նոյն հրեշտակաց. զի մի՞ յայսմ հետէ տարակոյս ինչ անկցի ՚ի  
հայս վասն ճշմարտութեան հաւատոյ, այլ՝ զնոյն ամենեւին դա-  
ւանեցին ընդ առաքելական Աթոռոյ, եւ զի այս միաբանութիւն  
միշտ հաստատուն եւ անկասկածելի մնացէ»:

**ԱՐԲԱՀԱՄ ԿՐԵՏԱՅԻ** - ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, Գլուխ քառասուն  
եւ վեց- **XVIII դար**

«Յաղագս տուային զոր ասեն չաուշք, յորժամ ելանէ Վալի-  
նամաքն ի դիւան եւ յորժամ ձիաւորի եւ վասն զօրացն որքանու-  
թեան Իսկ **սահմանադրութիւն** եւ կարգ զօրաց, եւ արարողութիւնք  
սպասաւորացն են այսպէս»:

**ԱՐԲԱՀԱՄ ԿՐԵՏԱՅԻ** - ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, Գլուխ ութետաս-  
ներորդ- **XVIII դար**

«Յաղագս յանդիման լինելոյ մեզ առաջի Խանին ի Թիֆլիզ, եւ  
մխիթարելոյ զմեզ եւ յանձնելոյ զիս եւ զսուրբ Էջմիածին Երես-  
նայ խանին, շնորհելով եւ զհարկաւոր քախամներն Եւ յորժամ  
յանդիման եղաք Խանին, յոյժ ուրախացաւ եւ բազում բանս մխի-  
թարականս խօսեցաւ ընդ մեզ եւ՝ պատուէրս շահեկանս եւ յանձ-  
նարարականս: Եւ քաղաքական օրինադրութիւն եւ **սահմանադ-  
րութիւն** ասաց ի լսելիս ամենեցուն»:

### ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում «սահմա-  
նադրություն» հասկացության տարաբնույթ դրսևորումները Հով-  
հան Իմաստասեր Օձնեցու Կանոնագրքում: Վազգեն Հակոբյա-  
նի աշխատասիրությամբ հրատարակված «Կանոնագիրք Հա-  
յոց»-ի Ա եւ Բ հատորների ուսումնասիրությունը վկայում է, որ  
տարբեր կանոնների առնչությամբ առնվազն 15 անգամ հանդի-  
պում ենք «սահմանադրություն» հասկացությանը: Դրանք ներ-  
կայացնում ենք բնագրով՝ նկատի ունենալով, որ դրանցում ի մի  
են բերված մի քանի դարեր ընդգրկող հասկացութային ընդհան-  
րացումները:

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ (Աշխատասիրությամբ Վազգեն  
Հակոբյանի, **հ. Ա, Երևան, 1964**)

«Սահմանք եւ կանոնք որ եղան ի սուրբ կաթողիկէ եկեղեցոց  
ի մեծ ժողովն Նիկիայ, ուր էին գումարեալ միաժողով ըստ հրա-  
մանի մեծի աստուածընկալ Կոստանդինոսի կայսեր, զի շնոր-  
հաւք սուրբ Հոգւոյն զեղեալ սիրտ նորա հանդերձ սուրբ հայրա-  
պետաւքն եւ անդէն հասանէին ի գումարութիւն եւ ի **սահմանադ-  
րութիւն** գլխաւորք՝ վարդապետք, առաջնորդք, արեւնսուտյցք

կարգի ժողովրդեան ՅԺԸ եպիսկոպոսք, որով լուացին, սրբեցին ի նեխ եւ ի փտեալ վիրացն եւ թեթեացուցին ի ծանրաբեռն մեղացն ի ձեռն ապաշխարութեան բազմադիմի եւ ազգի ազգի մեղացն գործելոց»:- (ԿԱՆՈՆՔ ՆԻԿԻԱԿԱՆ), էջ 115-116:

«Եւ ահա անդէն հասանէաք ի միաբանութիւն **սահմանադրութեանն** յեկեղեցին Գանգրացոց, որոց անուանքն են այսոքիկ՝ Եւսեբիոս, Հեղիանոս, Եւգենիոս, Ուղիպոս, Բիւթանիոս, սուրբն Գրիգորիոս, Եղաղիոս, Հիւպատոս, Պրորեսիոս, Բասիղիոս, Բաստս, Եւգենիոս, Փիղետոն, Հերակղիոս, Պապոս. որք ի կողմանս արեւմտից, արեւելից, հիւսիսոյ եւ հարաւոյ, որք ժողովեցան եւ եկին ի հրամանէ Հոգւոյն սրբոյ ի ժողովն, որ ժողովեցան եւ եկին ի Գանգրա եւ հաստատեցին զկանոն Նիկիական մեծի ժողովոյն եւ առաքեցին ի շինած եւ ի լրումն եկեղեցւոյ սրբոյ. ողջ լերութ ի Տէր»:- (ԿԱՆՈՆՔ ԳԱՆԳՐԱՅ), էջ 191-192:

«Ապա եթէ որ դարձեալ աղաչեսցէ եւ միւս անգամ զիրն իւր լսելի առնել եւ իւրոյ խնդրուածին զՀռոմայ եպիսկոպոսն շարժել՝ յիւրմէ կողմանէ զերիցունս առաքեսցէ զիշխանութեան եպիսկոպոսութեան իւրոյ, զոր բարութ գոլ փորձեսցէ, սահմանեսցէ, թէ պարտ է առաքել, որ ընդ եպիսկոպոսացն դատն ասիցէ, ունելով զիշխանութիւն նորա, վասն որոյ առաքեցան, եւ այս խնդրելի է. ապա թէ բովանդակ կարծիցէ առ ի յիրին զհտութիւն եւ **սահմանադրութիւն**, զի եպիսկոպոսն արասցէ, զոր ինչ նորա իմաստնագար խորհրդոցն բարութք թուեսցի»:- (ԿԱՆՈՆՔ ՍԱՐԳԻՒԿԵԱՅ), էջ 256-257:

«Եթէ որ ապականեսցէ զեզ յանկարծարէն՝ մահապարտութեան դատաստան ընկալցի, բայց պարտ է հաւաստեալ եւ ոչ կերպարանաւք ի վերայ հասանել քննութեամբ եղելոցն եւ ի մէջ ածել զկինն եւ տեսանել աւուրքք զսաղմնն թէ աննկար իցէ թէ նկարեալ. այնպիսոյն երկրորդ մահ համարեալ լիցի. պարտ է այնպիսոյն մինչեւ ցար մահուան իւրոյ կալ յապաշխարութեան. բայց սահմանելի է ի վերայ այնպիսոյն կարճել զժամանակն, քանզի **սահմանադրութիւն** ոչ եթէ ժամանակի յովութիւն է կա-

տարեալ ապաշխարութիւն, այլ բարուցն ուղղութիւն ի զղջումն եկելոցն»:- (ԿԱՆՈՆՔ ԲԱՐՍՂԻ ԿԵՍԱՐԱՅԻՈՅ), էջ 336:

«Վասն երիցանց, որ յանարժան եւ յանպատեհ ամուսնութիւնս անկեալ են, պարտ է ի վերայ այնպիսեացն **սահմանադրութիւնս** առնել, այնպիսի ինչ աթոռակցութեան արժանաւորս առնել ընդ այլսն միայն»:- (ԿԱՆՈՆՔ ԲԱՐՍՂԻ ԿԵՍԱՐԱՅԻՈՅ), էջ 344-345:

«ԽԴ. Վասն **սահմանադրութեան** կանոնաց»- (ԿԱՆՈՆՔ ՍԱՀԱԿԱՅ ՊԱՐԹԵԻԻ), էջ 366:

«Քանզի պարտ եւ պատշաճ է յամենայն տարուջ, յորժամ ժողովքն կատարիցին, ըստ կանոնական **սահմանադրութեանց** շրջել քորեպիսկոպոսաց ի հաւատացեալ նոցա եկեղեցիսն եւ քննութիւն առնել վարուց եւ կարգի պաշտամանն, թէ ո՞րպէս ունիցին, եւ համարս պահանջել յերիցանց եւ ի սարկաւազաց ժամուցն քարոզութեանցն եւ աղաւթիցն մատուցման եւ զկնքատուացն մի ըստ միոջէ յարմարումն կատարելութեան, եւ զպատարագամատուցացն սարսափելի խորհրդոյն պատշաճող սպասահարկութիւն, զի փոյթեռանդն յաւժարութեամբ եւ երկիւղիւ անդրդուելի պահեսցեն. վասն որոյ թէ հեղգայցեմք՝ համարս պահանջելոց ենք, եւ եթէ որ տարտամ եւ յետնեալ գտանիցի ի սքանչելի ճառեցեալս աւանդութեանց, կրեսցէ պատուհաս սաստիկ, ո՞ որ եւ իցէ, եւ ի պատուոյն իւրմէ զրկեալ եղիցի՝ մինչեւ հաշտեսցի ընդ նմա վարդապետն»- (ԿԱՆՈՆՔ ՍԱՀԱԿԱՅ ՊԱՐԹԵԻԻ), էջ 368:

«Նոյնպէս եւ ժողովրդանոցք եւ մատրունք, զոր սովորութիւն եղի ի վաղնջուց հետէ կոչել եկեղեցիս, թէպէտ եւ բազում է ըստ գիւղից գիւղից եւ քաղաքաց քաղաքաց, սակայն ոչ են բազումք ի բազումս բաժանեալք, այլ մի եւ նոյն խորհուրդ կատարի յամենեսեան. եւ ըստ խորհրդոյն ոչ ասի ոմն մեծ ի նոսա եւ ոմն փոքր, այլ ըստ աշտիճանի իշխանութեան եւ այսպէս յարմարեալ, եւ բազում փութով պարտ է ի նմին մշտնջենաւորել. քանզի ոչ եթէ ի

մարդկային կարծեաց է ճառեցեալ **սահմանադրութիւնս**, այլ յաստուածաշունչ գրոց երկրորդեցաւ ի մէնջ բացորոշաբար, եւ որ հակառակն կան՝ ոչ մարդկան, այլ Աստուծոյ հրամանին կան հակառակ. եւ որ կամինն կալ հակառակ՝ անձանց դատաստանս ընդունին» - (ԿԱՆՈՆՔ ՍԱՀԱԿԱՅ ՊԱՐԹԵԻԻ), էջ 396:

«Այս **սահմանադրութիւն** կարգաց գրեցաւ հրամանաւ երանելւոյն Սահակայ մեծ հայրապետի Հայաստան աշխարհի, ընկալելալ ի քաջ նահատակէն՝ ի տեսունէն Գրիգորէ՝ թարգմանեցաւ միայն յունէ ի հայ:

Արդ՝ եթէ որ անհնազանդեալ կանոնիս նորոգածեւել կամեսցի զկարգեալ **սահմանադրութիւնս**, մի՛ ընկալցի մասն եւ վիճակ ժառանգութեան յարքայութեանն Քրիստոսի եւ Աստուծոյ: » - (ԿԱՆՈՆՔ ՍԱՀԱԿԱՅ ՊԱՐԹԵԻԻ), էջ 402:

#### ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ (Աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, հ. Բ, Երեւան, 1971)

«Արդ՝ այս **սահմանադրութիւն** եկեղեցոյ ի Հերակղէ Հոռոմոց թագաւորէ եւ ի Խորովայ Պարսից արքայէ ատուրցն եւ այսր եղիցի. իսկ ինչ որ յառաջ քան զնոցա ժամանակն գործեցեալ է, մի՛ շարժեսցի, զի չգտեմք ինչ հաստատուն, թէ որպէս կալեալ, բայց յայսմ հետէ այսպէս կալցին, որպէս սահմանեցաք յանուն Տեառն, եւ մի՛ որ իշխեսցէ փոփոխել զայս **սահմանադրութիւն**» - (ԿԱՆՈՆՔ ԴՈՒՆԱՅ), էջ 208-209:

«Արդ՝ զվերագրեալ կանոնս **սահմանադրութեան** մերոյ խասեսցին ի լսելիս լսողաց վարդապետք եւ երիցունք եկեղեցոյն, եւ որք միանգամ ունկնդիրք լիցին եւ հրամանակատարք, արհմեսցին ի Քրիստոսէ եւ ի սրբոց վարդապետաց եւ ի մեր միաբան ժողովոյս. իսկ եթէ ըմբոստացեալք եւ ամբարտաւանեալք արհամարհիցեն, այնպիսիքն եղիցին արհամարհեալք ի սրբոց վկայիցն եւ տարագրեալք յամենայն հոգեւոր արհմութենէ» - (ԿԱՆՈՆՔ ԴՈՒՆԱՅ), էջ 212:

«Բայց եթէ ուրբաթի կամ չորեքշաբաթի հանդիպի՝ ըստ վերագոյն պատուիրանիդ պահաւք տաւնեսցեն եւ մի՛ լուծմամբ կերակրոց կամ ըմպելեաց. եւ եթէ որ ի հաւատացելոց անցցէ ըստ կանոնեալ **սահմանադրութիւն**՝ անիծեալ լիցի, վասն զի այսպէս պատուիրեցաւ ընդ ամենայն աշխարհի ի սրբոց առաքելոցն եւ աւանդեցաւ մեզ եւ մեք այնմ հետեւեալ եմք, զոր նոքայն քարոզեցին եւ հաստատեցին» - (ԿԱՆՈՆՔ ԿԱՐՆՈՅ), էջ 253-254:

«Դարձեալ ի վերայ այսր ամենայնի պատուիրանագիր աւանդութեանս գեր քան զասացեալս աւանդեմք կանոնական **սահմանադրութիւնս** հանուրց ժառանգաւորաց սրբոյ եկեղեցոյ եւ սպասատրաց խորհրդական սեղանոյն. զի լուաք լուր սարսափելի եւ ծանրագոյն, թէ ի տեղիս տեղիս յառաջնորդաց եկեղեցոյ ոմանք խմորեալ ի Նեստորականաց եւ ի Քաղկեդոնականաց, ապականեն զուրբ խորհուրդն խառնմամբ խմորոյ եւ ջրոյ» - (ԿԱՆՈՆՔ ԿԱՐՆՈՅ), էջ 254:

---

*Ներկայացված բոլոր վկայություններն անառարկելիորեն փաստում են, որ «սահմանադրութիւն» հասկացությունը հայ մարեմագրության մեջ ներկայացվում է իրերի ու երեւոյթների որոշակի կարգ, կանոն, օրինաչափություն սահմանելու, ընդունելու, հաստատելու, իսկ որոշ դեպքերում՝ սահման, եզրագիծ դնելու իմաստներով (օրինակ՝ Ագաթանգեղոսից բերվող վկայություններում): Սակայն «սահմանադրել» հասկացությունն օգտագործվել է հարուկ իմաստավորմամբ, ընդգծելու «սահմանադրված» կանոնների առանձնահատուկ բնույթը՝ «ուրբ հոգու հրամանով սահման դրված...», «...ըստ առաջին Հայրապետի սահմանադրած կարգի», «Քաղքեղոնի ժողովի կողմից սահմանադրված...», «Սուրբ Գրիգորի առաքելական սահմանադրությամբ հաստատված...», «Միսի ժողովում սահմանադրված...» եւ այլն: Հայկազյան լեզվի նոր բառագրքում «ՍԱՀՄԱՆԱԳՐԵՄ» հասկացությունը (Determino, constituo) ներկայացվում է սահման դնել, որոշել, կարգավորել, կարգել, օրինադրել, սահմանել հոմանիշների միջոցով: Սակայն դրանցից յուրաքանչյուրը պետք է ընկալվի սահման դնելու, եզրագիծը որոշելու, սահմանային բնույթի հարաբերությունները կարգավորելու, գլխավոր կանոնները սահմանելու համարեքստով:*

*Բոլոր այն թարգմանությունները, որոնք «սահմանադրեմ» գրաբարյան փարբերակը ներկայացնում են «սահմանել», «հաստատել» եւ այլ ձևերի մեջ, առանց կարեւորություն փառու նորմի, կանոնի, կարգի սահմանային, եզրագծային բնույթին, էապես նեղացնում են «սահմանադրել» հասկացության իմաստը, քանի որ վերջինս հայ մարեմագրության մեջ ակնհայտորեն վերաբերում է հարուկ՝ սահմանադրական նորմին բնորոշ գերակա նշանակություն ունեցող կանոնների սահմանմանը՝ «Որոշումն սահմանաց եւ Տեսչութիւն վերին»:*

Գազին  
Կարողություններ

# ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄԵՆԿՈՒՅՑ

«Մեր մատրանները  
եղան սրից ու նիզակից  
ավելի զորեղ...»

*II. Իստիսկյակ*

«Մենք իրավունք չունենք  
ուշանալու պատմության  
զևաքից...»

*Պ. Մեակ*

«... Օրվա մշուշի  
պատճառով չկուրանանք  
և աշխատենք տեսնել...»

*X. Իմպերսյակ*

... Շողովրդավարությունը  
չի կարող ավելի բարձր  
կանգնած լինել այն  
մարդկային նյութից,  
որից կազմված են  
դրա կրողները

*Բեռնարդ Գուլ*

